

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ



ՆԱՅ ԵԿԵՂԵՅՈՒ ԶԱՅՐԵՐ

Ա



Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2007

ՆԱՅ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԱՅՐԵՐ

Ա

ՀՐԱՄԱՆԱԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՀՏԴ 25
ԳՄԴ 86.37
Ս – 970

Թարգմ. գրաբարից,
առաջաբանը և ծանոթագրությունները՝
Սեն Արևշատյանի

Ս – 970 **ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐՂԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ**: - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007, 256 էջ:

Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» կազմի մեջ մտնող և նրա ծավալի կեսը կազմող «Սուրբ Գրիգորի Վարդապետությունը» հայ աստվածաբանական եզակի երկերից է, որով սկզբնավորում է հայ աստվածաբանական մտքի ուղղությունը:

ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ՝

.....

ISBN 978-99930-75-48-6 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.

-րդ դարի պատմիչ Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ նուծված «Սուրբ Գրիգորի Վարդապետությունը»¹ ուրույն տեղ է գրավում հայ աստվածաբանական-մեկնողական գրականության մեջ: Այն ստեղծվել է հայ մատենագրության արշալույսին և զգալի ազդեցություն ունեցել իր ժամանակի, ինչպես և հաջորդ դարերի հայ փիլիսոփա աստվածաբանների վրա:

Ազաթանգեղոսի «Հայոց պատմությունը» արդեն միջնադարում, 6-րդ դարից սկսած, ունեցել է մի քանի թարգմանություն (հունարեն, արաբերեն, ասորերեն, վրացերեն, հին սլավոներեն և այլն)², բայց դրանց մեջ բացակայում է «Վարդապետությունը»: Այլագգի ընթերցողներին հետաքրքրել է Ազաթանգեղոսի «Պատմության» այն մասը, որը լուսաբանում է հայոց եկեղեցու ծագումը՝ նրա հիմնադրի, Գրիգոր Լուսավորչի «Վարքը» և հայոց դարձի, քրիստոնեության ընդունման պատմությունը:

«Վարդապետությունը» ամբողջությամբ պահպանվել է միայն հայերեն բնագրում և, ըստ երևույթին, նույնիսկ փորձ չի արվել այն թարգմանելու, եթե հաշվի չառնենք մի վրացերեն քաղազրված խիստ համառոտ թարգմանություն՝ «Վասն հաւատոյ» վերնագրով:

«Վարդապետության» հեղինակը լայնածավալ քարոզի ձևով ընթերցողներին (ունկնդիրներին) շարադրում-մեկնաբանում է քրիստոնեական հավատի և ուսմունքի հիմնական դրույթները՝ հետևելով շարադրման այն ձևերին, որոնք բնորոշ էին քրիստոնեության վաղ շրջանի քարոզներին և ջատագովներին: Միաստվածության, սուրբ Երրորդության միասնության հիմնավորմանը զուգընթաց հեղինակը մեծ տեղ է հատկացնում հեթանոսական հավատալիքների հերքմանը և կռապաշտության դատապարտմանը: Նա պսակագրերում է բազմաստվա-

ծությունը՝ համարելով այն մարդկային տգիտության ծնունդ:

Հին հայ հեղինակը ծավալում է քրիստոնեական կրոնի ջատագովությունը՝ հետևելով քրիստոնեության վաղ շրջանի պաշտպանների ավանդույթներին, որոնք մշակվել էին հեթանոսական կրոնի դեմ մղած համառ պայքարում: Հայ հեղինակը քաջածանոթ է 3-4-րդ դարերի «եկեղեցու հայրերի» գաղափարներին: Հետևելով նրանց՝ նա հայ իրականության մեջ հանդես է գալիս որպես հայրաբանության առաջին ներկայացուցիչը: «Վարդապետության» ողջ ընթացքում դրսևորվում է հեղինակի՝ խորագիտակ աստվածաբանի կրթությունը, ոչ միայն Աստվածաշնչի փայլուն իմացությունը, այլև հռչակավոր քրիստոնյա գրողների և գիտնականների, ինչպիսիք էին Բարսեղ Կեսարացին, Հովհան Ոսկեբերանը, Եփրեմ Ասորին, Կյուրեղ Երուսաղեմացին, երկերին քաջածանոթ լինելը: Ծարադրանքը հագեցված է Աստվածաշնչից քաղված ուղղակի մեջբերումներով և բազմաթիվ հղումներով, ընդ որում, այդ մեջբերումները տարբերվում են մեզ հասած Աստվածաշնչի վերջնական, կանոնացված բնագրից, մի հանգամանք, որը հուշում է նրա առաջին՝ ասորերենից կատարված թարգմանության օգտագործման մասին:

«Վարդապետություն» բառը, որը դարձել է Ագաթանգեղոսի «Պատմության» այս ընդարձակ հատվածի վերնագիրը, ունի մի քանի իմաստային երանգավորում: Այն նշանակում է Ուսմունք, Խրատ, Քարոզ: Մեր աշխարհաբար թարգմանության մեջ պահպանել ենք Վարդապետություն եզրը, որովհետև այն ընդգրկում է տվյալ հասկացության նաև այլ իմաստային երանգները՝ ճիշտ արտահայտելով հեղինակի աստվածաբանական, փիլիսոփայական հայացքների ամբողջությունը, միաժամանակ նաև նրա խրատական, քարոզչական բնույթը:

Բովանդակային, թեմատիկ առումով «Վարդապետության» ողջ բովանդակությունը (ըստ «Ագաթանգեղոսի» քննական հրատարակության, §§ 259-715) կարելի է բաժանել հետևյալ տասը մասերի.

1. Միակ գերագույն Տեր Աստված, Արարիչ ամենայնի,

Երրորդություն, աշխարհի Արարչագործություն, մարդու առարումը (§§ 259-273),

2. Ադամից մինչև հին հրեական թագավորության անկումը, Բաբելոնյան գերությունը, ազատագրումը և տաճարի վերականգնումը (§§ 274-342),

3. Մարգարեություններ Քրիստոսի գալստյան մասին (§§ 343-376),

4. Քրիստոսի մարդեղությունը. երկրային ուղին՝ Ծնունդ, Քարոզչություն, Խաչելություն, Թաղում և Համբարձում (§§ 377-496),

5. Սուրբ Հոգին և առաքյալները (§§ 497-509),

6. Հեթանոսությունից հրաժարվելու հայերին ուղղված կոչը, միակ Աստծուն հավատալու և ապաշխարելու հորդորը (§§ 510-590),

7. Խրատական մեծ քարոզը (§§ 591-640),

8. Մեռյալների հարությունը, Քրիստոսի երկրորդ գալուստը և Ահեղ դատաստանը (§§ 641-658),

9. Առաքյալները և նրանց գործունեությունը, Ավետարանի քարոզը (§§ 659-706),

10. Աստվածային երրորդությունը. Հոր, Որդու և Սուրբ Հոգու առնչակցությունը. Միածին Որդու և Սուրբ Հոգու իջնելը, Աստվածային շնորհը, փրկությունը և հավիտենական կյանքը (§§ 707-715):

«Վարդապետության» այսպիսի գլխակարգումը, ըստ թեմաների, և ծավալով ոչ համաչափ տասը մասերի բաժանումը, անշուշտ, պայմանական է և մոտավոր: Հին հայերեն բնագիրը չունի ոչ մի բաժանում և հին ձեռագիր մատյաններում շարադրված է հոժ տեքստով՝ առանց ստորաբաժանումների և պարբերությունների: Քննական բնագրի հրատարակիչների կողմից տրված պարբերությունների համարակալումը մենք պահպանում ենք՝ օգտագործման և համեմատության դյուրացման համար, բայց միաժամանակ տալիս ենք առանձին համարակալում՝ 1-ից մինչև 457, որը համապատասխանում է «Ագաթանգե-

ղոսի» քննական բնագրի 259-715 պարբերություններին: Մեր թարգմանության համարակալումը, սկսած 1-ից, փակագծերում պահպանում է նաև քննականի համարակալումը՝ 1 (259), 2 (260)... մինչև վերջ՝ 457 (715): Սրանով մենք առաջին քայլն ենք անում «Վարդապետությունը» շրջանառության մեջ դնելու որպես առանձին միավոր՝ դուրս բերելով այն Ագաթանգեղոսի «Պատմության» կառուցվածքից, ուր նա հայտնվել է հին խմբագիրների, ավելի ճիշտ, խմբագրի (Կորյունի) նախածեռնությանը:

«Սուրբ Գրիգորի Վարդապետությունը» հայ պատմագրության և ջատագովության արդեն սկզբնական շրջանում գտնվում էր «Ագաթանգեղոսի» ազգային խմբագրության կազմում, ինչի մասին է վկայում 5-րդ դարի երկրորդ կեսի պատմագիր Ղազար Փարպեցին: Իր նախորդների, այդ թվում և Ագաթանգեղոսի, մասին խոսելով՝ նա հիշատակում է «Վարդապետությունը» որպես «երանելի այր, սուրբ Ագաթանգեղոսի Պատմության» բաղկացուցիչ մաս (Տե՛ս Ղազարայ Փարպեցույ «Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1904, էջ 3):

«Վարդապետության» հետ իր բնույթով և բովանդակությամբ սերտորեն առնչվում է հայ հնագույն գրականության մի այլ հուշարձան, հայոց գրերի գյուտից հետո առաջին հայերեն ինքնուրույն երկը՝ «Յաճախապատում ճառք»-ը, որը նույնպես հասել է մեզ Գրիգոր Լուսավորչի անունով: Սակայն Մաշտոցի աշակերտ և կենսագիր Կորյունը, պատմելով իր ուսուցչի գործունեության վերջին շրջանի մասին, հայտնում է, որ այդ ժամանակ, 420-430 թվականներին, արդեն դժվարանալով տևական շրջագայություններ կատարել երկրով մեկ՝ քրիստոնեություն քարոզելու և հեթանոսության մնացուկների դեմ պայքարելու նպատակով, Մաշտոցը ձեռնամուխ եղավ գրավոր քարոզչության՝ խոսելով ժողովրդի հետ խրատական, բացատրական ճառերի և քարոզների միջոցով: Այդ գրավոր ճառերի վերաբերյալ Կորյունն ասում է, որ իր ուսուցիչը «սկսեց կազմել և շարադրել հաճախապատում, դյուրըմբռնելի, (աստվածային) շնորհ-

ներով լեցուն, բազմաբովանդակ ճառեր... հագեցված ճշմարիտ ավետարանական հավատի բոլոր բարեմասնություններով»³:

Կենսագրի և ժամանակակցի այդ ցուցումն անմիջականորեն առնչվում է մեզ հետաքրքրող հուշարձանի՝ «Հաճախապատում ճառերի» հետ, որոնք վերագրվել են Գրիգոր Լուսավորչին, ամենայն հավանականությամբ, դրանց ազդեցությունն ու հեղինակությունը բարձրացնելու նպատակով: Այդ ճառերը գրվել են Մեսրոպ Մաշտոցի կողմից և տարածվել Գրիգոր Լուսավորչի անունով: Այսպիսին է գերմանացի անվանի հայագետ Պ. Ֆետտերի եզրակացությունը⁴, որին հետագայում միացավ հայոց հին գրականության ճանաչված մասնագետ ակադ. Մ. Աբեղյանը⁵:

Պ. Ֆետտերը, սակայն, չի սահմանափակվում միայն Կորյունի ցուցումով: Նա ապացուցում է, որ «Հաճախապատում ճառերը» չէին կարող գրվել IV դարի առաջին քառորդում, Գրիգոր Լուսավորչի օրոք, նախ և առաջ այն պատճառով, որ նրանցում (2-րդ, 5-րդ, 6-րդ ճառեր) հեղինակը Մ. Հոգու էության մասին խոսում է՝ ամբողջովին հետևելով 381թ. կայացած հոգեմարտների դեմ ուղղված Կոստանդնուպոլսի տիեզերական ժողովի որոշումներին, մի բան, որը, հասկանալի է, չէր կարող պատահել, եթե ճառերի հեղինակ ճանաչեինք Գրիգոր Լուսավորչին:

Մենք լիովին բաժանում ենք Պ. Ֆետտերի և Մ. Աբեղյանի կարծիքը և բերված փաստերի ու փաստարկների հիման վրա գտնում, որ «Հաճախապատում ճառերը» գրված են Մաշտոցի կողմից 420-ական թթ.:

Սակայն Պ. Ֆետտերի աշխատության լույս ընծայումից քիչ անց տպագրվեց հ. Բարսեղ Մարգիսյանի «Ագաթանգեղոս և իր բազմադարեան գաղտնիքը» գիրքը (Վենետիկ, 1890), որտեղ հեղինակը, չհամաձայնվելով Պ. Ֆետտերի եզրակացությունների հետ, առաջ է քաշում մի այլ տեսակետ, որի համաձայն Կորյունի հաղորդումը վերաբերվում է ոչ թե «Հաճախապատում ճառերին», այլ Ագաթանգեղոսի «Պատմության» մեջ մտնող «Ս.

Գրիգորի Վարդապետությանը»⁶: Բերելով ծանրակշիռ տվյալներ և փաստարկներ՝ Բ. Սարգիսյանը, իրոք, համոզում է, որ «Ս. Գրիգորի Վարդապետությունը», անտարակույս, գրվել է V դարի առաջին քառորդում և որ նրա հեղինակը Մեսրոպ Մաշտոցն է: Սակայն Բ. Սարգիսյանի վեճը Պ. Ֆետտերի հետ արդարացի չէ: Երկու հուշարձանների՝ «Հաճախապատում ճառերի» և «Ս. Գրիգորի Վարդապետության» համեմատությունը ցույց է տալիս, որ Կորյունի ցուցումը չպետք է դիտել որպես այլընտրանք՝ դրանց հեղինակային պատկանելության հարցը լուծելիս, և հակադրելով իրար՝ մեկի փոխարեն առաջադրել մյուսը:

Կորյունը, խոսելով իր ուսուցչի գրական քարոզչական գործունեության մասին, տալիս է երկրորդ կարևոր հաղորդումն այն մասին, որ Մաշտոցը, Կոստանդնուպոլսում գտնված ժամանակ ստանալով բյուզանդական կայսեր համաձայնությունը, իր գյուտը նաև Արևմտյան Հայաստանում տարածելու վերաբերյալ, օգտվեց առիթից, որպեսզի կայսերական գրադարանից ստանա իրեն հետաքրքրող անհրաժեշտ կարևոր գրքեր: Կայսրը բավարարում է նաև այդ խնդրանքը: Մաշտոցը, «ստանալով եկեղեցու հայրերի բազմաթիվ՝ աստվածային շնչով հագեցված գրքեր, ծովացնում էր իր վարդապետության խորքերը»⁷, ասում է Կորյունը: Գրանք այդ ժամանակ Հայաստանում հայտնի դարձած հեղինակավոր եկեղեցական հայրերի՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստվածաբան Նազիանզացու, Կյուրեղ Ալեքսանդրացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու աշխատություններն էին, որոնցից և օգտվել է «Ս. Գրիգորի Վարդապետության» հեղինակը: Այդ սկզբնաղբյուրներից է օգտվել նաև «Հաճախապատում ճառերի» հեղինակը: Աստվածաբանական գաղափարների առումով, եկեղեցական ժողովների կողմից արժարժված ու հաստատված դրույթների ժամանակագրական շրջանակով այդ երկու հուշարձանները չեն անցնում 430-ական թթ. սահմանը, այսինքն՝ այդ ժամանակահատվածը, երբ գրական և քարոզչական գործունեություն էր ծավալել Մեսրոպ Մաշտոցը:

Ակնհայտ է, որ իրենց բովանդակությամբ և ոգով, օգտագործված սկզբնաղբյուրների ընդհանրությամբ, գաղափարական նպատակամղվածությամբ նույնական «Հաճախապատում ճառերը» և «Ս. Գրիգորի Վարդապետությունը» գրված են 420-ական թթ. քրիստոնեության ակնավոր հայ քարոզչի կողմից, որը քաջածանոթ է ոչ միայն հայ իրականությանը, այլև Գրիգոր Լուսավորչից հետո, ընդգծում ենք, Լուսավորչից հետո ապրած ու գործած հույն և ասորի հեղինակների գործերին, այն քրիստոնեական գրականությանը, որը այդ ժամանակ էր բերվել Հայաստան և արդեն թարգմանվել կամ թարգմանվում էր հենց Մաշտոցի ու նրա զինակիցների կողմից:

Եթե Բարսեղ Սարգիսյանը, Կորյունի հաղորդման վրա հենվելով, հակադրում է «Հաճախապատում ճառերը» և «Ս. Գրիգորի Վարդապետությունը», և ասում այն մասին, թե Ագաթանգեղոսի ողջ «Պատմության» գաղտնիքը կարելի է լուծել միայն նրա բարդ կառուցվածքի հարցը լուծելուց հետո, որը հետագայում ենթարկվել է խմբագրության (իսկ այդ խմբագրման ժամանակ նրա մեջ մտել են Մաշտոցից հետո գործած հեղինակներից որոշ հատվածներ, մասնավորապես, հենց իր՝ Կորյունի երկից), ապա Ն. Մառը առաջ է քաշում մի համարձակ և ուշագրավ վարկած ոչ միայն «Վարդապետության», այլ Ագաթանգեղոսի ողջ «Պատմության», դրա նախնական խմբագրության Մեսրոպ Մաշտոցի գրչին պատկանելու վերաբերյալ⁸: Նա ևս հանգում է այն եզրակացության, որ Ագաթանգեղոսի անունով մեզ հասած երկը հետագայում ենթարկվել է խմբագրման, բայց որ նրա հիմքում մնացել է այն սկզբնական բնագիրը, որը շարադրվել է V դարի առաջին երրորդում և վկայում է Մաշտոցի հեղինակության օգտին: Ն. Մառն իրավացի է:

V դարի 20-30-ական թթ., Երբ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի գլխավորած դպրոցն արդեն իրագործել էր մի շարք կարևոր հուշարձանների թարգմանությունը, իր երկունքն ապրող հայ գրականության գործիչների առաջ ողջ սրությամբ դրվեց հայ իրականության հետ անմիջականորեն կապված,

նույն բովանդակության ինքնուրույն երկերի ստեղծման խնդիրը: Մուր անհրաժեշտություն էր զգացվում այնպիսի հուշարձանների, որոնք պիտի արտացոլեին հայոց եկեղեցու պատմությունը, նրա ավանդությունը, սկզբնավորումը և անցած ուղին, ներկայացնեին գրավոր ձևով նրա հայտնի գործիչների և նահատակների պատմությունը, նրա հավատամքը և գաղափարաբանությունը: Ազաթանգեղոսի «Պատմությունը» հենց այդպիսի երկի ստեղծման առաջին փորձն է:

Փիլիսոփայական առումով «Հաճախապատում ճառերը» և «Ս. Գրիգորի Վարդապետությունը» բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում: Այդ երկու երկերի հիման վրա մենք փորձում ենք լուսաբանել Մեսրոպ Մաշտոցի փիլիսոփայական հայացքները՝ որպես հին Հայաստանի քրիստոնեական փիլիսոփայության ամենավաղ և հիմնական ուղղության՝ հայրաբանության հիմնադրի աշխարհայացքը: Հենվելով այդ սկզբնաղբյուրների վրա, որոնք մեր և մեր նախորդ համախոհ հետազոտողների համոզմամբ իրոք պատկանում են Մեսրոպ Մաշտոցի գրչին, մենք վստահորեն կարող ենք պատկերացում կազմել հայոց գրերի և գրականության ստեղծողի և նրա մերձավորագույն մարդկանց, նրա շրջապատի գաղափարաբանության մասին, որն արտահայտում է V դարի առաջին կեսի հայ հասարակության գաղափարական միտումները և աշխարհայացքը:

«Հաճախապատում ճառերը», «Ս. Գրիգորի Վարդապետությունը», ինչպես նաև Ազաթանգեղոսի ողջ «Պատմությունը», չնայած այն բանին, որ նրանք հայ գրականության առաջին ինքնուրույն ստեղծագործություններն են, այնուամենայնիվ հետազոտողի առջև բացում են հայ իրականության մեջ քրիստոնեական փիլիսոփայության ձևավորման բավականին բարդ պատկերը:

Փիլիսոփայական-աստվածաբանական գրականությունը հայոց հնագույն դպրության կարևոր բաղկացուցիչ մասը հանդիսացավ: Ամենևին զարմանալի չէ, որ առաջին ինքնուրույն ստեղծագործությունները արտացոլում են ոչ միայն V դարի կե-

սի հեղինակների կրթության և մտավոր կարողությունների մակարդակը, այլև վաղուց հասունացած հասարակական պահանջը: Այդ պահանջը պետք էր արագորեն բավարարել, մանավանդ որ դրա համար ստեղծված էին անհրաժեշտ նախադրյալներ, որոնք էին՝ նախորդ հարյուրամյակի ընթացքում հսկայական մտավոր պաշարը, այլալեզու գրավոր հիմքի վրա ձևավորվող գաղափարաբանությունը և լայն տարածում գտած բանավոր թարգմանության ավանդույթը:

Տվյալ հանգամանքով պետք է բացատրել այն ակնհայտ փաստը, որ Մեսրոպ Մաշտոցի ստեղծագործությունները, որոնք հայ փիլիսոփայական մտքի առաջին հուշարձաններն են, արտացոլում են այն գաղափարական հիմունքները, որոնց վրա հենվելով՝ զարգանում էր IV-V դդ. Հայաստանի հոգևոր կյանքը՝ սկզբից այլալեզու (հունարեն և ասորերեն), իսկ այնուհետև՝ հորդառատ հայալեզու հունով: Մաշտոցի ժամանակ արդեն սուր կերպով դրված էր թշնամական ուժերին հակադրվելու, հեթանոսության վերապրուկների և երկրի ներսում գլուխ բարձրացնող աղանդների դեմ գաղափարական պայքար ծավալելու խնդիրը: Այդ իսկ պատճառով Մաշտոցի և նրա գործի անմիջական շարունակող Եզնիկ Կողբացու երկերն ունեին ջատագովական բնույթ, մի հատկություն, որը բնորոշ էր նախորդ դարերի հունական և լատինական գրականություններին, քրիստոնեության վաղ շրջանին, երբ հետապնդվող նոր կրոնական ուսմունքի գաղափարախոսները պաշտպանում էին քրիստոնեությունը թշնամական քաղաքականություն վարող պետական իշխանությունից, գովաբանում-ջատագովում և արդարացնում էին այդ նոր ուսմունքը՝ գերիշխող հեթանոսության հետ անհավասար պայքար մղելով: Հայրաբանության այդ ներկայացուցիչները, քրիստոնյա գրողներն ու մտածողները, որոնք ստացան ջատագովներ հորջորջումը (Արիստիդես, Իրենեոս, Տերտուլիանոս, Հուստինոս Նահատակ և այլք), հիմնականում ստեղծագործել են մ. թ. II-III դդ.:

Գրերի գյուտից հետո հայոց եկեղեցու հայրերը խտացված

Ժամկետում պետք է անցնեին այն ուղին, որն արդեն դանդաղորեն անցել էին հարևան քրիստոնեական գրականությունները երեք հարյուր տարիների ընթացքում: Հայկական հայրաբանության՝ որպես քրիստոնեական փիլիսոփայության ուղղության հիմնադիր հանդես եկավ Մեսրոպ Մաշտոցը՝ իր «Հաճախապատում ճառերով» և «Վարդապետությանը»՝ զարկ տալով ոչ միայն ինքնուրույն գրականության, այլև հայ իմաստասիրության զարգացմանը:

Մաշտոցին, որպես հայրաբանական փիլիսոփայության ակնհայտ ներկայացուցչի, բնորոշ է գոյաբանական պրոբլեմի հանդեպ շեշտված ուշադրությունը, որը ելակետային է նրա աշխարհայացքի համար: Դա Աստծու, որպես գերագույն էակի, աշխարհի սկզբնապատճառի գաղափարն է, որով և սկսվում են ինչպես «Հաճախապատում ճառերը», այնպես էլ՝ «Վարդապետությունը»:

Աստված, ըստ Մաշտոցի, բացարձակ, ոչնչով չսահմանափակված, ոչ մեկի և ոչ մի բանի կողմից չստեղծված գերագույն էություն է, «միակ ինքնակա էություն», որի ինքնությունը պայմանավորված է իր սեփական գոյությամբ: Նա անձին իսկություն է, անսկիզբն էություն, անսահման մշտնջենավորություն, անփոփոխ ճշմարտություն⁹:

Որպես համոզված քրիստոնյա, Մաշտոցը հաստատում է, որ Աստված բոլոր գոյերի արարիչն է, աշխարհի և նրա մեջ գտնվող ամեն ինչի ստեղծողը, կենդանի և անկենդան բնության ծնողը: Նրա ստեղծագործ ուժը անսկիզբ ու անվերջ է, և նա գտնվում է մշտական գործողության և ստեղծագործման մեջ: Այդ ստեղծագործ գորությունը հավերժ է և անսպառ, և այդ պատճառով էլ նրա աղբյուրը՝ Աստված, «Ինքը չի նորանում, որովհետև չի հնանում և չի լրացվում, որովհետև չի պակասում, որովհետև Ինքը մնում է նույնը Իր լիության և անվերջության մեջ, և այդ անվերջ ու անսահման, անհասանելի ու կատարյալ բարերարության մեջ չկա դրսից եկած որևէ եկամուտ կամ հավելյալ բան»¹⁰: Նրա ստեղծագործ և բարեգործ գորության շնորհիվ

կյանք են ստանում բոլոր արարածները, որոնք նախապես գոյություն են առնում Նրա մտքում և այնուհետև մարմին են ստանում Նրա խոսքով և բարի կամքով:

Աստված Իր ստեղծած ոչ մի բանական էակի համար հասանելի չէ, որովհետև «Նա անսահման է և անքննելի, և չի կարող բանականությունը հասու լինել Նրան, և ոչ էլ միտքը քննել և Նրա ճանաչման համար չի կարող բավել ո՛չ հոգևոր գորքի իմաստությունը և ո՛չ էլ մարդկային որդիների գիտությունը»¹¹:

Իր գոյության պատճառը Ինքն Իր մեջ պարունակող, բանականության համար անհասանելի այդ գերագույն էակը միասնական է և անբաժանելի, թեև Իրեն դրսևորում է երեք դեմքով: Մաշտոցը համոզված և հետևողական եռամիակյան (տրինիտարիստ) է, աստվածային էության միասնականության հռչակողը և պաշտպանողը: Հայր աստվածը, Որդի-աստվածը և Սուրբ Հոգի-աստվածը տարբեր էություններ չեն, որովհետև միասնական է նրանց գոյությունը, և տարբեր են միայն նրանց դրսևորումները (Տե՛ս «Վարդապետություն», § 125 (383): Այդ դրույթի ապացուցման համար Մաշտոցը բերում է կրակի և ջրի օրինակները և հարցնում. «Եղե՞՞լ է երբևէ արեգակն առանց իր լույսի և ջերմության, կամ եղե՞՞լ է երբևէ հուրն առանց իր լույսի կամ տապի. կամ եղե՞՞լ է երբևէ (ջրի) աղբյուրն առանց իր բխման և խոնավության. կամ եղե՞՞լ է երբևէ հոգին առանց խոսքի և առանց մտքի: Այսպես և չի եղել (երբևէ) Հայրն առանց իր Որդու և Սուրբ Հոգու»¹², «ինչպես մի է արևը և նրա լույսն ու ջերմությունը, և մեկ արև է ասվում և երբեք՝ արևներ. և ինչպես կրակը, (նրա) լույսը և տապը մեկ կրակ են ասվում և երբեք՝ կրակներ. և ինչպես աղբյուրը, գետը մի ջուր են ասվում և երբեք՝ ջրեր. ինչպես հոգին, միտքը և խոսքը մեկ հոգի են ասվում և երբեք՝ հոգիներ, իսկ հոգի է կոչվում կենդանությունը, միտք է կոչվում գիտակցությունը, խոսք է կոչվում բանավորությունը՝ միասնական հոգու, այդպես և Հայրը՝ անձին իսկությամբ, անսկիզբ էությունը Հայր է մշտական Որդու համար, որը Նրա հետ է, և Հոգու համար, որը (նույնպես) Նրա հետ է»¹³:

Քրիստոնեության դավանաբանության և աստվածաբանության այդ հիմնական դրույթը, որը հռչակվել էր Նիկիայի (325 թ.) և Կոստանդնուպոլսի (381 թ.) ժողովների կողմից՝ ընդդեմ Արիոսի և Մակեդոնի հերետիկոսական հայտարարված ուսմունքների, Մաշտոցը ամենայն կտրականությամբ հակադրում է հեթանոսական բազմաստվածությանը և մագդեական դուալիստական կրոնին ու փիլիսոփայությանը:

Մաշտոցի քրիստոնեական քարոզչությունը, իսկ այնուհետև, ավելի շեշտված, նրա աշակերտ Եզնիկի «Եղծ աղանդոց»-ում արծարծված ջատագովությունը, իր ոգով պաշտպանողական չէր, ինչպես առաջին դարերի քրիստոնեության հալածված ջատագովների մոտ, որոնք ջանում էին արդարացնել նոր կրոնի գոյությունը և փրկել այն անարդարացի մեղադրանքներից ու դաժան հետապնդումներից: Մաշտոցի ջատագովությունն ուներ հարձակողական, ինքնավստահ բնույթ, որովհետև բացի անձնական խոր համոզվածությունից այն հենվում էր սոցիալական լայն խավերի և ամուր կրոնական կազմակերպության վրա, որն ուներ հատուկ պատրաստված և գաղափարապես արդեն լավ զինված հոգևորականություն:

Իր փիլիսոփայական դատողությունները Մաշտոցը նպատակադիր ձևով է կառուցում, նկատի ունենալով որոշակի թշնամական գաղափարախոսություն, որին հարկավոր է հակադրել քրիստոնեության ելակետային դրույթները: Պատահական չէ, որ նա բազմիցս հաստատում է սոցիալական փիլիսոփայության դրույթը՝ ընդդեմ դուալիզմի, ընդդեմ հեթանոսության պարսկական տարատեսակի՝ ասելով. «Անսկիզբ էությունից և մշտնջենավորությունից ստեղծվեցին բոլոր արարածները՝ երևելի և աներևույթ: Երկինքը և երկիրը և ամեն ինչ, ինչ որ նրանց մեջ կա, ամենակարող գործությամբ ստեղծված են մեկ արարչի կողմից»¹⁴: Հետևապես, երկրպագել և դավանել պետք է արարչին, ոչ թե նրա արարածներին, իրերին կամ տարրերին, որոնց գոյությունը կախված է նրանց ստեղծողից: Նա է միակ և հավերժական գերագույն էությունը, «որն իր ամենախիմաստուն,

ամենագետ և ամենատես բարերար կամքով խնամում է Իր արարածներին, որոնց գոյացրել է ոչնչից և չգոյից՝ հոգևորներին և մարմնավորներին, շնչավորներին և անշունչներին»¹⁵:

Աշխարհի չորս տարրերը՝ հուրը, օդը, ջուրը և հողը ստեղծվել են Աստծու կողմից և սահմանվել որպես ողջ բնության հիմք: Մարմինները, իրերը օժտված են չորս հիմնական հատկանիշներով (որակներով)՝ խոնավությամբ և չորությամբ, սառնությամբ և տաքությամբ: Եվ ահա այս չորս տարրերից, նրանց չորս որակական հատկանիշներով հանդերձ, Աստված ստեղծեց մարդուն, Իր նմանությամբ և կերպարանքով, և նրան տվեց բանական հոգի. «Եվ շնչեց նրա մեջ հոգի կենդանի և անմահ, մտավոր և բանական: Եվ խառնեց հոգևորը մարմնավորի հետ»¹⁶:

Բնությունը, աշխարհը, ըստ Մաշտոցի, ստեղծված են մարդուն ծառայելու, նրա կարիքները բավարարելու համար. երկինքը, աստղերը, արևը և լուսինը, բույսերն ու կենդանիները, ամեն ինչ Աստծու կամքով ստեղծվել է մարդու համար: Սակայն մարդիկ, որոնց վրա չի տարածվել իսկական հավատի լույսը, այսինքն՝ հեթանոսները, չգիտեն իրենց արարչին և պաշտում են իրերը: Նրանք իրենց համար այդ իրերը կուռք են դարձրել և նրանց վերագրել տարբեր հատկություններ, որոնք յուրահատուկ են միայն արարիչ Աստծու հավերժական էությանը¹⁷:

Մաշտոցը դատապարտում է հեթանոսներին, որոնք «բոլոր տարրերը աստվածներ դարձրին, շնչավորներին և անշունչներին, ջուրը և հուրը»: Անիմաստ ու վնասակար է պաշտել այն, ինչ արարված է, որովհետև դա շեղում է բուն Արարչից, այն անփոփոխ և հավերժ կենդանի Ստեղծողից, Որի շնորհիվ պարում է ողջ տիեզերքը և արարչության ծաղկեսպասկ մարդը¹⁸:

Ինչպես տեսնում ենք, գոյաբանական (օնտոլոգիական) հիմնախնդիրը լուծելիս Մաշտոցը նրա մեջ դնում է քրիստոնեական փիլիսոփայական դրույթ: Այն ծառայում է միաստվածության (մոնոթեիզմի) գաղափարի հիմնավորմանը և միաժամանակ բազմաստվածության (պոլիթեիզմի) և երկվապաշտության

(դուալիզմի), հեթանոսական փիլիսոփայության հիմնադրույթների հերքմանը: Աստծու, որպես գերագույն գոյի հարցի փիլիսոփայական, գոյաբանական դրվածքը բացահայտում է Մաշտոցի հայացքների նաև մի այլ բնութագրական առանձնահատկություն, այն է՝ հայրաբանության ներկայացուցչին յուրահատուկ գերբնապաշտությունը (սուպրանատուրալիզմը) և ստեղծապաշտությունը (կրեացիոնիզմը): Աստծու գերբնականությունը և անդրանցականությունը, ըստ Մաշտոցի, զուգորդվում են Նրա հավերժական, անսպառ ստեղծագործ ուժի հետ, որը և արարել է ողջ տիեզերքը: Նա ունի բացարձակ ազատություն և միաժամանակ ունի անսահման իշխանություն Իր արարածների՝ աշխարհի և նրա բնակիչների վրա: Բայց Իր ազատությունն ու իշխանությունը Նա երբեք ի չարը չի գործադրում, որովհետև Նա բացարձակ բարություն է:

Հակադրելով իր տեսակետը մագդեական փիլիսոփայությանը, որն ընդունում էր երկու սկզբնագոյերի՝ բարի և չար աստվածների առկայությունը, Մաշտոցը հռչակում է իր մոնիստական սկզբունքը, համաձայն որի՝ գոյություն ունի միակ, բարի աստվածային էություն: Աստծո անկապտելի հատկությունը բարությունն է, և Նա միայն բարի էակների արարիչ է, «որովհետև այն ամենը, ինչ Աստված ստեղծել է, բարի է ստեղծել»¹⁹:

Չարը որպես այդպիսին ի սկզբանե առկա էություն չէ. այն չունի էութենական (սուբստանցիալ) կեցություն: Բայց այդ դեպքում ինչո՞վ բացատրել այն, որ մենք տեսնում ենք աշխարհում առկա չարիքը: Որտեղի՞ց է նա առաջանում: Առաջ քաշելով քրիստոնեական փիլիսոփայության համար այս կարևոր խնդիրը՝ Մաշտոցն իր պատասխանները կրկին ուղղում է պարսիկների մագդեական կրոնի դուալիզմի դեմ: Ինչպես հայտնի է, մագդեականությունը (կամ զրադաշտականությունը) ելնում էր դուալիստական սկզբունքից, որի համաձայն՝ աշխարհը ստեղծված է երկու աստվածների՝ բարի Որմիզդի (Ահուրամագդայի) և չար Ահրիմանի (Անիրամանյու, Արիմնի) կողմից: Դասելով պարսիկներին «խուժադուժ ազգերի» շարքը, «որոնք (իս-

կական) կրոն չունեն»²⁰, Մաշտոցն արծարծում է աշխարհում չարի ծագման վերաբերյալ քրիստոնեական տեսակետը:

Որոնելով աշխարհում գոյություն ունեցող չարի պատճառը և հերքելով չարի՝ ի սկզբանե գոյության հեթանոսական, մասնավորապես մագդեական հայեցակետը, Մաշտոցն առաջ է քաշում կամքի ազատության, անձնիշխանության հիմնախնդիրը: Աստված, ստեղծելով բանական էակներին, հրեշտակներին և մարդկանց, շնորհել է նրանց ազատ կամք, ընտրություն կատարելու ազատություն, որը կարող է տանել և՛ դեպի բարիք, և՛ դեպի չարիք: Բայց ինչպե՞ս տարբերել չարիքը բարիքից: Ո՞րն է բարին ու չարը, առաքինին և արատավորը տարբերելու, գնահատելու չափանիշը: Մաշտոցը տալիս է հետևյալ պատասխանը. այն, ինչ չի հակասում Աստծու կամքին, չի հակադրվում Նրան և ուղղված չէ Նրա դեմ, տանում է դեպի բարին, իսկ այն ամենը, ինչ շեղվում է դրանից, ինչ բխում է հպարտությունից և ամբարտավանությունից և աստվածահաճո չէ, ըստ քրիստոնեական տեսակետի, որը և պաշտպանում է Մաշտոցը, տանում է դեպի չարիք: Հենց այստեղ է, կամքի այդ ազատության մեջ է, որն օգտագործվում է ոչ խելացի ձևով և Աստծու կամքին հակառակ, և ուղղվում է դեպի արատավորը, այստեղ է չարի աղբյուրը:

Կամքի ազատության և աստվածային նախախնամության, դրանց առնչակցության խնդիրը Մաշտոցի օրոք և հետագա դարերում շատ է հուզել քրիստոնյա աստվածաբանների միտքը: Հակասությունը Աստվածաշնչի ճակատագրապաշտական, ֆատալիստական դրույթների և կամքի ազատության մասին քրիստոնեական ուսմունքի միջև առաջացել էին բուռն բանավեճեր, որոնց մասնակցում էին այն ժամանակաշրջանի խոշորագույն մտածողները:

Այդ հարցում Մաշտոցի ժամանակակից, արևմտյան եկեղեցու սյուններից մեկի՝ Օգոստինոսի (354-430 թթ.) տեսակետը ուներ ճակատագրապաշտական բնույթ: Այն տանում էր դեպի աստվածային բացարձակ նախասահմանության ճանաչում և

փաստորեն տեղ չէր թողնում մարդու «անձնիշխանության» համար, որը մարդուն «շնորհել էր» Ինքը Աստվածը: Օգոստինոսը գիտակցում էր իր հայեցակետի խոցելի լինելը և այդ պատճառով հագեցրել էր այն բազմաթիվ մեղմացուցիչ վերապահումներով: Այսպես, օրինակ, նա ստիպված էր, հատուկ վերապահում կատարելով, նշել, որ «մենք ամենևին մեզ հարկադրված չենք համարում ո՛չ հերքել կամքի ազատությունը, ընդունելով Աստծու նախագիտությունը, ո՛չ էլ ժխտել (որն անպարկեշտություն է) ապագայի Աստծու կանխատեսությունը՝ թույլ տալով կամքի ազատությունը: Մենք ընդունում ենք և՛ մեկը, և՛ մյուսը. մեկը լավ հավատալու համար, մյուսը լավ ապրելու համար»²¹: Չնայած այս շեղմանը և իրարամերժ տեսակետների էկլեկտիկ համատեղմանը, Ավգուստինի ուսմունքը չփոխեց իր ֆատալիստական բնույթը:

Մյուս ծայրահեղ տեսակետի արտահայտությունն էր Օգոստինոսի գլխավոր հակառակորդ, ականավոր աստվածաբան Պելագիոսի (360-418 թթ.) ուսմունքը, որը մարդու անձնիշխանությանը տալիս էր այնքան մեծ ազատություն, որ աստվածային շնորհն ու նախախնամությունը կորցնում էին իրենց նշանակությունը: Ըստ Պելագիոսի՝ մարդը ծնվում է առանց որևէ մեղքի, նրա վրա ծանրացած չէ սկզբնական (Ադամի) մեղքը, և նա մեղք է գործում ինքն իր կամքով, և ինքն էլ իր վարքով, առանց Աստծու մասնակցության, վաստակում է «փրկություն»: Պելագիոսի ուսմունքը 418 թ. մերժվեց եկեղեցու կողմից և 431 թ. դատապարտվեց Եփեսոսի տիեզերական ժողովում: Սակայն այդ դատապարտությունը չէր նշանակում, որ եկեղեցին այս հարցում ընդունեց Ավգուստինի տեսակետը որպես պաշտոնական ուսմունք: Եկեղեցու կողմից հովանավորվող «ուղղափառ» տեսակետը տվյալ հարցում հեռու է ինչպես օգոստինականության, այնպես էլ պելագիականության ծայրահեղություններից: Օրթոդոքսալ ուսմունքի համաձայն, չկա ո՛չ բացարձակ նախախնամություն, ո՛չ էլ կամքի բացարձակ ազատություն: «Փրկությունը», որպես մարդկային կյանքի գերագույն խնդիր, պահանջում

է միաժամանակ և՛ Աստծու, և՛ մարդու մասնակցություն: Դաստվածամարդկային խնդիր է: Մինչդեռ Օգոստինոսը չափազանցում էր աստվածայինի դերը և, ըստ էության, հակվելով դեպի անսահմանափակ նախասահմանվածություն և նախախնամություն, իմաստագրկում էր մարդու մասնակցությունը իր իսկ փրկության հարցում: Իսկ Պելագիոսը և պելագիականները, առաջին գծի վրա մղելով մարդու «անձնիշխանությունը», նսեմացնում էին աստվածային նախախնամության դերը և Աստծու գործուն մասնակցությունը մարդու «փրկության» և «շնորհներին» արժանանալու հարցում:

Մաշտոցը՝ Օգոստինոսի և Պելագիոսի միջև տեղի ունեցող բուռն բանավեճի ժամանակակիցը, քաջատեղյակ էր նրանց հայացքների և կարողացավ խուսափել նրանց ծայրահեղություններից և մնալ «ուղղափառ» տեսակետի պաշտպանության դիրքերում: Ինչպես ցույց է տալիս Մաշտոցի հայացքների վերլուծությունը, նա կանգնած է հակաճակատագրապաշտության դիրքերում և մերժում է ավգուստինյան բացարձակ նախասահմանության գաղափարը: Նա ընդունում է մարդկային հոգու «անձնիշխանությունը» և գտնում, որ չարիքն առաջանում է ազատ կամքի չարաշահման, ոչ աստվածահաճո գործեր կատարելու հետևանքով: Բայց այդ ազատությունը մարդուն հնարավորություն է տալիս բարի գործերով, Աստծուն ծառայելով «փրկություն» վաստակել, չարի դեմ անգիջում պայքար մղել:

Քրիստոնեական ուղղափառ այդ տեսակետը հիմնականում ուղղված է պարսից դուալիստական կրոնի դեմ: Մաշտոցը մերժում է մագդեական կրոնափիլիսոփայական ուսմունքը, որի համաձայն աշխարհը գտնվում է երկու աստվածային ուժերի՝ բարու և չարի, լույսի և խավարի իշխանության տակ: Կամքի ազատության ճիշտ օգտագործումից է կախված նրա ապագան, որովհետև երկրի վրա գործած գործերով է Աստված որոշում արդար հատուցումը: «Անձնիշխան կամքով մենք կարող ենք Աստծուն թեքել դեպի բարի կամք՝ մեր բարի գործերով, ինչպես և թեքել դեպի պատուհաս՝ ըստ մեր չար գործերի: Որովհետև

մեր կամքից է կախված՝ վայելել Նրա բարիքները կամ մերժել»²²: Այսպիսով, բարի գործերի համար Աստված նրան հաղորդակից է դարձնում «շնորհների», տալիս է «փրկություն»: Ամեն ինչ աշխարհում Աստված բարի է ստեղծել, «իսկ չարիքը, որն առաջ է գալիս կամքի ազատությունից, ամեն մեկին առանձին տանում է դեպի կործանում»²³:

Ստեղծելով մարդուն իր կերպարանքով ու նմանությամբ՝ Աստված շնորհել է նրան բանականություն և ազատ կամք, «որպեսզի նա իմանա ինչպես խուսափել չարից և ընտրել բարին... իր ազատ կամքով»²⁴:

Մերժելով մագդեական ֆատալիզմը, որը չարիքը դուրս էր բերում աստվածային երկրորդ սկզբնապատճառ՝ չար աստված Ահրիմանից, Մաշտոցը չարագործությունների և արհավիրքների համար պատասխանատվությունը դնում էր մարդկանց վրա, որոնց հետ կարելի էր և հարկավոր էր պայքար մղել: Չարին դիմադրելու գաղափարը, այն կանխելու կամ արմատախիլ անելու նպատակով, օտարերկրյա նվաճողների դեմ հասունացող գոտեմարտի արտահայտությունն էր, մի գաղափար, որն իր հետագա զարգացումը ստացավ Մաշտոցի հավատարիմ հետևորդ և աշակերտ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» («Մուտ ուսմունքների հերքումը») աշխատության մեջ, որն ավարտին էր հասցվել պարսից դեմ բռնկած համաժողովրդական ապստամբության նախօրեին:

Մաշտոցի աշխատություններում, բացի վերը քննարկված խնդիրներից, որոշ տեղ է հատկացված նաև մարդու ճանաչողական ունակությունների հարցին: Այդ ոչ մեծ ծավալ ունեցող տեղիները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու Մաշտոցի իմացաբանական հայացքների և առհասարակ հայ փիլիսոփայական գրականության զարգացման վաղ շրջանում առկա իմացաբանության սահմանների մասին:

Մաշտոցը փորձում է պարզել, թե ինչպիսի միջոցներով և ինչ ձևով է մարդը ճանաչում իրեն շրջապատող աշխարհը: Աստված մարդուն տվել է բանական հոգի և ազատ կամք, և դրանով

իսկ նմանեցրել է Իրեն: Բայց մարդն ինչպե՞ս է իրականացնում իր բանական ունակությունը, և աշխարհաճանաչման համար ի՞նչ հնարավորություններ նա ունի:

Նախ և առաջ, ասում է Մաշտոցը, «Աստված ստեղծել է աշխարհը որպես մի դպրոց»²⁵, որպեսզի նրա բանական արարածները ուսանեն Արարչի խնամքը, կարողանան աստիճանաբար ճանաչել Նրա ստեղծած աշխարհը: Երկրորդ, այդ դպրոցում ուսուցումը դյուրացնելու նպատակով «արարածների կողմից ուսումնասիրվող բաները նա հորինեց որպես դպրոցյան գրեր և նրանց անուններ տվեց, որպեսզի անունները հնարավորություն տան իրարից տարբերելու գրերը, և որպեսզի գրածը արտահայտի անվան էությունը»²⁶: Ի դեպ, նշենք, որ գրերի (տառերի) և նրանց անունների հետ կապված այս օրինակը կարող է մի ավելորդ անգամ հանդես գալ որպես ապացույց հօգուտ այն բանի, որ «Հաճախապատում ճառերի» հեղինակն անմիջական առնչություն ունի գրերի ստեղծման գործին: Գրիգոր Լուսավորչի շուրթերում այս օրինակը ունկնդիրների համար անհասկանալի և անտեղի պիտի լիներ:

Ըստ Մաշտոցի՝ մարդն անմիջապես իր ծնունդից հետո հնարավորություն չունի դրսևորելու իր մտավոր, ճանաչողական կարողությունները: Դրանք բացահայտվում են աստիճանաբար, մարմնի աճի և ձևավորման համապատասխան: «Մութ և խավար որովայնից ծնված մարդը ձևավորված է երևում երկրի վրա: Եվ երբ մարմինը սնվելով աճում է և ստանում կատարյալ հասակ, նա, տարբեր արվեստներ սովորելով, դաստիարակվում է, և խելքով օժտված բանական հոգին՝ մարմնի աճին համապատասխան, ուսուցիչների խրատների շնորհիվ բացահայտում է ճանաչելու և իմանալու ընդունակությունը»²⁷:

Իմացությունը, գիտությունը, ըստ Մաշտոցի, օգնում է «ճանաչել Աստծուն»: Հասու լինել, իմանալ Նրան մարդ անկարող է, բայց նա ի վիճակի է ճանաչել Աստծուն՝ Նրա ստեղծած աշխարհը ուսումնասիրելով, իմանալով, ըմբռնելով: Մաշտոցը չի դնում Աստծու գոյության ապացույցման հարցը: Նրա համար

դա աներկբա ճշմարտություն է: Աստված անհիմնալի և անըմբռնելի է բանականության համար, սակայն ճանաչողությունը կարող է մոտեցնել դրան, կարող է նպաստել «արարածների միջոցով իմանալ երկնքի և երկրի և դրանց վրա գտնվող արարածների Արարչին, և լինել Նրա կամքի աշակերտ և արբանյակ»²⁸: Հենց դրա համար անհրաժեշտ է ճանաչել աշխարհը, դաստիարակության միջոցով լայնորեն զարգացնել մարդու մեջ ներդրված բանական ունակությունը:

Ճանաչողության գործիքներն են բանականությունը և զգայարանները: Դրանք, - ասում է Մաշտոցը, - «ստեղծված են Աստծու կողմից որպես կյանքի (համար անհրաժեշտ - Ս. Ա.) գործիքներ»²⁹: Դրանց օգնությամբ մարդ ճանաչում է իրերը, տարբերում է չարն ու բարին, վնասակարն ու օգտակարը, խուսափում է չարից և ընտրելով բարին՝ հաճոյանում Աստծուն: Նրանց հիմնական նշանակությունը և պաշտոնը կայանում է նրանում, որ ճանաչելով աշխարհը, մարդ պետք է գտնի ճշմարտությունը և հասկանա կյանքի իմաստը, որը, ըստ Մաշտոցի, Աստծուն ծառայելը և առաքինի կյանք վարելն է, որոնք և տանում են դեպի մշտնջենական երանություն անդրշիրիմյան աշխարհում:

Ճանաչողությունը հնարավոր է միայն այստեղ՝ երկրային կյանքում: Դրա համար պետք է զգալի իրերի և զգացողի, ճանաչելիի և ճանաչողի առկայություն, որոնք չեն կարող լինել ո՛չ մարդու ծնունդից առաջ, ո՛չ էլ նրա մահվանից հետո:

Զգայարաններից եկող տեղեկությունները չափազանց կարևոր են աշխարհի ճանաչման համար, բայց լրիվ վստահել նրանց չի կարելի, որովհետև նրանք կարող են տալ նաև աղավաղված տեղեկություններ, իսկ երբեմն էլ երևութականը իրականի տեղ ընդունել: Այդ իսկ պատճառով զգայարանների ցուցումները պետք է ստուգվեն մտքի կողմից, որը ճանաչողության վերին աստիճանն է:

Մարդկային միտքը, բանականությունը, ըստ Մաշտոցի, վճռական դեր է խաղում աշխարհի ճանաչման գործում: Բանա-

կանությունը հավաքում է իր մեջ զգայարաններից եկող տեղեկությունները, ստուգում և ուղղում է դրանց ցուցումները: Միայն բանականությունն է ճանաչում ճշմարտությունը իր ամբողջության մեջ: «Բանականության իմաստությունը բնակվում է ուղեղում,- ասում է Մաշտոցը,- այն գտնվում է գլխում. նա բոլոր անդամների պսակն է, զգայարանների գործարանը, շարժումների առաջնորդը և բոլոր անդամների հսկիչը, ուսուցիչը և հրամանատարը, որն ուղղում է սխալվող անդամներին, հաստատում է դարձնում վրիպողներին, իմաստուն է դարձնում անգետներին, լիացնում է կարիք ունեցողներին, բոլոր հնարքներով իր և ուրիշների փրկության ճարն է գտնում և հանդես գալիս հոգու իմաստության գանձարան»³⁰:

Մաշտոցը գերադասում է բանական ճանաչումը, համարելով, որ այն տալիս է ճշմարիտ գիտելիք, որն իր հավաստիությամբ գերազանցում է զգայարաններով ձեռք բերվող առարկայական գիտելիքը: Զգայարանները բանականության օգնականներն ու սպասավորներն են, բայց նրանց վրա չի կարելի անվարան հույս դնել, որովհետև նրանք հաճախ սխալվում են և կարող են թվացող բանը իրականի տեղ դնել: Ահա այստեղ է, որ հանդես է գալիս բանականությունը, որն ուղղում է զգայարանների սխալ ցուցումները: Բանականությունը այն կենտրոնն է, որն ապահովում է զգայարանների աշխատանքը, նա գործողության մեջ է դնում դրանց: Բանականությունն իմանում է, երբ են նրանք ճիշտ տեղեկություններ տալիս և երբ՝ սխալ, և ուղղում է նրանց: Եվ պարտադիր չէ, որ բանականությունը ղեկավարվի անմիջական զգայական տվյալներով: Նա կարող է ճանաչել իրերն ու որակական հատկանիշները նաև դրանց անուններով, որոնք տրված են արարման ժամանակ Աստծու կողմից: Բացահայտելով դրանց իմաստը՝ «մենք անուններից ճանաչում ենք իրերը»³¹: Բաղդատելով անուններն իրերի կամ հատկությունների հետ՝ միտքը որոշում է, համընկնո՞ւմ են դրանք, թե՞ ոչ: Որպես կանոն, բանականությունը հաստատում է իրերի և դրանց անվանումների համապատասխանությունը, օգնում է զգայա-

րաններին, ինչպես օրինակ, «քաղցր և դառը, որոնք քիմքով հավասարապես ընկալվում են որպես համեր, և անվանումով է, որ միմյանցից տարբերվում են քաղցր և դառը (համերը): Եվ դա հաստատված է արարչի տեսությամբ»³²:

Իմացման նպատակը, ըստ Մաշտոցի, Աստծու ճանաչումն է, բայց այն կատարում է խնդրի միայն կեսը, այն մոտենում է Աստծու ճանաչմանը Նրա արարածների իմացման միջոցով³³: Աստծուն իմանալ և ճանաչել կարելի է միայն հավատի շնորհիվ, որը և հանդես է գալիս որպես իմացության բարձրագույն ձև: «Անսխալ իմաստությունը և Աստծու ճանաչումը ձեռք են բերում հավատով», - հաստատում է Մաշտոցը³⁴: Այսպիսին է հայկական պատրիստիկայի հիմնադրի դատողությունների օրինակալի արդյունքը: Ճանաչողությունը խաղում է ենթակայական դեր, այն միայն օգնում է մոտենալու գերագույն, աստվածային էության ճանաչմանը՝ նրա կողմից ստեղծված բնության ճանաչման միջոցով: Աստված գտնվում է բնությունից վեր, Նա բացարձակ, գերբնական էություն է, որը հավերժ անսպառ իր բարությունից ստեղծում է ամեն ինչ, յուրաքանչյուր գոյ, ողջ տիեզերքը:

Իմացությունը, այսպիսով, Մաշտոցի մոտ վեր է ածվում աստվածաճանաչման, իսկ բնության բնական հետազոտությունը դառնում է օժանդակ մի օղակ նրա Ստեղծողին իմանալու, Նրա բարության և արդարության, դրա ստեղծածի գեղեցկության և տիեզերական ներդաշնակության ճանաչման համար:

* * *

Մաշտոցի աշխարհայացքը վառ կերպով արտացոլել է 410-430-ական թթ. գաղափարական հոսանքների միտվածությունը և գերիշխող մտայնությունը, երբ հայ գործիչների ուշադրությունը կենտրոնացած էր ազգային մշակույթի ստեղծման և հարաճուն մագդեական վտանգի դեմ պայքարելու վրա: Այդ ժամանակ ծրագրված աշխատանք էր տարվում քրիստոնեության

գաղափարական հիմքերի ամրապնդման ուղղությամբ՝ Սասանյանների կրոնաքաղաքական ծավալապաշտական նկրտումներին դիմակայելու համար:

Իր երկերում Մաշտոցը երկու կարևոր նպատակ էր հետապնդում: Առաջինը՝ քրիստոնեության կարևորագույն դրույթների հիմնավորումն է և դրանց մեկնաբանությունը: Այս հարցում դրսևորվել է Մաշտոցի՝ որպես քրիստոնյա մտածողի ձգտումը՝ փիլիսոփայորեն իմաստավորել կրոնական դրույթները, բանական ապացույցներով ամրապնդել դրանք և բանականության համար ընդունելի դարձնել: Երկրորդ նպատակը քրիստոնեական ուսմունքի պաշտպանությունն է տարբեր հեթանոսական պատկերացումների դեմ մղած պայքարում, քրիստոնեական միաստվածության դիրքերից պարսկական կրոնի դուալիզմի հերքումը: Ջատագովությունը Մաշտոցի հայրաբանական փիլիսոփայության բաղկացուցիչ մասն է: Մաշտոցն է առաջադրել հայ ջատագովության հիմնական ելակետային դրույթները:

Հայրաբանությունը Հայաստանում (ջատագովության հետ միասին) իր ծնունդով պարտական է Մաշտոցին, ինչպես և նրա օրոք ու նրա մասնակցությամբ կատարված մի շարք թարգմանական հուշարձաններին: Հայոց փիլիսոփայության սկզբնավորման համար Մաշտոցը կատարել է բացառիկ կարևոր դեր: Իր սկզբնավորման շրջանի համար բավականին բարձր գրական և գիտական մակարդակով այն մեծապես պարտական է Մաշտոցին:

Միայն վերջին 30-35 տարիներին «Սուրբ Գրիգորի Վարդապետությունը» թարգմանվել է նոր լեզուներով՝ անգլերեն (1970, թարգմ. Ռ. Թոմսոն _ «The Teaching of Saint Gregory». Harvard University Press, Cambridge, Massachusetts. վերահրատարկվել է 2001 թ. St. Nerses Armenian Seminary, New Rochelle, New York), աշխարհաբար (1983, թարգմ. Ա. Տեր-Ղևոնդյան, Ագաքանգեղոսի «Հայոց պատմության» կազմում, էջ 145-405, Երևանի համալսարանի հրատարակչություն) և ռուսերեն (2004, թարգմ. Ս.

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Արևշատյան, Агатаңгелос, История Армении գրքում, էջ 88-213, «Նաիրի» հրատ., Եր.):

Մեր աշխարհաբար նոր թարգմանությունը, որ կատարված է քննական բնագրից, պայմանավորված է «Վարդապետությունը», որպես հայ հայրաբանության և ջատագովության հուշարձան, անադարտ ներկայացնելու ցանկությամբ և հնարավորին չափ խուսափելու այն թերություններից, որ ունեցել է առաջին թարգմանությունը և որը հրատարակվել է առանց ծանոթագրությունների և առաջաբանի: Երբեք չենք ձգտել այս մեր թարգմանությամբ նսեմացնել մեր երջանկահիշատակ գործընկերոջ, պատմաբան-արևելագետ Արամ Տեր-Ղևոնդյանի կատարած աշխատանքը: Պատկերացնում եմ, թե ինչ դժվարությունների հետ է նա բախվել և այն տարիներին կարողացել տպագրել այդպիսի բովանդակություն ունեցող գիրքը: Մեր թարգմանությունը պարզապես մի փորձ է՝ մոտենալ «Վարդապետությանը» մեկ այլ կողմից և շրջանառության մեջ դնել այն որպես հայ կրոնա-դավանաբանական և փիլիսոփայական հնագույն հուշարձան: Ծանոթագրություններում մանրամասնել ենք այն հարցերը, որոնք, առաջաբանը չձանրաբեռնելու համար, լուսաբանել ենք այստեղ՝ շոշափելով բնագրից բխող տարբեր՝ կրոնապատմական, աստվածաբանական, բանասիրական և փիլիսոփայական խնդիրներ: Սուրբգրային բազմաթիվ մեջբերումներն ու հղումները նշել ենք հենց թարգմանության մեջ, օգտվելով քննական բնագրի հրատարակիչների տքնաջան աշխատանքի արդյունքներից:

ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՛

1 (259. XXIII). Տեր Աստված, միայն Նա է ինքնակա հու-
թյուն, և չկա ոչ ոք Նրանից առաջ: Չկա որևէ այլ Արարիչ
ամենայն տեսանելի և անտեսանելի գոյերի, բացի Միածին
Որդուց, որը ծնված է Հորից, և բացի Նրա Հոգուց, որը
Նրա հությունից է²: Նրա կողմից սկզբում ստեղծվեց այս
աշխարհը (Ծննդ., 1. 1), որն արարվեց միասնական Երրոր-
դության ամենակարող կամքի միակից գորությամբ, մեկ
գաղափարով, միահամուռ կամեցողությամբ և միասնական
հությամբ³: Ամեն ինչ Նրանից գոյություն առավ, երկինքն
ու երկիրը: Նա արարեց երկինքը խորանաձև⁴, որպես ամ-
րահարկ (հաստատություն), և երկիրը՝ պինդ սեղմված, որ-
պես ամուր հատակ (ունեցող հաստատություն). երկինքը՝
ոչ մի բանից չկախված, իսկ երկիրը՝ ոչ մի բանի վրա
չդրված, և նրա մեջ (Ջրերի) համատարած անդունդներ⁵
խավարով պատած, անտեսանելի, խառնիխուռն, անձև և
անկարգ, անզարդ, մթամած (Ծննդ., 1. 1-2):

2 (260). Այնուհետև Արարիչ Հայրը, (Իր մտադրությու-
նը) հայտնելով արարչակից Որդուն և համաստեղծիչ Հո-
գուն¹, որը շրջում էր Ջրերի վրա (Ծննդ., 1. 2), հրամայեց,
որ Ջրերի մեջ առաջանա ամրակուռ հիմք՝ ստեղծվելիք ա-
րարածների համար: Դրանից հետո երբ Իր համախոհ և
խորհրդակատար համագործողներին Հայրն ասաց՝ «Թող
լույս լինի» (Ծննդ., 1. 3), իսկույնեթ առաջացավ լույսը՝
խավար կլանող և օր բերող: Այնուհետև երևաց (մինչ այդ)
Ջրով ծածկված, սառը, ծովը ճեղքող, Ջրերը բաժանող հաս-
տատությունը (Ծննդ., 1. 7), որի շնորհիվ է հայտ եկավ ցա-
մաքը՝ ամեն տեսակի ծաղիկների և ծառերի ծնողը²: Դրա-

նից հետո միասնական համագոր Երրորդությունն ասաց, որ երկնքի վրա՝ խորանանման ջրեղեն հաստատության երեսին³ գոյանան լուսատուները՝ ճառագայթող, աշխարհը լուսավորող գնդերը, (կանխագուշակ) նշանների ցուցիչները, ժամանակի չափիչները (Ծննդ., 1. 14): Դրանից հետո (ստեղծվեցին) կենդանի շունչ ունեցող թռչունների ցեղը, սողունները և ջրում ծնվող ձկները (Ծննդ., 1. 20-21):

3 (261). Այնուհետև դողողացող հողի միջից (աղմկելով) դուրս թափվեցին չորքոտանի ցեղի բոլոր կենդանիները, ամեն մեկը կազմված իրեն հատուկ վայելուչ ձևով, ըստեղծվելով Աստծո նախապես պատրաստ կամեցողությամբ՝ ի պատիվ մարդու՝ այն վայելչական արարածի¹, որին Աստված (չուտով) պետք է ստեղծեր: Եվ Նա, Իր իսկ կամքը կատարելով, Իր բարերարությունը ցուցաբերելով, ստեղծեց (մարդուն) որպես բանական, մտածող, խոսող արարած՝ չխոսող, բանականությունից զուրկ, մտածելու անկարող արարածների միջև, որպեսզի մտածող արարածը իմանա Արարչի պատիվը և, ճանաչելով Արարչի աստվածային շնորհի փառավորությունը, իմանա, որ իր կողմից դրա փոխարեն պետք է փառավորի Նրան և որ իր հետ և իր միջոցով բոլոր (կենդանի) արարածները (և) երեւելի գործերը պետք է մատուցվեն (Արարչին)՝ Նրան փառավորելու համար:

4 (262. XXIV). Իսկ անտեսանելի էակներ արարելով՝ Նա ստեղծեց անտեսանելի փառավորիչները՝ հոգեղեն, հրեղեն հրեշտակների գորքը, զվարթունների բազմությունը¹: Նըրանք բնակվում են վերին երկնքում՝ ջրահարկի հաստատության վրա, իսկ մեզ՝ մարդկանց համար բնակություն վայրը սահմանվեց ներքևում՝ այս հողեղեն երկրի վրա: Քանի որ Աստված ամեն ինչ ի բարի է ստեղծում, Նա (արարածների համար) այս կարգը սահմանեց: Իսկ չարը, որն

առաջ է գալիս անձնիշխան կամքից², յուրաքանչյուր էակին առանձին է կործանում, չնայած որ Արարչի կողմից բոլորը բարի են ստեղծվել:

5 (263). Արարելով մարդուն՝ Նա զարմանահրաշ ձևով նրան տիրակալ¹ ստեղծեց, և հենց այդտեղ կարելի է տեսնել այդ (արարածի) հրաշալի, զարմանալի և անհասանելի հրեշտակային կերպարը: «Ստեղծենք մարդուն, – ասում է Նա, – մեր կերպարանքով ու նմանությամբ» (Ծննդ., 1. 26): Բայց այդ ո՞ւմ կերպարանքով կամ ո՞ւմ նմանությամբ², ինչպես ասաց, պետք է ստեղծեր մարդուն: Չէ՞ որ ճշմարիտ աստվածությունը հայտնի է որպես անմահ, անստեղծ, ոչ նյութական: Այն, ինչ պետք է ստեղծվեր, ինչպե՞ս կարող է նման լինել էականին, կամ էլ սակավ մի հողը (նմանվել)՝ Աստծու ինքնաբուն զորությանը, որն անսահման է և անչափելի՝ տարածություն մեջ: Նա սկիզբ չունեցող լիություն է, որը ոչ մեկի համար հասանելի չէ, հավերժ նույնն է, պարզ և անփոփոխ միակերպ է:

6 (264). Այդ ինչպե՞ս Նա կարող էր Իրեն օրինակ դարձնել ստեղծականի համար, կամ էլ կավը ձևել Աստծու կերպարանքով, համաձայն ասածի, թե «Աստծու պատկերով ստեղծեց նրան» (Ծննդ., 1. 27): Այս խոսքերը նախապես ասելով՝ Նա նախանշեց առաջիկայի պատմությունը, ապա անցավ ներկային և նշմարեց այն, ինչ ստեղծելու էր: Եվ այն, ինչ Նա (նախատեսել էր կատարել) մոտալուտ առաջիկայում, հենց այդ նույն ժամանակ էլ բացահայտ ցուցադրեց, որովհետև Տերը Աստծու պատկերով նրան ստեղծեց, նախ՝ իմաստության, բանավորության, խելամտության, կենդանության, ոգեչունչ էակ լինելու համար, որոնք առատորեն շնորհվեցին նրան, որպեսզի նա կարողանա գիտենալ, ճանաչել, իմանալ և ըմբռնել աստվածակիր, աստվածատուր իմաստության, բանավորության, աստվածածա-

նոթութեան և գերիշխանութեան, երկրից բխած բոլոր երկրածին արարածների վրա իշխելու և կանխատեսելով իմանալու բոլոր շնորհները, և կարգեց նրան տիրակալ բոլորի վրա: Եվ Աստված ասաց, թե «երկրի բոլոր քաղցրահամ սերմերը թող ձեզ համար սնունդ լինեն» (Ծննդ., 1. 29): Այնուհետև բոլոր գազաններին, անասուններին և թռչուններին մարդու առաջ բերելով՝ Հնազանդեցրեց (նրան): Իսկ հետո աստվածատուր իմաստութեամբ (մարդը) յուրաքանչյուրի առանձին տեսքի համաձայն սովորեց տարբերել նրանց և անվանումներ տալ: Եվ քանի որ Տերը մարդուն շնորհել էր ճանաչողություն, որպեսզի Նրա գիտութեամբ (մարդը) ճանաչի իր արարածներին, այդ իսկ պատճառով նա կոչվեց Նրան «նման»:

7 (265). Եվ հետո, Նա ասում է «նման» այն պատճառով, որ (մարդն) ունի ազատ կամքի իշխանություն: Որովհետև Աստծու ամենակարող և ամենաստեղծ գործունեությունը Բարերարի կողմից երկու պատվական և հարգարժան արարածներ ստեղծվեցին՝ մարդիկ և հրեշտակները: Եվ ահա, մարդկանց Նա թողեց ազատ կամքի իշխանությունը, որպեսզի մարդը իր սեփական ազատ կամքով պատրաստ լինի բարի գործեր կատարել՝ բարերար Տիրոջից և Արարչից շնորհների արժանանալու համար: Եվ Նա բացեց մարդու առաջ աստվածահաճո պատվիրանների գիտելիքը, որպեսզի նա իմանա, որ իր սեփական բարի կամքով պետք է խուսափի չարից և ընտրի բարին, որպեսզի իմանա, որ իր սեփական համարձակությունը, իր անձնիշխան կամքով կատարած գործերի փոխարեն է Արարչից ստանալու (արժանի) հատուցումը¹:

8 (266). Իսկ նմանության վերաբերյալ պետք է իմանալ հետևյալը. բոլոր մնացած արարածների համար սահմանված է մնալ հնազանդ ծառայության մեջ՝ հարկադրանքի

տակ, որպեսզի նրանք չկարողանան ավելին գործել, քան նրանց հրամայված է, որ նրանցից յուրաքանչյուրի վրա դրված է հրամաններ կատարելու հարկադրանքը: Բայց Աստված միայն մարդուն բազմապատիկ փառավորեց և, խելք տալով, մեծարեց՝ ստեղծելով որպես հոգևոր էակ, հրեշտակներին ստորադաս հոգևոր ընկեր:

9 (267). Տե՛ս, թե մարդուց ինչքան ավելի մեծ են արևը, լուսինը և աստղերը, բայց նրան ծառայելու համար են (ստեղծված), Պատվիրանադրի որոշման հարկադրանքի համաձայն: Ո՛չ արևն է դադարում իր ընթացքը կատարել, ո՛չ լուսինը կասեցնում իր մաշվելն ու լիանալը, ո՛չ աստղերն են իրենց դասավորությունը խախտում, ո՛չ սարերն են տեղերը փոխում, ո՛չ քամիներն են դադարում փչել, ո՛չ էլ ծովը՝ իր մոլեգնող, սաստիկ խռովահույզ ալիքների անդնդային մոլեգնությունը, անդադար հարվածող փոթորկաբեր ալեկոծումներով կարող է դրված սահմանը անցնել և ավերել երկիրը, և ո՛չ էլ երկիրն է դադարում այդ ամենը (իր վրա) կրել: Ամեն ինչ ստեղծված է Նրա հրամանով, և Նրա սուրբ և երկնավոր զվարթունքները չեն դադարում փառաբանել (Աստծուն): Նա սահմանեց երկնքի բարձրությունը և աստղերի քանակը, ծովի ջրերը և երկրի ավազը, լեռների ծանրությունը: Նա ամպեր է առաջացնում և քամիները դադարեցնում, նորից երեկո է բերում, դալարեցնում է չորացած բույսերը և հավաքում անձրևի շիթերը: Մարգարեություն ոգին Նրա մասին է ասում. «Ո՞վ կարողացավ իր ամբողջ չափել ջրերը, թզով երկիրը եւ քլով՝ համայն երկիրը: Ո՞վ կարողացավ լեռները կշռել կշեռքով և դաշտերը՝ նժարով» (Եսայի, 40. 12.): Ո՞րն է այն տեղը, ուր համբարձած գտնվում է Նա, Ում խոսքից են կախված բոլոր արարածները: Նա է իմանում երկնավոր գնդերի շարժման ընթացքը, որ շրջում են քամիներից վեր և չեն սխալվում,

(մեծ) տարածութիւններ են անցնում, բայց չեն շեղվում (նախանշված) ճանապարհից: Նրանք բարձրանում և իրենց տեղերն են գրավում՝ մեկ տարով վարձվող սպասավորների պես, հաստատվում և լույս արձակում առավոտից մինչև երեկո, երեկոյից մինչև առավոտ՝ հերթով փոխարինում իրար, առանց խանգարելու, անարգել վերադառնում սահմանված ժամանակին՝ ըստ տարվա իրար հաջորդող չորս մասերի¹, ինչպես որ Աստված է կարգել:

10 (268). Ինչպե՞ս են շարժվում երկնքի հաստատութիւնայն (վրա գետեղված) աստղերը, իրենց անդադար շարժման մեջ պահպանելով սահմանված կարգը, և (երբեք) չեն խախտում այն: Կամ էլ որտեղի՞ց են ծագում ահավոր քամիների հողմաշունչ հոսանքները և ո՞ւր են (նրանք) գնում և վերջանում: Եվ ինչո՞ւ են նրանք տարբերվում միմյանցից: Մեկը քաղցրաշունչ՝ սնուցում է բույսերը, մյուսն ավելի տաք է՝ բացում է բողբոջները, մեկ ուրիշը (գետնի) զգեստն է գործում, զարդարում է երկիրը տարբեր երանգների գույնզգույն ծաղիկներով, զգեստավորում է մերկ ծառերը, (նրանց) գագաթները զարդարում վարսերով:

11 (269). Որտեղի՞ց են ծնվում ամպեր բերող քամիները, որոնք նրանց իսկ կողմից ցիրուցան են արվում փոթորկի փայլատակումներից (հետո), և անձրևները, որ գալիս են որոտման ձայնից (հետո): Ուր որ Տերը հրամայի գնալ, այնտեղ էլ գնում, թափվում, ոռոգում են երկիրը, սնուցում են բույսերը, հասունացնում են լցվող պտուղները: Ո՞ւր փայնից են դուրս գալիս գետերը՝ աղբյուրներով հանդերձ, որոնք բխելով չեն սպառվում և հորդելով չեն լցվում:

12 (270). Երկիրքն ու երկիրը, արևն ու լուսինը, աստղերի բազմութիւնը և ծովերը, գետերը, գազանները և անասունները, սողուններն ու թռչունները, լողացող ձկները, որ կան և (հետո) լինելու են, բոլորը՝ ամեն մեկը, ըստ յուրա-

քանչյուրի համար սահմանված կարգի, կատարում են հրամաններ: Եվ միայն մարդուն էր կամքի ազատութիւն տրված անել այն, ինչ կկամենա: Նրանից ոչինչ ավելի չպահանջվեց, բացի այն բանից, որի մասին (Նա) զգուշացրել էր՝ չճաշակել այն ծառից, որպեսզի դրանով (Աստված) արժանի դարձնի նրան՝ փոքր բանի դիմաց մեծամեծ (պարգևներ) ընդունել: Եվ քանի որ նրան տրված էր աշխատելու շնորհք, փոքր (գործերի) դիմաց նա Արարչից ստանալու էր մեծամեծ շնորհներ: Ահա այդ պատճառով Նա սահմանեց նրա համար ազատ կամքի ինքնիշխանութիւն¹:

13 (271). Սակայն ինչպե՞ս է, որ հողից ստեղծված մարդը կարող էր Արարչի կերպարանքով աշխարհ գալ, և ինչպե՞ս է, որ նոր ստեղծվող մատչելի արարածը կարող էր իր գոյութիւնը ստանալ անմատչելի էութեան նմանութեամբ: Մի՞թե Իր անսահման, անպարագրելի, բացառիկ գորութեամբ միայն աստվածային անվանակոչումով մեծարեց նրան՝ ասելով՝ «ըստ պատկերի»: Դա ամենևին այդպես չէ: Որովհետև (Սուրբ) Գիրքն ասում է, թե «ըստ Աստծո պատկերի ստեղծեց նրան», և այլ տեղում ասում է, թե «Աստված մարդուն ստեղծել է անեղծ լինելու համար և արարել է նրան՝ ըստ իր բարերարութեան պատկերի» (Իմաստ., 2. 23): Եվս մի այլ աստվածաճանաչ իմաստութիւն ասում է, թե «մարդը Աստծո պատկերն է» (Ա Կորնթ., 11. 7): Հենց սկզբից Աստված մարդուն սահմանեց լինել աստվածային կերպարանքի մերձավոր և ճանաչող, որովհետև Նա ձգտում էր ոչ միայն հաստատել նրան, այլև ավելի շատ որպես ճանաչող ստեղծել: Որովհետև Աստված մարդուն երկրի հողից ստեղծելիս երևաց մարդու նմանութեամբ և նրա երեսին կենդանի շունչ փչեց, և մարդը դարձավ կենդանի հոգի (Ծննդ., 2. 7): Իր ձեռքերով ստեղծեց մարդուն և նրա մեջ ներարկեց կենդանութիւն՝ իր բերանով փչելով

բանականության, իմաստակիր մտածողության կենդանի շունչը, որպեսզի հենց աչքերը բացելիս արարածը ճանաչի Արարչին և ապա դառնա հարազատ և մերձավոր, գիտակ և պատմող Աստծու արարչության բարերարության մասին:

14 (272). Կամ էլ ինչպե՞ս բոլոր արարածները, որոնց հրամայված էր գոյություն առնել ոչնչից¹, (կամ) աղքատիկ, անձև նյութից, կարծես (Աստծո) պատկերին և հրամանների ձայնին արդեն սովոր, ինչպե՞ս պետք է բոլոր արարածները անհապաղ հրամանները կատարեին: Չէ՞ որ ճշմարիտ աստվածությունը առանց նյութական նմանությունների և ձայնային ազդարարումների ծածուկ է պահում իրեն հատուկ եզակի էությունը: Բայց իր տեսանելի արարածների համար, իրեն խոնարհեցնելով, Նա նմանություն ստանձնեց, որպեսզի սատարի արարածներին: Որովհետև եթե այդպես չլինեք, ոչ ոք չէր կարողանալու դիմանալ Նրա բնություն տեսիլքներին կամ ձայնի հնչմանը: Բայց որպեսզի (արարածները) կարողանան Նրան տեսնել (և լսել), դրա համար տեսանելի նմանություն առնելով, բարձրաձայն ազդարարեց:

15 (273). Արդ, Աստծու պատկերով ստեղծված մարդը, Արարչի ներգործությանը համապատասխան, օժտվեց ազատությունամբ, մտածողությամբ, խոսելու կարողությամբ և իշխելու պատվով, բայց ոչ Աստծուն հավասար չափով, որն ունի միայն Միածինը՝ ճիշտ համապատասխան Հոր էությունը: Այնուհետև իր ստեղծած բոլոր արարածներին Աստված բերեց Ադամի մոտ, որպեսզի տեսնի, թե ինչ անուններ է տալու նրանց: Սրանով հայտնի է դառնում այն, որ Ադամը դրանից առաջ գիտեր Արարչի անունը, որովհետև նախ ավելի կարևորը դա էր: Որովհետև Աստծու Միածին Որդին նույնպես այդ էր ասել Հորը՝ «այս է իմ (Հոր)

կամբը, որ ճանաչեն քեզ միակ ճշմարիտ Աստված» (Հն. 6. 40, 17. 3): Եվ այսպես Ադամը անհրաժեշտաբար նախ տվեց Արարչի անունը, որովհետև ում շնորհիվ կենդանություն էր ստացել, ամենից առաջ նրան տեսավ, որովհետև արարածները ստեղծվեցին հենց այն բանի համար, որ նա ճանաչի Արարչին¹:

16 (274). Արդ, իր առջև բերված (կենդանիներին) Աստծու ներկայությամբ նա տվեց անուններ և ծանոթացավ սկզբից եկածների և հետո եկածների հետ, որոնց վրա իշխեց ոչ միայն անուններ տալու պատճառով, այլև ընդհանրապես (իր) իմաստություն և իշխելու կարողության շնորհիվ: Նա (որպես մարդ) միայնակ էր՝ լինելով միաժամանակ առաջինն ու վերջինը, բոլոր արարածների մեջ ինքն իր հետ մնում էր մենակ, և չկար որևէ մեկը, որ լիներ օգնական, ընկեր և նրան նման:

17 (275). Արդ, Արարիչ Հայրը, խորհուրդ անելով արարչակից Որդու և արարչակից Հոգու հետ, ինչպես մարդուն ստեղծելուց առաջ առաջին խորհրդի ժամանակ, որովհետև ինչպես այն դեպքում ասաց՝ «եկեք մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ» (Ծննդ., 1. 26), և այն ժամանակ ստեղծելով Ադամին՝ չգոյութունից կենդանության կոչեց, նույն օրինակով և այժմ Հայրը ասաց Որդուն և Հոգուն՝ «եկեք Ադամի համար նրա նման մի օգնական ստեղծենք՝ իր պատկերի և կերպարանքի նմանությամբ» (Ծննդ., 2. 18): Եվ ապա մի զարմանալի քուն բերեց նրա վրա և նրա կողոսկրերից մեկը հանելով՝ այն չինեց կնոջ պատկերով և դրեց նրա առաջ: Եվ այնժամ Ադամը իր աստվածաշնորհ իմաստությամբ իմացավ, որ «այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից և մարմին՝ իմ մարմնից: Թող սա կոչվի կին, որովհետև իր ամուսնուց ստեղծվեց»: «Այդ իսկ պատճառով տղամարդը, թողնելով իր հորն ու մորը, պետք է միանա իր

կնոջը, և երկուսը պետք է լինեն մի մարմին» (Ծննդ., 2. 23-24):

18 (276). Չէ՞ որ այս բանը նա ասաց Աստծու առաջ, այնտեղ, ուր հրեշտակների ամբողջ զորքը Տիրոջ փառաբանությունն էր անում, և մարդը այդ հանդեսի մասնակիցն էր: Եվ այդ ամենահաս գիտությունը լեցուն խոսքով նա մարգարեացավ՝ բացահայտ դարձնելով մշտարթուն (Տիրոջ) գործը, որը կատարվեց իր քնած ժամանակ: Այդ խոսքերից պարզ դարձավ նրան, որ կինը ստեղծվել է մարդու (մարմնից), և մարդը՝ հողից, իսկ հողը՝ ոչնչից, և միայն Աստված է իսկական հույսը: Եվ այն ասածից, թե (մարդը), «թողնելով հորն ու մորը, պետք է միանա իր կնոջը, և երկուսը պետք է լինեն մի մարմին», իմացավ այս աշխարհի բոլոր կարգերը և այդ ամենի կատարումը:

19 (277. XXV) Այնուհետև Աստված վերցրեց և տեղավորեց մարդուն Ադին¹ (կոչված) բերկրալի պարտեզում, որտեղ ցույց տվեց երկու ծառ, մեկը՝ կյանքի, մյուսը՝ բարու և չարի իմացություն: Նա պատվիրան տվեց մարդուն չճաշակել այդ ծառից՝ սպառնալով մահվամբ, որպեսզի Աստծու պատվիրանը պահելով, Աստծու կողմից տրված նախանձելի իմաստությունը պահպանելով և պատվիրանին հետևելով՝ նա կարողանա վայելել էականի աստվածային իշխանություն անհասանելի փառքը: Եվ, ինչպես վերը ասացինք, հրեշտակներին և մարդկանց տալով կամքի ազատություն, նա բոլորին հրամայեց, որ ամեն մեկը իր հոժար կամքով ենթարկվի Արարչի հրամաններին, ինչի համար էլ ավելի փառքի կարժանանա: Եվ ահա, մարդուն Նա տվեց ոչ դժվար (կատարվելիք) հրաման՝ չճաշակել այն ծառից, որպեսզի դրանով ավելի մեծ պատվի արժանանա, ինչպես վերը ասացինք: Իսկ հրեշտակների բազմության զորքին Նա հրամայեց անդադար փառաբանել իրենց Արարչին, ո-

րը բնակեցրել էր նրանց մեծ պատվի և փառքի վերին, երկնային, հավերժական լույսի անտեսանելի մեծություն մեջ:

20 (278). Եվ ահա, հրեշտակների վերին զորքերի հոգեղեններից մեկը, տեսնելով մարդուն տրված բարերար Արարչի բարի խոստումը, և որ մարդը հետևում է իր Արարչի խոսքին՝ զգուշացված լինելով, որ պետք է պահպանի պատվիրանը, այդ չարը՝ ինքն իր կամքով չարացածը, չարի անուն ստացավ, ինչի պատճառով էլ «Հետևիր ինձ» ասող հակառակասերը սատանայի անուն ժառանգեց¹: Եվ ահա, չարը, նախանձելով մարդուն, պատրանքներով վայր դրեց նրան այն փառքից դեպի մահ, ինչպես և ասում է իմաստունը՝ «բանասարկուի նախանձով մահը մտավ աշխարհ» (Իմաստ., 2. 24)՝ այլասերելով խաբեությունը:

21 (279). Եվ ահա, մարդու թշնամին պատրանքների միջոցով, խաբեբայությունը անցնում է գործի: Տե՛ս, ինչ է ասում. «Ինչո՞ւ, – ասում է, – Աստված հրամայեց ձեզ չուտել այդ ծառից» (Ծննդ., 3. 1-2): Հայտնի է, որ Ադամն ուներ Աստծուց տրված ազատություն, անձնիշխան կամք և իմաստություն՝ իմանալով, որ Աստված պատվիրաններ դնողն է, իսկ ինքը՝ Ադամը, պատվիրաններ կատարողն է: Գուցե՞ սա տեղի էր ունեցել նենգությունը մինչև այս պատվիրանը տալը: Բայց Ամենագետից դա չէր կարող ծածուկ մնալ, որովհետև Նա (մարդու) «սրտի և երիկամների քննիչ է» (Սաղմ. 7. 10: Երեմ., 20. 12):

22 (280). Եվ ահա, տե՛ս, թե ի՞նչ էր ասում (օձը). «Եթե (դրանից) ուտեք, ասում է, աստվածներ կդառնաք» (Ծննդ., 3. 5): Գայթակղություն դրեց նրանց մեջ, իսկ ներքուստ ձգտում էր իր իշխանությունը ենթարկել նրանց, որպեսզի նրան (Ադամին) չփոթեցնելով (ստիպի) խախտել խոստումը, դրանով գուցե և կարողանա ժառանգել նրա տեղը: Ինչպես և իմաստուն և աստվածային խորհուրդը իմացող Աստ-

ծո առաքյալն ասում էր, թե «անօրեն իշխանը, երբ կամեցավ աստվածանալ, գործի անցավ և բոլոր մարդկանց մեղքով կապեց» (Հմմտ. Բ Կորնթ., 11. 3, 14), որպեսզի այն (խոստացված) բարիքներից նրանց հեռացնելով՝ հնարավոր դարձնի, որ ինքը ստանա խոստացածը: Իսկ նրանք, խաբվելով նրա հնարանքներից, կերան (արգելված պտուղը) և, պատվիրանը խախտելով, զրկվեցին աստվածային փառքից:

23 (281). Սակայն և այդ ժամանակ Նա, հայրաբար գլխավոր պատժի արժանի գավակներին, բարուկթյուն է ցուցաբերում, ինչի մասին և ասում է (Սբ.) Գիրքը, «երեկոյան նրանք լսեցին Տեր Աստծու՝ դրախտում շրջագայելու ոտնաձայնը» (Ծննդ., 3. 8): Եվ նրանք փախան ու թաքնվեցին ծառերի մեջ և (իրենց) ծածկեցին (թղենու) տերևներով, բայց Ամենագետի հայացքից թաքնվել հնարավոր չէ: Դրա մասին է ասում (Սբ. Գիրքը). «Ես մերձավոր Աստված եմ, — ասում է Տերը, — և ոչ թե հեռավոր Աստված: Եթե մարդը թաքնվի թաքստոցում, մի՞թե ես նրան չեմ տեսնի: Մի՞թե ես չեմ լցնում երկինքն ու երկիրը» (Երեմ., 23. 23-24): Նրա մեծուկթյունը լավ իմացող սուրբ մարգարեներից մեկ ուրիշը ասում է. «Ո՞ւր գնամ ես քո հոգուց կամ քո դեմքից ո՞ւր փախչեմ: Եթե երկինք ելնեմ, այնտեղ ես դու, եթե դժոխք իջնեմ, դրան էլ մոտ ես» (Սաղմ., 138. 7-8): Նրանք, այս ամենն իմանալով, այնուամենայնիվ փորձեցին թաքնվել:

24 (282). Սակայն Բարերարը ձայն տվեց. «Ո՞ւր ես, Ադամ»: Եվ նա պատասխանեց. «Լսեցի քո ձայնը, քանզի քայլում էիր այստեղ՝ դրախտում, և վախեցա, որովհետև մերկ էի և թաքնվեցի» (Ծննդ., 3. 9-10): Տեսնո՞ւմ ես, թե ինչքան նրանք Աստծուն մոտ էին և ծանոթ, որ նույնիսկ Նրա ոտնաձայնը գիտեին: Դրանով Բարերարը, անգետնե-

րին զղջալու առիթ տալով, նախ ոտնաձայն է հանում, որպեսզի քավուկթյուն բերող ոտքերին հասնելով՝ մարդն ինքը պատմի իր հանցանքների մասին և փրկուկթյուն գտնի:

25 (283). Սակայն երբ այն չեղավ, Աստված չկամեցավ մեղադրել և խստորեն պատժել, այլ հաշտվողաբար զիջեց՝ (ասելով) «Ո՞վ ասաց քեզ, թե մերկ ես» (Ծննդ., 3. 11): Որովհետև կամենում է, որոշ չափով ներելով, մերձեցնել իրեն, որպեսզի Աստծու մեղմուկթյունը ստիպի նրանց ապաշխարել: Բայց երբ որ սրանից էլ չսթափվեցին, այլ իրար մեղադրելով՝ ստորացան, այդ ժամանակ Նա, դատապարտելով նրանց, իր վճիռն արձակեց, որ նրանք պետք է հատուցեն և (նորից) հող դառնան (Ծննդ., 3. 19), որովհետև ովքեր չարագործուկթյուն են կատարում, նրանց հասնում է Աստծու արդար դատաստանը:

26 (284). Այնուհետև, նկատի ունենալով (Ադամի) անհնազանդուկթյունը, Նա ասում է. «Ահա Ադամը դարձավ Մեզ նման մեկը, նա գիտի բարին և չարը: Հեռացնեք նրան կենաց ծառից, որպեսզի նա, կերակրվելով (այդ ծառից), չապրի հավիտյան» (Ծննդ., 3.22): Բայց «ինչպես Մեզ նման մեկը» (պետք է հասկանալ) ոչ թե որ Աստված դարձավ, որովհետև նա ոչ թե ինքնագոյ էակ էր, այլ կարծեցյալ, ինչպես մարդկանց մոտ ընդունված են կարծեցյալ սուտ աստվածները, որոնք ստեղծվել են մարդկային անմտուկթյունից, հիմարուկթյունից և պղծուկթյունից, ինչպես և ձեզ մոտ ես տեսա քարի, փայտի պաշտամունքի մոլորուկթյունները, որ դուք քանդակել էիք տգիտուկթյան հետևանքով¹: Դրանք ո՛չ լսում են, ո՛չ խոսում, ո՛չ հասկանում են, ո՛չ էլ շարժվում, և չկա շունչ նրանց բերանում: Եվ դուք, թողնելով կենդանի Աստծուն, երկնքի և երկրի Արարչին, պաշտոն էիք մատուցում անշունչ, անխոս քարերին (որպես աստվածների), որոնք գոյուկթյուն անգամ չունեն:

27 (285). Հենց դրա համար աստվածատես սուրբ մարգարեները, ինչպես իմաստուն բժիշկներ, հոգ տարան պատրաստելու դարմանող դեղը, հիվանդի ցավին համապատասխան, որպեսզի հանեն, ջնջեն այդ գայթակղությունը և լիովին վերացնեն այն: Ինչպես և աստվածային Հոգու զորությունը լցված նրանցից մեկը գոչեց՝ ասելով. «Այն աստվածները, որոնք երկինքն ու երկիրը չեն ստեղծել, կորչելու են երկրից և այս երկնքի տակից. այլ Տերն է, որ իր զորությունը ստեղծեց երկիրը և իր սքանչելի մտքով տարածեց երկինքը, իր իմաստությունը հաստատեց ամբողջ տիեզերքը: Իր ձայնն արձակելիս Նա երկինքը լցնում է ջրերի առատությունը, երկրի ծայրերից ամպեր է բարձրացնում, և իր փայլատակումներն անձրևների վերածում, և հողմեր է հանում իր շտեմարաններից» (Երեմ., 10. 11-13):

28 (286). Բոլոր մարդիկ հիմարացան գիտությունից՝ իրենց գլխին տառապանք բերելով: Հետո իրենք իրենց երեսները անարգանքով պատեցին (Սաղմ., 82. 17) և իրենք իրենց իսկ արժանացրին Աստծու մեծ բարկության: Բայց ձեր մոլորությունը հանդիմանելու համար այժմ այսքանը բավական է, քանի որ դա պատշաճ է անել համապատասխան տեղում: Իսկ հիմա ինչ որ սկսեցինք, ըստ կարգի, պատմել ձեզ, յուրաքանչյուրի մասին կպատմենք ձեզ՝ ըստ հերթականության:

29 (287). Դրանից հետո դուրս հանելով մարդուն դրախտի հեշտագին հանդարտությունից՝ (Աստված) բնակեցրեց նրան դրախտից դուրս և փակեց նրա առաջ կենաց ծառի ճանապարհը, որպեսզի նույնիսկ ականատես չլինի դրախտի վայելչությանը: Ապա և երկիրն անիծվեց, փուշ և տատակ (նրա վրա), և տանջանքներով (հայթայթվող) հաց և մահվան արժանի Ադամին՝ մահ (սահմանվեց): Եվ սա մարդասիրության նշան է, ինչպես և մարգարեի բերանով ա-

սաց Աստված. «Քո ապստամբությունը քեզ խրատ է լինելու, և քո չարությունները կշտամբելու են քեզ: Խելքի կգաս (ու կտեսնես), թե քեզ համար դառնաղետ է ինձ լքելը, — ասում է քո Տեր Աստվածը» (Երեմ., 2. 19): Եվ մի ուրիշ (մարգարե) Աստծո անունից ասում է. «Երբ դարձի գաս և հոգոց հանես, այն ժամանակ կապրես և կիմանաս, թե որտեղ ես գտնվում» (Եսայի., 30. 15): Որովհետև երբ նա ճաշակի դառնությունը և մոտալուտ մահվան կասկածներով պաշարված լինի, աղոտ կերպով, ինչպես երազում, հիշելու է կենաց ծառը և հեծեծելով փնտրելու է վայելչության դրախտի մուտքը: Այն, որ նա բնակեցվել էր դրախտի դիմաց, հաստատում է իմ ասածները:

30 (288. XXVI). Իսկ Բարերարը չէր հեռանում նրանցից ոչ միայն դրախտում, այլև դրանից դուրս, երբ բնակեցնում էր դրախտի դիմաց: Եվ իր բարերարությունը համաձայն Նա հրաման տվեց բազմանալ երկրի վրա, որտեղ և Արարչի արձակած հրամանի համաձայն նրանք, երկրի վրա ծնունդ տալով, սկսեցին բազմանալ, ասածի համաձայն՝ «Աճեցեք, բազմացեք և լցրեք երկիրը» (Ծննդ., 1. 28):

31 (289). Ադամի որդիներից անդրանիկի անունը Կահել էր, իսկ մյուսինը՝ Հաբել¹, որոնք և, բացահայտելով Նվիրողի կողմից (իրենց) տրված իմաստությունը, Նրա իմաստությունից միջոցով ճանաչեցին Նրան որպես Արարչի: Եվ ահա, ավագ որդին՝ Կահելը, բերեց ընծա արմատներ, ցորենի հասկերից կապած խուրձ և այն որպես զոհաբերություն մատուցեց Նրան: Իսկ Հաբելը, այդ տեսնելով, ընծայեց (Արարչին) իր նորածին գառներից և ոչխարների հոտից (ամենալավերին): Եվ Աստված, իր մարդասիրության համաձայն, խոնարհվելով Ադամի որդիների ընծաների հանդեպ, ճանաչեց նրանց մոտիկից: Որովհետև հենց այդ ժամանակ ընտրություն կատարեց. տեսնելով մեկի միամտությունը՝

զոհն ընդունեց, իսկ մյուսի մոտ տեսնելով եղբոր նկատմամբ նենգությունն՝ դատապարտեց և մերժեց (զոհը)՝ նրա նենգության պատճառով: Եվ դրա համար նա մտքում մահ նյութեց և սպանեց եղբորը: Եվ նրա պատճառով երկիրը նզովվեց, և նա ինքն էլ իր սերնդի հետ միասին անիծվեց:

32 (290). Եվ ահա, սպանված Հաբելի փոխարեն Ադամը Աստծուց ուրիշ որդի ստացավ, որի անունը Սեթ էր: Իսկ այն սպանվածը, իր արդարության համար, ողջ է Աստծու մոտ, որովհետև Նա, որ ստեղծեց ոչնչից, նույն Ինքը կարող է կենդանացնել նրան, երբ որ կամենա, ինչի մասին շատ դյուրին է պատմել ձեզ: Երբ մենք տեսնենք ձեզ հավատի մեջ ջերմեռանդ, մենք կպատմենք Նրա մասին, որի արդարությունը առկա է և գործում է հավիտյանս հավիտենից: Եվ ահա, նենգ մարդասպան Կահելը նզովվելով անիծվեց: Այդ պատճառով Աստծու հրամանով նա արտաքսվեց. որովհետև Աստված օրհնեց Սեթին և հրամայեց նրան, որ նրա օրհնված սերունդը չխառնվի մարդասպան Կահելի անիծված սերնդին: Ահա այս երկու տոհմերից մարդիկ բազմացան երկրի վրա բոլոր կողմերում (Ծննդ., 6. 1):

33 (291). Եվ ահա, Սեթյան ցեղին տրվեցին նահապետներ՝ արդար այրեր, մինչև ութերորդ սերունդը: Աստծու բարերարությունը նրանցից չէր հեռանում: Այն հաճախում էր բոլոր նրանց, ովքեր չէին մոռանում (Աստծո հետ) իրենց մերձավորության մասին: Այդ պատճառով էլ Նա հայրերին երկարակյաց դարձրեց և շնորհեց (նաև) երկարակյաց զավակներ, որպեսզի նրանք, թեկուզև զավակներ ունենալու ցանկություն պատճառով շարունակեն Աստծուն հետամուտ լինել, մանավանդ որ երկրածին արարածների գոյություն համար հույժ կարևոր է սերունդ ունենալը:

34 (292). Ահա՛ նահապետները հերթականությամբ: Առաջինն Ադամն է՝ Աստծու կողմից ստեղծված (մարդը), այ-

սինքն Ադամը. հետո Սեթը, և նրանից՝ Ենոփսը, և նրանից՝ Կայնանը, և նրանից՝ Մալալիելը, և նրանից՝ Հարեղը, և նրանից՝ Ենոփքը: Եվ ապրեց Ենոփքը, հարյուր վաթսուհինգ տարեկան դարձավ՝ և ծնեց Մաթուսաղային. և Ենոփքը սիրելի եղավ Աստծուն (Ծննդ., 5. 21-24):

35 (293). Եվ բոլոր նահապետները երկարակյաց են եղել, քանի որ նրանք ծնվում և սերունդ էին տալիս Աստծու բարերարության շնորհիվ, ապա և զավակներ ծնելով՝ նրանց հետո նույնպես երկարակեցություն տվեց, որպեսզի նրանք՝ Աստծու կողմից շնորհ ստացած հայրերը, պատմեն որդիներին: Որպեսզի նրանք պատվիրանների պես լինեն զգուշացնող՝ նրանց (զավակներին)՝ Աստծու մասին հաղորդելու նպատակով, ինչպես և ասել էր (Մովսեսը). «Հարցրու դու քո հայրերին, և նրանք կպատմեն քեզ, և քո ծերերին, և նրանք կասեն քեզ» (Բ Օր., 32. 7.): Սրանից պարզ է դառնում, որ նրանք երկարակյաց էին դրա համար, և ոչ թե (միայն) բազում զավակներ ունենալու համար:

36 (294). Որովհետև Աստված թեպետև ասաց Ադամին՝ «Աճեցեք և բազմացեք, լցրեք երկիրը» (Ծննդ., 1. 28), նախապես իմանալով այն մարմնական բարիքների մասին, որ լինելու էին, այլ Աստված կամենում էր ոչ միայն, որ նրանք բազմանան, այլև, որ ստանան մշտնջենական կյանք, անմահություն: Ինչպես և տեսնում ենք Ենոփքին երկրային կյանքից, ամուսնանալուց և զավակներ ունենալուց, արդար կյանքով ապրելուց հետո (Աստված) կենդանի տարավ նրան (Իր մոտ) անմահության վիճակի (արժանացնելով) (Ծննդ., 5. 24): Դա այն մեկ մարդու համար չէր (արվել), այլ որպեսզի նրա ելքը (դեպի երկիրը) ճանապարհ բացեր ուրիշների համար: Եվ ոչ էլ բռնությամբ նա տարվեց դեպի այն (հավերժական) կյանքը, այլ ի հատուցումն արժանավայել ապրած (երկրային) կյանքի: Նույն ձևով Աստված

կամենում էր բոլոր մարդկանց տանել դեպի անմահություն այն բանից հետո, երբ բոլորը կվայելեն այստեղ (իրենց երկրային) կյանքը:

37 (295). Ութերորդ սերնդի¹ բոլոր մարդիկ մահապարտ դարձան. մեղքերին ստրուկ դառնալով (Հոռմ., 6. 17)՝ նրանք մոռացան Արարչին՝ աստվածային կյանքի հույսը կորցնելով և ավերելով իրենց ուղիղ ճանապարհը: Աստված նրանց իրենց կամքին թողեց, իր մարդասիրության շնորհի ոգին նրանցից հեռացրեց՝ ափսոսալով, որ ստեղծել է նրանց (Ծննդ., 6. 6): Աստծու ափսոսալը Նրա մեծ հոգատարության նշանն է, (այն հույսը) որ սրանով թերևս իր արարչական զորության մասին հիշեցնի մոռացող արարածներին, որոնք խառնակվել են Կայենի անիծված սերնդի հետ՝ տրվելով պոռնկության, այլանդակ կենցաղավարության, մեռելոտի ուտելու: Մարդկանց գարշելի վարքի պատճառով ամբողջ երկիրն իսկ զագրելի դարձավ, ինչպես ասում է (Ս. Գիրքը). «Բոլորն ամբողջությամբ ընկել են ամբարշտության գիրկը, և ամեն մարդ երկրի վրա ապականել է իր ճանապարհը» (Ծննդ., 6. 12):

38 (296). Եվ այդ ժամանակ մի արդար մարդ գտնվեց՝ արդար տոհմից, որի անունը Նոյ էր: Աստվածահաճո (հնազանդ) լինելու համար նա սիրելի եղավ Նրան: Աստծուց հրաման ստանալով՝ Նոյը սկսեց, բազմամյա աշխատանք կատարելով, պատրաստել փայտից մի տապան՝ արկղի նման, որովհետև Նա պետք է պատժեր (մարդկային) այլասերված ցեղը: Այնուհետև Նա խոստացավ տեղավորել տապանի մեջ Նոյին՝ իր ընտանիքով և բոլոր շնչավոր արարածներով, և (տեղավորելով նրանց) իր ամենապահ ձեռքով փակեց այդ տապանը: Եվ հետո ավազով եզերված ջրերի անդունդները շրջելով ցամաքի վրա, երկնքից հորդացող հոսանքի հետ միասին, պատժիչ ծովով, ահավոր հեղե-

ղով, իր բարկությամբ Նա ոչնչացրեց այն ամենը, ինչ կար երկնքի տակ, ողողելով սրբեց ամեն ինչ: Իսկ երբ պատիժներն ավարտվեցին, Նա հավիտենական ուխտով արդար մարդուն աշխարհի հայր և երկրի տեր կարգեց, որին և երկարակյաց արեց, որպեսզի նա պատմի հաջորդ սերունդներին իր տիեզերական բարկության աստիճանի մասին:

39 (297). Բայց այնուհետև միատոհմ, միալեզու մարդիկ, բազմանալով, հավաքվեցին և մտադրվեցին շինել մինչև երկինք հասնող կլոր աշտարակ, որպեսզի հավերժ փառաբանեն իրենց անունը՝ հավիտենական Աստծո փոխարեն, «որի անունը հավերժ է և հիշատակը (փոխանցվելու է) սերնդից սերունդ» (Սաղմ., 134. 13): Որը ցույց տալով իր աստվածային իմացությունը՝ վերին ներգործությամբ խառնեց, խռովեցրեց միասնական տոհմի ողջ բազմությունը, բաժանելով այն այլալեզու, օտար, իրար համար անհասկանալի լեզուների, ցրեց նրանց աշխարհով մեկ, որպեսզի այսուհետև նրանք իրենք իրենց համար չընդունեն ինքնակամ որոշումներ, այլ հնազանդորեն ապրեն Աստծու կողմից հավիտենապես որոշված սահմաններում: Բաժանելով ժողովուրդներին, խառնելով լեզուները և ցրելով Ադամի որդիներին՝ Նա սահմաններ դրեց բոլոր ազգերին՝ Աստծու հրեշտակների թվին համապատասխան (հմմտ. Բ Օր., 32. 8):

40 (298). Եվ քանի որ սփռված ժողովուրդներն իրենց աստվածամոռաց իմացություններով, ամեն մեկը անջատ, տարվել էին իրենց նյութական ստեղծվածքների պաշտամունքով, ընկնելով մոլորության անդունդները, այդ ժամանակ Աստծու կողմից ներշնչված մի մարդ երևաց, ամեն ինչով երանելի, որի անունն Աբրահամ էր: Ճշմարիտ Աստծուն ուղեկից լինելով՝ նա հնազանդորեն հետևում էր Նրա հրամաններին: Նրան էր ուղղել Աստված իր խոսքը, թե

պետք է դուրս գա իր հայրենի երկրից, որովհետև Աստված բարեհաճ է իրեն փնտրողների հանդեպ:

41 (299). Եվ ահա, Աբրահամը դուրս եկավ իր հայրենի երկրից, Աստծու հրամաններին հետևելով, առաջ գնաց հավատով այնպես, որ արժանացավ ընդունելու մեծ ավետիսը, կատարեց իր Արարչի կամքը. նա դուրս գալով գնաց օտար հեթանոս ցեղերի մոտ որպես պանդուխտ և, աստվածապաշտ մարդկանց սովորության համաձայն, երկար տարիներ ինքը համբերությամբ կրեց (գրկանքներ):

42 (300). Երբ լրացավ Աբրահամի իննսուներե տարին, Աստված երևաց նրան, ուխտ դնելով խոսեց (նրա հետ) և համբարձավ (Ծննդ., 17. 7-10): Եվ նորից, Մամբրեի (պուլրակի)¹ մոտ հայտնված հրեշտակների միջոցով Նա խոստացավ (Աբրահամին) որդի պարգևել, և որ Իր Որդին ևս գալու է մարմնավորված, մարմին առնելով Աբրահամի սերնդից և լինելով Աբրահամի որդի, և որ բոլոր հավատացյալների համար նա (Աբրահամը) լինելու է արդարության հայր (Հռոմ., 4. 11), և որ նրան (Աստված) կարգելու է արդարների նահապետ:

43 (301). Նա ստացավ նաև մարմնավոր անթիվ բազմության սերունդ ունենալու խոստումը (Ծննդ., 22. 17): Նույն եղանակով (հրեշտակների միջոցով) Նա զգուշացրեց սողոմացիների չարագործ երկրի բնակիչներին՝ կուրացվածների օրինակով (Ծննդ., 19. 4-11): Սակայն երբ նրանք հաշվի չառան այդ, Նա իջեցրեց նրանց վրա կրակաբեր անձրևներ և աստվածասաստ իր բարկությամբ պատժեց անհապաղ:

44 (302). Դրանից հետո Նա կատարեց սերնդի մասին նրան տրված խոստումը, որովհետև տվեց նրան Իսահակ որդի: Եվ Աստված նորից երևաց Աբրահամին և նրան փորձելու համար ասաց, որ պետք է զոհաբերի Իսահակին, ին-

չի շնորհիվ ստացավ ապագայի մասին¹ բարի լուրը: Նմանապես և Աբրահամի որդի Իսահակին երևալով՝ Աստված հուշեց նրան հայրենի երկրում մնալու մասին (Ծննդ., 26. 2-5):

45 (303). Իսկ Իսահակի որդի Հակոբին Աստված հայտնի դարձավ և երևաց մի սքանչելի տեսիլքի միջոցով՝ բոլոր հրեշտակների հետ միասին դեպի երկինք բարձրացող սանդուղքի ձևով: Մի անգամ էլ Նա երևաց սովորական մարդու տեսքով և գիշերային մենակովի բռնվեց (Հակոբի հետ): Բայց մարգարեն ասում է, որ դա հրեշտակ էր, որը և կաղացրեց Հակոբին¹ և, նշելով նրան աստվածատեսի առնումով, ազատ արձակեց. և սա Տիրոջ երևալու մասին մշտական հիշեցումն էր, որը փառավորելու էր Հակոբի սերունդը:

46 (304). Եվ Նրա երևալը այնքան սովորական, մտերմիկ և հաճախակի դարձավ, որ նույնիսկ հեթանոս թագավորներին Նա հայտնվում էր տեսիլքի ձևով, հնազանդեցնելով, որպեսզի ապահով պահի իրեն ճանաչողներին: Նրանց մասին է պատմում (Ս. Գիրքը). «Նա կշտամբեց թագավորներին նրանց համար, (ասելով որ) չմոտենան Տիրոջ օծյալներին» (Սաղմ., 105. 14-15), հայտարարելով, որ «արդարև Տիրոջ բաժինն եղավ (իր ժողովուրդը)՝ Հակոբը, իսկ իր ժառանգության վիճակը՝ Իսրայելը» (Բ Օր., 3. 9):

47 (305). Նա միշտ նրանց հետ էր լինում, օգնություն ցուցաբերելով, օրհնում էր, որ պանդխտության մեջ նրանց սերունդները աճեն և բազմանան: Այսպես, սովի պատճառով Նա տարավ նրանց եգիպտացիների երկիրը, որ բերանում հաց ունենան: Նրանք մնացին այնտեղ հինգ նահապետների (հաջորդաբար) գլխավորությամբ՝ Աբրահամի դարից հաշված մոտ չորս հարյուր երեսուն տարի: Այնտեղ՝ եգիպտացիների երկրում, կարելի էր տեսնել մարդասեր

Աստծու բարձրագույն շնորհների առատությունը, որովհետև մի մարդու, որը բանտում փակված մի կալանավոր էր, Նա դուրս բերելով բարձրացրեց, հայտնի դարձրեց նրա մարգարեական արվեստի միջոցով և եզրպատացիների վրա տիրակալ կարգեց:

48 (306. XXIX). Դրանից հետո, եզրպատացիների երկրում բազմացնելով Իր ժողովրդին, Նա տեսավ այն նրանց կողմից հալածված: Եվ ահա, Տերը գալով ի հայտ բերեց եբրայական ժողովրդից մի մարդու, որի անունը Մովսես էր, որին, շատ հավանելով, աստվածային մտադրություններին (հաղորդակից լինելու) արժանի էր գտել: Աստված երևաց նրան Քորեբ լեռան վրա մորենու մեջ՝ բորբոքված բոցի պես: Մովսեսին Նա իմաց տվեց իր հայրենի երկրի մասին և, հայտնելով Իր անունը՝ էական¹, ուղարկեց Եզրպտոս: Նույն ժամանակ Նա, տարբեր տեսակի հարվածներ հասցնելով, տանջում էր եզրպատացիներին՝ խրատելու համար:

49 (307). Եվ Նա իսրայելացիներին դուրս բերեց (Եզրպտոսից)՝ պաշտպանելով նրանց ամպով և սյունաձև լույսով և բոցավառ կրակով: Նա ձեռքեց ծովի խոր անդունդները և, ջրի տակ թողնելով եզրպատացիներին, անցկացրեց ժողովրդին և դուրս բերեց անապատ, ինչը և վայելուչ ձևով նկարագրված է (Ս. Գրքում): Նա տարավ (ժողովրդին) Քորեբ, բարձրացրեց նրան Սինայի լեռը և այնտեղ, Սինեական լեռան դագաթին աստվածային ամպից խորան խփեց, որի մեջ կար սյունաձև ճառագայթներ արձակող գունդ: Եվ լեռը պատված էր մեգով ու մառախուղով՝ վարագույրի պես: Այնտեղ էր բյուրավոր հրեշտակների բանակը:

50 (308). Դրանից հետո Նա կանչեց Մովսեսին, որպեսզի նրա առաջ բացի աստվածային տեսարանը, որը և շատ պարզ տեսավ կապտավուն, թանկարժեք քարերով զարդարված, մաքուր, երկնագույն մի պատվանդան՝ ոտքերի

համար, որն ուներ աղյուսի ձև, որպեսզի հիշեցնի կավի և ջրի՝ ազդեցություն և սանձարձակ ժողովրդի լրբացած սրտի մասին, իսկ փառքի աթոռից և նրա շուրջն ահավոր փայլատակություն էր՝ բոցկլտացող կրակի նման:

51 (309). Աստված, որ կատարյալ լույս է, կատարյալ լսողություն, կատարյալ տեսողություն, կատարյալ բանականություն, կատարյալ գորություն, կատարյալ իմաստություն է, կենդանի հոգի, այրող հուր, անայլայլ լույս, անասելի փառք, անքննելի տեսարան, անսահման մեծություն, երևաց նրանց այնքան, ինչքան նրանք ի վիճակի էին դիմանալու Նրա մեծություն տեսարանին: Դրանից հետո Նա ինքը բացվեց քահանաներին՝ ծերերի հետ միասին, և երևաց ամբողջ ժողովրդին՝ բոցկլտացող կրակի տեսքով, և շեփորի նման ձայնով տվեց նրանց պատգամների պատվիրանները, որոնք քարե տախտակների վրա գրվեցին Աստծու ձեռքով, որպեսզի նրանք վախենան Նրա դատաստանից և պահեն Նրա պատվիրանները: Եվ Նա ասաց Մովսեսին. «Ահա, ես պիտի գամ ամպի (սյան) մեջ՝ իսրայելացիներին դեմ հանդիման քեզ հետ խոսելու, որպեսզի հավատան քեզ» (Ելք, 19. 9): Եվ Նա երևաց կառքի մեջ՝ (նստած, շրջապատված) քերովբեներով՝ ամպերի սյան մեջ և միգախառն հրով:

52 (310). Երբ (Մովսեսը) երկրորդ անգամ բարձրացավ Տիրոջ առաջ կանգնելու համար, նա ասաց. «Եթե ես քո շնորհին եմ արժանացել, ինձ հայտնապես երևա, որ քո անունն իմանամ, որովհետև (ուզում եմ իմանալ, թե) ինչով եմ արժանացել քո շնորհին» (Ելք, 33. 13): Տերն ասում է նրան, թե «չես կարող իմ երեսը տեսնել, որովհետև մարդ չի կարող ինձ տեսնել, և ապրել, բայց ահա քեզ կդնեմ ժայռի խոռոչի մեջ և իմ փառքը քո կողքով կանցկացնեմ» (Ելք, 33. 20-22): Եվ ցույց տվեց նրան, որ գլխասիրտ է և ո-

ղորմած, և երևաց նրան խոնարհուլթյամբ, որպեսզի նա չմեռնի, այլ փրկվի և ապրի: Նա եկավ և երևաց ամբողջ ժողովրդին, և բոլորը լսեցին Նրա ձայնը, երբ Նա խոսում էր Մովսեսի հետ:

53 (311). Եվ այսպես շատ օրերի ընթացքում մնալով լեռան վրա և (բոլորին) պահելով իր հայացքի առջև և լեռը դարձնելով հոգեշունչ գրքի նման՝ Նա ուսուցանում էր Իսրայելի որդիներին, որոնց և շնորհեց իր սահմանված պատվիրանները և աշխարհի ստեղծման պատմությունն ավանդողի (իրավունքը) տվեց Մովսեսին: Նա ցույց տվեց նաև աննյութական խորանի մի նմանակ (Հմմտ. Ելք, 26. 9): Այն տեսնելով՝ Մովսեսը, Իսրայելի որդիների հետ միասին, պատրաստեց դրա օրինակով մի նյութական խորան, որի մեջ պետք է Աստված բնակվեր՝ նրանց միջև: Դրա մեջ Նա միշտ խոսում էր Մովսեսի հետ և պատմում իր կողմից սահմանվող բազմաթիվ օրենքների մասին: Նա միշտ նրանց հետ էր անապատի հանգրվաններում և հրաշագործ նշաններով ուղղորդելով՝ հասցրեց խոստացած (ավետյաց) երկիրը:

54 (312). Նա, նրանց հետ լինելով անապատում, քառասուն տարի նրանց շրջեցնում էր այնտեղ, որպեսզի նրանց մոռացնել տա քարեղեն կուռքերին պաշտելու հեթանոսական սովորությունը և, թերևս կարողանան մասամբ ազատվել սնոտի հեթանոսական ուսմունքներից, որոնց ծառան էին դարձել իրենց անմտություն պատճառով: Որովհետև Նա մտածեց, որ եգիպտացիների երկրից նրանց դուրս բերելով՝ իրենց չար սովորություններով հանդերձ, գուցե այնտեղ, ուր պետք է տարվեն, նրանք կտեսնեն ավելի մեծ չարիք և ավելի շատ կբորբոքվեն չարություններով, ինչպես որ օգը, երբ հանդիպում է կրակի հետ, ավելի մեծ հրդեհ է առաջացնում: Նա ցանկացավ նախևառաջ նրանց վրայից

քերել հնացած ախտը և տարավ նրանց քանանացիների պիղծ ժողովրդի դեմ, որպեսզի ավերելով՝ երկրի երեսից նրանց սրբի և դրանից հետո այնտեղ բնակեցնի (Իսրայելացիներին):

55 (313). Այդ պատճառով Նա անապատում թափառաչրջել տվեց նրանց, ինքը երևաց լեռան վրա և տարբեր նշաններով ու հրաշքներով Մովսեսի միջոցով հրահանգներ տվեց Աբրահամի սերնդին: Նա կերակրեց նրանց երկնային մանանայի հացով, ժայռից ջուր բխեցնելով՝ վտակներ հոսեցրեց՝ ծարավը հագեցնելու համար և բանակատեղի վրա լորեր իջեցրեց՝ նրանց քաղցը բավարարելու համար:

56 (314). Բայց և այնտեղ նրանք դառնացրին Արարչին, բարկացրին իրենց հատուկ չար սովորություններով՝ բարերար Աստծու փոխարեն հորթ կանգնեցնելով, որին աստված անվանեցին և փրկիչ համարեցին: Դրա համար նրանց վրա իջավ Աստծու բարկությունը, և Նա այնտեղ կոտորեց մարդկանց անթիվ բազմություն, ինչի պատճառով էլ հրաման արձակեց՝ չմտնել ավետյաց երկիրը: Եվ այնտեղ, անապատում ընկան, կոտորվեցին բոլորը՝ (Արարչին) դառնացնող Իսրայելի որդիների ամբողջ անօրեն ազգը (Սաղմ., 77. 8, 17, 31, 56-59):

57 (315). Եվ մեծ մարգարե Մովսեսը Աստծու հրամանով բարձրացավ լեռը և այնտեղ մեռավ, որի գերեզմանատեղը մինչև այսօր ոչ ոք չի կարողացել իմանալ: Իսկ նրանք, որ ծնվեցին ու բազմացան անապատում, բոլորովին անհաղորդ էին չարասնունդ մեղքերին:

58 (316. XXX). Ահա նրանց վրա Մովսեսի ձեռքով, Աստծու հրամանով մի ընտիր այր կարգվեց զորավար և առաջնորդ, որի անունը Յեշու¹ էր: Նա Աբրահամի սերնդին, Իսրայելի որդիներին, անապատից հանելուց հետո, ուղևորվեց ու հասավ խոստացված երկիր: Նա (բաժանելով այդ

հողերը) անջատեց և հանդիմանեց յոթ անհոգ (իսրայելական) ցեղերին² և առաջնորդելով բերեց բնակեցրեց նրանց (Քանաանում) (Հիս. Նավ. 18): Այստեղ Նա ցույց տվեց այն վայրը, ուր նրանք տաճար շինեցին նախևառաջ հանուն Տիրոջ: Եվ հայտնի էր, ըստ Աստծու հրամանի, որ միայն այնտեղ է թույլատրվում ողջակեզը զոհ մատուցել Նրան, այնտեղ, ուր Աստված բնակվում էր մարդկանց մեջ: Եվ հետո նրանց վրա Նա դատավորներ կարգեց, որոնք Աստծու կամքի համաձայն էին դատում նրանց և լի էին մարգարեական ոգով (Դատ., 2. 16-18): Բայց դատավորների մահվան դեպքում, նրանց (իշխանություն) միջև ընկած հատվածում Աստծու հանդեպ նորից ամբարիշտ դառնալով, չաստվածներին էին պաշտում և պատկերներին երկրպագում: Այդ պատճառով Նա նորից մատնեց նրանց օտար ազգերի ձեռքը և պատժում էր հեթանոս թագավորների միջոցով:

59 (317). Դրանից հետո նրանք իրենք թագավորներ խնդրեցին Աստծուց, և Նա տվեց, որոնց միջից Նա ընտրեց Դավթին (Ա. Թագ., 16. 13), որը լցված էր Սուրբ Հոգով և որի մասին ևս վկայեց՝ ասելով, թե «գտա Դավթին՝ Հեսսեր որդուն, իմ սրտով մի մարդու, որը պիտի անի և կատարի իմ ամբողջ կամքը» (Գործք, 13 22): Եվ Նա հաստատեց նրա գահը և նրա սերնդի գահը:

60 (318. XXXI). Բացի այդ, այնտեղ՝ պարզեված երկրում կարելի էր տեսնել բազմաթիվ մարգարեների, որոնք նաև տեսանող էին կոչվում՝ նրանց հետ պատահող աստվածային հայտնությունների պատճառով: Իսրայելական տոհմերին, յուրաքանչյուրին՝ ըստ հերթականության, նրանք պատմում էին, թե ինչպես Դավիթ արքան գովերգեց (Աստծու) համաշխարհային իշխանությունը: «Տե՛ր, ով Տե՛ր մեր, ինչ հրաշալի է Քո անունը ողջ աշխարհում» (Սաղմ., 8. 2):

61 (319). Որովհետև մեկին Նա երևաց մարտակառքով, ինչպես փայլատակող զորավար, մեկ ուրիշը տեսավ որպես մի մարդու՝ դատավորի, դատավորական աթոռին նստած, (մյուսին) ինչպես մարդկային Որդին զնում էր երկնային ամպի հետ և տեսավ Հինավուրցին¹ (Դան., 7. 13), մեկ ուրիշը տեսավ ինչպես զոհասեղանի վրա բազմած մի մարդու, համաձայն այն խոսքի, թե «Տեսա Տիրոջը. Նա զոհասեղանի վրա էր» (Ամոս, 9. 1): Տեսնո՞ւմ ես, որ թեպետև որպես մարդ երևաց, սակայն ճանաչվեց որպես Տեր:

62 (320). Եվ մեկ ուրիշն էլ տեսավ Նրան ավելի սքանչելի տեսքով՝ ասելով, թե՝ «Տեսա Տիրոջը, որ նստած էր բարձր աթոռին, և վեցթևյան սերովբեները Տիրոջ շուրջը» (Եսայի. 6. 1-2): Ուրեմն, այս ամենը պետք է հասկանալ որպես աստվածային (երևույթ), ինչպես և Աբրահամին և նրա բոլոր ժառանգներին Աստված անթիվ և հաճախադեպ տեսիլքներ մատուցեց: Հենց դրա մասին է ասում մարգարեն՝ Աստծու անունից. «Ես շատացրի տեսիլքները և մարգարեների միջոցով նմանություններ բերեցի» (Օսեե, 12. 10):

63 (321). Ժողովուրդներին բաժանելու, լեզուները խառնելու և Ադամի որդիներին ցրելու ժամանակ (նրանց համար) Նա սահմաններ դրեց՝ ըստ Աստծու հրեշտակների քանակության (Բ. Օր., 38. 8): Ինչպես հենց իրենք՝ հրեշտակները, յուրաքանչյուրի սահմանների մասին պատմել էին երանելի (այր) Դանիելին, որոնց և պատժեց բարերար Աստված, բարկության մեջ հիշեց ողորմածության մասին, (հրամայեց) որ աստվածաստեղծ անուշահոտ ոգիները առանց վախենալու պաշտպանեն մարդկային ցեղը չար ոգիների պիղծ գնդից, մարտնչող դևերից՝ Աստծուն մոտեցնող գիտությունն ընկալելու համար: Դրա մասին էր չափածո երգով հաղորդում երանելի Դավիթը. «Տիրոջ հրեշտակները

րի բանակը իր երկյուղածների շուրջն է, և Նա պահպանում է նրանց» (Սաղմ., 33. 8): Եվ մեծն Հակոբը (ասում է), թե «Աստված, որ պահպանեց ինձ իմ մանկությունից (մինչև այսօր)» (Ծննդ., 48. 15): Եվ Ամենատերը (ասում է), թե «Իմ հրեշտակը (պատգամաբերը) գնալու է առջևից, որ պատրաստի քո ճանապարհը» (Մաղաք., 3. 1: Մատթ., 11. 10: Մարկ., 1. 2: Ղուկ., 7. 27): Նա (կարգված է մարդկանց) պաշտպանելու համար, որպեսզի բաժանված, Աստծու երեսից ընկած (նախկինում) միասնական ժողովուրդը տեսանելի արարածները՝ Աստծուն մերձեցնող իմացություն միջոցով կարողանա ճանաչել անտեսանելի Աստծուն:

64 (322). Որովհետև «մեկ արյունից Նա ստեղծեց մարդկանց ամբողջ ցեղը, որ բնակվեն երկրի երեսի վրա, և հաստատեց նախակարգված ժամանակները և դրեց նրանց բնակություն սահմանները, որ փնտրեն Աստծուն և որոնելով թերևս գտնեն Նրան» (Գործք, 17. 26-27), «որովհետև Նրա աներևույթները աշխարհի (արարման) սկզբից տեսանելի են Նրա ճանաչվող ստեղծածների մեջ» (Հռոմ., 1. 20), որովհետև Տերը իր արժանավորներին մերձավոր է: Նմանապես և բոլոր պահպանությունները գալիս են Տիրոջից, որովհետև ուր Տերն է, այնտեղ են բոլոր հրեղենների բանակները: Ինչպես և Հակոբ հայրապետի դեպքում, նրան արված հայտնությունների ժամանակ, նա գտնվում էր հրեշտակների ողջ բանակի շրջապատում, որովհետև հրեշտակները, իրենց (մարդկային) նմանությունների շնորհիվ, մարդասեր Աստծու կամքով դրված են մարդկանց լուր բերող լինելու համար, ինչը կարելի է իմանալ վեցթևյան սերովբեների օրինակով:

65 (323). Որովհետև թեև նրանք ոչ թե մարմնով են թևավոր, այլ ըստ նմանություն թևավորներ են, այնուամենայնիվ հրեշտակները երբեմն երևում են իբրև սոսկ մար-

դիկ: Որովհետև Աբրահամին և Ղովտին նրանք օգնեցին (հայտնվելով) մարդկային կերպարանքով, Դանիելին (հրեշտակը) երևաց որպես մի այր, նույնպես և Գեղեոնին հայտնվեց ավելի հստակ տեսքով (Դատ., 6. 11-12): Իսկ Զաքարիան տեսավ (հեծյալ հրեշտակին) լեռներում (Զաք., 1. 8), իսկ Հեսուն անսպասելի տեսավ իբրև մի իսկական մարդու, որին և առանց վախենալու հարցրեց. «Դու մերոնցի՞ց ես, թե՞ մեր թշնամիներից» (Հեսու, 5. 13), և ապա տեղեկանալով, որ Աստծու զորքի զորավար է, խոնարհվեց և երկրպագեց: Նույնը եղավ բոլոր հրեշտակ տեսնողների հետ:

66 (324). Այսպիսով, մենք ճշմարիտ պետք է համարենք, որ ոգեղեն ցեղի մարդակերպ նմանությունը ամեն մի երևումը Աստծու հրամաններին մարդկանց հնազանդ լինելու պատասխան է՝ տարբեր ժամանակներում մարդկանց ըստ իրազրություն որևէ ծառայություն մատուցելու համար, և ոչ միշտ նույն կերպարանքը պահպանելով: Նրանց անմարմին բնություն մասին է հայտնում մարգարեն. «Նա հոգիները (քամիները) հրեշտակներ դարձրեց իրեն, և կիզ հուրը՝ իրեն սպասավորներ» (Սաղմ., 103. 4), որովհետև «սպասարկող հոգիներ են, որոնք ուղարկվում են ի սպասավորություն նրանց, որ ժառանգելու են փրկություն» (Եբր., 1. 14):

67 (325). Սրա վերաբերյալ Մովսեսը որևէ բան չի ասել, որպեսզի այդ մտածող և բանական հոգիները անզգա արարածներ չհամարվեն, այլ որպեսզի իրենց ծառայական սպասավորությամբ հենց իրենք, բերելով (Աստծու) հրամանները, ընկալվեն որպես Աստծու փառքի մեծությունը կրողներ: Իսկ ինչ վերաբերում է նրանց՝ ի վերուստ ստեղծված լինելու բնությունը, ապա (գրա մասին) մարգարենները բարձրաձայն ազդարարում էին, թե «Նա հոգիները հրեշտակներ դարձրեց իրեն» (Սաղմ., 103. 4), իսկ մյուս (մար-

գարեն) ասում է, թե «ես եմ քո Տեր Աստվածը, որ հաստատեցի երկինքը և հաստատեցի երկիրը, ես, որի ձեռքերը հաստատեցին երկնքի բոլոր զորքերը» (Օսեե, 13. 4): Եթե նրանք (հրեշտակները) մարմնավոր լինեին, ապա տեսանելի կլինեին և ոչ թե անտեսանելի, և ընդհանրապես ոչ ոքի չպիտի հայտնվեին: Եվ եթե այսպես է (նման) ստեղծված էակների համար, ապա ինչքան ավելի բարձր պետք է համարել անարար և անմատչելի Աստծու էությունն անտեսանելի բնությունը:

68 (326). Բոլոր կատարյալ աստվածատես մարդկանց ամեն անգամ Նա հայտնվել է հավասարապես մարդկային տեսքով և ճանաչվել է ձայնից և հրամաններից, որովհետև խոսում էր մարդկանց հետ, հրավիրելով տեսնելու խոստացված բարիքները, բայց Նա ոչ միշտ էր երևում նույնանման կերպարանքով: Նրա համար բավական է ճշմարտությունը ցույց տալ նմանությունների միջոցով, որտեղ ամեն մի դժվար բան դյուրին է դառնում, և անհնարին բաները՝ հնարավոր: Նա ամեն ինչ կարող է անել, և Նրա համար չկա ոչ մի անհնար բան: Նրա մասին տեսնողները բարձրաձայն ասում էին, թե չափավոր հայտնություններից նրանք իմանում էին անչափելի Աներևույթին, և կարճատև տեսիլքի միջոցով, իրենց հնարավորության սահմանում, ճանաչում էին ամենազոր էականին:

69 (327). Նաև Աբրահամ հայրապետը Նրան կոչում էր Տեր և ամբողջ աշխարհի դատավոր, և մեծն Մովսեսը (կոչեց Նրան) «Աստված, որ է» (Ելք, 3. 14) և ամեն ինչի Արարիչ, և ցանկանում էր տեսնել Նրա փառքը, որովհետև բոլոր մարգարեները (Աստծուն) տեսնողներ էին: (Մարգարեներից) մեկ ուրիշն ասաց, թե «Տերը, Տերն ինձ ուղարկեց և Նրա Հոգին» (Եսայի, 48. 16) և թե «Տիրոջ բերանը խոսեց այս» (Եսայի, 1. 20, 58. 14): Պարզ է, ով որ լսել էր բե-

րանից (ասվածը), ակնատես էր լինում նաև կերպարանքին: Մեկ ուրիշը (մարգարեներից) պաղատելով ասում էր. «Տեր, Տեր, ահավասիկ ես խոսել իսկ չգիտեմ, որովհետև մանուկ եմ» (Երեմ., 1. 6): Տեսնո՞ւմ ես, որ «ահավասիկը» ապացուցում է (Նրա) ներկայությունը: Եվ բոլոր հրամաններ բերողները, որպես Տիրոջ կողմից եկածներ, ի լուր ամենքի բարձրաձայն գոչում էին, մեկը՝ «Ասաց Զորությունների Տերը» (Եսայի, 45. 13), մեկ ուրիշը՝ «Ամենակալ Տերը հրամայեց» (Ամոս, 3. 13): Իսկ Ամոսի խոսքից դա միանգամայն հասկանալի է դառնում, որն ասում է, թե «Աստված ոչինչ չի անի՝ չբացելով իր խորհուրդը իր ծառաներին, մարգարեներին» (Ամոս, 3. 7):

70 (328. XXXII). Եվ արդ, սրանից հետո մեր ասածներից պարզ է, որ նախաստեղծ մարդուն ևս սկզբում Նա երևաց նույն կերպարանքով, ինչպես և հետո, նույնը պահպանելով, բոլոր աստվածատես կատարյալ մարդկանց համար, որպեսզի որևէ օտար և անծանոթ կերպարանքով չխրտնեցնի տեսնողներին: Մանավանդ որ, ավելի լավ է, եթե որդին, Աստծուն տեսած հորից տեղեկանալով, հեշտությունը կնախապատրաստվի ինչպես մի սովորական բանի, կյուրացնի նաև այն, ինչ իր ականջով կլսի, և կնկատի այն, ինչ աչքով կտեսնի: Ինչպես և երանելի Հոբբը՝ Աստծու սիրելին, արդարը, ասում էր Աստծուն, թե «Սրանից առաջ ես ականջներովս էի լուր լսել, բայց հիմա աչքերս էլ տեսան հենց Քեզ» (Հոբ, 42. 5): Դրան իսկ Աստված ասաց. «Տղամարդու պես պնդացրու մեջքդ և մի մտածիր, թե քեզ ինչ-որ օտարոտի բան երևաց» (Հոբ, 40. 2-3):

71 (329). Որովհետև սկզբում Աստված երևաց ազդարարություն համաձայն, ինչպես և ասված է (Ս. Գրքում), թե «Աստծու պատկերով ստեղծեց մարդուն» (Ծննդ., 1. 27): Եվ բոլոր դարերում փառքի Աստվածը երևում է նույն կեր-

պարանքով, ինչպես և ասում էր Ստեփանոս Վկան¹. «Փառքի Աստվածը երևաց մեր հորը՝ Աբրահամին» (Գործք, 7. 2), և բոլորը Նրան կոչեցին Տեր Սաբաովթ² և Աստված Ամենակալ:

72 (330). Եվ արդ, մարդկային կերպարանքով Աստծու երևալը պետք է հասկանալ որպես տեսնողների տկարությանը համապատասխան (կերպավորում) և ոչ թե որպես Աստծու՝ չափեր չունեցող բնության սահմանափակվածության և շրջագծված լինելը, որը երևում է երբեմն իրեն հատուկ սահմաններով և երբեմն այլ, Նա, որով լի է ամեն ինչ: Այլ (պետք է իմանալ, որ) Նա զիջում, և ըստ (մարդկանց) կարողության, ընտելացնում էր նրանց՝ նմանությունների միջոցով, որպեսզի նրանց, ովքեր մոտեցել, խորամուկ են եղել Աստծուն իմանալու մեջ և տեսել են Նրան դեմ-հանդիման, նախապատրաստի ճշմարիտ կերպարի ընկալմանը, որովհետև նմանության միջոցով, իրոք, հնարավոր է դառնում գտնել ճշմարտությունը:

73 (331). Նրան նաև մեծն Մովսեսը ցանկանում էր տեսնել, որովհետև թեպետ ձեռքը ձեռքին և երես առ երես Աստծու առաջ կանգնած Մովսեսը ճանաչեց Նրան և խոսեց (նրա հետ), այնուամենայնիվ, Աստծուն ասելով, թե «Յույց տուր ինձ (հստակ) Քո դեմքը» (Ելք, 33. 13), Նա ձգտում էր հասնել ճշմարիտ գեղեցկությանը: Եվ հիմա լսիր պատասխանը. «(Դու չես կարող տեսնել իմ երեսը, որովհետև) մարդ չի կարող տեսնել Աստծուն և կենդանի մնալ» (Ելք, 33. 20): Եվ հետո մի փոքրիկ նշանով բավարարում է իրեն փնտրողին, պահպանելով (միաժամանակ) իրեն հատուկ անտեսանելի լինելը, քանի որ Նա անհասանելի է:

74 (332). Տեսնո՞ւմ ես, որ Նա անտեսանելի է նայողների համար և անքննելի է քննողների համար՝ ըստ իր առանձին (երևացող) կերպարանքների: Որովհետև Նրա նմա-

նությունները ոչ թե ինչ-որ նյութական կերպարանքներ են, այլ ժամանակավոր տեսիլք, իսկ ճշմարտությունը Նրա էութենական բնությունն է: Այսպես, Նա Մովսեսին ցույց տվեց ըստ նմանության նյութական խորանի մի նմուշ, որին համապատասխան նա պատրաստեց նյութական խորանը (Ելք, 25. 9), իսկ Եզեկիելին՝ տաճարի օրինակը՝ տաճար կառուցելու համար (Եզեկ., 40): Նույնպես և առաջին մարդու կապակցությամբ Աստված երևաց աննյութական մարդակերպ նմանությամբ, որպեսզի տարրական նյութից արարի մարդուն՝ մերձավոր (իր) ճշմարիտ կերպարանքին: Որովհետև Աստված իր անսահման բարերարությամբ առաջին մարդուն կարգեց լինել մերձավոր և անմիջական մասնակից աստվածային վայելչությանը:

75 (333). Եվ Աստծու Հոգին առատորեն հորդում էր առանձին-առանձին իրար հաջորդող իսրայելական տոհմի բազմաթիվ սուրբ մարգարեների վրա, որոնք իրենց ցեղին պատվիրան էին տալիս ճշտորեն կատարել Աստծու հրամանները, (ներշնչելով) որ նրանք ընտիր ազգ են և չխառնվեն հեթանոս տոհմերին, որ չյուրացնեն նաև նրանց մեղքերը:

76 (334). Իսկ նրանք, խնամիական կապերով միաձուլվելով, խառնվեցին նրանց հետ, վերցրին, ընկալեցին նրանց չաստվածների պաշտամունքը¹, խառնվեցին թագավորներով և իշխաններով: Դրա պատճառով տրտնջալով աղաղակեց մարգարեն, թե «Խառնվեցին հեթանոսների մեջ, ու սովորեցին գործերը նրանց: Ծառայեցին նրանց կուռքերին, որոնք իրենց գայթակղությունը դարձան» (Սաղմ., 105. 35-36), և թե «Իրենց որդիներին ու դուստրերին զոհեցին դևերին, և անմեղ արյուն թափեցին՝ արյունն իրենց որդիներին ու դուստրերին, որ զոհեցին Քանանի կուռքերին» (Սաղմ., 105. 37-38):

77 (335). Եվ ահա, այն ժամանակ Տեր Աստված Հարվածեց եգիպտացիների երկիրը, որպեսզի նրանց (խորայելացիներին) դուրս բերի այնտեղից, կոտորեց եգիպտացիների բոլոր անդրանիկ զավակներին և նրանց այնտեղից փրկեց: Դրա համար նրանց հայրերի հետ Նա ուխտ դրեց՝ իրենց անդրանիկ որդիներին նվիրել իրենց Տեր Աստծուն: Բայց ահա, դրա փոխարեն իրենց որդիներին և դուստրերին նրանք զոհաբերում էին հեթանոսական չաստվածներին՝ բազիլներ շինելով այն երկրում, որը Տեր Աստվածն իրենն էր անվանել, իր ժառանգության վիճակ էր կոչել: Իսկ նրանք, պատկերներ կանգնեցնելով, Նրա փոխարեն երկրպագում էին քարերին և փայտերին: Եվ երկիրը աղտոտելով չաստվածների համար մատուցվող (զոհերի) արյունով՝ նրանք ավելի ու ավելի խորացան մարմնավոր կուռքերի երկրպագության մեջ¹: Այդ է պատճառը, որ նրանք իրենց կյանքն ապրեցին պղծության մեջ:

78 (336). Որովհետև այն երկիրը մտնելու ժամանակ, որը Նա տվեց նրանց, Նա հրամայեց մաքրել այդ երկրում եղած օրենք չունեցող ժողովուրդներից, որոնց նրանք չսպանեցին, այլ համաձայնության գալով՝ օրինազուրկ ժողովուրդների հետ ուխտ հաստատեցին, որոնց հետ միաբանելով՝ ամբարշտություն ժառանգեցին: Որովհետև Աստված այդ երկրի բուն բնակիչներին հանել էր բնակության տեղից՝ իրենց գործած չարիքների համար, իսկ նրանք (խորայելացիները), մտնելով իրենց թագավորներով, իշխաններով և քահանաներով հանդերձ, միաբանելով նրանց հետ սկսեցին նույն գործը կատարել:

79 (337). Այդ պատճառով Տեր Աստված, մարդու հանդեպ իր մեծ սիրո և գթությանից ելնելով, նրանց մոտ ուղարկեց մարգարեներ՝ նախազգուշացնող պատգամներով, որպեսզի հետ կանգնեն իրենց անօրեն գործերից և ծառա-

յեն Աստծուն, ամեն ինչի Արարչին, որն իր մարդասիրությունից գթություն ցուցաբերեց, ներեց նրանց չարագործությունները: Իսկ իր դժգոհությունը նրանցից արտահայտեց մարգարեի միջոցով. «Նրանք փայտին ասացին, թե՛ «Իմ հայրն ես դու», և քարին, թե՛ «Մեզ դու ես ծնել», և նրանք ոչ թե իրենց երեսները, այլ թիկունքները դարձրին ինձ» (Երեմ., 2. 27):

80 (338). Եվ ահա, չար և խելառ, կուրացած ժողովուրդը բարձրացավ մարգարեների դեմ՝ քարկոծելու և սպանելու համար, և այնքան կոտորեց նրանց, որ մարգարեներից մեկը (ողբալով) աղաղակեց՝ «Միայն ես եմ մնացել» (Գթագ., 19. 10): Եվ նրանք սուտ և անարժան քրմերին տվեցին մարգարեի սուրբ անունը:

81 (339). Նաև ճշմարիտ աստվածատես մարգարեներին, որոնք ճշմարտորեն պատմեցին նրանց Աստծու ճշմարիտ Որդու մարմին առած աշխարհ գալու մասին¹, այդ ըմբոստ ազգը լսել չցանկացավ: Այդ պատճառով նրանց սպանում էին ավելի ու ավելի, այնպես որ չմնաց որևէ մեկը (մարգարեներից), որ չսպանեին՝ տարատեսակ տանջանքների մատնելով:

82 (340 XXXIV). Դրա համար Տեր Աստծու բարկությունն իջավ իր ժողովուրդի վրա, և Նա, խիստ զզվելով իր ժառանգությունից, նրանց մատնեց հեթանոսների ձեռքը (Սաղմ., 105. 40-41), որոնց չաստվածներին նրանք պաշտել սիրեցին և ում հետ խառնակեցիկ կյանք վարեցին, նրանց ձեռքը մատնեց, սրանց որպես տանջողների, թշնամիների և գերողների բարձրացնելով նրանց դեմ, ինչպես և ասված է, թե՛ «մատնեցի նրանց իրենց հոմանի¹ հեթանոսների ձեռքը, և իրենց ատողները տիրեցին նրանց, և իրենց թշնամիները նեղեցին նրանց, և նրանք խեղճացան նրանց ձեռքի տակ» (Սաղմ., 105. 41-42): Որովհետև թեև շատ անգամ

Նա փրկեց նրանց նեղիչների ձեռքից, սակայն նեղ վիճակից դուրս գալուց հետո նրանք շարունակում էին ավելի շատ նույնը կատարել և դառնացնել Աստծուն իրենց (չար) մտադրություններով, և ընկղմվեցին իրենց անօրենսության մեջ (Սաղմ., 105. 43):

83 (341). Սակայն Տերը, տեսնելով նրանց կրած նեղությունները, լսելով նրանց աղաչանքների ձայնը, հիշեց նրանց հայրերի հետ կնքած ուխտը և, ըստ իր առատ ողորմածություն, խղճաց նրանց, և նրանց հանդեպ գթություն արթնացրեց իրենց գերեվարողների մոտ (Սաղմ., 105. 44-46): Տեր Աստված փրկեց նրանց և հավաքեց հեթանոսների միջից, վերադարձնելով յոթանասուն տարվա գերությունից, Բաբելոնի երկրից, Ասորեստանի կողմերից: Նորից շենացրեց ավերակները և նորոգեց իր անվան տաճարը, տվեց մարգարեության շնորհը, վերադարձրեց քահանայությունը և ամեն ինչ երկրորդ անգամ կրկին նորոգեց: Եվ այդ ժամանակ իր խոսքը տվեց, որը դարեր հետո կատարեց իր Միածին Որդու միջոցով:

84 (342). Որովհետև Ամենագետը ոչ թե հետո իմանալով, որ Որդին գալու և երևալու է աշխարհին և բարձրացնելու է մարդկանց ավագության փառքին, այլ հենց սկզբից իր նախասահմանվածը Նա ի կատար ածեց վերջում (Եփես., 3. 11): Գաղտնիքը, որը Աստծու մոտ հավիտյան ժողովուրդներից ծածուկ էր պահված, այժմ հայտնի դարձավ իր սրբերին (Եփես., 3. 3), որովհետև ժամանակ առ ժամանակ արդար մարդկանց երևացող նմանությունները նախանշաններն էին այն հավիտենական ճշմարտության, որ գալու էր:

85 (343. XXXV). Որովհետև «Աստված բազմապիսի ձևերով և բազմապիսի օրինակներով նախապես խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով, այս վերջին օրերին

մեզ հետ խոսեց իր Որդու միջոցով, որին ժառանգ նշանակեց ամեն ինչի, որի միջոցով և աշխարհն արարեց, որը լույսն է Նրա փառքի և բուն պատկերը Նրա հույժյան, և ամեն ինչ հաստատ է պահում իր խոսքի զորությունը» (Եբր., 1. 1-3):

86 (344). Տեսնո՞ւմ ես, որ նշանները, օրինակները և մարգարեները բազում են, իսկ Աստված, որն իր Միածին Որդու մասին խոսեց, Մի է: Ասաց մարգարեն Տիրոջ անունից, թե «Ես եմ Աստվածը, և Ինձնից բացի մեկ ուրիշը չկա, որ առաջուց պատմի վերջում կատարվելիք բաների մասին, երբ դեռ չեն եղել, բայց անպայման կատարվելու են» (Եսայի, 46. 9-10), որովհետև Նա գիտեր միակ իմացող Աստծու գաղտնիքը, որը թաքնված էր ժամանակներից և հայտնի դարձավ մարգարեների թողած գրությունների շնորհիվ:

87 (345). Իսկ երբ Ինքը Փրկիչը՝ Աստծու Որդին, եկավ, Նա աշակերտներին հայտնեց, թե «Երանի,— ասում է,— այն աչքերին, որ կտեսնեն այն, ինչ դուք տեսնում եք, և ձեր ականջներին, ինչ դուք լսում եք, որովհետև բազում մարգարեներ և արդար մարդիկ և թագավորներ ցանկացան տեսնել այն, ինչ դուք տեսնում եք, բայց չտեսան, և լսել՝ ինչ դուք լսում եք, բայց չլսեցին» (Ղուկ., 10. 23-24: Մատթ., 13. 16-17):

88 (346). Տեսնո՞ւմ ես, որ նմանությունները (մարգարեների) ազդարարություններն էին Քրիստոսի ճշմարիտ կերպարի մասին, և անցողիկ նմանությունների միջոցով նրանք ձգտում էին հասնել հավերժական կերպարին: Այսպես է նաև Մովսեսի Օրենքների գիրքը, որը փայլում է նրանով, որ լիակատար նշում է (այն ամենը), ինչ լինելու է ապագայում:

89 (347). Որովհետև երբ Աստված տեսավ, որ մեղքը

տարածվել է աշխարհով մեկ և դրա հետևանքով մահն է թագավորել, որը մոլեգնող հրդեհի կրակի պես պետք է կլաներ լեռներն ու դաշտերը, ոչնչացնելով ամեն ինչ, սկսած Ադամից մինչև Մովսես (Հմմտ. Հռոմ., 5. 14), մոռացութեան մատնելով ի սկզբանե գրված կենսաբեր լուրը, այդ ժամանակ Նա, որպեսզի հանգցնի այն համատարած (կրակը), սաստիկ հեղեղի պես (երկիր) արձակեց օրենքը: Դրա մասին է ասված, թե «ով կատարի այն, նրանով կապրի» (Գաղատ., 3. 12: Հռ. 10. 5): Այսպես և (Նա) սպառնաց Ադամին մահվամբ, եթե նա ճաշակի այն ծառից, ինչի համար էլ մահը թագավորեց: Նույն բանը Նա ասաց օրենքների մասին, թե «ով կատարի այն, նրանով կապրի» (Գաղատ., 3. 12), ինչի շնորհիվ և հանգավ մահը (Հմմտ. Ա Կորնթ. , 15. 54):

90 (348). Որովհետև և օրենքը, որպես ուրվագիծն այն բանի, որ Քրիստոսը օրենքի վերջն է (Հմմտ. Հռոմ., 10. 4), մահը վերացնող, դրանով իսկ հայտնի դարձրեց, որ մեղքը ծովի պես տարածվել է և, հաշիվ ներկայացնելով, ամեն մեկին սպառնաց մահով՝ ըստ գործած մեղքերի: Եվ այն բոլորին տկարացրեց, անեծքի և մեղադրանքի տակ դրեց, որպեսզի երբ գա Ամենափրկիչ Քրիստոսը և տանի անիծաբեր և մահածին մեղքերը, ազատվածները կարողանան ասել՝ «Շնորհակալությունն Նրան, որ այնչափ (մոտ) մահվանից մեզ փրկեց» (Բ Կորնթ., 1. 10):

91 (349). Այնուհետև (առաքյալը) հայտարարում է, որ օրենքը մնաց մինչև Քրիստոս, ասելով, թե՝ «Օրենքը տրվեց հանցանքների պատճառով, մինչև որ գար այն զավակը, որին եղած խոստումը հրեշտակների կողմից տրվեց միջնորդի միջոցով» (Գաղատ., 3. 19), որովհետև ասում է, օրենքի տակ փակված էինք մնում՝ սպասելով գալիքին» (Գաղատ., 3. 23), որին սպասում էին ոչ միայն երկրածին

սերունդները, այլև հրեշտակների անտեսանելի զորքը՝ բոլոր անզգա արարածների հետ միասին, համաձայն այն բանի, թե «ստեղծվածները մեծ ակնկալությամբ սպասում են Աստծու Որդու հայտնությունը, քանի որ ստեղծվածները ունայնությունը հնազանդվեցին ոչ իրենց կամքով, այլ նրա համար, որ (Աստված) հնազանդեցրեց նրանց այն հույսով, որ ստեղծվածներն իրենք էլ ազատվեն ապականություն ծառայությունից՝ Աստծու Որդու փառքի ազատությունը հասնելու համար» (Հռոմ., 8. 19-21):

92 (350). Որովհետև երբ Ադամը, որն ըստ Աստծու պատկերի ստեղծվեց, և նրա բոլոր զավակները, որոնք աստվածորդիներ կոչվեցին, իրենց կամքով ապականություն ծառանդեցին, նրանց հետ նաև բոլոր արարածները հնազանդվելով ապականվեցին, (բայց) ոչ իրենց կամքով, այլ որպեսզի Աստծու կամքով առաջնորդվելու համար նրանք ազատորեն ընթանան դեպի Քրիստոս: Որովհետև նրանք, որ մարդու վայելքի և փառքի համար ստեղծվեցին, դարձան ապականյալ և անարգված՝ Նրա բարկության պատճառով: Երկիրը ևս անիծվեց և փչերով ծածկվեց, հեղեղներով հեծվող և հրով այրվող, հիմքերից ցնցվող և տատանվող. և քամիները ժամանակ առ ժամանակ դարձան կործանող, և լուսատուները՝ խավար և արյունով լցված, և երկինքը՝ գունաթափ, ինչպես ասված է մարգարեական գրքերում այն մասին, թե ինչ պետք է պատահեր: Նույնը վերաբերում է հենց իրենց՝ մարգարեներին, որոնք ինչե՛ր պիտի կրեին իրենց ազգակիցներից: Նրանք թեպետև ուղարկվում էին որպես Աստծու կողմից պատվի արժանացած մարդիկ, սակայն նրանց չընդունող (ազգակիցները) թշնամանում էին նրանց հետ և քարկոծում, ինչպես և ասում է Ամենատերը, թե «դրա համար կոտորեցի ձեր մարգարեներին իմ բերանի խոսքով» (Օսեե, 6. 5):

93 (351). Նույն ձևով և մարդկային ցեղին պատգամով ուղարկված հրեշտակները վերադառնում էին՝ իրենց չընդունող մարդկանց կողմից արհամարհված և վշտացած, ինչպես դա կարելի է հասկանալ և Ղուվտի մոտ եկած հրեշտակների և այլ դեպքերի օրինակով: Որովհետև եթե մեկ մեղավոր մարդու դարձը ուրախություն է բերում բոլոր հրեշտակներին (Հմմտ. Ղուկ., 15: 10), ապա ինչպիսի տրտմություն պիտի պատճառի բոլորի հակառակությունը, ինչի համար էլ անարգվում է Աստծու անունը և տրտմություն պատճառում Սուրբ Հոգուն: Բայց թեպետև դրա պատճառով բոլոր արարածները, տառապանքներ կրելով, ծառայում էին ունայնության, սակայն առաջիկայում ազատարար հույսին սպասում էին բոլորը՝ հրեշտակները, մարդարենները և բոլոր արարածները: (Մարգարեններից) մեկը ասում էր. «Իմ պահակակետում պիտի կանգնեմ, բարձրանամ ժայռի վրա և սպասեմ (թե ինչ կասի Նա ինձ)» (Ամբ., 2: 1), և մյուսը, թե՛ «Ես Տիրոջ վրա հույս պիտի դնեմ և սպասեմ Աստծուն՝ իմ Փրկչին» (Միք., 7: 7), և մյուսը, թե՛ «Ո՞վ կտա Սիրոնից փրկությունն Իսրայելի» (Սաղմ., 13: 7):

94 (352. XXXVI). Իսկ ինչո՞ւ Միածինը երկարացնելով շարունակում է արարածներին նեղություններ պատճառել, եթե ոչ այն բանի համար, որ սկզբից նախագգուչացնի և ընտելացնի Իրեն, որպեսզի չլինի թե երբ անսպասելի երևա, չլինի անձանոթ և անընկալելի, այլ իմացված լինի՝ երևալով նրանց որպես իրեն արդեն տեսնողների և սպասողների: Որովհետև եթե այդքան երկար ժամանակի ընթացքում Նա, իր ստեղծվածների մոտ գալով, չէր ընդունվում, ապա ի՞նչ կլիներ, եթե գար առանց ազդարարման և հայտարարման: Բայց Նա նախորդող իր խորհուրդների միջոցով ճանաչել տվեց բոլոր ազգերին և հավիտյան (հետո) եկողներին (Հմմտ. Եփես., 1: 9):

95 (353). Ինչպես ասում է Աստծու պատգամաբերներից մեկը, թե՛ «ինձ տրվեց այս շնորհը՝ ավետարանելու հեթանոսներին Քրիստոսի անքնին մեծությունը և բոլորին լուսավորելու, որպեսզի գիտենան, թե ի՞նչ է այն խորհրդի տնտեսությունը, որ ծածկված էր ի հավիտենից Աստծու մոտ, որ ստեղծեց ամեն ինչ, որպեսզի եկեղեցու միջոցով հայտնի լինի այժմ երկնային իշխանություններին և պետություններին Աստծու բազմապատիկ իմաստությունը, Նրա հավիտենական նախասահմանության համաձայն, որ Նա իրագործեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով» (Եփես., 3: 8-11): Նույն բանի մասին է հենց ինքը (Պողոս առաքյալը) հայտարարում, թե՛ «երբ ժամանակը իր լրումին հասավ» (Գաղատ., 4: 4):

96 (354). Բայց մարդկանցից այդ ո՞վ էր, որ պիտի կարողանար ճշգրտելով ավանդել աստվածության մասին այնպիսի մի ուսմունք: (Դա հնարավոր է) միայն այնչափ, որչափ ինքը կամեցավ ծանոթ դարձնել Իրեն, որպեսզի ճանաչեն Նրան և փրկվեն: Իսկ մենք՝ արարածներս, բավական (հնարավորություն) չունենք Աստծու մասին ավանդելու համար, մենք, որոնց վրա դամված է այդ պատկերի տիպարը՝ ըստ բանի, որ Ստեղծողը ստեղծել է (մեզ իր պատկերի նմանությամբ): Սակայն որչափ մենք մեր տկարության սահմաններում ի վիճակի էինք ընկալելու, Նա ինքը կամեցավ այդչափ հայտնել մեզ իր մասին, որովհետև ոչ ոք կարող է իմանալ Աստծուն, բացի աստվածային Հոգուց և Որդուց, Որը եկավ և պատմեց, և հայտնի դարձրեց, և ցույց տվեց, թե՛ «ով ինձ տեսավ, տեսավ Իմ Հորը» (Հովհ., 14: 9):

97 (355). Բայց Աստված կենդանի Հոգի է¹, այրող հուր է. Նա անչափելի է և անփոփոխ, անպատմելի փառք է, անսպառ զորություն, գեղեցկություն աննման և զարմանալի, (մարդու) բանականության և մտածողության համար ան-

Հասանելի, լեզվով անճառելի, մտածողություն մեջ չտեղա-
վորվող, որևէ խոսքի (հնարավորությունների) սահմաննե-
րից դուրս, ո՛չ աչքով տեսանելի, ո՛չ էլ ականջով լսելի և
ո՛չ սրտի մղուձով հնարավոր է ճանաչել Նրան: Երկիրքը
ամբողջությամբ, ողջ աշխարհը և ամբողջ տիեզերքը անկա-
րող են գերազանցել և ընդգրկել Նրան: Նրա խոսքը գեր-
իշխելով կրում է իր մեջ ամեն ինչ, և Նրա հրամանի գորու-
թյամբ (երկիրը) կախված է մնում օդում և կարծես թե
թռչում է առանց թևերի թևածողի պես: Իր մեջ Նա ընդ-
գրկում է ամեն ինչ, գտնվում է ամեն ինչի հիմքում, ամեն
ինչից վեր, ամեն ինչից դուրս, Նրանից է ամեն ինչ, և ա-
մեն ինչ Նրա մեջ է, և ամեն ինչ (գոյություն ունի) Նրան
փառավորելու համար:

98 (356). Բազմաթիվ նշաններով և բազում ձևերով ժա-
մանակ առ ժամանակ Նա խոսեց մեր հայրերի հետ մարգա-
րեների միջոցով (Եբր., 1. 1), աննկարագրելի տեսիլքների,
աննման փոխակերպումների, զարմանալի ձայների, փառա-
վոր գեղեցկություն, աստվածային կերպարների միջոցով:
Մեկին Նա հայտնվում էր լույսի ձևով, մարդու կերպա-
րանքով, մեկ ուրիշին՝ բոցկտացող կրակի պես, բազմաթիվ
արդար մարդկանց Նա երևացել է մարդու տեսքով և խո-
սել է նրանց հետ՝ համապատասխան նրանց նայելու և
(Աստծու) ձայնը լսելու կարողությունը: Որովհետև մարդն
ի վիճակի չէ տեսնել Աստծուն՝ Նրա իսկական էությունը
(Հովհ., 1. 18: Ա Հովհ., 4. 12), ինչպես որ մոմը (չի կարող
դիմանալ) կրակին, և լեռները չեն կարող նայել Նրան, քա-
նի որ, նայելով նրան, կհալվեն (Սաղմ., 96. 5):

99 (357). Բայց երբ որ Նա իր կամքով և իր բարերարու-
թյանը համաձայն ինքը ցույց էր տալիս իրեն, Նա երևում
էր մարդու կերպարանքով, մեկ՝ լույսի պես, մեկ՝ կրակի,
մեկ՝ հողմի, (երբեմն) ամպի, մեզի և մրրիկի մեջ:

100 (358). Եթե մենք ասենք, թե Նա հուր է, ապա մենք
այն ենք ասում, ինչ տեսնում ենք: Եթե ասում ենք, թե
լույս է, ապա Նրա նմանություն պատկերացումը մենք
վերցնում ենք մեր բնությունից, մեր անկարողության
պատճառով անտեսանելին մատնանշում ենք տեսանելի
բանի միջոցով: Սակայն Նա բացահայտում է իրեն, մեր
թուլությունը համեմատ չափով, որպեսզի մենք՝ մարմնա-
վոր արարածներս, չայրվենք Նրա փառքի ահավորույնու-
նից: Եվ Նրա անունը ոչ ոք չգիտի, որովհետև այնտեղ
Նրանից բացի չկա որևէ մեկը, որ կարողանար այնտեղ և
այստեղ Նրան անունով կոչել:

101 (359). Եվ երբ Նա երևում էր արդար մարդկանց, իր
ահավորությունը Նա իր մեջ էր թաքցնում և երևում էր
մարդու և հրեշտակի կերպարանքով՝ հասանելի այն չա-
փով, ինչքան կարող էր դիմանալ (մարդկային) տեսողույթ-
յունը: Արարածներն անկարող են քննել Արարչին, (ինչ-
պես) և խմորը չի իմանում հունցողին:

102 (360). Բայց Արարիչն իր արարածների հանդեպ
գուժ է ցուցաբերում. չէ որ Նա, արարելով բոլոր արարած-
ներին, զարդարեց նրանց գովական գեղեցկությամբ և ար-
ժանավայել փառավորությամբ: Նա հողից ստեղծեց հողե-
ղեն մարմինները, իսկ լույսից՝ հրեշտակներին, զարդարելով
նրանց վայելչական լույսով, և զարդարեց (Իր) փառքի գա-
հը, դեպի որն ուղղվում են հրեշտակների օրհնությունները
(Եսայի, 6. 1-3), սերովբենների ձայները, զվարթունների փա-
ռաբանությունները, (բարձրանում են հրեշտակների) բա-
նակների բազմությունները և սրբերի գնդերը, գովիչներ
խմբերը, երկնավոր (բնակիչների) օրհնությունները, ար-
դար (մարդկանց) աղոթքները և սրբերի գովերգությունը,
սերովբեններն ու քերովբենները, և լույսի միավորված գոր-
քերը:

103 (361. XXXVII). Այս վկայությունը բերելով՝ մենք ձեր ուշադրությունը ներկայացրինք ճշմարիտ սուրբ հավատը, որը Սուրբ Հոգու ներշնչմամբ՝ Աստվածության հավերժական թագավորության մասին մեզ ավանդեց Սուրբ Գիրքը մեր արդար հայրերի առջև բացված խորհրդավոր կերպով, և ավանդվեց մեզ Որդու և Սուրբ Հոգու միջոցով և ազդարարվեց սուրբ մարգարեների և առաքյալների միջոցով, և մեզ տրվեց հաստատուն հավատը:

104 (362). Որով մենք հավատի միջոցով պիտի ընդունենք ճշմարիտ գոյությունը մեկ Հայր Աստծու, որը ամեն ինչի Տերն է և Արարիչը, և Միածին Որդու, որը Հորից է, Հոր մոտ է և Հոր հետ է, և Սուրբ Հոգու, որը Նույնի էությունից է, և Նրանով ստեղծեց բոլոր արարածներին¹: Նա մեկ տերություն է, մեկ գորություն, մեկ իշխանություն, մեկ մեծություն, մեկ իմացություն, մեկ խորհուրդ, մեկ գերակայություն, մեկ անսկզբնական հզորություն, երեք կատարյալ անձ, մեկ կատարյալ կամք, Երրորդություն անպատմելի, անքննելի միություն, մեկ բնություն, մեկ էություն, մեկ Աստվածություն են Հայրը, Որդին և Սուրբ Հոգին, երեք անձ, մեկ Աստվածային գորություն. Հայրն՝ Ինքն Իրենից, Որդին՝ Հորից, Հոգին՝ Նրանցից և Նրանց մեջ²: Բնությամբ, էությամբ, աստվածությամբ Նրանք լրիվ հավասար են՝ խորություն, բարձրություն, լայնություն, երկարություն (Եփես., 3. 18). բնության մեկ էություն, Երրորդության մեկ պսակ. և Նրա փառքով են լի երկինքն ու երկիրը (Եսայի, 6. 3):

105 (363). Ինչպես իր հոգեկիր աղոթքներում ասում է Սողոմոն թագավորը՝ մարգարեի որդին, թե «երկինքն ու երկիրը քեզ բավական չեն» (Գ Թագ., 8. 27: Բ Մնաց., 6. 18): Եվ (մեկ այլ) մարգարե ասում է Տիրոջ ի դեմս, թե «երկինքն իմ գահն է և երկիրը՝ իմ ոտքերի պատվանդանը,

ինչպիսի՞ տուն էք շինելու Ինձ համար, — ասում է Տերը, — կամ ինչ բնակության տեղ էք պատրաստելու Ինձ, չէ՞ որ իմ ձեռքն է ստեղծել այս ամենը. Ես ո՞ւմ եմ (նայելու և) հանգիստ ու դադար որտե՞ղ եմ առնելու, եթե ոչ հեզերի ու խոնարհների մոտ և նրանց, ովքեր դողում են իմ խոսքից» (Եսայի, 66. 1-2), և «ես լինելու եմ նրանց Աստվածը, և նրանք կլինեն իմ ժողովուրդը» (Երեմ., 24. 7: Եզեկ., 36. 38: Ջաբ., 8. 8): Իսկ Նրան, որին երկինքն ու երկիրը բավական չեն, ինչպե՞ս կարող է մարդու սիրտը ընդգրկել Նրան, մի՞թե մարդն ավելի մեծ է, քան երկինքը և երկիրը: Բայց Աստվածությունն ինչ որ կամենում է, այն էլ լինում է, ինչ կամեցավ, այն էլ ստեղծեց, ինչ ցանկացավ, այն էլ եղավ, այն, ինչ Նա կամենում է, անուշադիր չի թողնում. և ահա Նա սեղմվեց, փոքրացավ և եղավ այն, ինչ որ կամեցավ դառնալ (Հմմտ. Փիլիպ., 2. 7):

106 (364. XXXVIII). Եվ ահա, Աստված աշխարհ ուղարկեց իր Որդուն, Որը եկավ և ծնվեց կնոջից և մեր մարդկային մարմնում գետեղվեց, իր մարմնով կենդանացրեց բոլոր մարմինները: Դրանով աշխարհի Արարիչը հաղթեց, որպեսզի նորոգի արդարներին և փրկի նրանց մեղքից առաջացած ծնունդներից, դարձնի նրանց հրեշտականման և կոչի աստվածորդիներ (Հմմտ. Ա Հովհ., 3. 1), մահկանացուներին անմահացնի անմահ Հոգով և պատվի աստվածային փառքով: Նրանք զարգարվում են վայելուչ լույսով և անցնում են երկրային կյանքից երկնային կյանքի, մահկանացու վիճակից՝ անմահ կյանքի, անանց լույս են ստանձնում և կերպարների անապական գեղեցկություն:

107 (365). Ինչքա՞ն ուրեմն ավելի աննկարագրելի է Աստվածությունը, որի կամքը բոլոր բարի բաների աղբյուր է, և Նա բոլոր գործերի Տերն է: Նրա բերանի խոսքով հաստատվեցին բոլոր արարածները և Նրանից լույս վերցրին

բոլոր լուսատուները, և Նրա գորուծյամբ են հաստատված բոլոր արարածները՝ երկնքի կամարները և ամբողջ երկիրը, և այն, ինչ որ նրանց մեջ կա, «և Նրա բերանի շնչով՝ Նրա բոլոր գորուծյունները» (Սաղմ., 32. 6): Եվ երկնավոր սպասավորները և սրբերի լուսավոր բանակները Նրա հույսով են ապրում և կարոտով սպասում են Նրա նվերներին: Նրա մի հայացքով բավարարվում են բոլոր արարածների կարիքները, և Նրա գորուծյան շնորհիվ ապրում են բոլորը, և «բոլորի աչքերը հույսով Նրա վրա են հառած» (Սաղմ., 144. 15):

108. (366). Իր էության բնությամբ Նա Արարիչ է, Հաստատող և Առաջնորդ է ամեն ինչի: Նրանից բխող անսպառ գորուծյունը, տարածվելով, ընդգրկում է ամեն ինչ: Այնտեղից է ելնում կենարար ուժը, որն անցնում է բոլոր արարածներին՝ երկնային և երկրային, օդին և քամուն, կրակին և ջրին, լույսին և խավարին, անդունդներին և գագաթներին: Իր ամենաթափանց լույսով Նա ճառագում է անտեսանելի գորուծյունների մեջ, Նրա հոգևոր հգորուծյունն սահման չունի, տարածված է ամեն ինչի վրա, ցրված է ամենուր, և Նրա ճառագայթները շողշողում են հգորուծյամբ և անըմբռնելի բնությամբ: Նա չունի սահման վերին բարձունքներին հասնելու, ոչ էլ ստորին անդունդներն իջնելու համար, ոչ էլ աջ և ձախ տարածվելու, ոչ էլ առաջ և հետ շարժվելու: Առկա են վեց գորավոր ճառագայթներ, հազարամյա վեց դարաշրջաններ, իսկ յոթերորդ դարաշրջանը արգարների հանգստության համար է:

109 (367). Ինչպե՞ս մենք կարող ենք քարոզել, թե Աստված մեզ նման է, երբ մենք մեր (բոլոր) մարմնեղեն անդամներովս հողից ենք կազմված: Յուրաքանչյուր անդամ իր համար սահմանված գործն է կատարում, անկարող լինելով կատարել իր ընկերոջ գործը. ոչ աչքն է կարող լսել, ոչ ա-

կանջը՝ տեսնել, ոչ լեզուն՝ հոտոտել, ոչ ձեռքերը՝ քայլել և ոչ ոտքերը՝ աղաղակել: Բերանը կերակուրների համար է, քիթը՝ հոտերի, քիմքը՝ համերի, յուրաքանչյուրը կապված է իրեն հատուկ բնության հետ:

110 (368). Բայց Նա ինքը իր կամքով իրագործեց բոլորին փրկող գալուստը և կատարեց Հոր կամքը: Աստծու կողմից ուղարկվեց Աստված՝ Սուրբ Որդին, մարմին առավ կույսից, կատարյալ մարդ՝ իր կատարյալ Աստվածությամբ¹: Նա հանդես բերեց Աստվածության գորուծյունը և ցույց տվեց (մարդկային) մարմնին հատուկ տկարությունը: Իր մարմնով Նա ծառայակից եղավ մեր մարդկային բնությանը և մեղքերից ազատեց մեր մարդկային մարմինը: Նրանով Նա իջավ դժոխք և այնտեղից դուրս բերեց նրանց, որոնք փակված էին դժոխքում (Ա. Պետր., 3. 19): Նա հալածանքներ կրեց մարմնով, և հալածեց սատանային, և կապեց մեղքը:

111 (369). Ով որ հավատաց Նրան այդ մարմնում, նրանց հայտնի դարձրեց իր Աստվածությունը, իսկ ով որ սայթաքեց մարմնի պատճառով, նրանք մերժեցին Նրա (աստվածային) բնությունը¹: Որովհետև Նա բնությամբ միացավ մարմնին և խառնեց մարմինը իր Աստվածությանը: Ովքեր հավատացին Նրան, վայելելու են անասելի բարիքներ, իսկ այս հավատից չեղվածները գնացին անկոխ և անհայտ ուղիներով, ճանապարհից դուրս ընկան, հայտնվելով անանցանելի արահետների շրջապատում, և շատերին ճշմարիտ հավատից մոլորեցրին: Նրանք կարծում էին, թե մի բան են գտել, մինչդեռ գտել էին ոչինչը, ինչպես և գրված է, թե՝ «Գնացին ոչնչի հետևից և գտան ոչինչը» (Երեմ., 2. 5): Որովհետև ինչ-որ բան գտնելու համար պետք է աշխատանք կատարել, իսկ առանց որևէ բան գտնելու աշխատանք կատարելը, սուտ ուսմունքի հետևելով, հասցնում է կռապաշտության:

112 (370). Որովհետև Նա բոլոր մարգարեների միջոցով այնտեղից՝ վերևից, իմաց է տալիս մշտապես իրար հաջորդող սերունդներին առաջիկա իրադարձությունների մասին: Եվ նախորդող բաների օրինակներով Նա շատ անգամ ուսուցանել է հետո եկողներին, մերթ հնազանդություն կոչելով ահավոր սպառնալիքների միջոցով, հիշեցնելով այն վրեժխնդրության մասին, որ կատարվեց սկզբից, որպեսզի սաստելով անհնազանդներին հորդորի նրանց ուղղվելու, ինչպես, օրինակ, եգիպտացիներին հասցրած ամենատարբեր հարվածները և նրանցից վրեժ լուծելը ամենադառը հատուցման միջոցով: Կամ էլ բերում է անապատում հավատը կորցրած մարդկանց մեռնելու օրինակը և հիշատակում է բոլոր նրանց, ովքեր հանդգնում էին փորձել Աստծու բարկությունը:

113 (371). Այսպես և Քրիստոսի առիթով Նա բերում է սողոմացիների և գոմորացիների երկրի օրինակը, որպեսզի ոմանց կողմից (Քրիստոսին) չընդունելու պատճառով (մյուսները) ավելի դաժան պատիժներ չկրեն: Երբեմն հիշեցնում է տարբեր զարմանալի հրաշքների և արդարների աստվածային պարզւեներով հատուցելու մասին: Միաժամանակ հիշեցնում է արարչության ժամանակ հաստատված կարգը՝ բազմիցս ասելով, թե՝ «Տարածեցի երկինքը և հաստատեցի երկիրը» (Եսայի, 44. 24) և «ծովը փակեցի սահմաններով (դարպասներով)» (Հոբ, 38. 8), որպեսզի բոլոր այս խոսքերով քաջալերի հնազանդորեն իրեն լսողներին՝ հավատալ (Իր) խոստումներին:

114 (372. XXXIX). Իսկ երբ Նա եկավ, Ամենափրկիչը կատարեց այն, ինչ որ մի ժամանակ խոստացված էր Նրա մասին: Եվ մարգարեների կողմից կանխասացվածների վկայությունը մենք կարող ենք հաստատել Որդու գալստյան ճշմարտությունը Աստվածորդու մարմնավորված

ծնունդով, նրանց հոգեշունչ խոսքով՝ աստվածախառն մարմնի վերաբերյալ, ինչպես և դրանից առաջ Աստված ցույց տվեց Իր Որդու գալուստը՝ Իր արժանավոր մարգարեների արտահայտություններով:

115 (373). Որովհետև «Աստված ուղարկեց Իր Որդուն, որը ծնվեց կնոջից և մտավ օրենքի տակ՝ փրկելու համար նրանց, որ օրենքի տակ էին, որպեսզի մենք որդեգրություն ընդունենք» (Գաղատ., 4. 4-5): Սրա պես էր ասում նաև Հովհաննես Կարապետը. «Ապաշխարեցեք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթ., 3. 2): Դրա մասին և հավերժության Տերը, պատմելով արքայության մասին առակը, ասաց. «Ժամանակը հասել է, և մոտեցել է Աստծու արքայությունը» (Մարկ., 1. 15):

116 (374). Ահա եկավ Աստծու սքանչելի համախոհ Որդին, կատարելով հավիտենից նախասահմանված խոսքը, ինչի մասին և մարգարեն է ասում, թե՝ «Իր ծառաների խոսքերն է հաստատում և արդարացնում է Իր պատգամաբերների ասածները» (Եսայի. 44. 26): Նաև հրեշտակն է Նրա համար ճանապարհ բացում, որը ողջունում է կույսին՝ ի կատարումն մարգարեական այն խոսքի, թե՝ «Կույսը պիտի հղիանա ու որդի ծնի, և նրա անունը պիտի լինի Էմմանուել» (Եսայի, 7. 14: Մատթ., 1. 23), և ասում է. «Ուրախացիր, ո՛վ բերկրալի, Տերը քեզ հետ է» (Ղուկ., 1. 28):

117 (375). Եվ ապա ցույց տալով, թե ինչ ձևով է Տերը լինելու նրա հետ, ասում է. «Սուրբ Հոգին կգա քո վրա, և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ, որովհետև Նա, որ քեզնից է ծնվելու, սուրբ է և Բարձրյալի Որդի կկոչվի» (Ղուկ., 1. 35): Այնուհետև, նկատի ունենալով մարգարեությունները, ասում է, թե՝ «Տեր Աստված Նրան կտա Նրա հոր՝ Դավթի աթոռը, և Նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա, ու Նրա թագավորությունը վախ-

ճան չի ունենա» (Ղուկ., 1. 32-33): Նրա մասին էր ասում նաև Հոգով լեցուն Հակոբ հայրապետը և, իմանալով Հուդայի (եբրիի) փառավորությունը և մարգարեանալով, ասում է. «Հուդայից իշխան չի պակասելու, ոչ էլ առաջնորդ՝ նրա կողերից, մինչև որ գա Նա, Ում պատկանում է թագավորությունը, որովհետև Նա է հեթանոսների հույսը» (Ծննդ., 49. 10):

118 (376). Ահա մենք տեսնում ենք բոլոր մարգարեությունները լիովին կատարված, ահա տեսնում ենք բոլոր հեթանոսներին, որոնք ծառայում են Նրան, ոմանք կամավոր, ոմանք էլ՝ ակամա: Ասված է. «Իր ավանակին կկապի (խաղողի) որթից, իսկ որթի ոստից՝ էջի քուռակին» (Ծննդ., 49. 11), այսինքն՝ (նկատի ունի) խոնարհությունը Նրա գալը այգու մշակների մոտ, որոնք չցանկացան (ճանաչել) այգու տիրոջը, որը համբերելով չարչարանքներ կրեց իր կամքով, ինչի մասին մենք կպատմենք իր ժամանակին, որ դեռ (չատ) բան ունեմ ձեզ պատմելու Նրա ծննդյան, մարգարեների կանխատեսումների, առաքյալների քարոզության, մարտիրոսների վկայաբանության մասին¹:

119 (377. XL). Նա, որպես իսկությունը (միակ) է-ն, գտնվում է Ինքն իր էության մեջ, բայց երբ կամեցավ, ընդունեց մարդկային կերպարանք, մարմին առավ և իջավ ընդգրկված մեր նմանության մեջ: Նա, որ իր Աստվածության ողջ լիությունը անսահման և անընդգրկելի է և մեզ համար իջավ չափերի սահմանների մեջ, ամփոփվեց մարմնում: Նա իսկապես մտավ մարմնի մեջ և դարձավ իսկական մարդ¹, իջավ մինչև անարգանք, որպեսզի մեզ բարձրացնի: Սակայն իր Աստվածությունը Նա երկնքում է և երկրի վրա, Հոր մոտ և Հոր հետ²: Եվ բոլոր արարածները շարժվում են Նրա հրամանով՝ ըստ ամեն մի կազմված էակի համար սահմանված կարգի:

120 (378). Թեպետև մեզ համար Նա իջավ մինչև անարգություն, սակայն մնում է իր բնություն մեջ, ինչպես և Ինքն է ասում, թե «Ես նույնն եմ և չփոփոխվեցի» (Մատթ., 3. 6): Որովհետև, չնայած որ Նա մարդկային կերպարանք և մարմին առավ, բայց այդ մարմինը խառնեց, միացրեց, ընկղմեց իր Աստվածության մեջ: Եվ նորից ասում է. «Սա է Աստվածը, մեր Աստվածը հավիտյանս հավիտենից» (Մատթ., 47. 15): Եվ դարձյալ (մարգարեն) ասում է. «Դու նույնն ես, և Քո տարիները չեն անցնի» (Մատթ., 101. 27): Մարգարեների մեջ մեծն Մովսեսին ևս հասավ այսպիսի ձայն, թե «Ես եմ այն (Աստվածը), որ ի սկզբանե կամ. այսպես կասես (նրանց), թե ինձ ձեզ մոտ առաքեց Նա՝ Աստվածը, որ ի սկզբանե կա» (Ելք, 3. 14): Նույն բանն է իր թղթում ասում նաև (ավետարանիչ) Հովհաննեսը, թե «Խոսում ենք Նրա մասին, որ սկզբից էր, որի մասին լսեցինք, որին ականատես իսկ եղանք, որին նայեցինք, և որին մեր ձեռքերը շոշափեցին, այսինքն՝ կենաց Բանը: Նա նույն ինքը կյանք էր, որ հայտնվեց, մենք այն տեսանք և վկայում ենք» (Ա Հովհ., 1. 1-2), որովհետև Նա Ինքն է Աստված ճշմարիտ և կյանք հավիտենական:

121 (379). Անընդգրկելի մարմին առավ, շոշափելի դարձավ և ընդգրկվեց¹ մարմնով, և իր կամքով ստանձնեց այն ամենը, ինչ հատուկ է մարմնին, ճանաչված չլինելով խոնարհությունը տարավ (տանջանքները): Եվ կրեց դա ոչ թե որևէ մեկի բռնադատությունը, այլ իր իշխանական և ազատ կամքով, ինչպես և Ինքն էր ասում. «Իշխանություն ունեմ իմ կամքով կյանքս² տալու, որպեսզի դարձյալ նորից այն առնեմ» (Հովհ., 10. 18):

122 (380). Եվ Նա Ինքը ծնվեց կույսից և իր կամքով կատարեց Իրեն Ուղարկողի կամքը, (և Ինքն) ասում է. «Ես եկա Իմ Հոր կամքը կատարելու համար» (Հովհ., 6. 38), որ-

պեսզի ցույց տա (Աստծու) էության միակամ, անքակտելի, անբաժանելի միասնությունը: Հոր կամքով Նա մտավ կույսի արգանդը և չնողկաց, որովհետև Նա Ինքն ամեն ինչ մաքրող է: Իր կամքով Նրան խանձարուրներով պատեցին և դրեցին անասունների մսուրի մեջ, Նրան, Որն ամենայն մեծությանց Տերն ու Ստեղծողն է և բոլոր բարիքներն Առաջացնողը:

123 (381). Մեզ համար Հինավուրցը¹ մանուկ դարձավ և վերցրեց մեր տկար մարդկային մարմնի կերպարանքը, որպեսզի, մեզ փոխելով, տանի դեպի Իր անմահությունը: Թեպետև Նա մարմին հազավ և իջավ մինչև մեր նմանությունը, բայց և այնպես Նա մնում է Իր Աստվածության նախնական բնություն փառքի մեջ, ինչպես և էր իսկապես, և կա, և մնում է հավիտյան Իր Հոր հետ՝ Իր բնություն բարձունքներում, այն մարմնով հանդերձ, որ մեզնից վերցրեց՝ անդադար փառաբանություն ստանալով հոգեղեն և հրեղեն զվարթունքներից:

124 (382). Նա եկավ և մարդ դարձավ, որպեսզի մենք՝ մարմնավոր (արարածներս), կարողանանք տեսնել (Նրան): Բայց (իմացեք որ) Աստծուն իր էությունը ո՛չ ոք չի տեսել, ո՛չ հրեշտակները, ո՛չ հրեշտակապետերը, ո՛չ սերովբեները, ո՛չ քերովբեները, ո՛չ էլ բյուրավոր երկնային զվարթունքների բանակները: Բայց մարմնով ծածկված Որդին ցույց տվեց և բացահայտեց Իրեն կատարելամիտ իմաստուններին, որպեսզի նրանք հազենան սքանչելի լույսով, (ըստ այն բանի) թե «Ով ինձ տեսավ, տեսավ Իմ Հորը (Հովհ., 14. 9): Եվ Նա գալով, Սուրբ Կույսի միջոցով կատարեց խոստացածը: Եվ առաջին ծնունդը եղել է Հորից՝ անսահման հավիտենականությունից առաջ, մշտնջենական և հավիտենական ծնունդ, մշտնջենական և հավիտենական Հորից՝ ամեն ինչից առաջ¹:

125 (383). Մեզ՝ Նրա կողմից ստեղծված տկար արարածներին, միայն այսքանը պետք է իմանալ, որ Նա և ճշմարիտ Հայրը մի են, ինչի համար էլ (այդ միությունը) ընդհանուր հայրություն է կոչվում՝ երկնային և երկրային արարածների համար: Միայն մեկ Տեր, երեք անձ ունեցող էություն. երեք անձեր, մի էություն, գիտություն միասնություն, զորություն՝ միասնական փառքով, մի միություն՝ լույս արձակող, միասնական զորություն՝ միասնական փառքի մեջ, միասնականություն՝ լույս արձակելիս, մեկ միասնական էություն, որովհետև ոչ ոք ի վիճակի չէ քննել, թե ինչպես կամ ինչու Նա (այդպիսին) է հանդես եկել:

126 (384). Հավատացե՛ք Երրորդությունը, անշշունջ լուրջությամբ, լուռ հավատով ընդունեցե՛ք (Նրանց) միությունը: Չէ որ մենք՝ հողից շաղախված հողածիններս, ինչպե՞ս կարող ենք քննել և ճանաչել Բարձրային, և ինչպե՞ս մենք՝ սկիզբ ունեցողներս, կարող ենք քննել Անսկիզբն Անհասանելիին:

127 (385). Ճշմարիտ հավատը սա է. Նա իջավ և Իր Աստվածությունը խառնեց մեր մարդկային (բնություն) հետ, անմահը՝ մահկանացուի հետ, որպեսզի բոլոր մարդկանց Իր Աստվածության անմահությունից անքակտելի դարձնի: Երբ Աստծու Միածին Որդին՝ հզորությամբ Հոր հավասարը, մարմնով բարձրացավ (և նստեց) Հոր մոտ՝ աջ կողմից, Նա խառնեց մեզ Իր Աստվածությունը: Նրա ձեռքով Հայրը «դրեց երկրի ամուր հիմքերը» (Սաղմ., 8. 29) և «կանգնեցրեց երկինքն ինչպես կամար» (Եսայի, 40. 22): Նրա մասին է մարդարեն ասում. «Տերը բոլոր հեթանոսներին ցույց տվեց Իր աջը և Իր բազուկը, և երկրի բոլոր ծայրերը տեսան մեր Աստծու (չնորհած) փրկությունը» (Սաղմ., 97. 1-3):

128 (386). Նա Ինքը՝ Միածին Քրիստոսը, Հոր աջն է և

բազուկը, և Նրանով լուսավորվեցին բոլոր ստեղծվածները, որովհետև «Սկզբից էր Բանը, և Բանը Աստծու մոտ էր, և Բանը Աստված էր: Եվ ամեն ինչ Նրանով եղավ» (Հովհ., 1, 1-3), և Նրանով հաստատվեց ամեն ինչ, ինչ որ կա երկնքում և երկրի վրա: Պետք է, որ նրանք, որոնք ստեղծվել և հաստատվել են, Նրանով մաքրվեն և Նրանով լուսավորվեն, որովհետև Աստված կամեցավ, որ արարածները ողջ մնան և չկործանվեն:

129 (387. XLI). Եվ ահա, Աստված Իր Սուրբ Հոգին ուղարկեց կույս Մարիամին, և Աստծու Որդին կույսից մարմին առավ, որով կորստի մատնեց չարը, այդ նույն մարմնով՝ աստվածախառն մարմնով, քավեց մեղքերը, Իր բարձրությունը խառնելով խոնարհության հետ՝ անտեսանելին միացրեց տեսանելիի հետ: Հովիվներին տված հրեշտակների ավետումը կանխագուշակում էր աստվածային փառքը. մսուրը և խանձարուրը ցուցադրում էին մարմնի խոնարհ աղքատությունը. առաջնորդող աստղերով, մոգերի երկրպագությունները ի հայտ էր բերված Ամենատիրոջ իշխանությունը: Մենք երկրավոր հատկությունների միջոցով պիտի ճանաչենք (Որդու) մարմինը, իսկ երկնային նշանների միջոցով իմանանք Նրա Աստվածությունը:

130 (388). Ահա տես, թե ի՞նչ է ասում մեզ Միքիան՝ մարգարեական շնորհի ոգով. «Եվ դու, Բեթղեհեմ, — ասում է, — որ ոչ ցածր աստիճանի ես հասել, քեզնից պիտի ծագի ինձ համար Իսրայելի տան պետ և իշխան, և Նրա ծագումը աշխարհի սկզբի օրերից է» (Միք., 5. 2: Մատթ., 2. 6): «Սկիզբ» (բառը) ցույց է տալիս Աստվածությունը, «Բեթղեհեմը»՝ մարմինն է նշանակում: Հրեշտակապետն ասում է. «(Մի որդի) պիտի ծնի, և Նրան պիտի կոչեն Հիսուս» (Մատթ., 1. 21-23: Ղուկ., 1. 31): Եվ սաղմոսերգուն երգեց. «Նրա անունը արևից առաջ է» (Սաղմ., 1. 17). Մեկը մարմ-

նով ծնունդն է հայտնում, իսկ մյուսը ցույց է տալիս Նրա Աստվածությունը, որը Հորից է ծնված՝ արևից առաջ¹:

131 (389). Այս ճշմարիտ հավատը մենք ունենք Սուրբ Գրքից և եկեղեցու կանոններից¹, որոնք մեզ առաջնորդում են կյանքի ճանապարհով դեպի Աստված, և Սուրբ Գրքում (բացված) ուսմունքի հանդեպ հավատով: Եվ մի շեղվեք իմաստություն կարգից, ո՛չ դեպի աջ և ո՛չ դեպի ձախ, որովհետև այն սերմերը, որ մենք ցանում ենք ունկնդիրների սրտերի անդաստանում, ամուլ ու փտած չեն, ոչ էլ չորացած ու սմբած, այլ այնպիսի բույս տվող սերմեր են, որ վերցված են աստվածային գրություններից, (Սուրբ) Հոգու ավանդված գրքերից: Եվ եթե ոմանք սրանից ավել սերմեր գցեն ունկնդիրների լսողության մեջ, (իմացեք) այդպիսի մարդիկ նզովյալներ են. նույնիսկ եթե երկնային հրեշտակ լինի, նա անիծված է՝ Հող ուտող օձի նման, որը սուտ և կեղծ խոսքերով ուզում էր փոխել Արարչի պատվիրանը²:

132 (390). Բայց մենք այդպիսի խաբեություն ձեռք չենք մատուցում, և դա վկայում ենք Աստծու առաջ, որովհետև միայն Նա գիտի սրտի գաղտնիքները (Հմմտ. Սաղմ., 43. 22), և բոլոր ծածուկ բաները Նրան հայտնի են, որովհետև մշտապես Նրա (աչքի) առջև ենք: Եվ այժմ Նրա առջև ասում ենք Նրա պատգամները, որոնք կենսատու են, հագեցված (մտքով), պտղաբեր, արդյունավոր և շահեկան, օգտավետ, շտեմարանները լցնող, որոնք կարող են հարստացնել ձեզ այստեղ մարմնավոր պտղով, և այնտեղ՝ արքայություն մեջ տալ ձեզ անանց և երկնային բերկրանքի վայելքը: Փառք Նրան, Ամենատերին, որը մեր ապրելու համար մարդացավ և շրջեց (երկրի վրա) մարդու կերպարանքով, մեզ նման կերպով և խմեց, տանջվեց, չարչարվեց, խաչվեց, մեխվեց, սպանվեց, թաղվեց, կենդանացավ, հարույնություն առավ, համբարձավ և բարձրանալով նստեց

Աստծու՝ Իր Ծնողի աջ կողմից, և Հայրը կենդանություն տվեց բոլոր նրանց, ովքեր հավատացին Նրան¹:

133 (391. XLII). Բայց մեզ դեռ մնում է պատմել ձեզ Աստվածորդու՝ Կույսից ծնվելու մասին: Թե ինչպես դա եղավ, մենք կպատմենք մեկ առ մեկ: Որովհետև ոչ թե Կույսից ծնվելուց հետո է սկիզբ առել էական անսկիզբ Բանը, այլ ամեն ինչից առաջ հավերժության մեջ Նա ծնված է Հորից, իսկ այժմ մեզ համար իջավ (երկիր) և մարմնով ծնվեց Կույսից, և միայն Նա գիտի, որ ծնունդը Հորից է, որը ծնել է Նրան: Իսկ երկրորդ ծնունդը, որ տեղի ունեցավ մարդկանց մեջ, դա Նրա շնորհն էր, որպեսզի կյանք տա մարդկանց, փրկի երկիրը առաջին անեծքից և գալով, Իր օրհնություն շնորհող դարչապարներով նորացնի այն, որովհետև Նա, տեսնելով, որ մարդիկ կորստյան են մատնված, հավաքեց ցրվածներին և գտավ կորածներին:

134 (392). Այնուհետև (աստվածային) շնորհի արժանացած Կույսի մաքրաբարո անարատ արգանդը Սուրբ Հոգուց հղացավ Աստծու Որդուն՝ (մեզ համար) անիմանալի ձևով: Եվ ինչպես (բոլոր) ծննդկանների կարգն է, ծնեց իր անդրանիկ զավակին՝ Դավթի քաղաքում, Բեթղեհեմում, ի կատարումն մարգարեական խոսքի՝ թե «Դու, Բեթղեհեմ, Եփրաթայի սակավամարդ տուն, կլինես Հուդայի երկրի հազարավորների մեջ. քեզնից պիտի ելնի ինձ համար Իսրայելի մի պետ և իշխան, և նրա ծագումը աշխարհի սկզբի հավիտենական օրերից է» (Միք., 5. 2):

135 (393). Տեսնո՞ւմ ես այն իրադարձությունները, որոնք կանխագուշակված էին: Տեսնո՞ւմ ես հրեշտակների ավետումը հովիվների օթևաններում, թե «Այսօր Դավթի քաղաքում ձեզ համար ծնվեց մի Փրկիչ, որը Դավթի քաղաքում Օծյալ Տերն է» (Ղուկ., 2. 11): Տեսնո՞ւմ ես, որ Նա, Ում ծագումը աշխարհի սկզբից է, Նրա մասին էին ասում՝

«այսօր ծնվեց»: Նրանք ասում էին Օծյալի մասին, որպեսզի նշեն այն մարգարեությունը, թե «Ով է մարդկանց ասում իր Օծյալի մասին» (Սաղմ., 104. 15): Նա (Իր) Օծյալին (բացեց) նշանը տալով, թե՛ «խանձարուրով փաթաթված և մսուրի մեջ դրված մի մանուկ կգտնեք» (Ղուկ., 2. 12): Սա այն հավիտենական խորհուրդն էր, որ Աստված գաղտնի էր պահել և որը (այժմ) հայտնեց երկնային իշխանավորներին:

136 (394). Այնտեղ երկնային զորքը, Նրա Աստվածային փառքը երգելով, ուսուցանում էր հովիվներին, որպեսզի մսուրի և խանձարուրի պատճառով հովիվները, չլինի թե, արհամարհեն Նրան: Այդժամ հովիվները շտապելով հասան հրեշտակի ցույց տված տեղը և գտան Մանուկին, որը հայտնի դարձավ ոչ միայն մոտիկ գտնվողներին, այլև աստղի նշանով՝ հեռու ապրող արևելցիներին: Այդ մասին են ուրեմն ասում մարգարեական քննվող հոգեպատում գրքերի խոսքերն այն մասին, թե «Մեզ համար Մանուկ ծնվեց, մի Որդի տվեց մեզ, որի իշխանությունը Իր ուսերի վրա պիտի լինի. Նա պիտի կոչվի Մեծ խորհրդի Հրեշտակ, Սքանչելի Խորհրդակից, Աստված հզոր, Իշխան, Հայր հանդերձյալ աշխարհի» (Եսայի, 9. 6):

137 (395). Տեսնո՞ւմ ես, որ Որդի, Իշխան, Հրեշտակ, Խորհրդակից, հզոր Աստված և հանդերձյալ աշխարհի Հայր է կոչվում այսօր ծնված Մանուկը: Որովհետև Նա իսկապես Որդի է, որովհետև Նա Աստծու զորությունն է, Խորհրդակիցը և հզոր Աստվածն է, որով հաստատվեց հավիտենականությունը: Եվ Մանուկ է, որովհետև այսօր Սուրբ Կույսից ծնվեց Բեթղեհեմում, որի մասին (մարգարեն) նախապես ասել է. «Տերն ասաց ինձ. «Դու իմ որդին ես, ես այսօր ծնեցի քեզ»» (Սաղմ., 2. 7): Եվ հանդերձյալ աշխարհի Հայրն է, որովհետև կույսից ծնված երկրորդ մարդն է (Հմմտ. Ա Կորնթ., 15-47), որը, երկնքից գալով,

պետք է նորոգի աշխարհը, որը հնացել և մահակուլ է դարձել հողածին առաջին մարդու (մեղքի) պատճառով: Եվ Իշխան է, որովհետև «Հեսսեի արմատից, – ասում է Եսայի (մարգարեն), – գավազան պիտի ընձյուղվի և ծաղիկ՝ նրա շառավիղից» (Եսայի, 11. 1), որը Դավթի դստեր ծննդաբերածն է: Ապա և նստելու է Դավթի գահին և առաջնորդելու է նրա թագավորությունը:

138 (396. XLIII). Եվ այսպես, եկան այն օրերը, որոնք մարգարեն դրանից առաջ նշել էր. «Ահա օրեր են գալու, – ասում է Տերը, – և ես հաստատ կատարելու եմ իմ բարի խոսքերը, որ հայտնեցի Իսրայելի տան մասին և Հուդայի տան մասին: Այն օրերում և այն ժամանակ Դավթի համար մի արդար շառավիղ պիտի ծնեմ, որն իրավունք ու արդարություն պիտի պաշտպանի երկրի վրա» (Երեմ., 33. 14-15: Երեմ., 23. 5): Այդ առթիվ Նա նույնպես ասում է. «Դարձիր, Հակոբ, և բռնիր նրանից (իմաստությունից)՝ Նրա լույսի ծագման իսկ պահին: Քո փառքը ուրիշին մի՛ տուր, և քո վաստակները՝ օտար ազգին» (Բար., 4. 2-3):

139 (397). Իսկ մի այլ մարգարե ավելի հստակ սահմանում է տալիս. «Այդ օրը պիտի կանգնեցնեմ Դավթի խորանը, պիտի վերականգնեմ նրա ավերակները, գետնին հավասարված նրա տեղերը վերստին պիտի կանգնեցնեմ և պիտի վերաշինեմ այն հավիտենական օրերի նման, որպեսզի մնացած մարդիկ և բոլոր հեթանոսները, որոնց վրա կա իմ անունը, փնտրեն Ինձ, – ասում է Տերը» (Ամոս., 9. 11-12): Ո՛վ է այդ բանն անում, հայտնի է հավիտյան ի սկզբանե, որովհետև Նա, Դավթին խոստանալով, դրանից առաջ ասել է. «Քո որովայնի պտղից պիտի նստեցնեմ քո գահին (Սաղմ., 131. 11), և ավելի բարձր՝ քան երկրի բոլոր թագավորները, հաստատելու եմ Նրա աթոռը՝ ինչպես օրերը երկնքի, ինչպես արեգակն իմ առջև, ինչպես լուսինը, որով-

հետև այն (աթոռը) հաստատված է երկնքում» (Սաղմ., 88. 28, 30, 37, 38):

140 (398). Եկավ Նա, «Ում պատկանում է թագավորությունը, և Նա է հեթանոսների հույսը» (Մննդ., 49. 10), ինչպես և ասել է Մովսեսը: Եվ բարձրացավ տիեզերական թագավորը՝ բոլոր ժողովուրդներին հնազանդեցնելով: Եվ իր թագավորությունը Նա մի այլ ժողովուրդի չի փոխանցի՝ ըստ Դանիելի ասածի (հմմտ. Դան., 2. 44): Նաև Դավիթը, որի որդի կոչվեց Քրիստոսը, մարգարեի սրտից բխած, Հոգով ներշնչված խոսքերով, թագավորի կերպարը բացահայտելով, նախ ասում է, որ «Նա (տեսքով) գեղեցիկ է բոլոր մարդկանց որդիներից և շրթունքներից շնորհ է թափվում» (Սաղմ., 44. 3): Իսկ «գեղեցիկ» է ասում ոչ թե (արտաքին) կերպարանքի համար, այլ (Նրա) անզուգական փառքը նկատի ունենալով: Եվ դարձյալ. «Մեջքից սուր կապիր, ո՛վ հզոր, քո վայելչությունը ու գեղեցկությունը» (Սաղմ., 44. 4): Եվ դրանից հետո ամբողջացնելով՝ ավարտում է. «Քո գահը հավիտյանս հավիտենից է, Աստված, Քո արքայական գավազանը արդարությունից գավազան է» (Սաղմ., 44. 7), և շեշտում է, որ Նա Օծյալն է և որ ինքը մարգարեն գովերգել է Օծյալի գալուստը՝ ասելով՝ «դրա համար Աստված՝ Քո Աստվածն, օժեց Քեզ ուրախության յուզով՝ ավելի, քան Քո ընկերներին» (Սաղմ., 44. 8):

141 (399). Տեսնո՞ւմ ես, որ պայծառատես մարգարեն Սուրբ Հոգու կողմից նախապես տեղեկացված էր, որ Աստծու Միածին Որդին, Հոր սիրելի աթոռակիցը, եղավ Դավթի որդի (Մատթ., 22. 42) և բարձրացրեց Նրա գահը հավիտյան. ինչպես և ասված է, թե՛ «Սկզբից և եթ Տիրոջը մշտապես տեսնում էի իմ առջև, և Նա իմ աջ կողմում է» (Սաղմ., 15. 8): Դրա մասին ինքն էլ գիտի, որովհետև Աստված երգումով երգվեց նրան, որ Նրա գահին նստեցնելու է

Նրա որովայնի պտղից (Բ Թագ., 7. 12), ինչի մասին վկայում են նաև (Ս. Գրքի) ցուցումները, թե «Քրիստոսը գալու է Դավթի տոհմից և Բեթղեհեմ գյուղից, (որտեղից Դավթն էր) (Հովհ., 7. 42):

142 (400). Եվ այնտեղ Նա ճանաչվեց թագավոր ոչ միայն ավելի առաջ եղած գուշակութունների պատճառով, այլև նույն ժամին եղած նշանով եկած մոգերի կողմից, որոնք (եկան Երուսաղեմ) և ասացին. «Ո՞ր է հրեաների արքան, որ ծնվեց» (Մատթ., 2. 2): Եվ օրենսգետներից տեղեկանալով հասան այնտեղ, ուր Մանուկն էր գտնվում, Որին երկրպագեցին և նվերներ մատուցեցին, և իսկույն, Տիրոջը ճանաչելով, հրեշտակներից տեղեկացված լինելով¹, (այլ ճանապարհով) վերադարձան (իրենց երկրները):

143 (401. XLIV). «Եվ երբ ութ օրերը լրացան, և Նա թլփատվեց, Նրա անունը Հիսուս դրվեց, ինչպես հրեշտակի կողմից կոչվել էր, երբ դեռ չէր հղացվել (մոր) որովայնում» (Ղուկ., 2. 21): Ինչպես ասում է մարգարեն, թե «Դեռ քեզ որովայնում չստեղծած՝ ես գիտեի քեզ, և դեռ արգանդից դուրս չեկած՝ սրբացրի քեզ» (Երեմ., 1. 5): Եվ սա ասվում է Տիրոջ մասին, որ մեկնաբանվում է, թե «Ում Հայրը սրբացրեց և աշխարհ ուղարկեց» (Հովհ., 10. 36): Իսկ մի այլ մարգարե (ասում է), թե «Ինձ կանչեց Տերը, երբ դեռ ես արգանդում էի, և իմ անունը տվեց, երբ ես դեռ իմ մոր որովայնում էի» (Եսայի, 49. 1):

144 (402). Եվ ահա, ուշադրութուն դարձրու, որ Նա իսկական (մարդկային) կերպարանք ստացավ Սուրբ կույսից և ոչ թե երևութական տեսք¹: Որովհետև այստեղ (մարմնական) սկիզբ է առնում Այն, ինչ անսկզբնական է: Եվ հաշվելով ըստ օրերի, ութերորդ օրը Որդին թլփատվեց մինչև առավոտվա աստղի ծագելը (Հմմտ. Սաղմ., 109. 3), ավետումով խոստացված Աբրահամի զավակը, որի շնորհիվ

օրհնություն են ստանում երկրի բոլոր ազգերը (Հմմտ. Ծննդ., 18. 18): Այսպիսով, Հիսուս Քրիստոսի թլփատումը հայրերին տրված ավետիսի կատարումն էր: «Նա, – ասում է (Պողոս առաքյալը), – մտավ օրենքի տակ՝ փրկելու համար նրանց, որ օրենքի տակ էին, որպեսզի մենք էլ որդեգրություն ընդունենք» (Գաղատ., 4. 4-5):

145 (403). Այնուհետև (մարդկանց կողմից) ընդունելություն չգտնելով՝ Դավթի որդին հալածվեց դեպի Եգիպտոս, ի կատարումն այն (խոսքի), թե «Եգիպտոսից պիտի կանչեմ իմ Որդուն» (Մատթ., 2. 15): Որովհետև ամենագետ Աստծու կողմից՝ Իր հոգեկիր մարգարեների միջոցով նախապես որոշված էր, որ Միածին Որդին գալով ինչպիսի տառապանքներ է կրելու հրեաստանցիներից, ինչպես և Պետրոսը «Գործք առաքելոց» գրքում ասում է, թե «Ինչպես որ Աստված նախօրոք հայտնել էր բոլոր մարգարեների բերանով Իր Քրիստոսի չարչարվելը, այդպես էլ կատարեց» (Գործք, 3. 18): Այդ էր ասում և Ինքը՝ Տերը, թե «Եկա կատարելու Օրենքը և մարգարեներին» (Մատթ., 5. 17-18):

146 (404. XLV). Ապա Եգիպտոս կանչված լինելով՝ Նա անցնում է Նազարեթ՝ ըստ մարմնի Իր կարծեցյալ հայրենիքը: Մարդու որդին աճում ու զարգանում է հասակով՝ մարդկային բնույթին համապատասխան (Հմմտ. Ղուկ., 2. 52): Նա իսրայելական ցեղի հետ համերաշխ է ընթանում, որպեսզի նրանք իրենց կամքով դիմեն կյանքի բացված աղբյուրին: Որովհետև հենց Նրա մասին է կանխագուշակում սաղմոսերգուն. «(Տե՛ր), քեզնից է կյանքի աղբյուրը» (Սաղմ., 35. 10): Դրա մասին էր ասում նաև Փրկիչը՝ սամարացի կնոջը հայտնելով. «Եթե դու գիտենայի՛ր Աստծու պարգևները, և թե ով է, որ քեզ ասում է՝ «Ինձ խմելու ջուր տուր», գուցե ինքդ արդարև նրանից կուզեիր, և Նա քեզ կենդանի ջուր կտար» (Հովհ., 4. 10):

147 (405). Հետո, երբ լրացավ Նրա տասներկու տարին, Նա գնաց Երուսաղեմ և, օրենքի ուսուցիչներին հետ զրույցի մասնակցելով, զարմացրեց բոլորին՝ ի կատարումն մարգարեական խոսքի, թե «Ահավասիկ խելահաս պիտի դառնա իմ մանուկը, պիտի հառնի, բարձրանա ու մեծապես փառավորվի» (Եսայի, 52. 13): Որովհետև Աստվածությունը թեպետև երկնքից վայր իջավ, սակայն երկրի վրա՝ ներքևում, ապրողներին կողմից ճանաչվեց որպես (երկինք) բարձրացված, մեր կողմից, որ հասկացանք, թե (Աստված) թեպետև խոնարհ կերպով իջավ (երկիր), սակայն իր էությունը հատուկ փառքի զորությունը բարձրության վրա է (մնում), ըստ մարգարեի կանխագուշակող տեսիլքի, թե «Նա կհասնի, կբարձրանա և (մեծապես) կփառավորվի» (Եսայի, 52. 13): Որովհետև Նա, Որը փառքի կարոտ չէ, այն բանից հետո, երբ (եկավ մարմին առած) ինքը իր համբերատար իշխանությունը կատարեց իր սեփական կամքը, ոչ թե ինչ-որ արտաքին (ուժի) շնորհիվ, այլև (այնուհետև) իր բնական փառքով բարձրացավ (երկինք), երևաց երկնավոր զորություններին (Ա Տիմ., 3. 16), համաձայն այն խոսքի, թե «Աստված համբարձավ օրհնությունը և մեր Տերը՝ շեփորի ձայնով» (Սաղմ., 46. 6):

148 (406). Իսկ շեփորը այն չի գոչելու (սովորական) եղջյուրի պես, որ հնչում է փքված շուրթերի, ուռած այտերի օդի ճնշումից, այլ այն (փողն) է, որ հնչելով լցնում է ամեն ինչ աստվածաբանչ ավետիսներով, (իմաց տալով) թե «Ահա (ձեր) Աստվածը, ահա (ձեր) Տերը» (Եսայի, 40. 10): Որովհետև նրանք (հեթանոսները) պետք է անցնեն Նրա կենսաբեր ուսմունքի քարոզության ճանապարհը և, Նրան լսելով, իմանան, թե՝ «Ահա սա է (մեր) Տերը, որին սպասում էինք. եկեք ցնծանք և ուրախանանք մեր փրկության համար» (Եսայի, 25. 9): Նրա շնորհիվ բացվեցին նրանց

կյանքի լույսի քարոզության ճանապարհները՝ բարիքների և հանգստյան համար, որպեսզի նրանք, լավ խորհելով, հասկանան, որ Նրա հետ բարձրանալով արքայություն՝ նրանք կդառնան (երկնային) հանգրվանի այն լուսեղեն հարկերի բնակիչները: Նրանք հաճությունը կլսեն, կըմբռնեն, այսինքն կճանաչեն Նրան որպես տիեզերքի (Տեր), ինչպես և Սաղմոսարանն է ասում, թե «Աշխարհի բոլոր ծայրերից (մարդիկ) կվերհիշեն ու կդառնան Տիրոջը» (Սաղմ., 21. 28):

149 (407). Եվ «Նա կհառնի և կբարձրանա» (Եսայի, 52. 13), որովհետև Նա խոնարհ մարմնով իջավ ի խոնարհություն, այդ պատճառով մարմնի խոնարհության կերպարանքով է բարձրանում: Նա երևաց որպես խոնարհ մարդ և բոլոր մարդկանցից ավելի հեզ ու խանարհ, և մարմնում կրած վշտերը տարավ հանդարտությունը և համբերությունը: Այդ պատճառով Նա նույն մարմնով էլ բարձրացավ խոնարհությունից, իր մարդկությունը հանդերձ հառնեց, բարձրացավ և փառավորվեց, որպեսզի բարձրացնի իր վրավերցրած մարդատեսիլ կերպարանքը՝ ինքն իր վրա կնքելով խոնարհ բնավորության տիպարը:

150 (408. XLVI). Արդ, երեսուն տարի իրեն չբացահայտելով, հասակ առնելով ըստ մարմնի տարիքի, մարմնի աճելու բնությունը համապատասխան, Նա համաձայնվեց և մկրտություն ընդունելու: Եվ դրանից առաջ Նա որպես իր առաջից գնացող կարապետ¹ ուղարկեց Հովհաննեսին՝ մարգարեներից մեծին, իր համար ճանապարհ պատրաստելու և բացելու իր հայտնության շավիղները: Նա (Հովհաննեսը) համաձայնեց տալ ապաշխարության մկրտություն, ոչ թե անվախճան կյանքի լուսավորության աստվածադրոշմ մկրտությունը, այլ տալ (միայն) մաքրության մկրտություն՝ ապաշխարելու համար, ինչպես դա արվում

էր Մովսէսի ժամանակներում, երբ Աստված, ցանկանալով երևալ նրանց, հրամայում էր նրանց լվացվել և մաքրվել, որ արժանի լինեն աստվածային փառքի երևմանը:

151 (409). Այդպես և Հովհաննէսը եկավ և ապաշխարութեամբ լվաց ժողովրդին, որպէսզի երբ Աստուծու Որդին երևա, նրանք արժանավայել պատրաստութեամբ կարողանան ունկնդրել Նրա վարդապետութիւնը, իրենց սրտերում ճանապարհ բացեն, որպէսզի իրենց հեզ ու խոնարհ օթեաններում կարողանան ընդունել Ամենատիրոջը:

152 (410). Եվ ահա, Նա եկավ և Ինքը մկրտութիւն ընդունեց Հովհաննէսից, սկսեց գրել Հավիտենական կտակը և կնքել (այն) Իր արյունով, որպէսզի բոլորը ապրեն լույս բերող և կյանք տվող մկրտութեան շնորհով: Նա հրամայեց բոլոր հողածին մարդկանց, բոլոր մարմնավոր (ադամորդիներին) նմանվել փրկութեան աստվածային պատկերին: Ահա, Նա եկավ կնքատու Հովհաննէսի մոտ՝ նրանից մկրտվելու համար, որը սարսափահար ընդդիմացավ (ասելով), թե՛ «Ինձ պետք է, որ քեզնից մկրտվեմ» (Մատթ., 3. 14): Իսկ Նա, լսելով այդ, պատասխանեց և հրամայեց համարձակորեն մկրտել Նրան (ասելով). «Թույլ տուր հիմա, որովհետև այսպես վայել է լինել, որպէսզի մենք կատարենք (Աստուծու) ամեն արդարութիւնը» (Մատթ., 3. 15):

153 (411). Բայց ի՞նչ է արդարութիւնը, եթե ոչ այն, ինչ Սուրբ Հոգով գոչեց Հովհաննէսի հայր Զաքարիան, թե՛ «Հիշեց այն երդումը, որ արել էր մեր հորը՝ Աբրահամին, առանց երկյուզի մեզ փրկութիւն մեր թշնամիներից և բոլոր մեզ ատոզների ձեռքից, ծառայել Նրան սրբութեամբ և արդարութեամբ» (Ղուկ., 72-75): Նույնն է ասում և սաղմոսագրուն. «Իր ուխտը Նա հիշեց... ուխտ, որ Աբրահամի հետ կնքեց, և երդումն Իր՝ Իսահակի հետ: Հակոբի համար Իր հրամանն հաստատեց, և Իսրայելի համար՝ ուխտն Իր

Հավիտենական» (Սաղմ., 104. 8-10): Հայրերի Հավատով Նա օրհնեց ողջ երկիրը, օրհնեց և կատարեց Իր (տված) խոստումները, և դրա համար էլ Ինքը իջավ ջրերի մեջ, և միաժամանակ ջրերը դարձրեց մաքրող և նորոգող:

154 (412). Եվ ինչպես այն առաջին երկիրը Նա Իր հրամանով ջրերից ազատեց (Ծննդ., 1. 9), և (հետո) ջրով սնուցված բխեցին երկրից բոլոր բույսերը, սողունները, գազանները, անասունները և թռչունները, նույն ձևով էլ մկրտութեամբ Նա դալարեցրեց ջրերի ծննդաբերող արգանդը, ջրով մաքրելով և նորոգելով մաշված հնութիւնը հողեղեն նյութի, որը մեղքերի պատճառով մաշվել, հնացել էր, զրկվելով (Սուրբ) Հոգու շնորհներից: Եվ ահա, այս անգամ աներևույթ Հոգին բացեց արգանդը տեսանելի ջրով, զարդարելով նորածնունդ նորափետուրներին նորից ծնվելու ծննդյան ավազանում (Տիտ., 13. 5), որպէսզի բոլորը հազնեն լուսավոր պատմութեաններ՝ երկրորդ անգամ նորից ծնվելու համար:

155 (413). Որովհետև ինչպես սկզբում, արարչութեան ժամանակ Աստուծու Հոգին շրջում էր ջրերի վրա և այնտեղից ստեղծում արարածների տեսակները և հրամայում ստեղծվածներին հաստատվել լինելութեան մեջ, ինչպես նաև հրամայեց հաստատվել երկնքի հաստատութեանը՝ հրեղեն հրեշտակների բնակարանին, որը մեզ երևում է ջրեղեն, նույն ձևով էլ Նա եկավ և կատարեց այն ուխտը, որ կապել էր հայրերի հետ: Նա Ինքը իջավ ջրերի մեջ, մաքրեց ներքևի երկրային ջրերը, որոնք պղծված էին մարդկային մեղքերով:

156 (414). Եվ ահա, Իր կրունկներով կոխկրտելով ջրերը, Նա սրբագործեց այն և դարձրեց մաքրող: Եվ ինչպես սկզբում Հոգին շրջում էր ջրերի վրա, նույն ձևով էլ Նա կրնակվի ջրերի մեջ և կընդունի բոլորին, որ ծնվեն Նրա

միջոցով: Եվ պնդացած (մաքուր) վերին ջրերը հրեշտակների բնակարանն են: Եվ ահա, այս (ներքևի) ջրերը Նա դարձրեց այն ջրերի նման (մաքուր), որովհետև Ինքն իջավ այս ջրերի մեջ, որպեսզի բոլորը, ջրերի մեջ Հոգով նորացած, դառնան հրեշտակների պես (մաքուր), և նույն Հոգին բոլորին (մկրտության) ջրերի շնորհիվ առհավատ դարձնի (Աստծու) որդիներ: Դրա համար Նա բացեց ներքևի ջրերի դարպասները, որպեսզի բացվեն երկնքի վերին ջրերի դռները և Նա բոլորին փառքով տանի դեպի վեր՝ որդեգրելու համար:

157 (415). Դրա համար Աստծու ճշմարիտ Որդին խոնարհվեց և իջավ մկրտության ջրերը, որպեսզի կատարի հայրերին տրված խոստումները և ավետիսները: Դրանից առաջ Նա ընդունեց թլփատությունը, որպեսզի երկու կողմերին էլ շնորհ և բարիք պարգևի՝ Իր թլփատվելով կատարի (հայրերին տրված) խոստումների (աներեր) հաստատումը և, խրախուսելով, որդեգրության հրավիրի նրանց, ովքեր արժանի են (տիրանալու այդ) ժառանգությանը: Իսկ մկրտելով Նա բոլոր մկրտվածներին ապրեցնում է՝ Ինքը մկրտություն ընդունելու միջոցով. և Նա մկրտությունը պատվավոր դարձրեց՝ Ինքն իսկ մկրտվելու համար իջնելով:

158 (416). Եվ Նա հենց այնտեղ Իր Հոր ձայնից և Հոգու՝ Նրա վրա իջնելուց առաջին անգամ ճանաչված, ընկալվեց որպես Աստծու ճշմարիտ Որդի: Որովհետև Նա հենց այնտեղ ընկալվեց և ճանաչվեց՝ ի կատարումն Հոր կանխասացություն, թե «Ահավասիկ խելահաս պիտի դառնա իմ մանուկը, պիտի հառնի, բարձրանա ու մեծապես փառավորվի» (Եսայի, 52. 13):

159 (417). Որովհետև երեսուն տարի լուռ և աննկատ շրջելով նրանց մեջ, Նա այժմ եկավ և հասավ մկրտության, և այդ մկրտության ժամանակ բոլորի համար ճանաչելի

դարձավ: Հովհաննեսը վկայում և ասում է. «Սա է, որի մասին ասացի՝ Նա, որ իմ հետևից է գալու, ինձնից առաջ կար: Որովհետև Նա նախապես իսկ առաջինն էր, և Նրա լրիվությունից մենք բոլորս ստացանք շնորհ» (Հովհ., 1. 15-16, 30):

160 (418. XLVII). Եվ (Սուրբ) Հոգին Նրա վրա իջավ աղավնու կերպարանքով (Մատթ., 3. 16: Մարկ., 1. 10: Դուկ., 3. 22: Հովհ., 1. 32): Իսկ ինչո՞ւ Աստծու Սուրբ Հոգին պիտի երևար աղավնու կերպարանքով: (Դա արվեց) որպեսզի տեսնողներին սովորեցնի, որ Աստվածորդուն նվիրվելու համար նրանք չունեն որևէ այլ միջոց, քան նմանվեն աղավնու կերպարին՝ անմեղությունը, արդարությունը և մաքրությունը նրա կերպարը կրելով իրենց հոգում:

161 (419). Որովհետև Նա սրտերի (գաղտնիքը) քննող, ծածուկ բաներն իմացող և բոլոր գաղտնիքները բացողն է, որովհետև Նա գիտի ամեն ինչ և ամեն ինչ՝ ինչ որ ասում է, կարող է կատարել, և Նրա համար ոչ մի անկարելի բան չկա: Ինչպես Գաբրիելն ասաց Սուրբ Կույսին, թե՝ «Աստծու համար ոչ մի անկարելի բան չկա» (Դուկ. 1. 37): Նա, ի հայտ բերելով մարդկանց սրտի գաղտնիքները, հանդիմանում է (համաձայն այն բանի, թե) «Նա, որ ստեղծել է նրանցից յուրաքանչյուրի սիրտը, գիտի բոլոր նրանց գործերը» (Սաղմ., 32. 15), ով որ դիմելու էր Նրան:

162 (420). Հոգին իջավ աղավնու կերպարանքով, որպեսզի տեսնողներին սովորեցնի մաքուր մտքերով մոտենալ Աստծու Որդուն, և Հոգու բարերարության շնորհներն ընդունել, և հաճո լինել Հորը: Դրա համար Աստծու Որդին եկավ և կատարեց հայրերին տված ուխտը՝ նրանց անվանելով որդի: Դրա համար Աստծու Որդին եկավ և մկրտվեց՝ հաստատելու համար մկրտությունը բոլոր նրանց, ով որ մկրտվելու էր, և ավանդելով այդ՝ հաղորդել փրկության

մասին և ուսուցանելով հասկացնել, որ պատրաստվում է բացել աշխարհին իր ճշմարտության ամենակեցույց վարդապետությունը: Ինչպես ասում է մարգարեն՝ Տիրոջ Որդու անունից, թե «Մոտեցեք ինձ և լսեցեք այս. սկզբից իսկ ես ոչ գաղտնի խոսեցի և ոչ էլ երկրի ինչ-որ խավար տեղում, որովհետև (այն ժամանակներից) երբ դա կատարվում էր, ես այնտեղ էի: Եվ այժմ Տերը, Տերն ինձ ուղարկեց և Նրա Հոգին» (Եսայի, 48. 16): Տեսնո՞ւմ ես էականի միասնությունը: «Երբ դա կատարվում էր, ես այնտեղ էի», – ասում է Նա՝ ցույց տալով համագոյ երրորդությունից զորությունը, որը և՛ արարելիս է համագործող, և՛ նորացնելիս է միասնական:

163 (421). Եվ ահա, երկինքը բացվում է, և Հայրը բացականչում է. «Դա՛ է Իմ սիրելի Որդին» (Մատթ., 3. 17: Մարկ., 1. 11), և Հոգին իջնում է աղավնու կերպարանքով, որպեսզի հայտնի դառնա Որդու գալստյան միաբուն զորությունից:

164 (422). Եվ ի՞նչ է նշանակում ասածը, թե «սկզբից խոսեցի» (Եսայի, 48. 16), եթե ոչ սուրբ մարգարեների կանխատեսումները, որ ինքը նրանց մեջ իր մասին խոսեց, և Հոր ու Հոգու միասնական մտահղացումով եկավ ու հայտնվեց այս ժամանակների վերջում, «Բանը, Որն սկզբից էր, և Բանը Աստծու մոտ էր, և Բանը Աստված էր: Նա սկզբից Աստծու մոտ էր: Ամեն ինչ Նրանով եղավ. և առանց Նրա չեղավ ոչինչ, ինչ որ եղավ: Կյանքը Նրանով էր, և այդ կյանքը մարդկանց համար լույս էր: Եվ լույսը խավարի մեջ լուսավորում է, և խավարը նրան չհաղթեց: Կար մի մարդ՝ Աստծուց ուղարկված. նրա անունը՝ Հովհաննես: Սա եկավ որպես վկա, որպեսզի վկայի լույսի մասին, որ նրա միջոցով բոլորը հավատան» (Հովհ., 1. 1-7):

165 (423). Եվ ահա, ամեն ինչ ամբողջացնելով և կատար-

րելով, Աստծու Որդու լույսը մեր մեջ ի հայտ եկավ, որպեսզի լուսավորվի ամեն մի մարդ, որ աշխարհ է գալու, (այն լույսը), որի հետ խավարը չէր կարող մրցել և հաղթել: Այս լույսով արարվեց աշխարհը, բայց այն չճանաչեց Նրան: Ահա դրա համար Նա եկավ, որպեսզի նրանք (մարդիկ) ընդունեն Նրա լույսը և դառնան Աստծու որդիներ (Հովհ., 1. 12): Նա եկավ օրենքը և մարգարեներին հաստատելու համար, (սրբության) օրինակներ ցույց տվեց և ճշմարտությունը հաստատեց:

166 (424). Եվ ի՞նչ է նշանակում «Բանը», մի՞թե լոկ ձայն է, օդի հետ լեզվի բախումից առաջացող, որը չկար մինչև խոսողի ասելը և որը հետո կորչում է անհետ: Սակայն Նա «Բան» կոչվեց այն պատճառով, որ ինչպես խոսքը խոսողի բերանում, նույնպես և Հոր կամքի բոլոր հրամանները ելնում են Որդու բերանից: Որովհետև Նա Հոր իմացողն է և Նրա կամքի կատարողը, ինչպես և ինքն է ասում. «Ոչ ոք չգիտե, թե ով է Հայրը, եթե ոչ Որդին, ինչպես և ոչ ոք չգիտե, թե ով է Որդին, եթե ոչ Հայրը» (Ղուկ., 10. 22): Եվ նորից. «Եկել եմ, որ կատարեմ կամքը Նրա՛, Ով ինձ ուղարկել է» (Հովհ., 4. 34): Եվ Հովհաննեսը դարձյալ ասում է. «Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել, բացի Միածին Որդուց, որ Հոր ծոցում է. Նա հայտնեց Նրան» (Հովհ., 1. 18):

167 (425). Եվ Նա ինքն ասում է Հորը. «Հասել է ժամը, Հայր, փառավորիր Քո Որդուն» (Հովհ., 17. 1), և «երկնքից մի ձայն եկավ՝ «Փառավորեցի և դարձյալ պիտի փառավորեմ» (Հովհ., 12. 28): Սա ասվեց ոչ թե ապաստան փնտրելու, կամ էլ որ Նա զուրկ էր հայրական փառքից, այլ այն բանի համար, որ արարածները լսեն և հաստատ լինեն ի Որդին: Նույն ձևով և Որդին՝ մեր մեջ եղած ժամանակ աշխարհին ցույց է տալիս Հորը և Սուրբ Հոգուն, ինչպես և Հայրը

բացականչում է Միածնի մասին՝ «Դա՛ է իմ Միածին Որդին, որին հոգիս հավանեց. Նրա վրա իմ Հոգին պիտի դնեմ» (Մատթ., 12. 18), որը և հայտնվեց, իջնելով և հանգիստ առնելով Նրա վրա, ինչպես և Ինքն էր ասում Սուրբ Հոգու մասին, թե «Նա Ինձ պիտի փառավորի» (Հովհ., 16. 14):

168 (426). Նա եկավ և կատարեց Իրեն Ուղարկողի կամքը: Ինքն էլ գոչելով ասում էր, թե՝ «Ով Ինձ է հավատում, հավատում է Նրան, Ով ուղարկեց Ինձ, և Ով տեսնում է Ինձ, տեսնում է Նրան, Ով ուղարկեց Ինձ» (Հովհ., 12. 44-45): Եվ այսպես պարզաբանող ուսուցմամբ Նա բոլորին ցույց է տալիս Իր մեջ (գտնվող) Հոր փառքը¹:

169 (427). Եվ Հայրը որպես առաջընթաց սուրհանդակ ուղարկեց (Հովհաննես) կարապետին, որը գալով առջևից՝ աղաղակեց, թե «Սա է Աստուծո Որդին, սա է Գառն Աստուծո, սա է, որ գալիս է (Իր վրա) վերցնելու աշխարհի մեղքը» (Հովհ., 1. 29): Եվ բարձրացավ նա բարձր լեռան վրա, դեպի մեծությունը Աստվածային գորություն, ինչպես Տիրոջ անունից ասում է կանխատես մարգարեն. «Ել այդ բարձր լեռան վրա, ով ավետաբերդ Սիոնի. ուժ տուր քո ձայնին, ո՛վ ավետաբերդ Երուսաղեմի: Բարձրացե՛ք, ուժ տվեք ձեր ձայնին, մի վախեցեք. և ասա Հուդայի երկրի այդ քաղաքներին. «Ահավասիկ մեր Աստվածը, ահա Տերը, որ գալիս է Իր գորությունը և Իր հզոր բազկի իշխանությունը: Ահավասիկ Իր վարձն իր հետ է, ու գործերն էլ աչքի առաջ են: Հովվի նման հովվելու է Իր հոտերը, Իր բազկով հավաքելու է Իր գառներին, կրելու է Իր ծոցում և մխիթարիչ է լինելու ծանրացած հղիներին: Ո՞վ կարողացավ իր ափով չափել բոլոր ջրերը, կամ իր թզով՝ երկինքը և իր քլով՝ համայն երկիրը չափեց: Ո՞վ կարողացավ լեռները կռուել կռուքով և դաշտերը՝ նժարով: Ո՞վ իմացավ Տիրոջ մտքերը, կամ ո՞վ խորհրդատու դարձավ Նրան» (Եսայի, 40. 9-13):

170 (428). Եվ ի՞նչ է նշանակում այն, որ ասում է. «Ել այդ բարձր լեռան վրա, ո՛վ ավետաբերդ Սիոնի», եթե ոչ այն, որ ասում են, թե՝ «Տերը հրամայեց», որովհետև տերունական հրամանները ամեն ինչից վեր են, և Բարձրյալի հրամանները (երկնքի) բարձունքից են գալիս: Եվ ի՞նչ կարող է ավելի բարձր լինել և ամուր, քան Աստվածություն հրամանները: Եվ հենց իրենք՝ Աստվածության քարոզիչները, բարձրանում էին այդ հրամանների բարձր լեռը՝ առանց վախի և երկյուղի անվեհեր քարոզելու բոլորի առաջ:

171 (429. XLVIII). Եվ ահա, եկավ մեծն Հովհաննեսը, քահանայապետ Զաքարիայի որդին: Եկավ այստեղ տաճարակիցը, և ոչ թե ինչ-որ օտար մեկը: Այստեղ եկավ Սիոնի ժառանգորդը և բնակիչը, վակասակիրը նույն քահանայություն, ի նշան սուրբ պատմուճանների խույր կրողը, պատվիրանների ավանդապահը: Նա ոչ թե ինչ-որ օտարական էր, այլ արժանի գոտի կապող մարդ էր, Մովսեսի շառավիղը և Ահարոնի զավակը և Սիոնի ավետաբերը, օժման արժանացածը, որ ստացել էր իր նախնիների քահանայություն պատիվը: Եվ ի կատարումն մարգարեների մարգարեություն, նա հեռացավ անապատ, համաձայն այն աստվածային հրամանների, որ տվել էին լեռը բարձրացած մարդկանց, բարձրացրեց իր ձայնը, նա՛ Երուսաղեմի ավետաբերը, բարձրանալով ուժ տվեց իր ձայնին, որովհետև այդ ձայնը անապատում աղաղակողի ձայնն էր, և ասաց. «Ահա մեր Աստվածը, ահա Տերը» (Եսայ., 40. 3, 40. 9: Մատթ., 3. 3: Հովհ., 1. 23), և նույն Ինքը՝ Իսրայելի թագավորը:

172 (430). Ահա իսրայելական ցեղին ավանդած մարգարեություն ողջ շնորհը, որ կրում էր ավետիսների օրհնություն և օժման ավանդապահը, ինչպես և քահանայությունը՝ թագավորական իշխանություն հետ միասին (նրան) էին փոխանցել Ղևիի տոհմի միջոցով:

173 (431). Որովհետև այն ժամանակ, երբ Տերը հրի և ամպի միջից կանչեց Մովսեսին՝ Սինայի լեռան գագաթին, և Տիրոջ փառքի տեսիլքը երևում էր որպես վառվող կրակ, և երբ Մովսեսը Աստուծու ձեռքից վերցրեց օրենքների պատվիրանները, նա տեսավ, որ Աստված բարեհոգար է՝ նրան պատասխաններ տալու, որովհետև ասում է՝ «Գլխացող եմ և ողորմած» (Ելք, 34. 6), այդ ժամանակ նա ընդունեց ավանդած իշխանությունը՝ քահանայությունը, թագավորությունը և մարգարեությունը՝ Աստուծու ձեռքից: Այնտեղ Նա տվեց նրան (Մովսեսին) Քրիստոսի օծման օրինակը, որպեսզի նախ օրինակներ հրամցվեն, իսկ այնուհետև մատուցվի այն ճշմարտությունը, որ Ինքը է-ն է: Այնտեղ Նա հրամայեց նրան պատրաստել օծման եղջյուրը և խնկելու համար խնկանոցը (Ելք, 31. 11):

174 (432). Որովհետև եղջյուրը Քրիստոսի օծման օրինակն է, իսկ խնկանոցն ուներ Սուրբ կույս Մարիամի օրինակը: Որովհետև ինչպես այն խնկանոցը լի էր սրբություն հոտով, նույնպես և կույսը՝ Սուրբ Հոգով և Բարձրյալի զորությունը: Իսկ ձեթով եղջյուրը ուներ Քրիստոսի օծման օրինակը, որովհետև նրանք, ովքեր Նրա նման մեկ անգամ օծվել էին, այնտեղ (Նրա կողմից) էին օծվել: Պարզ է, որ Ահարոնն արդեն օծվել էր՝ Տիրոջը քահանայություն մատուցելու, և ստացավ քահանայության թագը, որպեսզի ինքն էլ օծի նույն ձևով, մյուսների գլխին արտախուրակ դնի, որպեսզի նրանք ծառայեն Տիրոջ սրբությունը, սեղանին դնեն հացն հանապազորդ, որպես Աստուծու Որդու մարմնի օրինակ:

175 (433). Այնտեղ Մովսեսը պատրաստեց իր օծման արծաթե եղջյուրը, որով (այնուհետև) օծվում էին քահանաները, մարգարեները և թագավորները: Այդ ժամանակներից, ըստ իշխանության պատվիրանի, գալիս էր մեկից

մյուսին անցնող օծություն հաջորդականությունը՝ համաձայն ավագության սահմանված կարգի: Աբրահամյան սերունդը պահպանում էր այդ խորհուրդը, որովհետև նրանք, ավանդությունը պահելով, իրար էին փոխանցում այն, հասցնելով մինչև Հովհաննեսը՝ քահանան, մարգարեն և մկրտիչը: Եվ հասնելով նրան որպես ժառանգի՝ մնաց նրա մոտ: Նրան, իբրև ավանդապահի, այն հասել էր առաջին նախնիներից՝ թագավորներից, մարգարեներից և օծյալ քահանաներից: Եվ նա քահանայությունը, օծությունը, մարգարեությունը և թագավորությունը փոխանցեց մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին:

176 (434). Եվ կատարվեց Հակոբի մարգարեությունը, որն ասել էր իր տոհմի զավակներին. «(Հուդայից) չի պակասելու առաջնորդության իշխանությունը, մինչև որ գա Նա, Որին պատկանում է թագավորությունը, որովհետև Նա է հեթանոսների հույսը» (Ծննդ., 49. 10):

177 (435). Եվ ահա, առաջին հայրերն ունեին Նրա նմանությունը, որոնց վրա տպավորված էր Աստուծու կերպարը, և բոլոր արարածները հնազանդվում էին նրանց, որովհետև նրանց վրա տեսնում էին Արարչի կերպարը: Արդյոք անխոս, անմռունչ և անշշունջ արարածները կհնազանդվեի՞ն մահկանացու մարդկանց, եթե նրանց մեջ չտեսնեին Աստուծու կնիքը և Արարչի կերպարը: Եվ այսպես, ավանդությունները, մի սերնդից մյուսին փոխանցվելով, եկան հասան մինչև Հովհաննեսը, և Հովհաննեսը ի պահպանություն տրված ավանդը հանձնեց իր Տիրոջը:

178 (436. XLIX). Այնուհետև եկավ Ինքը Տերը, և Հովհաննեսը վկայեց՝ «Ես Քրիստոսը չեմ, այլ ուղարկված եմ Նրա առաջից: Ով հարս ունի, նա է փեսան, իսկ փեսայի բարեկամը, որ կանգնած լսում է նրան, մեծապես ուրախանում է փեսայի ձայնի համար. արդ, այս ուրախությունը,

որ իմն է, կատարյալ է: Պետք է, որ նա մեծանա, իսկ ես նվազեմ: Նա, որ ի վերուստ է գալիս, վեր է ամենքից. նա, որ այս երկրից է, երկրավոր է և երկրավոր բաների մասին է խոսում: Նա, որ երկնքից է գալիս, վկայում է, ինչ որ տեսել ու լսել է, սակայն Նրա վկայությունը ոչ ոք չի ընդունում: Ով ընդունում է Նրա վկայությունը, հաստատած կլինի, որ Աստված ճշմարիտ է, քանի որ Նա, ում Աստված ուղարկեց, Աստծու խոսքերն է խոսում, որովհետև Աստված Հոգին տալիս է առանց չափի: Հայրը սիրում է Որդուն և ամեն ինչ տվել է Նրա ձեռքը: Ով հավատում է Որդուն, ընդունում է հավիտենական կյանքը, իսկ ով չի հնազանդվում Որդուն, կյանք չի տեսնի, այլ նրա վրա կմնա Աստծու բարկությունը» (Հովհ., 3. 28-36):

179 (437) Ահա Հովհաննեսը որպես սուրհանդակ եկավ իր Տիրոջ ճանապարհը պատրաստելու համար: Որովհետև ինչպես Նրա ծննդյան նախակարգապետ եղավ Գաբրիելը, նույնպես և Հայտնության (կարապետ) եղավ նա և ընդառաջ գալով ասաց. «Ես ուղարկված եմ Նրա առաջից: Ով հարս ունի, նա է փեսան» (Հովհ., 3. 26-29):

180 (438). Իսկ ո՞վ է հարսը, կամ էլ ո՞վ է փեսան, եթե ոչ նա, որի մասին մարգարեն ասում է. «Այսպես է ասում Տերը՝ քեզ կնշանեմ ինձ հավիտյան, քեզ կնշանեմ ինձ արդարությունք և իրավունքով, ողորմությունք և գթությունք, և դու կճանաչես, որ ես եմ քո Տեր Աստվածը, և դու կլքես քո փայտեղեն և քարեղեն սիրածներին և կասես՝ «Գնամ, վերադառնամ իմ առաջին ամուսնուն» (Օսեե, 2. 19-20, 7):

181 (439). Որովհետև մարդիկ իրենց Արարչին պաշտոն մատուցելը թողեցին և ամեն մի փայտի և քարի հնազանդվեցին: Եվ թողեցին առաջին Այրին¹, որն ստեղծել էր նրանց ոչնչից, և շնացան աչքին պատահած ամեն մի առարկայի հետ, և տրվեցին պոռնկություն՝ արարածներին

անոտիաբար պաշտոն մատուցելով հանդերձ: Դրա համար Աստծու Որդին իջավ՝ երկրի երեսից ջնջելու ունայն անառակ կենակցությունը քարեղեն սիրեկանների հետ, շրջելու դեպի Հոր երկրպագություն և տալու նրանց հնարավորություն անվանելու իր ամուսնուն՝ այր առաջին (Հմմտ. Օսեե, 2. 7): Եվ առաջին է անվանում նախնական բնության² համար, ինչպես բացատրում է հեթանոսներին Պողոս առաքյալը՝ ասելով. «Հաստատեցի և խոսեցի քո հարսություն համար՝ նշանելով որպես մի անբիծ կույս՝ Քրիստոսին ներկայացնելու համար» (Բ Կորնթ., 11. 2): Մարգարեն էլ ասում է. «Թագուհին կանգնելու է քո աջից» (Սաղմ., 44. 10): Ողջ տիեզերքը որպես մեկ հարս Նա բերում է մեկ փեսայի մոտ: Այս իմաստով է Նա նախանշում Աստծու Որդուն՝ այն այրին, որը եկավ երկնքից: Ինչպես ասում է Հովհաննեսը. «Ով հարս ունի, նա՛ է փեսան, և մենք՝ բարեկամներ և ծառաներ, գործում ենք հրամաններով: Նրա մոտ կանգնած ենք և լսում ենք նրան, ուրախ ենք նրա ուրախության համար, և լսում ենք փեսայի ձայնը»: (Հովհ., 3. 29):

182 (440). Դա Նա է, ում մասին ասում է մարգարեն. «Դուստր, լսիր ու տես, մոտեցրու ականջդ, մոռացիր քո ժողովրդին և քո հոր տունը, քանզի թագավորը ցանկացավ քո գեղեցկությունը: Նա ինքն է քո Տերը, որին պիտի երկրպագես» (Սաղմ., 44. 11-12): Դա նա է, որն ասում է. «Ո՞վ եղբորորդի իմ, դու վեր կկենաս, կարթնանաս, մերձավորս, սիրելիս, կբացես ինձ տան դռները և կհամբուրես ինձ քո բերանի համբուլյրներով, որովհետև քո ստինքներն ավելի լավ են զինուց, և քո օծման յուղերի հոտը՝ բոլոր խնկերից: Քո անունը թափված յուղ է անուշ. սրա համար էլ օրիորդները սիրեցին քեզ: Մենք կգանք քո օծման յուղերի հետևից: Արքան ինձ իր սենյակը տարավ» (Երգ, 5. 5: 1. 1-3):

183 (441). Եվ ո՞վ կարող է հարսը լինել, բացի հեթանոսների եկեղեցուց¹, կամ ո՞վ կարող է փեսան լինել, բացի Հիսուսա Քրիստոսից՝ Աստծու Որդուց, Որն իջավ երկնքից և հնազանդեցնելով բերեց բոլորին Հոր երկրպագության: Եվ ի՞նչ են երկու առատ ստինքները, եթե ոչ Աստվածային Կտակարանները, որոնք հագեցնում են բոլոր անգետներին գիտություն հոգևոր կաթով: Եվ ի՞նչ է նշանակում ասածը, թե «Քո օժման յուզերի հոտը բոլոր անուշ խոունկերից լավ է», և թե «քո անունը թափված յուզ է անուշ»: դա բացահայտում է Քրիստոսի օժվածություն և (Նրա) անվան: Եվ համբույրը սիրո նշանն է, որովհետև եկեղեցին՝ Քրիստոսի (հարսն) է, և Քրիստոսը Աստծու Որդին է:

184 (442). Արդ, ասելով, թե՝ «պետք է, որ Նա մեծանա, իսկ ես՝ նվազեմ» (Հովհ., 3. 30), նկատի ունի մեղմանալու ժամանակը, որովհետև այն մկրտությունը, որ Նա տվեց ժողովրդին, ապաշխարության մկրտությունն էր: «Նա, որ ի վերուստ է գալիս, — ասում է (Հովհաննեսը), — վեր է ամենքից», — նկատի ունի Հոր ծոցից մեզ մոտ գալը (Հովհ., 3. 31): Իսկ ես, ասում է, երկրից խոսեցի, գիտություն վերցնելով երկնքից: Իսկ Նա, որ երկնքից է գալիս, խոսում է Հոր կողմից և կատարում է Հոր գործը: Ինչպես և Տերն Ինքը ասում էր հրեաներին. «Ես Հոր մեջ եմ, և Հայրը Իմ մեջ է. ինչ տեսնում եմ, թե Հայրը կատարում է, նույնը և Ես եմ գործում, որովհետև Ես հենց այն բանի համար եմ եկել, որ կատարեմ Իմ Հոր կամքը, և Ես կատարելու եմ Նրա գործը» (Հովհ., 5. 19: 10. 38: 14. 10):

185 (443). Նա ասաց նաև հրեաների առիթով, թե «Նրա վկայությունը դուք չեք ընդունում: Իսկ ով ընդունում է Նրա վկայությունը, ծրարել և կնքել է, որ արդարությունն անկորուստ լինի, և երգամամբ (հաստատած) կլինի, որ արդարև Աստված ճշմարիտ է» (Հովհ., 3. 32-33), որպեսզի

հավատի արդարությունը լինի աներկբայելի, անփոփոխ և անկործանելի, իսկ երգումը՝ կնիք, ինչպես Աբրահամի հետ եղավ (Ծննդ., 22. 16-18: Ղուկ., 1. 73): Որովհետև Նա, որ Հոր ծոցից է գալիս, տեղյակ է Իր ծնողի մտքերին: Որովհետև Նա ոչ թե Հոգու շնորհների ինչ-որ պակաս ունեցող է, այլ Ինքը Հոր և Հոգու հետ ունի միասնական կամք, միասնական շունչ և միասնական միտք, որովհետև Ինքն է Սուրբ Հոգու շնորհների նվիրողը: Որովհետև Հայրը սիրում է Իր Որդուն, և Հոր կողմից ստեղծված ամեն ինչ կատարված է Որդով հանդերձ, և ինչ որ Հորն է, նույնը և Որդուն է, և ինչպիսին Հայրն է, նույնպիսին և Որդին է, և Հոգու բոլոր շնորհները բաշխվում են Որդուց: Եվ «Ով հավատում է Որդուն, ունի հավիտենական կյանք. ով չի հավատում Որդուն, նա հավիտենական կյանք չի տեսնի» (Հովհ., 3. 36):

186 (444). Հովհաննեսը վկայում է և ասում. «Նա, Որի մասին ասում էին՝ Սա է Աստծու Միածին Որդին, ես տեսա և վկայում եմ, թե սա՛ է Նա, որ (Իր վրա) վերցնում է աշխարհի մեղքերը» (Հովհ., 1. 29, 34): Սա է այգին ժառանգողը, և Տերը գալիս է զորություն, և Նրա բազուկը հզոր է Իր իշխանություն, որովհետև Սա է Հոր հզոր բազուկը, և Իր իշխանությունը Իր մեջ է կրում, թեպետև Իր կամքով ի հայտ եկավ խոնարհ տեսքով:

187 (445). «Ահավասիկ, — ասում է (Եսայի մարգարեն), — Իր հատուցման վարձը Իր հետ է» (Եսայի, 40. 10): Նա է բոլորին հատուցողը, «և ամեն մի գործ Նրա (հայացքի) առաջ է» (Եսայի, 40. 10), այսինքն, «Նա հաշվի է առնում նրանց բոլոր գործերը» (Սաղմ., 32. 15): «Հովվի նման հովվելու է Իր հոտերը» (Եսայի, 40. 11): Եվ որպես Կենարար մեր մեջ գալով՝ ասում է. «Ես եմ լավ հովիվը. լավ հովիվը իր կյանքն է տալիս իր ոչխարների համար» (Հովհ., 10. 11)

և «Իր բազուկների մեջ հավաքելու է Իր գառներին և Իր ծոցում է կրելու նրանց» (Եսայի, 40. 11):

188 (446). Եվ Նա՝ Կենարարը, գալով ցույց տվեց այդ՝ հավաքելով մանուկներին և վերցնելով (նրանց) Իր աստվածային ձեռքերի վրա (Մարկ., 9. 35-36): Եվ որպես օրինակ բոլորի համար (ասաց). «Եթե չդառնաք և չլինեք այս մանուկների պես, չեք կարող մտնել Աստծու արքայությունը (Մատթ., 18. 3): Նա հրամայում է նորոգվել (հոգեպես) և ազատվել հին մարդկային (բնությունից) մկրտությունից ավագանի միջով: Թեպետև մարդ կարող է շատ հոգնած և ճնշված լինել, տանելով չափազանց ծանր մեղքերի բեռը, ինչպես ասում է (սաղմոսերգուն). «Ահավասիկ, ով որ անօրենություն երկնեց, չարիք հղացավ և անիրավություն ծնեց» (Սաղմ., 7. 15), բայց Կենարարը, բացելով ապաշխարությունից դռները, մեր մեջ է հանգրվանել, Նա բացականջում և ասում է. «Եկեք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես կհանգստացնեմ ձեզ. իմ լուծը ձեզ վրա վերցրեք և սովորեցեք ինձնից, որովհետև հեզ եմ, հանդարտ և սրտով խոնարհ, և ձեզ համար հանգիստ պիտի գտնեք, որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև» (Մատթ., 11. 28-30):

189 (447). Բայց եթե որևէ մեկը հարցնի, թե ո՞վ է լինելու մեղքերի տակ կքած ծանր բեռնավորվածներին մխիթարողը, նրա ով լինելու մասին թող լսի Եսայու մարգարեությունը, որն ասում է. «Ո՞վ կարողացավ իր ափով չափել բոլոր ջրերը, կամ թզով՝ երկինքը և քլով՝ համայն երկիրը. ո՞վ կարողացավ լեռները կշռել կշեռքով և դաշտերը՝ նժարով: Ո՞վ իմացավ Տիրոջ մտքերը, կամ ո՞վ խորհրդատու դարձավ նրան» (Եսայի, 40. 12-13): Նա, Հորից իմանալով ընդունված վճիռը, եկավ և, մարդ դառնալով, քարոզեց աշխարհին՝ Իր սիրով բոլորին խառնելով Աստվա-

ծությունը: Այնուհետև եկավ լույսը, որը եկավ «լուսավորելու ամեն մի մարդու, որ գալու է աշխարհ» (Հովհ., 1. 9), Նա քարոզում և ասում էր. «Ապաշխարեցեք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է: Ժամանակը հասել է: Հավատացեք Ավետարանին» (Մատթ., 3. 2: Մարկ., 1. 15):

190 (448. L). Եվ ահա, երբ Նա անցնում էր ծովեզերքով, տեսավ Պետրոսին, Անդրեասին, Հակոբին և Հովհաննեսին և նրանց ետ կանչեց ձկնորսությունից: Նրանք տեղնուտեղը, արագ թողեցին իրենց հորը՝ նավակի հետ միասին և գնացին Նրա հետևից: Եվ շատ ուրիշներին՝ տարբեր զբաղմունքների տեր մարդկանց Նա կանչեց և անվանեց Իր տասներկու աշակերտները և առաքյալները, որոնց հրահանգեց ազատվել ամեն տեսակի զբաղմունքներից: Նրանք գնում էին Նրա հետևից, արժանի դառնալով (ականատես լինելու) Աստծու կողմից սահմանված ավանդությունից խորհուրդի (իրականացմանը):

191 (449). Դրանից հետո մարդասեր Քրիստոսը սկսեց գործադրել Իր ամենակարող բժշկական արվեստը, բուժել (մարդկանց) բոլոր ախտերը և ցավերը և կատարեց սուրբ մարգարեների՝ նախկինում արված կանխագուշակումը, համաձայն այն խոսքի, որն ասում է. «Նա մեր հիվանդությունները (Իր վրա) կվերցնի» (Եսայի, 53. 4: Մատթ., 8. 17), և արդարացրեց նրանց խոսքերը, թե՛ «Նա արդարացնում է Իր ծառաների խոսքերը (և ի կատար է ածում խորհուրդները Իր) մարգարեներին» (Եսայի 44. 26):

192 (450). Եվ ապա Նա սկսեց խոսել այլաբանորեն. «Ամեն տեղ կերկրպագեն Հորը (հոգով և) ճշմարտությամբ, քանի որ Հայրն էլ իրեն այդպիսի երկրպագուներ է ուզում» (Հովհ., 4. 23), կամ էլ՝ «Ողորմություն եմ կամենում և ոչ՝ գոհ» (Օսեե, 6. 6: Մատթ., 9. 13: 12. 7): Եվ որ «Ես եմ Հոր

Որդին, որովհետև Հայրն Իմ մասին է վկայում ճշմարտութ-
յան Հոգով», և թե Մովսեսը ժամանակին գրել էր ձեզ Իմ
մասին, և Հակոբը Հուդայի երկրին ասել էր Իմ մասին.
«Հուդայից իշխան չի պակասելու, ոչ էլ առաջնորդ՝ նրա
կողերից, մինչև որ գա Նա, Ում պատկանում է թագավո-
րությունը, որովհետև Նա է հեթանոսների հույսը» (Ծննդ.,
49. 10):

193 (451). Նաև, որ «բոլոր մարգարեները Իմ մասին
գրեցին, տեղեկություն ստանալով Ինձ Ուղարկողից, և
հայտնեցին, թե այգին Ինձ է պատկանում, և դուք մշակ-
ներն եք: Ես եկա, որովհետև ես եմ ժառանգորդը այգու»
(Հմմտ. Մատթ., 21. 28: Մարկ., 12. 7: Ղուկ., 20. 14): «Ես ե-
կել եմ փնտրելու այգու պտուղը, որ վերցնեմ, ինչի համար
էլ Ինձ ուղարկեց Իմ Հայրը, և ես եկել եմ Իմ Հոր կամքը
կատարելու համար» (Հմմտ. Հովհ., 5. 30): Եվ (ասում է),
թե՝ «Ես եկա կատարելու Աբրահամին խոստացված բարե-
խոսությունը, որովհետև բարի լուրերով է ապրում Աբրա-
համի տոհմը, որպեսզի նրանք իմանան, որ Աբրահամի գա-
վակներն են» (Հմմտ. Հովհ., 8. 37): Եվ Նա անմիջապես
ճշմարտությունն արտաբերեց. «Ես եմ, նախքան Աբրահա-
մի լինելը» (Հովհ., 8. 58): Եվ ապա դրանից հետո, ստիպե-
լով նրանց բարձրանալ մտավոր հայացքով, ինչպես ասված
է, հարցրեց նրանց այն մարգարեության մասին, թե՝ «Ինչ-
պե՞ս եք դուք Քրիստոսին Դավթի որդի անվանում, որին
ինքը՝ Դավթի Սուրբ Հոգով կոչում է Տեր և ասում է.
«Տերն Իմ Տիրոջն ասաց՝ նստիր Իմ աջ կողմում» (Իսկ եթե
Դավթի Նրան Տեր է կոչում), ինչպես Նրա որդին կլինի»
(Մատթ., 22. 43-45: Մարկ., 12. 35-37: Ղուկ., 20. 41-44:
Սաղմ., 109. 1):

194 (452). Տարբեր հայտնություններով և առակներով
Նա նույնպես հանդիմանում և մերկացնում էր նրանց կեղ-

ծավորությունը, ամբարշտությունը և անօրենությունը:
Իսկ նրանք, ճշմարտության հանդեպ խուլ և կույր դար-
ձած, նախանձով լցված, ելան իրենց հոգիները կործանելու՝
իրենց չարության դառնության մեջ: Իսկ Նա Իր մարդասի-
րությանը եկավ՝ բժիշկ լինելու, կույրերին լույս տալու, կա-
ղերին (ուղիղ) քայլեցնելու, բորոտներին մաքրելու, բոլոր
նրանց, ովքեր գերված էին սատանայից, փրկելու, անդա-
մալուծներին ոտքի կանգնեցնելու, խուլերի (լսողություն-
ը) բացելու, համրերին խոսեցնելու, մեռածներին կենդա-
նացնելու: Իրեն հավատացողներին Նա ուժ տվեց կոխկր-
տելու սատանային և խոստացավ երկնային արքայու-
նում նրանց օթևաններ պատրաստել (Հովհ., 14. 2-3): Եվ
Նա Ինքն իրեն բոլորի համար օրինակ դարձրեց՝ ինչպես ա-
ռաքինաբար տանել զրկանքները:

195 (453). Նա, որ ջուրը գինի դարձրեց, որպեսզի հայտ-
նի դառնա Նրա Աստվածությունը, որ Նա նույնն է, որը,
ոչնչից ստեղծելով ջուրը՝ ջրի բնությունը, այդ նույն ջուրը
գինի դարձրեց, ինչպես կամեցավ: Եվ Նա, որ մեր մեղքերի
համար տանջանքներ կրեց, նույն Ինքը եկավ ապաքինում
նվիրելու: Եվ շատերը հավատացին Նրա անվանը, երբ
տեսան Նրան և այն հրաշքները, որ Նա գործում էր: Բայց
Նա, քանի որ սրտագետ էր (Սաղմ., 43. 22), գիտեր մարդ-
կանց բոլոր գաղտնիքները, որովհետև իմացող է (ամեն մի)
ծածուկ պահված բաների (և մտազրույցությունների):

196 (454 LI). Ապա դրանից հետո Նա վճիռ արձակեց.
«Եթե մեկը ջրից ու Հոգուց չծնվի, չի կարող Աստծու ար-
քայությունը մտնել» (Հովհ., 3. 5), և չի նորոգվի երկրորդ
անգամ, «որովհետև,– ասում է,– մարմնից ծնվածը մար-
մին է, իսկ Հոգուց ծնվածը՝ Հոգի: Որովհետև Սուրբ Հոգին
կբխի՝ որտեղից կամենա, նրա ձայնը կլսես, սակայն չգի-
տես, որտեղից է գալիս կամ ուր է գնում» (Հովհ., 3. 6-8).

«որովհետև ոչ ոք երկինք չի ելել, եթե ոչ Նա, որ իջավ երկնքից՝ մարդու Որդին» (Հովհ., 3. 13):

197 (455). Եվ Նա ասաց իր առաջիկա չարչարանքների մասին. «Ինչպես որ Մովսեսը անապատում բարձրացրեց օձը, այնպես էլ մարդու Որդին պետք է բարձրանա, որպեսզի, ով Նրան հավատում է, հավիտենական կյանք ընդունի, քանի որ Աստված այնպես սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր Միածին Որդուն տվեց, որպեսզի, ով Նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը, որովհետև Աստված իր Որդուն չուղարկեց աշխարհ, որ դատապարտի աշխարհը, այլ՝ որպեսզի աշխարհը Նրանով փրկվի: Ով Նրան հավատում է, չպիտի դատապարտվի, իսկ ով Նրան չի հավատում, արդեն իսկ դատապարտված է, քանի որ Աստուծու Միածին Որդու անվանը չհավատաց» (Հովհ., 3. 14-18): «Յուրայինների մոտ եկավ, բայց յուրայինները Նրան չընդունեցին» (Հովհ., 1. 11): Նրան, որի երախտիքը, խնամակալութունը և պատվիրանները կային ժամանակների սկզբից, մերժեցին, երբ Նա հայտնվեց մարմնով:

198 (456). «Եվ դատաստանը այսպե՛ս իսկ է, որ լույսը եկավ աշխարհ, սակայն մարդիկ խավարն ավելի սիրեցին, քան լույսը, որովհետև իրենց գործերը չար էին. որովհետև, ով չարիք է գործում, ատում է լույսը և չի գալիս դեպի լույսը, ոպեսզի նրա գործերը իր երեսովը չտան: Իսկ ով կատարում է այն, ինչ ճշմարիտ է, գալիս է դեպի լույսը, որպեսզի նրա գործերը հայտնի լինեն, թե Աստուծով կատարվեցին» (Հովհ., 3. 19-21): Եվ Աստուծու Որդին բոլորին սովորեցրեց արդարության ճանապարհները, իսկ անօրեն հրեաները, խավարին սովոր մարդիկ, սկսեցին կեղծավորել, և այդու մշակները մտածում էին՝ ինչպես սպանեն Նրան, և չէին համարում, որ իրենք արժանի են հավիտենական կյանքի:

Իսկ այդպիսի մարդկանց Նա գեհեն խոստացավ, ասելով՝ «Վա՛յ ձեզ (օձեր, իժերի ծնունդներ)» (Մատթ., 23. 33):

199 (457. LII). Եվ բարերար Տերը հավաքեց իր տասներկու աշակերտներին, որոնց նաև առաքյալներ կոչեց, և էլի յոթանասուններկուսին, խրատեց և սովորեցրեց նրանց Աստվածային պատվիրաններ, և վկա դարձնելով՝ քարոզեց նրանց, և անվանեց «Իր սիրելիները և բարեկամները» (Ղուկ., 12. 4: Հովհ., 15. 15), թե՛ «Ասում եմ ձեզ՝ Իմ սիրելիներին, մի զարհուրեք նրանից, որ մարմինն են սպանում և հոգին չեն կարող սպանել» (Ղուկ., 12. 4: Մատթ., 10. 28): Եվ թե՛ «Ես ձեզ գիտեմ որպես Իմ բարեկամներ» (Հովհ., 15. 15), և թե՛ «այն, ինչ Հայրը մի անգամ ասաց Ինձ և ցույց տվեց, Ես ձեզ ցույց տվեցի» (Հովհ., 5. 20: 10. 32): Եվ հայտնեց նրանց՝ Հորից իր դուրս գալը և վերադարձը և Նույնը, ասելով՝ «Ելա Հորից և եկա աշխարհ, և դարձյալ թողնում եմ աշխարհը և գնում Հոր մոտ» (Հովհ., 16. 28):

200 (458). Նա տվեց նրանց նաև ավետիսը՝ Հորից Սուրբ Հոգու ուղարկվելու մասին, թե՛ «Ես գնում եմ և ուղարկում եմ Մխիթարիչին, որը գալով մխիթարելու է նրանց, ովքեր Ինձ համար վշտացան» (Հովհ., 14. 16: 15. 26: 16. 7): Տե՛ս (Երեքի) հավասարութունը, տե՛ս (նրանց) միասնական գորութունը, տե՛ս էականութունը, տե՛ս կամքի լիակատար միասնութունը: «Եվ Նա, – ասում է, – գալով լցնելու է Իմ տեղը՝ ձեզ համար, և նույն ճշմարտությամբ է առաջնորդելու ձեզ, և հանդիմանելու է այս աշխարհը, որովհետև Ինձ չհավատացին, դատապարտելու է նաև այս աշխարհի կարծեցյալ իշխանին: Նա ասելու է ձեզ ամբողջ ճշմարտութունը Իմ մասին, որովհետև Հոր կողմից է ուղարկված: Նրա գալուստը վկայում է Իմ՝ Հոր մոտ գնալու մասին: Երբ որ Նա գա՛ ամենայն ճշմարտությամբ կառաջնորդի ձեզ» (Հմմտ. Հովհ., 16. 8-13):

201 (459. LIII). Հիսուսն այնուհետև բացեց իր՝ նախապես սահմանված չարչարանքների խորհուրդը, որ լինելու էր Երուսաղեմում: Դրա մասին էին շատ անգամ արված կանխագուշակումները, որ Նա մեռնելու է և երրորդ օրը հարուժյուն է առնելու (Մատթ., 16. 21: Մարկ., 8. 31: Ղուկ., 9. 22):

202 (460). Եվ ո՞ւմ համար արդյոք Նա գնալու էր մահվան, մի՞թե Նա պարտավոր էր մեռնել: Բայց մարգարեն ասում է, թե՝ «Նա որևէ անօրենուծյուն չգործեց, և նենգությունը տեղ չգտավ նրա բերանում» (Եսայի, 53. 9): Դրա մասին Ինքն էլ էր ասում. «Ձեզնից ո՞վ կհանդիմանի Ինձ մեղքի համար» (Հովհ., 8. 46): Եվ արդյո՞ք ըստ օրենքի էր Նա արժանի մահվան: Բայց Նա ասում է. «Ես եկա օրենքը կատարելու» (Մատթ., 5. 17), ինչի մասին է վկայում նաև մարգարեն. «Օրենքի կատարումը Քրիստոսն է» (Հռոմ., 10. 4): Եվ արդյո՞ք անհրաժեշտ էր, Նա մեռնելու բռնավորների ձեռքից: Բայց Նա ասում է. «Ես Ինքս եմ Իմ կյանքը տալիս, այն Ինձնից ոչ ոք չի վերցնի: Ես Ինքս եմ, — ասում է, — կյանքս տալիս, որպեսզի վերստին այն առնեմ» (Հովհ., 10. 17-18):

203 (461). Իսկ ինչո՞ւ է Նա կամենում իր կյանքը տալ՝ արժանի չլինելով մահվան: «Ես եմ, — ասում է, — լավ հովիվը, որ կյանքս եմ տալիս Իմ ոչխարների համար» (Հովհ., 10. 11): Ինչպիսի՞ ոչխարների՝ անհնազանդ, փախչող, գազանների կեր դարձողների համար, որոնց մասին վաղուց մարգարեն ասել էր, թե՝ «ամենքն էլ մոլորված ոչխարների պես են. և ամեն մի մարդ իր ճանապարհին մոլորվեց, և Տե՛րը նրան մատնեց մեր մեղքերի համար, և իմ ժողովրդի անօրենուծյունների պատճառով նա մահվան մատնվեց» (Եսայի, 53. 6, 8):

204 (462). Դրա մասին տիրասպան ազգի քահանայա-

պետը՝ աղամա մարգարեացավ. «Ավելի լավ է, որ մեկ մարդ մեռնի ժողովրդի համար, քան թե ամբողջ ազգը կորչի» (Հովհ., 11. 50): Բայց Նա դա ասում է ոչ միայն մեկ ազգի համար, այլ Աստծու բոլոր զավակների, որոնք ցրվել են ազգերի բաժանման ժամանակ և որոնց Նա ի մի պիտի հավաքի: Վկայում է և Պողոսը, թե՝ «Աստված իր սերը մեր հանդեպ հայտնեց նրանով, որ, մինչդեռ մեղավոր էինք, Քրիստոս մեզ համար մեռավ» (Հռոմ., 5. 8), և թե՝ «(Քրիստոս), ճիշտ ժամանակին, (մեզ)՝ ամբարիշտներիս համար մեռավ» (Հռոմ. 5. 6):

205 (463). Եվ ահա, իր աշակերտների հետ միասին Նա եկավ Ձիթաստանների լեռը՝ ի կատարումն մարգարեի խոսքի, թե՝ «Իմ Տե՛ր Աստվածը, և բոլոր սրբերը Նրա հետ, պիտի գա և հասնի, և այն օրը Նրա ոտքերը կանգնելու են Ձիթենյաց լեռան վրա՝ Երուսաղեմի դիմաց, արևելյան կողմը» (Չաբ., 14. 4-5):

206 (464). Եվ օրենքի (ընկալման) տոնական օրը Նա աշակերտների հետ միասին եկավ կատարելու օրենքը և հայտնելու տոնի հոգևոր խորհուրդը: Եվ իր չարչարանքներից առաջ Նա աշակերտներին նվիրաբերեց իր փրկությունն սովոր մարմինն ու արյունը: Տեսնո՞ւմ ես, որ կամավոր և ոչ թե ստիպողաբար չարչարանքներ է տանում Աստծու Որդին, որը (Իր մարմինը և արյունը) ճաշակել տվեց մինչև չարչարանքներ կրելը:

207 (465). Այնուհետև, լեռան վրա մտքում աղոթելով, Նա դիմեց Հորը, ոչ այն պատճառով, որ ինչ-որ վախ էր գգում, այլ որպեսզի ցույց տա, որ Հոր հետ միակամ է նախապես որոշված բաները իրագործելու: Դրա մասին Նա շատ անգամ ավելի առաջ ասել էր, թե «Ես Ինքս ինձանից ոչինչ չեմ խոսում և Ինքս Ինձանից ոչինչ չեմ անում, այլ Հայրն է, որ Իմ մեջ բնակվում է, Նա է գործում» (Հովհ., 5.

30: 8. 28: 14. 10): Նա ավելիով կատարում է այն մարգարեական խոսքը, թե՛ «Իմ սիրո դիմաց թշնամանում են ինձ հետ, իսկ ես աղոթում եմ» (Սաղմ., 108. 4):

208 (466). Եվ Նա, աշակերտներին հայտնելով Հոր հետ Իր միակամուկությունը, իջավ լեռից, շտապելով Իրեն զոհաբերել անհավատների համար. դա ավելի ուժեղացավ, երբ եկած հեթանոսները խնդրեցին աշակերտներից, որ իրենց հետ դնան Հիսուսի մոտ: Սրանով կատարվում է նաև մարգարեական խոսքը, թե՛ «այսպես է ասում Ամենակալ Տերը՝ «Այն օրերին եթե տասը մարդ բռնեն տարբեր լեզուներով խոսող ազգերից, ապա նրանք էլ պիտի բռնեն մի հրեա տղամարդու փեշից և ասեն՝ «Մենք գալիս ենք քեզ հետ, որովհետև լսել ենք, որ Աստված քեզ հետ է» (Ձաք., 8. 23): Եվ Հիսուսը, լսելով, ասաց. «Հասավ ժամը, որ փառավորվի մարդու Որդին» (Հովհ., 12. 23): Տեսնո՞ւմ ես, որ Նա չարչարանքները փառք է անվանում:

209 (467. LIV). Եվ ահա, երբ մի անգամ ճշմարիտ աշակերտները հավաքվել էին ճշմարիտ Վարդապետ Տեր Հիսուսի, Փրկչի և Բարերարի, Աստծու Որդի և Օծյալի մոտ, Նա հարցրեց նրանց, թե՛ «Ի՞նչ են ասում մարդիկ, թե ես մարդու Որդի՞ն եմ: Նրանք պատասխան տվեցին և ասացին. «Ոմանք ասում են Հովհաննես Մկրտիչն է, մյուսները՝ թե Նղիան է, կամ էլ մարգարեներից մեկը»: Եվ Հիսուսն ասաց. «Իսկ դուք ի՞նչ եք ասում, ես ո՞վ եմ»: Պետրոսը՝ նրանցից առաջինը, ասաց. «Դու Քրիստոսն ես, կենդանի Աստծու Որդին» (Մատթ., 16. 13-16: Մարկ., 8. 27-29: Ղուկ., 9. 18-20): Այդ պատճառով էլ նա երանություն ստացավ: (Հիսուսն) ասաց. «Երանի քեզ, Պետրոս, Հովնանի որդի, որովհետև դու այդ գիտությունը ստացար ոչ թե քո երկրային տոհմակիցներից, որոնք քո մարմինն ու արյունն ունեն, (ոչ էլ այլ) մարդկանցից, այլ Հայրը երկնքից

դրեց այդ քո սրտի մեջ և հայտնեց քեզ» (Մատթ., 16. 17-18): Եվ դարձրեց նրան բոլոր եկեղեցիների հաստատութայան վեմ (Հմմտ. Մատթ., 16. 18: Հովհ., 1. 42):

210 (468). Եվ առաքյալները դարձան հիմք (Եփես., 2. 20) և ստացան քահանայություն, մարգարեություն, առաքելություն և երկնավոր խորհրդի գիտություն շնորհները, որ գալիս էր Աբրահամյան տոհմից, որը ժառանգություն ավանդապահ Հովհաննեսը տվեց Տիրոջը, և Տերը տվեց դա առաքյալներին: Նաև Արքայություն բանալիները Նա նրանց ձեռքը հանձնեց, որովհետև Աստծու Որդին Ինքը դարպասն էր մտնողների համար. դրա մասին էր մարգարեն բացականչում՝ «սա Տիրոջ դուռն է, և արդարները այս դռնով պիտի մտնեն» (Սաղմ., 117. 20): Եվ այսպես, Հովհաննեսը տվեց քահանայությունը, զորությունը, մարգարեությունը և թագավորությունը մեր Փրկիչ Քրիստոսին, և Քրիստոսը տվեց առաքյալներին, իսկ առաքյալները՝ եկեղեցու մանուկներին¹:

211 (469). Նրանք (առաքյալները) Ձիթաստանների լեռան վրա համարձակեցին հարցնել Տիրոջը, թե ե՞րբ նա որոշել է քանդել զեղեցիկ տաճարը¹. «Ասա՛ մեզ, — հարցրին, — այդ ե՞րբ կլինի, և կամ Քո գալստյան ու այս աշխարհի վախճանի նշանն ի՞նչ կլինի» (Մատթ., 24. 3): Իսկ Նա, թեև հրաժարվում էր (պատասխան տալուց), բայց և ասաց. «Այդ օրվա մասին ոչ ոք չգիտե, ո՛չ երկնքի հրեշտակները և ո՛չ էլ Որդին, այլ՝ միայն Հայրը» (Մատթ., 24. 36): Եվ Ղուկասը «Գործք առաքելոց» մատյանում առակի ձևով բացատրում էր. «Ձեզ տրված չէ իմանալ, — ասում է, — այն ժամանակները և ժամերը, որ Հայրը հաստատեց Իր իշխանություն մեջ» (Գործք, 1. 7), — իսկ ուրիշ ո՞վ կարող է լինել Հոր իշխանությունը, եթե ոչ Ինքը Որդին: Սակայն Նա, մանրամասն նկարագրելով (ապագայում երևացող)

նշանները, աշակերտներին ուսուցանում էր իր ահեղ և ամպագնաց գալստյան մասին:

212 (470). Տեսնո՞ւմ ես, Որդին գիտեր ոչ միայն օրը, այլև ժամը և ձևը իր գալստյան, և ոչ մի բան անհայտ էր Նրան, բայց լսողների թերահավատության պատճառով խոսում էր՝ հարմարվելով ժամանակին և զգուշորեն: Թեև Նա հարց տվողներին մշուշապատ ձևով հաղորդեց Երուսաղեմի ավերման մասին, ինչպես և աշխարհի վախճանի վերաբերյալ, բայց և այնպես դժվար է հասկանալ (Նրա ասածը աշխարհի) վախճանի և Երուսաղեմի ավերման մասին, եթե որևէ մեկը ցանկանա իսկապես քննել՝ ընտրելով յուրաքանչյուր մի դրվագ:

213 (471). Այնուհետև Նա ասաց այն մեծ փորձությունների և սուտ քրիստոսների և սուտ մարգարեների և Նեոի մասին, որ հրապարակ են գալու (Ա Հովհ., 2. 18)՝ նրանց մոլորեցուցիչ հրաշագործությունները նկարագրելով (Մատթ., 24. 24: Մարկ., 13. 22): Դրա մասին առաքյալները ևս ավանդեցին՝ (ասելով) «վերջին ժամանակն է, հայտնվելու են այսպիսիք» (Հմմտ. Ա Հովհ., 2. 18: Բ Թեսաղ., 2. 28): Ապա բերելով Նոյի և Ղովտի օրինակները, Նա ասաց իր հանկարծակի և արագընթաց գալստյան մասին, որի վերաբերյալ Պողոսն ասում է՝ «Մի ակնթարթում» (Ա Կորնթ., 15. 52): «Այդ օրերի նեղությունից անմիջապես հետո, արեգակը պիտի խավարի, և լուսինը իր լույսը չպիտի տա, և աստղերը երկնքից պիտի ընկնեն, և երկնքի զորությունները պիտի շարժվեն: Եվ ապա երկնքի վրա մարդու Որդու նշանը պիտի երևա» (Մատթ., 24. 29-30): Վերևից խաչը պիտի փայլի, և նրա լույսը պիտի լցնի ողջ երկիրը, երբ ի կատարումն հատուցման, բոլոր ժողովուրդների նախազգուշացման և բոլոր ազգերին իր բարկության հրով և իր դատաստանով դատելու համար այստեղ Նա նշանավորե-

լու է իր երկրորդ գալուստը (Սաղմ., 149. 7: Եսայի, 66. 15): (Դրա մասին) ամբողջ գիտելիքը Նա տվեց և հայտնի դարձրեց իր առաքյալներին, հավատացող աշակերտներին և սիրող բարեկամներին:

214 (472. LV). Եվ ահա, երբ Նրան (կապված) բերեցին հավաքված մարդկանց մեջ, Նա, նկատի ունենալով իր հանդիմանող և հրապարակավ ավանդած քարոզը, ասում է. «Ես բացահայտ ասացի բոլորին. ես միշտ ուսուցանել եմ ժողովարանում և տաճարի մեջ, ուր հավաքվում էին բոլոր հրեաները, և ծածուկ ոչինչ չեմ խոսել» (Հովհ., 18. 20): Նա բարձրաձայն ասում էր. «Ով ինձ է հավատում, ինձ էլ, որ հավատում է, այլ Նրան, ով ինձ ուղարկեց: Եվ ով ինձ է տեսնում, տեսնում է Նրան, ով ինձ ուղարկեց» (Հովհ., 12. 44-45): Եվ այսպես, վկայելով ճշմարտությունը և ուխտելով, Նա այնուհետև գնաց, որ ընկնի ընդդիմադիրներին ձեռքը, որպեսզի նրանք, ովքեր մոլորվել էին՝ թիկունք դարձնելով լուսավոր և կյանք տվող ուսմունքից, թերևս կենարարին ձեռքերով շոշափելով չարչարելու ժամանակ՝ այդ մոլորվածները սթափվեն և զգաստանան:

215 (473). Որովհետև Նա մատնվեց քահանաների և օրենսդատության վարդապետների ձեռքը, որպեսզի իր առաջիկա չարչարանքների վրա ուղադրությունը հրավիրի՝ նրանց օրենքի միջոցով: Բայց նրանք բռնելով դատապարտեցին ամենքի Դատավորին, համաձայն այն ամենի, ինչ (գրվել և) գրվելու էր Նրա մասին: Այսպես, Պողոս (առաքյալը) Պիսիդիայի Անտիոքում Նրա մասին վկայում է. «Երուսաղեմում բնակվողները (և նրանց իշխանավորները) չճանաչեցին Նրան և դատապարտելով՝ կատարեցին մարգարեների խոսքը, որ ամեն շաբաթ կարդում էին: Եվ մահվան արժանի ոչ մի հանցանք չգտնելով՝ Պիղատոսին խնդրեցին սպանել Նրան» (Գործք, 13. 27-28): Եվ որպեսզի Նրան կյանքից

զրկեն, իրենց հանդիման կախեցին փայտից: Տերը դրա մասին սկզբնապես նշել էր Օրենքների գրքում (Հմմտ. Բ Օր., 28. 66), իսկ հետո ասել՝ «Մարդու Որդին պետք է բարձրանա» (Հովհ., 3. 14): Եվ այնտեղ այնուհետև, այն ժամին, լրացավ և կատարվեց Հոբի խոսքը. «Նա է, որ հրամայում է արեգակին, ու սա չի ծագում, փակում է աստղերի աշխարհատարած ճառագայթների դեմը և կնիք է դնում յուրաքանչյուր փայլուն աստղի վրա» (Հմմտ. Հոբ, 9. 7, 12):

216 (474). Եվ վեցերորդ ժամից, ասում է ավետարանիչը (Հմմտ. Մատթ., 27. 45), խավարը պատեց երկիրը մինչև օրվա իններորդ ժամը, ի կատարումն Ամոսի մարգարեություն. «Այդ օրը, – ասում է Տեր Աստված, – արեգակը մայր պիտի մտնի միջօրեին, և երկրում լույսը պիտի խավարի ցերեկով» (Ամոս, 8. 9): Նրա նման է և Զաքարիայի ասածը, թե «այն օրը լույս չի լինելու, այլ լինելու է մի ցուրտ ու պարզ օր: Դա պիտի լինի (միայն) Տիրոջը հայտնի օր. ո՛չ ցերեկ պիտի լինի և ո՛չ էլ գիշեր, և լույս կլինի (միայն) երեկոյան» (Զաք., 14. 6-7):

217 (475). Եվ ի՞նչ է նշանակում «Տիրոջը հայտնի այն օրը», եթե ոչ մարգարեների միջոցով նախապես ասվածը, թե դա Տիրոջ օրն է, որի նշանակված ժամանակը հասել էր: Այսպես և Դանիելը, հրեշտակից տեղեկանալով, գրեց. «Վաթսուներկու յոթնյակից հետո կսպանվի օծյալը» (Դան., 9. 26): Իսկ «Տիրոջը հայտնի» խոսքն ասում է արեգակի միջոցով ցույց տրվող նշանների համար, ինչպես (աշխարհի) արարման սկզբում լուսատուներին ստեղծելիս ասաց՝ «Թող (լուսատուները) նշանների համար լինեն» (Ծննդ., 1. 14): Այդ պատճառով Նա երկարացրեց իր մահը, զուգադիպեցնելով այն խավարման ժամի նշանին, որպեսզի «նայեն և տեսնեն Նրան, Ում խոցեցին» (Հովհ., 19. 37): Իսկ նրանք, ավելի ու ավելի ընկզմվելով խավարի մեջ և

հասնելով մինչև մոլորություն հատակը, համրացած շների պես (Եսայի, 56. 10), չկարողացան (ոչ մի) խոստովանություն խոսք ասել:

218 (476). Եվ Նա կատարեց ամեն ինչ, ինչպես ավետարանիչն է ասում. «Այնուհետև Հիսուս, գիտենալով, թե ահա ամեն ինչ կատարված է, որպեսզի կատարվի գրվածը, ասաց՝ «Ծարավ եմ» (Հովհ., 19. 28). այլանություն բաժակով Նրան լեղիով խառնած քացախ մատուցեցին, ինչի առիթով Նա բացականչեց՝ «ամեն ինչ կատարված է» (Հովհ., 19. 30): Այդ ժամանակ կատարվեց նաև մարգարեի խոսքը, թե «Նա ինքն է վերջ տալու» (Նավում, 1. 9): Վկայում է նաև Պողոսը, թե «Եվ երբ կատարեցին այն ամենը, ինչ Նրա մասին գրված էր, (խաչափայտից) իջեցնելով Նրա դին՝ գերեզման դրեցին» (Գործք, 13. 29):

219 (477). «Եվ ժամը իննի մոտ, – ասում է, – Հիսուսը բարձր ձայնով գոչեց ու ասաց. «Էլի՛, էլի՛, լա՞մ սաբաթթանի՛», այսինքն՝ «Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» (Մատթ., 27. 46: Մարկ., 15. 34. Սաղմ., 21. 2): Տեսնո՞ւմ ես, որ մեռնելիս Նա ուսուցանում է լինել անխակալ, ինչի միջոցով էլ սովորեցնում էր իրեն խաչակից ավազակին, հարյուրապետին և շատ ուրիշների: Որովհետև Նա կամավոր էր գնացել մահվան և ոչ թե որևէ ամենագործակից բռնությունը պարտադրված: Այդ պատճառով էր, որ բարձր ձայնով գոչեց, որ կատարվեն մարգարեի ասածները, թե «Արեգակն ու լուսինը կխավարեն, և աստղերը կթաքցնեն իրենց լույսը» (Հովել, 2. 10: 3. 15) և «Տերը Սիոնից կկանչի և Երուսաղեմից իր ձայնը կտա» (Հովել, 3. 16):

220 (478). Արդ, մարդկանցից ո՞վ է, որ աղաղակում կամ գոչում է հոգու տազնապի ժամանակ, երբ մոտ է մահվան. նրա բերանը փակ և ինքը անխոս է լինում մեռնելուց անմիջապես առաջ: Իսկ հոգիների Ստեղծող Քրիստոսը

(մարդկության հանդեպ) ինքնաբուխ սիրուց գնալով մահ-վան, ահեղ նշաններին զուգընթաց բարձրաձայն ազդարարեց այն մասին, որ նաև մեռնելիս Նա կամքով և գործով միասնական է Հոր հետ: Եվ Նա աշխարհի (փրկության) համար Իր հավաստի մահը բացահայտ դարձրեց՝ ասելով մարգարեական խոսքը՝ «Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ թողեցիր Ինձ» և «Քո ձեռքն եմ ավանդում իմ հոգին» (Ղուկ., 23. 46: Սաղմ., 30. 6):

221 (479. LVI). Եվ որպեսզի նենգ մարդկանց կողմից հնարավոր չլինի որևէ կասկած Նրա արագ և լուսավոր հարույթյան վերաբերյալ, Նրան իջեցրին փայտից և դրին գերեզման, ինչի մասին Ինքն իսկ նախապես ակնարկել էր՝ բերելով մարգարեի օրինակը՝ «Ինչպես Հովնանը երեք օր և երեք գիշեր ձկան փորի մեջ էր, նույնպես և մարդու Որդին լինելու է երկրի սրտում» (Հմմտ. Մատթ., 12. 40): Դրանով Նա ի կատար ածեց Եսայու տեսիլքը, թե «Ահավասիկ ես Սիոնի հիմքում թանկագին քար եմ դնում» (Եսայի, 28. 16). նրա հետ նաև հոգեպատում սաղմոսերգուհի (խոսքը) այն մասին, թե «Ինձ իջեցրին մահվան հողի մեջ» (Սաղմ., 21. 16). այս մասին վկայում է նաև Պողոսը. թե՛ «(Քրիստոս) մեռավ ըստ (Սուրբ) Գրքի և թաղվեց» (Ա Կորնթ., 15. 3-4):

222 (480). Հրեաները, որ հմուտ էին և տեղյակ այս խոսքերին, հաղորդելով դատավորին Քրիստոսի այն խոսքը, թե «Երրորդ օրը հառնելու եմ» (Մատթ., 16. 21: Մարկ., 8. 31: Ղուկ., 9. 22), վերցրին զինվորների մի ջոկատ, որպեսզի նրանք, անքուն, աչք չփակելով, գիշերապահ լինեն և ուշադիր հսկեն (գերեզմանը): Իսկ Տերը, Իր խոսքի համաձայն, հառնեց երրորդ օրը, որպեսզի, ինչպես Հոր կամքով եղած մահը, նույնպես և հարույթունը փառքով, կատարվեն մարգարեի ասածները, թե՛ «երկու օրից հետո երրորդ օրը հարույթուն ենք առնելու և կանգնելու ենք նրա առաջ,

և հետամուտ կլինենք ճանաչելու Տիրոջը, և նրան պատրաստ կգտնենք ինչպես առավոտը» (Հմմտ. Օսեե, 6. 3): (Աստված) այդպիսով խափանեց «մահվան երկունքը, քանի որ կարելի էր, որ այն արգելի Նրան» (Գործք., 2. 24), քանի որ Նա մեղքերի համար վաճառված էր, և թեպետ վերքեր ստացավ և համարվեց, որ ննջեցյալների հետ է գերեզմանում, որպեսզի (Իր վրա) վերցնի մեղքերը և բժշկի Իր արարածներին, Նա հանդես եկավ «(որպես) անօգնական մի մարդ, լքված՝ մեռյալների մեջ» (Սաղմ., 87. 5-6):

223 (481). Որովհետև Նա՝ միակ ինքնիշխանը և մեղքերից ազատը, սպանեց «զորացած աշխարհակուլ մահը և բոլորի երեսից արցունքն իսպառ կտրեց» (Եսայի, 25. 8): Այդ պատճառով Նա կատարեց (մարգարեի) խոսքն այն մասին, թե «դժոխքում չես թողնի դու իմ հոգին, և քո սրբին ապականություն տեսնել չես տա: Ինձ ցույց տվիր կյանքի քո ճանապարհները, հագեցրիր ինձ երեսիդ ուրախություն» (Սաղմ., 15. 10-11): Նա էր, որ ասել էր՝ «Ես եմ լավ հովիվը, իմ կյանքն եմ տալիս իմ ոչխարների համար» (Հովհ., 10. 11): Եվ ելավ այնուհետև երկրից բանավոր ոչխարների հովիվը և ի կատար ածեց մարգարեի խոսքը այն մասին, թե «(ո՞ւր է) նա, որ երկրից դուրս բերեց հոտերի հովիվին (Եսայի, 63. 11), որն առաքյալը մեկնաբանում է, թե «մեռելների միջից հանեց մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որը հավիտենական ուխտի արյունով (ոչխարների) մեծ հովիվն է» (Եբր., 13. 20):

224 (482). Եվ որովհետև Նա շատ անգամ, փոխաբերական ձևով լսելի դարձնելով, ասել էր Իր չարչարանքների և երրորդ օրը հարույթյան մասին, (և ասում էր դա) ոչ թե պարծանքով և ոչ էլ սպառնալով, այլ որպեսզի քաղցրուսույց վարդապետությունը ճշմարիտ հավատքի բերի մոլորվածներին, (պարզ է, որ) Նա սկզբից էր որոշել Իր հարույթ-

յան ժամը, որպեսզի նրանք, ովքեր չիմացան, երբ Նա ծնվեց կույսից, թերևս այն ժամանակ, երբ Նա կգա գերեզմանից, կշտապեն Հասնել (երկնային) արքայության: Որովհետև Կենդանարարը եկավ կենդանութուն ունեցողներին (Հավերժական) կյանք տալու համար, իսկ նրանք հուսահատ հանձնվեցին մահվան:

225 (483). Ապա Նա մեռավ մեռածների համար և հառնեց, որպեսզի Իր հարուժյամբ օրինակ դառնա: Դրա համար էլ Հենց գիշերը կատարեց Իր լուսավոր հարուժյունը, որպեսզի պահակներին և հսկողներին (այնուհետև) բացի ճշմարտութունը այն իրադարձութունների, որոնցով ավարտվելու է Իր գործը: Նրանց պատեց խոր և ահավոր սարսափը աղետալի երկրաշարժից և պատուվող քարերից, բացվող գերեզմաններից և հառնող մեռյալներից (Մատթ., 27. 51-52): Սրանով իրականանում էր մարգարեի խոսքը, թե «լեռները դողացին Նրանից, և երկիրը սասանվեց Նրա հայացքից, և ժայռերը քանդվեցին» (Նավում, 1. 5), ինչից և «խռովվեցին պահապանները և մեռելների պես եղած» (Մատթ., 28. 4):

226 (484). Իսկ Ողջը կանգնեց և հրեշտակների վկայության միջոցով իմաց տվեց նրանց, ովքեր եկել և սպասում էին Նրան, ինչպես և նշել է մարգարեն. «Բարեհաճ է Տերը նրանց նկատմամբ, ովքեր սպասում (ապավինում) են Նրան նեղ օրերին, և Նա ճանաչում է Իրենից երկյուղ կրողներին» (Նավում, 1. 7): Որովհետև Նա նախապես հրավիրել էր (նրանց) Իր սպասվող լուսավոր հարուժյանը, որով կատարվեց և մարգարեի խոսքը, թե «Դրա համար սպասիր Ինձ, – ասում է Տերը, – մինչև այն օրը, երբ Ես ոտքի կանգնեմ վկայելու» (Սոփ., 3. 8):

227 (485). Պահապաններն այնուհետ ուղղվեցին քաղաք և այնպես հռչակեցին և ազդարարեցին աստվածագործ

հարուժյունը, մինչև որ նույն գիշերը գերեզմանից եկած կանայք աշակերտներին բերեցին իրենց տեսած հրաշքի բարի լուրը (Մատթ., 28. 8): Շնչասպառ և վախեցած պահապանները, որ քաղաք էին մտել, քահանաներին և աշակերտներին նույնպես պատմեցին պատահածի մասին, մանավանդ հուզված ամբոխին, որը զրգուված հավաքվել էր քաղաքի շատ տեղերում:

228 (486). Սրանով իրականացավ նաև մարգարեի կողմից ասված խոստումը, թե՛ «Բացելու եմ ձեր գերեզմանները, – ասում է Տերը, – և հանելու ձեզ՝ ձեր գերեզմաններից» (Եզեկ., 37. 12): Եսային ևս ասում է. «Պիտի հառնեն ու կանգնեն մեռածները, որոնք գերեզմաններում են, որովհետև այն ցողը, որ Քեզնից է, բժշկութուն է նրանց համար» (Եսայի, 26. 19): Թերևս, նա նկատի ուներ Քրիստոսի կենդանարար արյունը, որը բոլորի համար հեղվեց խաչի վրա: Եվ որպեսզի պարզ դարձնի, որ այնտեղ նա (կարևոր) մարգարեութուն է անում, ուղղակի դիմեց աշակերտներին. «Գնա, իմ ժողովուրդ, մտիր քո շտեմարանները, փակիր քո դռները և թաքնվիր միառժամանակ» (Եսայի, 26. 20):

229 (487). Իսկ (Քրիստոսին) խաչ բարձրացնող կամակոր ազգը, որը խուլ ու կույր էր դարձել ճշմարտության հանդեպ, ոչ մի օգուտ չքաղեց ո՛չ կենդանութուն ստացածների, ո՛չ մեռելների հառնելու պատմութունից, ո՛չ էլ աստվածային-հաղթական հարուժյան ահեղ նշաններից: Որովհետև Հենց նրանց մասին էր Ամենագետը առակի ձևով ասել՝ նկատի ունենալով այն, ինչ պիտի լիներ մեծատունի հետ. «Եթե Մովսեսին և մարգարեներին չեն լսում, ապա մեռելներից մեկն էլ եթե գա նրանց մոտ, չպիտի լսեն» (Ղուկ., 16. 31): Դրանց մասին է նաև մարգարեի խոսքը, թե «այն օրը ձեր մասին առակ կհորինեն և ողբ կհնչեցնեն, կողբան և կասեն, թե «Ամբողջությամբ թշվառացանք»

(Միք., 2. 4): Հենց դա արեց իրենց ազգական Պողոսը՝ «Լալով եմ ասում Քրիստոսի խաչի թշնամիների մասին, որոնց վախճանը կորուստ է» (Փիլիպ., 3. 18-19):

230 (488. LVII). Այնուհետև, շաբաթվա առաջին օրը Քրիստոսը գնում և, (տան) փակ դռներից անցնելով, երևում է աշակերտներին, ասում է ավետարանիչը (Հմմտ. Հովհ., 20. 19): Եվ կենդանարար ողջույն տալով՝ Նա մեծ ուրախություն պատճառեց աշակերտներին: Հետո կատարեց սաղմոսերգուհի երգը՝ «Մե՛ր Տեր Աստվածը երևաց մեզ, կատարեցե՛ք տոնն ուրախության (մատղաչ ճյուղերով)՝ մուտքից մինչև անկյունները սեղանի» (Սաղմ., 117. 27): Իսկ ի՞նչ են նշանակում սեղանի անկյունները, եթե ոչ խաչը, որ անկյունները խաչի չորս թևերն են ցույց տալիս:

231 (489). Մեկը (թևերից) խրված է հողի մեջ, որպեսզի ցույց տա, որ Տերը դրել է ոտքերը երկրի վրա, որպեսզի ամուր վեմի վրա շինի և հաստատի եկեղեցու բարձր հիմքերը, ինչպես և կանխագուշակել էր մարգարեն, թե՛ «Տերը ոտքերս ժայռի վրա հաստատեց, որպեսզի անսասան դարձնի» (Սաղմ., 39. 3): Իսկ հիմնական թևը՝ կատարը վեր ուղղված է, որպեսզի այդ ուղղված թևը լինի հաստատություն տվող թև, վեր բարձրացնի այն մարդկանց բնությունը, որոնք հենվեցին Նրա վրա և դրանով իսկ (հնարավորություն ստանան) տեսնելու Հորը, Քրիստոսի գլուխը, և բացահայտեն իրենց բնությունը: Իսկ աջ թևը ցույց է տալիս աջ ձեռքի ուժը, այսինքն, որ աջ թևով ցուցվում են արդարների ուրախության ցնծությունը, պատրաստվող պարգևները, (չնորհվող) պսակների զարդերը: Իսկ ձախ թևը խորհրդանշում է մեղավորների տանջանքները:

232 (490). Որովհետև (զոհա)սեղանն ունի չորս թև, որն այն խաչն է, և դա հիրավի զոհասեղան է, որովհետև այն եղավ տերունական մարմնի ընդունողը՝ որպես Հորը մա-

տուցած ճշմարիտ զոհաբերություն: Խոսքը հիրավի չորս թևերի մասին է, որպեսզի նրանք ուղղված լինեն աշխարհի չորս կողմերը և ուրախություն տան ողջ տիեզերքին այս սեղանից՝ երկնավոր և երկրավոր արարածներին (Եփես., 2. 10), և սանդարամետի բնակիչներին (Փիլիպ., 2. 10), և հիմքերի հիմնադիրներին, որ առաքյալներն ու մարգարեներն են: Եվ երկնավորներին, այսինքն՝ հրեշտակներին, հոգեղեն գործին, որոնց համար մեծ ուրախություն էր և է կյանքի անակնկալ ցանկալի վերադարձը: Իսկ երկրավորները մարդիկ են, որ ապրում էին և վերադարձան Տիրոջ մոտ. և այժմ դուք էլ ցանկանում եք ապրել Քրիստոսի այցելության շնորհիվ: Սանդարամետականներն էլ ննջեցյալներն են, որոնց Նա փրկեց իր գալստյամբ: Որովհետև խաչը, այսինքն՝ բարձրացված խաչը, ցույց է տալիս Հաղթողին, իսկ դեպի վեր ուղղված թևը ցույց է տալիս Հաղթանակը:

233 (491). Եվ այս սեղանից վայելեցին նախ առաքյալները, որովհետև նրանք տեսան Նրա հարությունը և ուրախություն համակվեցին: Եվ կատարվեց, իրականացավ այն խոսքը, թե «Կատարեք տոնն ուրախության (մատղաչ ճյուղերով), մուտքից մինչև անկյունները սեղանի» (Սաղմ., 117. 27): Այնտեղ իրականացավ նաև սաղմոսերգուհի երգը. «Հանեց քուրճն իմ և ինձ ուրախություն հագցրեց» (Սաղմ., 29. 12): Այս խոսքերով ցույց են տրվում Հարություն առածի չարչարանքների նշանները, ինչի մասին է վկայում Պողոսը. «Այսուհետև Նա չի մեռնի, և մահը Նրան այլևս չի տիրի» (Հռոմ., 6. 9): Եվ որովհետև Նա սքանչելագործ է և քննողների համար անիմանալի և բոլոր ոչ հնարավոր բաները հնարավոր դարձնող, այդ պատճառով ինչպես չարչարանքից առաջ իր կենդանարար մարմինը և արյունը պարգևեց աշակերտներին՝ հայտնելու համար, որ իր կամքով է գնում չարչարանքի, նույնպես և Հարություն

յունից հետո իր մարմնի վրա ցույց է տալիս մեխերի տեղերը (Հովհ., 20. 25-27)՝ հայտնելով, թե վերքերն անկարող էին գերեզմանում արգելված պահել վիրավորների Բժշկին:

234 (492). Նմանապես Նա աշակերտների հետ կերավ նոր արքայության մեջ (Հովհ., 21. 12), ցույց տալու համար, որ Նա՝ պահանջ չունեցողը և անոթին, կարող է ճաշակել արքայության մեջ, ինչպես և չարչարանքներից առաջ Նա (անոթի) շրջում էր երկրի վրա, որը տանջվում էր (հոգևոր) քաղցից և կերակուրի պակասից՝ ինքը դրա կարիքը չունենալով, բայց բոլորին հագեցնելով: Սակայն, ինչպես այնտեղ՝ բերված օրինակում, Նա ճաշակեց, որպեսզի հաստատուն պահի աշակերտներին, նույնպես և այստեղ քաղցած մնաց, որպեսզի աշխարհին համոզի, որ իրոք Աստծու իսկական Որդին ծնվեց ճիշտ ժամանակին որպես մարդու Որդի՝ աշխարհին կյանք տալու համար: Այդ նկատի ունենալով կանխագուշակող մարգարեն՝ ասելով «Հավիտենական Աստվածը, երկրի սահմանները հաստատող Աստվածը ո՛չ քաղց է զգում և ո՛չ էլ հոգնում, Նրա իմաստությունն անքննելի է» (Եսայի, 40. 28): Նա երևաց նաև Կղեոպասին (և նրա ուղեկցին) Եմմաուսի ճանապարհին և նրանց առաջ բացեց Նրա մասին վկայող ավանդված մարգարեական խոսքերը: (Ղուկ., 24. 13-35):

235 (493). LVIII). Այնուհետև Նա երևաց աշակերտներին Տիբերական ծովի մոտ (Հովհ., 21. 1-14), նրանց հաստատուն պահելու համար հրաշքներ կատարեց, և հայտնեց նրանց, որ գերեզմանը փոքր չափով իսկ չի պակասեցրել Նրա աստվածային զորությունը, այլ ինչպես իր ծննդյան ժամանակ, և չարչարանքներից առաջ, և չարչարանքների ընթացքում, Նա նույն զորությունն ունի և հարությունից հետո: Դրա մասին վկայություն տվեց և երանելի Պողոսը՝

«Հիսուս Քրիստոս երեկ և այսօր և հավիտյանս հավիտենից նույնը» (Եբբ., 13. 8):

236 (494). Հետո Նա աշակերտներին հիշեցնում և վկայակոչում է իր՝ ավելի առաջ ասվածը, թե՛ «սրանք այն խոսքերն են, որ խոսեցի ձեզ հետ, մինչ ձեզ հետ էի, թե՛ պետք է կատարվեն այն ամենը, որ գրված են Իմ մասին Մովսեսի օրենքում, մարգարեների մեջ և սաղմոսներում» (Ղուկ., 24. 44): Հիսուսը շնչեց նրանց վրա և ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին» (Հովհ., 20. 22): «Եվ այն ժամանակ բացեց նրանց միտքը, որ հասկանան Գրքերը, և ասաց նրանց. «Այսպես պետք է չարչարվեր Քրիստոս և հարույթյուն առներ մեռելներից երրորդ օրը» (Ղուկ., 24. 45-46):

237 (495). Եվ երբ Նա կատարեց Աստծու՝ հրեա ժողովրդին վերաբերող ուխտը, որին ավելի առաջ նա մեղադրել էր, ասելով՝ «եթե ես չգայի և չխոսեի նրանց հետ, նրանք որևէ մեղք չէին ունենա, բայց այժմ չկա արդարացում նրանց մեղքերին, որովհետև տեսան Իմ գործերը, որ ուրիշ ոչ ոք չէր գործել, և ատեցին Ինձ և Իմ Հորը» (Հովհ., 15. 24): Նա այնուհետ ուղղեց իր լուսավոր վարդապետությունը հեթանոսներին՝ ի կատար բերելով ավելի առաջ ասված Եսայու մարգարեությունը, թե «Ես իբրև ուխտ տվեցի քեզ ժողովրդին և իբրև լույս՝ հեթանոսներին, որ փրկություն լինես մինչև աշխարհի (չորս) ծագերը» (Եսայի, 42. 6: 49. 6):

238 (496). Եվ աշակերտներին տանելով Ձիթենյաց լեռը և ամրապնդելով նրանց միավորող ճշմարտությամբ՝ Նա ասաց. «Գնացեք այսուհետև աշակերտ դարձրեք բոլոր հեթանոսներին, և մկրտեցեք նրանց հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու» (Մատթ., 28. 19): «Եվ բարձրացնելով իր ձեռքերը՝ օրհնեց նրանց, և մինչ Նա օրհնում էր, դեպի երկինք վերացավ» (Ղուկ., 50-51), – ասում է ավետարանա-

գիրը, որպեսզի ի կատար ածվի Սաղմոսարանում ասված երգը, թե «Աստված բարձրացավ օրհնությամբ» (Սաղմ., 46. 6): Նա հրամայեց նրանց. «Դուք նստեցեք Երուսաղեմում, և ես կուղարկեմ ձեզ Իմ Հոր ավետիսը» (Ղուկ., 24. 49: Գործք, 1. 4), որով և ի կատար ածվեց Ամոսի ասածը. «Նա, որ պատրաստում է իր համբառնալը դեպի երկինք և իր ավետիսը հաստատում երկրի վրա» (Ամոս, 9. 6):

239 (497. LIX). Այժմ աչքի առաջ ունենալով այն ամենը, ինչ ասացինք, վերջում մեր խոսքն ասենք Քրիստոսի կողմից խոստացած ավետիսների մասին՝ մխիթարություն բերող Սուրբ Հոգու վերաբերյալ: Մանավանդ, որ այստեղ մենք ունենք, որպես ըմբռնելու համար դյուրամատչելի, քաջալերող երանելի Ղուկասին, որը ճանաչված է որպես Քրիստոսի կատարած գործերի գիտակ և խորապես հասկացող, ինչի մասին նա ուղղակի հայտնում է իր՝ աշխարհին ուղղված Ավետարանի սկզբում, ասելով՝ «ես էլ, որ սկզբից ճշգրտությամբ հետամուտ էի եղել ամեն բանի, կամեցա կարգով գրել քեզ, ով քաջը Թեոֆիլե, որպեսզի ճանաչես ճշմարտությունն այն խոսքերի, որոնց աշակերտեցիր» (Ղուկ., 1. 3-4):

240 (498). Եվ որովհետև նա իր Ավետարանի վերջում համառոտ է խոսել Քրիստոսի երկնագնաց ճանապարհի մասին, իր երկրորդ գրքում, առաքյալների հետ կապված դեպքերի մասին խոսելիս, նա անմիջապես իր՝ ավելի առաջ գրված Ավետարանը հիշատակելով, ձեռնամուխ է լինում «Գործք առաքելոց» գրքին՝ հիշատակելով նույն Թեոֆիլոսին. «Առաջին պատմությունը գրի առա, ով Թեոֆիլոսին. «Առաջին պատմությունը գրի առա, ով Թեոֆիլոսին. «Առաջին պատմությունը գրի առա, ով Թեոֆիլոսին. «Առաջին պատմությունը գրի առա, ով Թեոֆիլոսին. «Առաջին պատմությունը գրի առա, ով Թեոֆիլոսին» (Պատմ., 49. 3-5):

Հանգամանքները, Քրիստոսի՝ աշակերտներին տված հրամանները, և Նրա ճանապարհը ամպերի մեջ և Քրիստոսի Համբարձման համար հրեշտակների իջնելու մասին և Նրա երկրորդ գալուստի մասին՝ ինչպիսին է լինելու:

241 (499). Այնուհետև Նա պատմում է Սուրբ Հոգու պայծառ և հույժ սքանչելի իջնելը երկնքից. «Երբ Պենտեկոստեի օրերը լրացան, բոլորը միասիրտ, միատեղ էին: Եվ հանկարծակի երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկած ձայնի նման, և լցրեց ամբողջ այն տունը, ուր նստած էին: Եվ նրանց երևացին բաժանված լեզուները, նման բոցեղեն լեզուների, որոնք և նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս» (Գործք, 2. 1-4):

242 (500). Տեսնո՞ւմ ես Սուրբ Հոգու վերին նշաններով փառավոր և հանկարծակի մուտքը¹: «Եվ հանկարծակի, – ասում է, – երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկած ձայնի նման» (Գործք, 2. 2): Եվ հայտնի դարձավ, որ երկնավորները և երկրավորներն իմացան Սուրբ Հոգու իջնելը, մանավանդ որ Նա գալիս էր երկնավոր զորքի հետ. և մարգարեն դա տեսնում և կանխագուշակում էր Սաղմոսարանի երգերում, ինչպես ասված է 49-րդ սաղմոսում. «Մեր Աստվածը պիտի գա հայտնապես, և Նրա առջև հուր պիտի բորբոքվի, և Նրա շուրջը՝ սաստիկ մրրիկ: Նա վերևից ձայն պիտի տա երկնքին և երկրին՝ իր ժողովրդին դատելու համար և իր մոտն է հավաքելու իր սրբերին» (Սաղմ., 49. 3-5):

243 (501). Որովհետև Սուրբ Հոգին ավելի առաջ վկայություն տվեց Իսրայելի տան համար և Քրիստոսի գալստյան մասին ուխտ կապեց երկնքի և երկրի հետ, ժամանակին ասելով՝ «Երկինք, ահանջ դիր, որ խոսեմ, և երկիրը թող լսի իմ բերանի պատգամները» (Թ Օր., 32. 1), և մի ու-

րիչ անգամ էլ՝ «Լսիր, երկի՛նք, և ականջ դիր, երկի՛ր, քանզի Տերն է խոսում» (Եսայի, 1. 1):

244 (502). Նա այնուհետև կգա դատաստան անելու, կանչելու է երկիրքն ու երկիրը, դատելու է ժողովուրդներին: Դրա մասին Ամենափրկիչն ասաց. «(Սուրբ Հոգին) գալով պիտի հանդիմանի աշխարհը՝ մեղքերի համար, որոհետև չեն հավատում Ինձ» (Հովհ., 16. 6-9): Որովհետև Իսրայելական տունը լավ գիտեր և մոտ էր Հոգուն՝ շնորհիվ ասպարեզ եկող բազմաթիվ մարգարեների և նրանց սքանչելագործությունների: Եվ աշխարհում Նա ոչ սակավ անգամ էր երևացել, և հեթանոս ժողովուրդներին ցուցադրել էր աստվածային Հոգու ուժը: Եվ Նա իմաց տվեց ու ծանուցեց դա թագավորներին՝ Հովսեփին ասած փարավոնի խոսքերով. «Մենք չենք գտնում որևէ մեկին քո նմանը, որ ունի Աստծու Հոգին» (Ծննդ., 41. 38): Բաղդասարը նույնպես ասաց Դանիելին¹. «Մենք գիտենք, որ Սուրբ Աստծու Հոգին կա քո մեջ»² (Դան., 4. 6):

245 (503. LX). Իսրայելի զավակներն (մյուսներից) ավելի հայտնի էին մարգարեների շատությունը և առատությունը: Մեծն Մովսեսը՝ յոթանասուներկու ծերերի հետ անպատում (Եսայի, 24. 9), իսկ ավետյաց երկրում՝ խմբերով մարգարեներ, որ հայտնվեցին թագավորների ժամանակ, ինչի մասին շարադրված կա Թագավորների Գրքերում, որոնց բոլորի մեջ պատմածը ցույց է տալիս (Սուրբ) Հոգու մերձավորությունը: Եսային ասում է. «Տիրոջ Հոգին ինձ վրա է» (Եսայի, 61. 1), և Միքիան, թե՛ «Ես լցվեցի՛ Երոջ Հոգու զորությունը» (Միք., 3. 8): Իսկ Եզեկիելը լրիվ բացեց Հոգու զորության գործողությունը, հայտնելով մարտակառքերի տեսիլքի պատմությունը (Եզեկ., 23. 24-25: 26. 10-12): Կամ էլ երբ նույն ինքը (Եզեկիելը) պատմում էր հարուխյան մասին սքանչելի տեսիլքը. «Տիրոջ ձեռքը

հանգչեց ինձ վրա, և Սուրբ Հոգին բարձրացրեց ինձ, և տարավ (դրեց) ինձ մի դաշտի մեջ, որը լի էր բազում զորքերի ոսկորներով, և ասաց ինձ՝ «Մարդո՛ւ որդի, արդյոք կկենդանանա՞ն այդ ոսկորները». ես ասացի՝ «Տեր, Տեր, այդ դու գիտես» (Եզեկ., 37. 1-3):

246 (504). Տեսնո՞ւմ ես, թե ինչպես մարգարեն, ամենաճամարիտն իմանալով, ցույց է տալիս Սուրբ Հոգու աստվածային պատիվը: Ուշադրություն դարձրու նաև աստվածային հրամանների՝ Հին ոսկորների կուտակումների ունեցած ազդեցությունը վրա, թե ինչպես Նա հավաքեց, կապեց բոլոր հոգերը և իրար միացնելով՝ կենդանացրեց և ոտքի կանգնեցրեց (մեռյալներին). որովհետև ոչ միայն խոսքերից և հրամաններից, այլ առավել ևս կատարված գործերից դու կարող ես հասկանալ այդ ճամարտության բարձր իմաստը:

247 (505). Եվ ահա, այդ նույն զորեղ և ամենակարող Սուրբ Հոգին, Աստծու խորություն քննողը (Ա. Կորնթ., 2. 10), որը նախկինում դրված օրենքների համաձայն, ըստ մարգարեների ասածների, ավետել էր Աստծու Որդու կենսաբեր գալստյան մասին, ուղարկվեց աստվածային փառքով տասներկու ընտրյալների ժողովին, «Իր մոտ հավաքելու Իր սրբերին» (Սաղմ., 49. 5) և հաստատելու իրողությունն այն գործերի, որ կատարվեցին Քրիստոսի միջոցով:

248 (506). «Եվ նրանց երևացին բաժանված լեզուներ՝ բոցի նման» (Գործք., 2.3), որպեսզի ականառու ձևով փայլի մեջ փառաբանվի (աստվածային) շնորհների վեհությունը: Եվ նրանք, որ լցված էին Սուրբ Հոգով, ստացան մերձավորների հանդիմանությունը, թե «հարբած են» (Գործք., 2. 15): Բայց նրանք իսկապես հարբած էին մարգարեությունից բաժանված: Որովհետև նրանք հարբած էին և զվարթացած, և միաժամանակ ողջ աշխարհին էին բերել գերագույն ուրախություն: Դրա մասին նրանց փոխարեն ասում է մար-

գարեն. «Կուրախանամ և կցնծամ քեզնով» (Սաղմ., 9. 3), և կրկին՝ «Կհագենամ՝ տեսնելով փառքը քո» (Սաղմ., 16. 15), և թե «քո բաժակն ինձ արբեցրեց անխառն գինու պես» (Սաղմ., 22. 6), և կրկին՝ «Քո ողորմությունը, Տեր, առաջ է մղելու ինձ» (Սաղմ., 22. 7): Եվ բացերբաց ծավալվելով՝ հոսեցին Սուրբ Հոգու շնորհները:

249 (507). Եվ Նա հայտնվեց իբրև հուր, որպեսզի անպիտանը այրվի, և ընտիրը լցվի Հոգու ուրախությունից բաժակներով, անսպառ, անանց գանձերի պարգևներով: Եվ նրանք, Հոգու անսպառ հոսքով լցված, հենց այդ ժամանակ լուսավառվեցին բոցկլտացող Հոգու զորությունը: Եվ նրանք, բարին որոնողների համար պատրաստելով բարությունից բխող ուրախությունը, ողջ աշխարհի համար մատուցակներ դարձան և հագեցրին ծարավներին, իսկ անհնազանդներին կործանում խմեցրին:

250 (508). Որովհետև գինու բաժանման սկզբում կտրիճ մարգարե, երիտասարդ Երեմիան, առաջ նետվելով, մեղքերի համար հատուցման և անդառնալի մահվան դառնությունից բաժակը խմեցրեց բազում ազգերի¹ (Երեմ, 25. 15): Իսկ իրենք (առաքյալները) միասին խմեցին ուրախությունից Հոգու հուրը և դարձան մատուցակներ ողջ աշխարհի համար: Նրանք գնացին ուրախությունից քաղցր, անուշուրություն բաժակներով ծառայելու թագավորական հարսանիքի արժանացած բազմականներին: Իսկ թույլերին ու ծուլերին, անմիտներին և անամոթներին հավաքեցին և խմեցրին դառնությունից բաժակների մրուրը, որպեսզի հենց խմելու ժամանակ այրվեն նրանց շրթունքները և նրանց մարմինները²:

251 (509). Այս բաժակն ըմպեցին Անանիան և նրա կինը՝ Սափիրան (Գործք, 5. 1-10), և չկարողացան դիմադրել նրա քաղցր գինու ուժին: Նրանք ծարավ զգացին, խմեցին,

հիացան և խիստ ծարավեցին մաղձից, որ թաքնվել էր նրանց փորում. նրանք չորացան՝ իրենց երկմտությունից մեղքից և այրվեցին կրակե բաժակի գինու չափազանց ուժեղ համից: Այն բաժակը խմեց և ոմն մի կին՝ Տաբեթան (Գործք, 9. 36-41). գինու մի բաժակը, որ հարբեցրեց և քնեցրեց նրան, վերստին արագ արթնացրեց ու բարձրացրեց նրան՝ արդար առողջությունը օժտված և հույսով: Խմեց այն բաժակից և Կուռնելիոսը¹ (Գործք, 10. 1-33), որն արժանի եղավ հրավերքի, և շատերին, որ նրա հետ էին, տվեց (խմելու): Շմավոնի² մատուցակությունը սկիզբ դրեց նրանից եկող ուրախությունների, այն բաժակով, որ նրա ձեռքում էր (Գործք, 8. 13):

252 (510. LXI). Եվ ահա (այդ բաժակը) գալիս ու ծառայում է բոլորին, և ահավասիկ այն հասավ ձեզ: Ահա լի են այս թագավորի մառանները և կազմ ու պատրաստ են խմեցնող մատուցակները՝ բաժակները ձեռներին, և դահլիճներում հրավիրվածների համար բացված են սեղանները, քաղցր և բուրումնավետ ուրախությունից գինին խմելու համար տրվում է բոլոր նրանց, ովքեր այն ցանկանում են խմել հավատով: Պատրաստ է նաև չարությունից խավարի դառը մրուրը, չարերի խմիչքը, կործանման (տանող) այրիչը:

253 (511). Ահա, ինչ որ ցանկանում եք խմել, երկու տեսակի (բաժակներն էլ) պատրաստ են ձեզ մատուցելու: Դե, խմե՛ք խմաստությունը և ոչ թե անմտությունը, (խմե՛ք) ողորմությունը և ոչ թե բարկությունը, հավատի քաղցրությունը և ոչ թե անհավատության երկմտությունը՝ չարի այրող հուրը, որ կիզում է գեհենում և տանում դեպի խավար, այլ (խմե՛ք) այն բաժակի հուրը, որն ըմպելու ժամանակ լուսավորելու է ձեզ և այրելու ձեր տգիտությունից եկող մեղքերի ժանգը և պահպանելու է ձեր հոգիները ձեր հավատից ծնված հույսի շնորհով:

254 (512). Երանելի առաքյալները խմեցին և հարբեցին և ուրախ եղան. և երկու բաժակներից խմել տվեցին ողջ երկիրը, (բոլորին) որ խմեցին ինչ որ ցանկացան: Ահա դուք հարբել էիք տգիտության հիմարությունից, որը և ձեր բաժակին խառնեց մահվան թուլյնը: Այժմ վերցրեք և հավատով խմեք ձեր հոգիների կյանքի բշկուկության բաժակը, որպեսզի ապրեք և փրկվեք այն կրակից, որը գալու է:

255 (513). Ահա ձեզ է հասել պատիժների բաժակը, (բայց դուք) վերցրեք և խմեք խաղաղության բաժակը, որը լցված է օգուտով: Ապաշխարելու ծարավի եղեք, որպեսզի ձեզ միանա մխիթարության ուրախությունը: Խմեք որդեգրության ոգին և ո՛չ թե պղծության ոգին, որը խմեց Շավուղը¹ և արտաքսվեց: Խմեց Դավիթը և իր Տիրոջ ուրախության մասնակիցը դարձավ: Դուք նույնպես (մասնակից կդառնաք), եթե միայն ցանկանաք: Բարերար է և ուրախություն բերող Նա, որ ուղարկեց ձեզ այս առաքյալներին², որոնք եկան ձեր ուրախության համար և բերեցին երկու բաժակ՝ մեկը պատուհասների և մյուսը՝ ուրախությունների:

256 (514). Որովհետև Նա, որ իր տասներկու (առաքյալներին) ուղարկեց ողջ երկրում մատուլակ լինելու, Նույն ինքը ձեզ մոտ ուղարկեց և այս իր վկաներին¹: Եվ քանի որ դուք հարբած էիք ձեր մեղքերի մոլորությունից, ձեզ հասած պատուհասի մրուրը հարբեցրեց ձեզ, որպեսզի նրանք իրենց մահվամբ Աստուծու ավետիսների ճշմարտության մատուլակներ լինեն ձեզ մոտ: Նրանք քարոզեցին իրենց տանջանքներով և իրենց արյունը լցրին երկու բաժակների մեջ, որպեսզի հանգիմանեն ձեր սրտերի կուրուկությունը և անմտությունը: Եվ նրանք ևս պիտի պատրաստեն այդ բաժակները ձեր ուրախության համար, որպեսզի իրենց մահվան միջոցով ձեզ ուրախացնեն՝ կյանքի այն բաժակներով,

որ ինքները խմեցին:

257 (515). Որովհետև նրանք տեսան Տիրոջը և արարածների Ստեղծողին, որն ինքը, իր սեփական կամքով խոնարհվեց մինչև մահվան խոնարհ և անարգ բաժակը և ինքնահոգար խոնարհությունամբ խմեց չարչարանքների համբերության բաժակը: Այդ պատճառով ճշմարտության բոլոր առաքինի վկաները իրենց հանձնեցին չարչարանքների՝ Նրա Աստվածության համար, որպեսզի իրենց կրած չարչարանքներով և վշտերով դառնան վկաները Նրա, որ կրեց դրանք կամավոր, որպեսզի վերացնի մեր անարգությունը, իր վրա վերցնի մեր չարչարանքները և իր բարի կամքով հաղորդակից լինի մեր մահվան: Որովհետև ինչպես Նա կամեցավ, ինչ կամեցավ՝ դա կատարվեց, և ինչպես կամեցավ՝ այդպես էլ իրագործեց: Որովհետև Նա հազավ մեր հողեղեն բնությունը և խառնեց այն իր անխառն Աստվածության հետ, որպեսզի տա մեզ իր անմահությունը, անվիշտ և անչարչար էությունը: Մեր ապականացու մարմինը¹ Նա խառնեց Աստվածության անապականության հետ, որպեսզի անապական դարձնի մեր բնությունը (Հմմտ. Ա Կորնթ., 15. 53-54):

258 (516). Եվ այս արդարները իրենց մահվամբ ցանկացան վկաներ լինել Տիրոջ մահվան, Նրա, որն արարածների մահկանացու բնությունը կյանք տվեց՝ իր մահվամբ: Որովհետև մահը ցանկալի դարձավ մեր Աստուծու մահվամբ, որը մեզ համար խմեց բաժակը մահվան և մեզ խմեցրեց բաժակն անմահության: Որովհետև դա ժամանակավոր մահ է, որպեսզի մենք հաջորդ անգամ նորացած ծնվենք հարուկության փառքի մեջ՝ անփոփոխելի, մշտնջենական կյանքի համար: Ինչպես ինքը Տերն իր սուրբ Ավետարանում ասում է. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե ցորենի հատիկը հողի մեջ ընկնելով չմեռնի, միայն հատիկն ինքը կմնա,

իսկ եթե մեռնի, մեծապես կփառավորվի և ազնիվ պտուղներ կտա» (Հովհ., 12. 24):

259 (517. LXII). Իսկ երկրային արարածների ողջ կյանքը նման է հողից ծնվող մշակովի բույսերի կյանքին, որովհետև սերմը նախ սերմանվում է արգանդի մեջ և այնուհետև աճելով ձեռք բերում մարդկային կերպարանք և ծաղկում որպես Աստծու պատկեր, որովհետև, ինչպես վերը ասացինք, «մարդն ստեղծվեց Աստծու պատկերով» (Ծննդ., 1. 26, 27), օժտված իմաստությամբ, բանականությամբ, ինչպես որ մենք պատմեցինք ձեզ այն (առաջին մարդկանց) մասին, որոնք բնարմատից սկսած օրինակ հանդիսացան (մարդկության համար):

260 (518). Եվ ահա, մարդը սկսեց վարել և ցանել հողը, որովհետև հենց այն ժամանակ էլ նրա համար սահմանվեց, թե «ինչ որ մարդ կցանի, նույնն էլ կհնձի» (Գաղատ., 6. 7): Եվ այս (խրատը) տվեց մարդկանց՝ հասկանալու և իմանալու, որ նրանք՝ իրենց երևացող գործերի միջոցով պետք է վարեն ու ցանեն այն ծածուկն ու չերևացողը, որպեսզի հույս ունենան ստանալու իրենց (Չանքերով) հասունացրած բերքը, որովհետև այն, ինչ որ վաստակելու է մարդը (այստեղ) աստվածապաշտության պատվիրանների (կատարման) միջոցով, այնտեղ՝ (իր համար) ապահովված հանդերձյալ (կյանքում) ընդունելու է պտուղները:

261 (519). Սա նման է երկրագործությանը, որովհետև (մշակները) նախ հերկում են խոպանը, փխրեցնում են այն, վարում են սև ու կոշտ հողը, ակոսներով պատռում և պարարտացնում, քրտնաթոր աշխատանքով սկզբից արմատախիլ անելով մոլախոտերը, կասեցնում են վայրի խոտերի անօգուտ աճը, և հետո միայն օգտակար սերմերի ցանքսը անում:

262 (520). Սա նման է նաև Ավետարանի քարոզչությանը,

որը (անօգուտ կլինի) եթե մարդ նախ և առաջ չվերացնի դատապարտման արժանի սեփական պարտքերը, որոնք (կուտակվել) են անվայել, անօգուտ բուսած սովորություններից, սեփական կամքով, կամայականորեն, կամովին գործած մեղքերից, ինչպիսիք մենք այժմ տեսնում ենք ձեզ մոտ: Որովհետև եթե դուք ձեր մտքից չպոկեք անօգուտ բուսած, վնասակար, կործանարար մեղքերի արմատները, որ արմատավորվելով ոստապատել են ձեր մտածողությունը, խանգարելով ոչ միայն ծաղիկների բացվելուն և պտուղ տալուն, այլև լիովին չորացնելով՝ նետում են ձեզ անհավատության կասկածների մեջ, կամ էլ տանում անջրդի ապառաժոտ տեղանք, որը եթե որևէ մեկը փորձի վարել, անմասն և զուրկ կմնա բերքից: Նույն ձևով դուք էլ, եթե դեն չնետեք ձեր մեջ անուցված սովորությունները, չեք կարողանալու ընդունել այն սերմը, որը ձեր մեջ օգտակար պտուղ է տալու:

263 (521. LXIII). Այժմ, եղբայրներ, իմաստուն մտքով զննեք ձեր հոգիները և, ինքներդ ձեր մասին մտածելով, խորհրդածեք և դիտեք ձեր հոգիները, որովհետև Աստված՝ գլխոտ և մարդասեր, այցի եկավ ձեզ և տեսավ, և չի կամենում, որ դուք կործանվեք, այլ ավելի առաջ՝ արած սպառնալիքների նախազգուշացումներով Նա կանչեց ձեզ՝ ներս մտնելու ապաշխարության դռներով, որպեսզի ողջ մնաք և չմահանաք: Եվ քանի որ այն մարդիկ, որ արժանի չեղան այն բանի, որ իրենց փնտրեն, որոնք իրենց կյանքն անցկացրին հեթանոսության մեջ և արժանի չեղան գտնելու իրենց հոգիները, և չուզեցին իմանալ իրենց Արարչին, Աստծու կանխագես իմաստությունը երես թեքեց նրանցից, (այն մարդկանցից) որոնք հակված չէին լսելու Նրա հրամանները. և նրանք ճգմվեցին իրենց համար նախատեսված տանջանքների տակ:

264 (522). Եվ այսպես, դուք պետք է հերկեք ձեր մտքի արտերը և արմատախիլ անեք ձեր հոգիներից գայթակղեցուցիչ մեղքերը, որոնք խափանում են ձեր մեջ արդարության բույսերը, այսինքն՝ (հեռացնեք) կուռքեր պաշտելու սովորությունները, որոնք, (նախնիներից) ստացված լինելով, գցել են ձեզ մոլորություն մեջ, որ ձեզ՝ արթուն վիճակում պահել է ինչպես քնի մեջ, ինչպես հիմարացած անմիտներին: Իրենցից ոչինչ չներկայացնող այդ (կուռքերը), որոնք ոչ օգուտ են տալիս, ոչ էլ վնաս, ձեզ որևէ օգտակար բան չտալով, տարան դեպի սնոտի ունայնություն և անիմաստ, որևէ օգուտից զուրկ, փուչ բաների: Նրանք օգուտ չեն կարող տալ, որովհետև անշունչ են, իմաստից զուրկ, անփոփոխ և անշարժ: Մի մասը նրանց կոփած, մյուսները՝ կռած, որոշ (կուռքեր էլ) քանդակած են, մյուսները՝ ձուլած, որ հորինվել են ճարտար վարպետների կողմից՝ շինված վնաս հասցնելու համար: Իզուր է և նրանց պատրաստողների և պաշտողների աշխատանքը: Դրանք չեն կարող վնասը հեռացնել նրանցից, չեն կարող անգամ մի լու կամ ճանճ, որ անօգուտ բնակվում են մարդկանց վրա, քչել և հանել (կուռք) պաշտողների տնից: Եվ ոչ էլ սարդերին, որ երթևեկ են անում նրանց (մետաղյա) արձանների վրա և հյուսում իրենց սարգոստայնը նրանց գլուխների վրա, որն իրենք անկարող են մաքրել, այլ այսպես՝ ներսից ժանգով հոշոտված, (դրսից) փոշու մեջ կորած նրանք քայքայվում են՝ առանց որևէ օգուտի:

265 (523). Նաև քարե արձանները՝ քարաքոս ժանգով պատված, կեղտոտվելով, ծածկված բորբոսով ու գունավոր բծերով, թողած առանց խնամքի, այլանդակվում են: Իսկ փայտե կուռքերը, որդակեր, շարունակվում են քայքայվել որդերի հարձակումից: Իսկ նրանց վրա գցված զգեստները, ցեցի կերակուր դառնալով, քայքայվելով, փխրվելով, փչա-

նալով, մաշվելով ոչնչանում ու վերանում են: Որովհետև եթե նույնիսկ որևէ մեկին ստիպում են անմտությունից դրդված նրանց մասին հոգ տանել, և նա իզուր կոտորում է անասուններին՝ նրանց զոհ մատուցելու համար, զազրելի դարչահոտությունը և պիղծ աղտեղությունը հանդերձ, վառված զոհի խանձահոտ մուրը և ծուխը բարձրանալով, թանձրանալով և պատելով նրանց, ածուխի պես սևացնելով, փոխում է նրանց (սկզբնական) գույնը: Եվ նրանց վրա կատարված ծախսերը լինում են իզուր և թափված աշխատանքը՝ անօգուտ:

266 (524). Եվ դուք, այս ամենը հասկանալով, ձեր մոլորությունը հետևելով, շտապում եք գործել ի վնաս ձեր օգուտի և հավիտենական տանջանքներ հյուսել ձեզ համար, անչեջ կրակի և անմահ որդերի մատնվել՝ ոչնչի համար: Եվ, թողնելով ձեր Արարչին, համր կուռքերի պատճառով բարկացնում եք ձեր Աստծուն: Ձեր հավաքած սերմերը փուչ են՝ ցորենի փոխարեն, որոմ են՝ հաճարի փոխարեն, և պարարտ հողի փոխարեն դուք ընտրեցիք անօգուտ, անպտուղ ապառաժը:

267 (525). Ահա, նայեք, դուք կանգնած եք (ինքներդ) ձեր առջև: Ձեզանից ո՞վ, առաջ գալով, կպատասխանի, թե լսել է ձեր կուռքերի ձայնը կամ էլ նրանցից փոքր-ինչ օգուտ է տեսել թեկուզ մի չնչին չափով զգալի: Միայն երազների և ցնորքների պատիր խաբեություն մեջ, որոնք չեն կարող իրական դառնալ: Միայն դրանով դուք արդեն կործանեցիք ձեր հոգիները և հեռացաք Արարչից:

268 (526). Եվ ահա, քանի որ դրանք այդքան անօգուտ են և (ըստ էության) ոչինչ են, և ոչ ոքի համար պիտանի, հատեք, կտրեք, դեն նետեք ձեր հոգիներից այդ չորացածը և քարացածը, ինչը ձեզ ոչ թե հիվանդություն, այլ առողջություն և ապաքինում, հոգիների բուժում կբերի: Դա

նման է (այն մարդու), որը փսխելով (կուտակված) դառը մաղձն ու խորխը, ինքը թեթևացնում է իրեն (բռնած) հիվանդուծթյունից և առողջանում: Դրա պես և դուք, եթե հրաժարվեք անօգուտից, կգտնեք օգուտը ձեզ համար, փրկվելով հավիտենական տանջանքների դատապարտվելուց: Որովհետև կռապաշտուծթյան սերմը տանում է ձեզ դեպի գեհենի անշեջ հուրը, որտեղից փրկվելու հնար չկա. այս պտուղն է նա տալիս:

269 (527. LXIV). Իսկ ամենայնի Արարիչ Աստծուն ընդունելու բարեպաշտ ճշմարտությունը պտուղ է տալիս հավիտենական, մշտնջենավոր ուրախությունների արքայուծթյուն, և այն տրվում է նրանց, ով ճանաչում է Նրան: Ձեր անօրենուծթյան այդ սերմը փոքրիշատե արգեն երևաց ձեզ՝ պատուհասների աճող որոմի ձևով, որպեսզի դուք ըմբռնեք, թե պետք է դրա հասկը վերացնել, որն արագ է աճում, և որը ձեզ է մատուցվելու, եթե դուք շուտով չմաքրեք ձեր ցորենը՝ անջատելով այն ձեր որոմից:

270 (528). Որովհետև կգա նորից վարելու և հնձելու մի այլ ժամանակ, վարելը՝ գերեզմանում, իսկ հնձելը այնուհետև՝ հարուծթյան ժամանակ ամեն մի կատարած գործի արդյունքը (գլուխների վրա դիզած): Մի եղեք չորացածների (ծառերի) պես, որոնց գտնում է անշեջ հուրը և ձեզ իր կերակուրն է դարձնում, այլ եղեք դալարող, ծաղկող, մրգավետ, բուրավետ պտուղներով (ծառեր), որպեսզի ընտիր պտուղներ մատուցեք ձեր Տիրոջը: Որպեսզի մյուս անգամ, գերեզմաններից ձեզ բարձրացնելու ժամանակ, դուք լինեք ցորեն, որպեսզի ձեզ օրհնելով ընդունեն արքայուծթյան շտեմարանները, որպեսզի դուք ձեզ տրված մեկ (հատիկից) տաք առատ բերք: Որովհետև, ինչպես հնձելիս, որոմը անջատում են ցորենից և գցում կրակի մեջ, դրա նման և (բուր) մարդիկ մեկ ակնթարթում, վայրկենապես (միանգամ)

մից) կբարձրանան գերեզմաններից: Նրանք Աստվածուծթյանը՝ Նրա պատվիրանների հետ միասին ընկալած իրենց հոգիներում, բարձրանալու են պարարտ, լեցուն ցորենի նման:

271 (529). Եվ ինչպես միակ հատիկը, հողի մեջ ընկնելով, աճելով, արմատ գցելով, ցողուն է տալիս, ճյուղավորվում, հասկ արձակելով, լցվելով, տալիս է պարարտ հասկեր, մեկ հատիկի փոխարեն սերմնացանի օգուտի համար տալով բազմաթիվ հատիկներ, նույնը մենք տեսնելու ենք և այնտեղ: Արդարների հոգիները գերեզմաններից բարձրանալու են՝ նույն մարմինները նույն հոգիներով բերելու են կատարված արդար գործերի վաստակը և այնտեղից, գերեզմաններից, գնալու են (երկնքի) արքայուծթյուն: Ամեն մի առանձին հոգի ամեն մի փոքր (արդար) գործի համար հազար ու բյուր, անթիվ փառահեղ հատուցումներ կստանա: Հարուծթյուն առնելուց իսկույնեթ նրանք փառքով են զգեստավորվելու, ինչպես այն հասկը, որն իր լիությունն է ցուցաբերում և խնամքով հավաքվում ու պահպանվում է շտեմարաններում:

272 (530). Նույն ձևով և փշերը, որ ներսից պատել են մեղավորների հասկերը, դուրս են գալու. հենց այդտեղ, կարծես մորից (ծնված), կերպարանք առնելով, ի հայտ են գալու անօրեն գործերի պտուղները: Դրա մասին (սաղմոսերգուն) այսպես է երգում հոգևոր երգարանում. «Հուր թափվեց, և նրանք արև չտեսան: Դեռ իրենց փշերը չզգացած՝ (Աստված) նրանց դժնիկի պես ողջ-ողջ պիտի այրի բարկությամբ» (Սաղմ., 57. 9-10):

273 (531). Եվ կամ էլ ի՞նչ է նշանակում այն խոսքը, թե «դեռ իրենց փշերը չզգացած»: Դա նշանակում է, որ նրանք անհոգ ունայնության մեջ էին մեղքեր գործում. երբ դեռ չէին գիտակցում իրենց հանցանքները, (դրանց հա-

մար) տանջանքները նախապես սահմանված էին: Ինչպես և այլ տեղում ասված է. «Իր օրվանից առաջ նրա վրա ցավեր են թափվելու՝ ջրերի պես» (Հոր, 27. 20): Ինչպես սկզբում փշերն աճեցին մեղավորների հանցավորության հետևանքով, նույնպես և (հետո) աճելով ու պատելով հանցավորներին, լուցկիներն պես բռնկվելով տեղնուտեղը այրելու են նրանց՝ հառնելու ժամանակ: Իսկ ձեզ, ահա, Նա նախապես զգուշացրեց, որպեսզի դուք փրկվեք այն ահավոր կրակի հեղեղից, որպեսզի ձեր մեջ ցանվեն մաքուր սերմեր, և ոչ թե վառելու արժանի փուշը:

274 (532. LXV). Եվ ահա, «Մարդկանց որդիներ, մինչև ե՞րբ պիտի խստասիրտ լինեք. ինչո՞ւ էք ունայնություն սիրում և ստույգություն փնտրում» (Սաղմ., 4. 3): Եկեք ճանաչե՛նք աստվածագործ այն հրաշալիքը, որ ձեզ մոտ երևաց¹. որպեսզի այսուհետ մեր երկրի բոլոր բնակիչներին ճշմարտությունը չթողնի և որպեսզի երկրի բոլոր ազգատոհմերը², որ չեն ճանաչել Նրան, ծառայեն Նրան մեկ լծի տակ:

275 (533). «Խզենք,– ասում է (սաղմոսերգուն),– նրանց կապանքները և թոթափենք մեզանից նրանց լուծը» (Սաղմ., 2. 3): Այժմ խզեցե՛ք հեթանոսության կապանքները ձեր հոգիներից և ազատվե՛ք հանցավոր մեղքերից, ուրախակից դառնալով նրանց, որ ծիծաղում են ամբարիշտների կորստյան վրա, ինչպես առաջիկա (դեպքերի) մասին ասում է «Իմաստության գիրքը», թե «սրանից հետո ես պիտի ծիծաղեմ ձեր կորստյան վրա» (Հմմտ. Իմաստ., 4. 18: Առակ., 1. 26), և թե «երկնքում բնակվողը կծիծաղի նրանց վրա, և Տերն ինքը արհամարհելու է նրանց: Այնժամ կխոսի նրանց հետ իր բարկության և իր զայրույթով կսարսափեցնի նրանց» (Սաղմ., 2. 4-5): Հենց սա կշտամբության և հանդիմանության ժամանակն է, որովհետև Աստծու Որդին իր ծնողից՝ Հորից է վերցրել բոլորին դա-

տելու իշխանությունը. Նա դատում է նրանց, ովքեր չեն պաշտում Հորը, և տանջում է նրանց, ովքեր (չեն պաշտում) Որդուն կամ Սուրբ Հոգուն:

276 (534). Սա է Որդու նախապես ասված խոսքը, որ դուք ճանաչեք Հորը. «Ես թագավոր կարգվեցի Նրանից իր սուրբ լեռան՝ Սիոնի վրա, որ հռչակեմ Տիրոջ հրամանները, հովվելու ձեզ խստություն երկաթյա գավազանով և կավի անոթի պես փշերով նրանց» (Սաղմ., 2. 6, 9), ովքեր իրենց անհնազանդություն երես են դարձնում փրկությունից, որովհետև մարդիկ իսկապես կավե անոթներ են: Եվ ահա, որոնք պիտանի են, նրանց նա լցնում է պատվական գանձերով, իսկ որոնք պիտանի չեն, նրանց լցնելու է տանջանքներով և կորստյամբ. որովհետև Տերը իր սուրբ ամպերից արթուն հսկում է, որպեսզի այցի գա մարդկանց բոլոր անօրենություններին: «Արդ, թագավորնե՛ր, ուշ դարձրեք սրան, խրատվեցեք ամենքդ, որ դատում էք երկիրը: Ծառայեցեք Տիրոջը երկյուղով և ցնծացեք Նրա առաջ դողալով: Ընդունեցեք Նրա խրատը, որ Տերը չբարկանա, և որ դուք չկորչեք արդարության ճանապարհից, որովհետև Նրա բարկությունը բորբոքված է ձեզ վրա» (Սաղմ., 2. 10-12):

277 (535). Իսկ ձեզ երանի կլինի, եթե դուք կարողանաք Աստծու առաջ հանդես գալ աղաչանքով և հույսներդ դնեք Նրա մեծ ողորմության վրա՝ փրկվելու համար: Նա ձեզ թողություն կտա և կների ձեր մեղքերը: Բայց եթե համառելով դիմադրեք, նա ձեր՝ համառող ամբարիշտների բերաններում ատամները կփշրի (Սաղմ., 57. 7) և հավիտենական տանջանքների մեջ կզցի: Եվ ոչ մի օգուտ այն զղջումից, որ այնտեղ ընկնելուց հետո նրանց մտքում կլինի: Եվ տե՛ս, թե ինչ է բացականչում մարգարեն. «Չկա դժոխքում որևէ մեկը, որ խոստովանեցնի քեզ, և չկա մեկը, որ այն

մահվան մեջ հիշի քեզ» (Սաղմ., 6. 6), որովհետև դրանից հետո ոչ ոք չի կարող անցնել հաստատված սահմանը:

278 (536). Իսկ ապաշխարողների համար ողորմություն գտնելու ժամանակը հիմա է, ինչպես ասում է մարգարեն. «Աստված արդար, հզոր և համբերատար դատավոր է, որն իր գայրույթը չի թափում հանապազ» (Սաղմ., 7. 12): Եվ էլ ուրիշ ի՞նչ է ասում. «Բայց եթե չդառնաք դեպի Նա, սուրն իր սրած է և աղեղն իր՝ լարած: Եվ նա պատրաստել է մահվան գործիքները, և հրեղեն նետերը նրանց համար, ովքեր անօրենություն են երկնում, և նրանց հղությունը,— ասում է,— ծնում է տանջանք» (Սաղմ., 7. 13-15): Իսկ նրանց մասին, ովքեր լսելով կհավատան Նրա հրաչքներին և կգառնան դեպի Աստված Արարիչը և կպաշտեն Նրան, այսպես է ասում. «Քաջալերվիր, երկիր՝, ցնծա՛ և ուրախացի՛ր, որովհետև Տերը մեծ գործեր կատարեց քեզ հետ» (Հովել, 2. 21): Եվ այն մարդկանց, որ չեն ճանաչում իրենց Արարչին, նրանց իբրև անասունների են համարում. այդ պատճառով էլ նրանց հետ խոսում է ինչպես վայրի կենդանիների. «Մի վախեցիր,— ասում է,— վայրի կենդանի, որովհետև քեզ համար դալարեցին որպես կերակուր դաշտերն ու առապարները» (Հովել, 2. 22): Որովհետև մարդկանց սրտերը անպատեններից էլ անպտուղ էին և տափաստաններից էլ անջրդի:

279 (537). Եվ ահա, Նա ենթարկվողներին կոչում է (խաղողի) որթ և պտղաբեր քաղցր թղենի, աստվածապաշտությունը վերաբերող խոսքին համապատասխան, ինչպես և ասում է (մարգարեն). «Որքան քա՛ղցր են քո խոսքերն իմ քիմքին՝ ավելի քաղցր, քան մեղրն իմ բերանին» (Սաղմ., 118. 103): Եվ դարձյալ՝ «Քաղցր ես Դու, Տե՛ր, և Քո քաղցրությունը սովորեցրու ինձ Քո արդարությունը» (Սաղմ., 118. 68): Եվ դարձյալ, աստվածապաշտներին դիմելով, բա-

ցականչում է (մյուս) մարգարեն. «Կլցվեն ցորենի կալերը, և կհորդեն գինու և յուղի հնձանները: Եվ կհատուցեմ ձեզ այն տարիների դիմաց, ինչ որ մորելսը, ջորյակը, ժանգը և թրթուրը կերան իմ մեծ գործը, որ ուղարկեցի ձեզ վրա: Առատորեն կուտեք, կհագենաք և կօրհնեք ձեր Տեր Աստծու անունը» (Հովել, 2. 24-26): Իսկ անօրենների վերաբերյալ այսպես է ասում. «Գործի դրեք մանգաղները, որովհետև հասել է հունձը, և մտեք, կոխոտեցեք հնձանները, որովհետև լցվել են հնձանները, և նրանց փոսերը հորդում են, քանի որ շատացան նրանց չար գործերը: Այդ պատճառով ձայներ հնչեցին Դատաստանի ձորում» (Հովել, 3. 13-14):

280 (538. LXVI). Աբրահամի ժամանակներում Սոդոմն ըմպեց անիրավության գինին: Եվ ահա, Տերը բարձր գահից որոնեց և զննեց (որ գտնի) հարյուրից մինչև տասը (արդարների), և նրանց մեջ չգտնվեց արդարություն (գոնե) տասը բաժակ (ունեցող): Որովհետև նրանց խաղողը դառը խաղող էր, և նրա ողկույզները լեղիի դառնություն ունեին. վիշապների բարկությունն էր նրանց գինին, բաժակներն են՝ ահավոր իժերի չարաթույն ցասումը, որից չկա բժշկություն (Բ Օր., 32. 32-33):

281 (539). Այդ պատճառով Նա խմեցրեց նրանց իրենց հրե բաժակի այրման գինին, և նրանք վառվեցին՝ իրենց բաժակներով: Նրանց շտեմարանները լի էին անիրավությունը, դրա համար էլ Նա հնչեցրեց նրանց կործանման մասին (վճիռը): Նրանց հանդերի որոմը հասել էր, այդ պատճառով էլ Նրա մանգաղը գործի անցավ, հնձեց և այրեց նրանց իր (բորբոքած) հրդեհում: «Նրանց պատեց ուռկանը, որից էլ, նույն ուռկանից էլ նրանք զոհվեցին, և ծխի պես վառվեցին նույն ցանցի մեջ, որովհետև նրա բաժինը դարձան» (Հմմտ. Ամբ., 1. 15-16): «Նրանց կերավ թրթուրը, նրանց կտրտեց ջորյակը, և նրանց մեղքերի մա-

րախը արածեց նրանց վրա» (Հմմտ. Հովել, 1. 4): Այդ պատճառով էլ նրանք իսկույն չորացան: Եվ նրանց շինությունների վրա կրակն արածեց, նրանց վրա հուր թափվեց, և նրանց վրայով հորդառատ հոսեցին կրակի վտակները: Եվ խռիվը կուտակելով գցեց նրանց մեջ. կրակի գետեր առաջացան նրանց մեջ, և ողողելով այրեցին նրանց երկիրը: Լցվեցին հրով նրանց շտեմարանները, և նրանով լցվեցին նրանց հնձանները: Իրենց գործած մեղքերի մրուրով լցվեցին բաժակները, որ խմեցին և վառվեցին ամբողջովին: Որովհետև Ղովտի բաժակը, որ գտնվում էր նրանց մեջ, այդ բաժակից նրանք ուրախություն չխմեցին: Նրանց համար այն եղավ ուրիշ բաժակ և խմեցրեց տրտմություն:

282 (540). Կյանքի բաժակը, որից չցանկացան կյանք ըմպել, նրանց խմեցրեց մահվան դառնություն: Քաղցրության բաժակից, որը քաղցր չեղավ նրանց բերանում, դառնություն բխեց: Դա այն բաժակն էր, որի կրակը չէր այրում դալարը և պահպանում էր կանաչը, և բռնկվում էր (արմատի վրա) չորացած բույսերի մեջ և այրում չորացածներին: Խմեց այս բաժակը Սկարիովտացի Հուդան և այրվեց, որովհետև չորացած էր նրա ծառը: Այս բաժակը խմեցին առաքյալները և դալարեցին, և համեղ պտուղներով լցրին ամբողջ երկիրը: Նրանց ծաղիկների բուրմունքը սփռվեց տիեզերքով մեկ: Նրանց սրբությունը և նրանց համեղ զինին հարգված են՝ ուրախություն պատճառելով վերևի և ներքևի բնակիչներին, հրեշտակներին և մարդկանց: Եվ տաճարի Տերը ուրախանում է նրանցով, ինչպես այս բաժակներով, որ ահա հասան ձեզ՝ Հագեցնելու համար: Դա Աբրահամյան տոհմի Ղովտի բաժակը չէ, որը գտնվեց Սողոմոն, որից նրանք ուրախություն չստացան, և դրա նման մեկ ուրիշը չգտնվեց նրանց մեջ:

283 (541. LXVII). Ահա երեսունյոթ քրիստոսական գա-

վաթներ, որ եկան ձեզ ծառայելու¹: Հուր է նրա (նրանց) գորությունը, և քաղցր է նրա համը, ուրախություն է այն ճանաչողների համար և տրտմություն է (նրանց համար) ով թաքնվում է նրանից: Որովհետև եթե ըմպեք արժանավայել կերպով, այն կայրի ձեր աղտոտությունը, և ձեր հոգիները կմաքրվեն: Այրվեցին Ահարոնի որդիների մարմինները, բայց նրանց քահանայական պատմուճանները հուրը չայրեց: Այս գավաթին հատուկ է այրել արատավորներին և պահպանել մաքրվածներին: Եվ ահա, եթե ցանկանաք սիրով ըմպել երանության գավաթը, որ ձեր կամքին հակառակ բխեց ձեր մեջ, այն կայրի ձեր մեղքերը, կմաքրի և կընտրի ձեր հոգիները՝ արժանացնելով ուրախության:

284 (542). Իսկ եթե ձեր մտքով անցնի այն, թե «մենք սպանեցինք սուրբ վկաներին», ապա նույն բանը կատարվեց և Պողոսի հետ, որն իր հրեություն ժամանակ չէր իմանում, որ ընտիր անոթ է լինելու, երբ եկավ առաքյալների քարոզության ժամանակ և նրանց հալածելիս սպանեց Ստեփանոսին¹, որը ականատես եղավ Աստվածության խոնարհանալուն և նույն ժամանակ՝ նրա բարձրանալուն: Ահա և դուք, որ չգիտեիք (թե ինչ էք անում), խմեք այդ՝ ձեր ձեռքերով մզած գավաթը, որովհետև ինչպես նրանք վկա դարձան և մեռան, նույն մահվան շնորհիվ նրանք կենդանացան և հասան երկնային ժառանգությանը:

285 (543). Եվ Ստեփանոսը իր մահվան ժամանակ երկինքը բացված տեսավ և Որդուն՝ Իր Ծնողի աջ կողմից (նստած), և թողություն խնդրեց իրեն սպանողների համար, իր բարեխոսության աղոթքներով արձակեց նրանց ամբարշտության կապանքները, դադարեցրեց իր արյան համար (վրեժխնդրության) կոչերը, լուեցրեց իրեն տանջելու համար բողոքները և Տիրոջից խնդրեց ներել նրանց: Դրա համար էր, որ Պողոսը բարձրացրեց նրա դաժան լու-

ծը, որ քաշուժ էր ամուլի եզան պես, և իր վրա վերցրեց նրա տանջանքները, և խմեց նույն բաժակը նրա մահվան: Նա դարձավ վկա նրա գործերի՝ նրա հետ միասին, և հավասարը՝ իր Տիրոջ առաջ, տեսավ նույն տեսիլքը և լսեց նույն չարտասանած խոսքերը, որ տեսավ և լսեց Ստեփանոսը:

286 (544). Այժմ դուք, որ այս սպանվածների սպանողներն եք, ընդունեցեք սրանց հավատը և քաջեք նրանց լուծը, թոթափեք ձեզնից մեղքերի լուծը, ճշմարտության քարոզի վկաներ եղեք: Խմեք հոգևոր ըմպելիքի նույն գավաթը և դարձեք նրանց գործակիցները: Եվ մարդկանց հանդեպ սիրո վտակները իջնելու են ձեր սրտերի հանդերի վրա՝ պարարտացնելու ձեր մտածողության հողը քարոզությամբ, որը ձեր՝ Նրա հանդեպ ունեցած զորավոր հավատի շնորհիվ դառնալու է ձեր սեփականը, և դուք կխմեք մարդասիրության (անհավատներից) անջատող, մաքրող կրակի գավաթը: Ինչպես հրեության քահանայության ժամանակներում, քահանաները, գերության մեջ վերցնելով զոհաբերության կենդանի կրակը, այն տարան և գցեցին ջրհորը, և կրակը ջուր դառավ, իսկ յոթանասուն տարի հետո՝ իրենց վերադարձին գնացին և վերցրին ջուրը և բերեցին ու լցրեցին ողջակեզների շուրջը: Եվ երբ կառուցվեց տաճարը, ջուրը ստացավ կրակի բնություն: Որովհետև եթե պետք է, Նա կարող է փոփոխել (նյութի) տեսակները և ըստ համահամայնների բացահայտել նրա տարբեր հատկությունները, մանավանդ այս հրաշագան կրակը, որը հանդես է գալիս որպես Սուրբ Հոգու մասնիկներ:

287 (545). Ինչպես դալար մորենու կանաչ ոստերի մեջ երևացած կրակը, որը պահպանեց նրան անթարչամ, որովհետև լույս տվող կրակը պահպանեց մորենուն և փրկեց Մովսեսին և նրա համար դարձավ ուրախության գավաթ: Մովսեսը խմեց այն և հույսը դրեց Նրա վրա: Այն փրկեց

Իսրայելի անասուններին և կարկուտով փչացրեց եգիպտացիների բերքը: Եվ ծովի մեջ Նա Իսրայելին խմեցրեց այդ գավաթը, և նրանք Հոգի խմեցին և երգում էին ծովի մեջ (Ելք, 15. 1-19), նրանց քնարով մատուցված էր Մարիամը (Ելք, 15. 20-21), և նրանք անցան ընդարձակ ծովը և օրհնեցին (Աստծուն): Եգիպտացիները ևս խմեցին այդ գավաթից, և հարբեցին (ամպի) սյան գավաթից, որը կապեց նրանց մարտակառքերի անիվները (Ելք, 14. 25): Նրա մրուրը գլորեց նրանց (գետին) և հարվածեց նրանց (սյան) հետևից: Ժողովուրդը խմեց տրտունջի գավաթը, որը խառնել էր (Նրա) բարկությունը: Նա տվեց նրանց խմելու փորձության բաժակը, որը նրանք պարտավոր էին (խմել):

288 (546. LXVIII). Սուրբ սյունը, որը օգային ամպով ցերեկը հովանոցի պես պաշտպանեց նրանց խորշակի տապից, և առաջին գիշերվա ժամերին լուսավորելով տաքացնում էր սառնամանիքի ցրտից, նույն սյունը, ըստ ժամանակի փոփոխվելով, բավարարում էր նրանց կարիքները: Երբեմն ժայռից ջուր էր բխեցնում, քաղցր ջրի վտակներով նրանց ծարավը հագեցնում: Որովհետև դա Ինքը՝ Քրիստոսն էր, Որն ունի ամեն ինչ լիությամբ բոլորի համար և, հագեցնելով, բարերարություն էր անում նրանց, որ երբեմն քաղցր հացով և երբեմն թռչուններով (կերակրում էր), երբեմն էլ քաղցր աղբյուրներ էր բխեցնում նրանց համար, և Սուրբ Հոգու բաժակը ուրախություն էր բերում նրանց:

289 (547). Իսկ նրանց անհնազանդության և ամբարտավանության համար Նա բարկության բաժակը խառնեց և տվեց նրանց (խմելու): Որովհետև այս բաժակը, լինի դա հրով թե ջրով, կարող է իր ազդեցությունը փոխել ուզած ձևով, երբեմն ձյուն դառնալ, երբեմն սառույց, երբեմն անձրև, երբեմն հուր և կայծակ, և երբեմն բույսերը սնող ցող կերակրելու համար գազաններին և թռչուններին, վայ-

րի կենդանիներին և անասուններին, սնունդ պատրաստել մարդկանց համար և բավարարել (բոլոր) արարածների կարիքները: Նույն (բաժակը) հոգևոր ցողով կարող է, ըստ Բարձրյալի ցանկության, հաճելի սերմեր աճեցնել և պատրաստել անապականության կերակուր՝ բանավոր հոտի համար:

290 (548). Երբեմն այն դառնում է քաղցր, օգտավետ անձրև, հողը պարարտացնող և բուսեցնող, փայլատակուններով ջերմություն բերող, որպեսզի բույսերը ջրելով հագեցնի, ուրախացնի ճյուղերը ցողով և զվարթություն, ուրախություն բերի փթիթներին: Այն կրկնակի գոհունակության է արժանի՝ Շնորհողի պարգևների համար, երբ խմեցնում է այս բաժակը՝ օգուտը բազմապատկելու նպատակով: Որովհետև ամպերը ևս՝ Նրա հրամանների սպասավորները, հանդես են գալիս որպես մատուցակներ: Եվ թեպետ անձրևով լի և պատրաստ՝ նրանք լցնում և ծածկում են երկնքի երեսը, բայց երբ սկսում են տեղալ և անձրևել (ջուր) տալով ու մատուցակելով երկրին, այդ Նա է, երբ ցանկանում է, օգտավետ անձրևներ է հրամայում, իսկ երբ ոչ՝ (ուղարկում է) սաստիկ սառնամանիք, եղյամ, ձյուն և ավերիչ կարկուտ, այրող ճառագայթներով չորացնում և քայքայիչ տապով վնասում է, օդի չարաթույն և դառնաչունչ հորձանքներով խորշակահար անելով՝ չորացնում է բույսերի դալարող սաղարթները և վառում մինչև արմատները:

291 (549. LXIX). Ամպերի միջոցով Նա ի կատար է ածում իր հրամանները, որովհետև բնական է, որ սկզբից ամպերով երևան գա որպես հրամաններ տվող և մարդկանց (օգուտի համար) մատուցակություն անող ծառայող՝ մերթ բարկացած, մերթ ողորմած: Որովհետև երբ Աստված ցանկացավ երևալ մարդկանց, Նա իր զորությունն իր մեջ

հավաքեց, թաքնվեց, ամպի հետև պահվեց, որովհետև մարդիկ չէին կարող դիմանալ Աստվածության երևման տեսարանին, և Նա երկինքը փակեց շղարշով, ինքը իրեն ծածկեց (ամպերի) վարագույրով, որպեսզի (ի սկզբանե) դիմանալու ուժից զուրկ արարածները չայրվեն:

292 (550). Թեպետ երբեմն կարճ ժամանակով Նա երևում էր առանձին արժանավոր մարդկանց, բայց այդ Նա անում էր նրանց տեսողության՝ Նրան նայելու հնարավորության, դիմանալու համապատասխան, որպեսզի նրանք կարողանան տանել (տեսարանը), ինչպես Նա երևաց Մովսեսին և կամ ամբողջ ժողովրդին Սինեական լեռան վրա, երբ իջավ, ամպով պատած, և այնտեղից խոսեց նրանց հետ: Եվ բոլոր դարերում Նա երևան էր գալիս նույնպիսի ամպով, իսկ հոգեկից մարգարե սուրբ Եզեկիելին Նա երևաց հուշակավոր տեսիլքի ձևով. սակայն մարդկանցից ոչ ոք առանց ամպի երբեք Նրան չի տեսել: Ինչպես և հոգեկիր մարգարեն իր տեսիլքում պատմում էր և ասում. «Տեսա, որ հյուսիսից մի հողմ՝ բարձրացած գալիս էր, և մի մեծ ամպ՝ նրա հետ, շուրջը՝ ուժեղ լույս. նրանից հուր և կայծակներ էին փայլատակում, և նրա մեջ՝ արևի տեսիլք և հրո ճառագայթներ» (Եզեկ., 1. 4):

293 (551). (Աստված երևաց) որպես լույս և հուր, և ոչ առանց ամպի, որովհետև լույսը արժանավորներին լուսավորելու համար է, և հուրը՝ անարժաններին բարկությամբ այրելու: Իսկ ամպը նրանց երկուսի համար է և ծառայում է երկուսին էլ: Որովհետև (ամպից ելնող) հուրը այրում է մեղավորներին, և լույսը խմեցնում է արդարներին Հոգու որդեգրության շնորհները, իսկ չար մարդկանց խմեցնում է կայծակներ և տանջալից պատիճների հեղձուցիչ, ծխախառն բույրը: Ամպերը նաև Նրա մեծությանը սպասավորողներն են, ինչպես և պատմում է այն տեսնող (մարգա-

րեն), թե «ամպերը Նրա ոտքերի փոշին են» (Նավում, 1. 3):

294 (552). Եվ հորդացող ամբարշտուկթյունների շատացման պատճառով (նույն մարգարեն) ասում է. «Նա սաստում է ծովը և ցամաքեցնում այն, և բոլոր գետերը ավերում» (Նավում, 1. 4): Որովհետև Նա կարող է ցամաքեցնել մեղքերի ծովը, կասեցնել անօրենսության գետերը և պարզեցնել նեխած, փչացած, պղտոր և լճացած (բարքերը): Իսկ նրանց, ովքեր ապավինում են Նրան և իրենց հույսը կապում են Նրա հետ, Նա կտա ծովի պես անսպառ փրկություն, և նրանց (կյանքը) առանց մեղքերի հորդառատ գետի պես կհոսի: Դրա մասին մյուս մարգարեն նույն իմաստով ասում է իր երգում¹, թե «Դու գետեր ցամաքեցրիր և դողացրիր երկիրը քո անձրևի սաստկությունը, որ անցնում են նրա վրայով» (Հմմտ. Սաղմ., 73. 15: 106, 33): Որովհետև Նա վերևից սաստող ջրեր կհոսեցնի այն ջրերի վրա, վանելով և դուրս մղելով դառը ջրերը, որպեսզի այն մաքուր ջուրը դուրս մղի կեղտոտն ու հոտածը:

295 (553). Այդ մյուս պայծառատեսը նույն բանը երգեց և նույն ոգով մեկնեց՝ ասելով. «Յանկալի անձրև պատրաստեցիր, Աստված, քո ժառանգության համար, որը թեև տկարացավ, բայց դու ոտքի կանգնեցրիր նրան» (Սաղմ., 67. 10): Որովհետև նրանք, մեղքերի ծովի մեջ ընկղմված, նույն ախտով էին հիվանդ և կապված ամբարշտուկթյան շղթաներով: Դրա համար էլ, քամելով նրանց անամոթության անհատակ ծովը և չորացնելով դրա ակնաղբյուրը, Նա մարդկանց վրա է թափելու պատիժների անձրևը: Ինչպես և մարգարեն, այդ նկատի ունենալով, երգեց. «Անդունդները քեզ կանչեցին քո հորձանքների ձայնով» (Սաղմ., 41. 8): Որովհետև երկնային պատգամները հոգևոր հորձանքների նման կուտակված թափելու են արատավոր և այլասերված մարդկանց վրա՝ ոչնչացնելով նրանց:

296 (554). Եվ ապաքինող ցողը եղավ առողջարար, ինչպես և ասված է, թե՝ «այն ցողը, որ Քեզանից է ցողում, բժշկություն է նրանց համար» (Եսայի, 26. 19), որպեսզի նրանք երկյուղով չըջվեն դեպի Նա: Որովհետև նրանք, ովքեր սիրով չըջվեցին դեպի Նա, սպառնալիքների ահով Նա նրանց դարձրեց Իր ժառանգությունը, ինչպես և ձեզ: Որովհետև Նա մեղքերի հեղեղը կհեռացնի ձեզնից և հետո կտա ձեզ Իր շնորհների առատությունը:

297 (555). Որպեսզի ձեզնից բխելով «գետերի պես հորդանան արդարությունները, և ճմարտությունը շատանա հեղեղի ջրերի պես» (Ամոս, 5. 24): Եվ ապա ձեր կյանքի մասին Իր իմացությունը Նա ողորմածության ամպերից ձեզ վրա է հոսեցնելու, ինչպես և ասված է, թե «ցանկալի անձրև պատրաստեցիր, Աստված, Քո ժառանգության համար, որը թեև տկարացավ, բայց Դու ոտքի կանգնեցրիր նրան» (Սաղմ., 67. 10), և «արժանիներին պիտի խմեցնես Քո գրգանքի գետերից» (Սաղմ., 35. 9), համաձայն երգչի հոգևոր խոսքի, որն ասում է. «Քեզնից է, Տեր, կյանքի աղբյուրը, և Քո լույսով ենք լույսը տեսնում» (Սաղմ., 35. 10), և թե «ողորմությունը շնորհիր Քեզ ճանաչողներին» (Սաղմ., 35. 11): Եվ Իրեն ճանաչողների համար Նա ծագում է և իմաստության աղբյուրը նույն լույսի աղբյուրից է բխեցնում նրանց վրա, իսկ չճանաչողների վրա՝ այրող, ողողող, հրդեհող և տոչորող վտակներ:

298 (556). Եվ որովհետև երկրի վրա կրակի պես բոցավառվել էին մեղքերը՝ լույս սփռելու համար, որպեսզի չթաքնվեն ի վերուստ հասանելիք վրեժխնդրությունից, ինչի մասին կանխատեսող մարգարեությունը նախապես ազդարարեց ի հաստատումն իր ասածների, թե «տեսա մարդկանց մեջ մեղքերը ծովի պես (տարածված), բազմացած, հեղեղ դարձած» (Հմմտ. Ծննդ., 6. 5, 11): Ինչպես մի անգամ

Նոյյան դարաշրջանի օրերի կապակցությամբ, երբ երկրի վրա մեղքերը տարածվել էին ծովի նման, մեկնաբանվեց առակը, որ դրա օրինակով էլ ծովացան նաև ջրերը, որպեսզի սաստկանալով կործանեն մարդկանց:

299 (557. LXX). Եվ ահա, սուրբ մարգարեները հաճախ են մեջբերում առակներ՝ եղած դեպքերի մասին, որ թերևս անցած դեպքերի օրինակներով կարողանան վախեցնել և փրկել նրանց յուրաքանչյուր գործած ամբարշտությունից: Դրա համար նրանք հաճախ օրինակներ էին բերում՝ մեկ սողոմացիների հրկիզումը, մեկ ջրհեղեղի ժամանակ խեղդված մարդկանց օրինակը, մեկ Եգիպտոսին հասած հարվածները և ուրիշ շատ օրինակներ: Եվ այդ անօրենությունները նա անվանում է ծովի նման (սփռված), և խոստանում է վերացնել այն երկրի վրայից և խոստանում արդարությունը նորից հաստատել երկրի վրա, նրանով լցնել այն՝ ջրհեղեղից էլ ավելի հորդ, և ծաղկեցնել օրենքը:

300 (558). Դրա համար, մարդկանց ծովային միջանցքից անցնելու մասին խոսելիս, նա բացականչում և ասում է. «Նրանք պիտի անցնեն մեծ ծովը, և ծովի ալիքները պիտի զարկեն (նրանց)», այսինքն՝ ամբարշտությունները, և թե «պիտի ցամաքեն գետերի պտույտները» (Ձաք., 10. 11), այսինքն՝ մեղքերի շատացումը: Դրա վերաբերյալ մյուս մարգարեն ասում է. «Մի՞թե գետերի վրա ես բարկանում, Տեր, կամ Քո բարկությունը ծովերի՞ վրա է ընկնում, և կամ Քո բարկությունը գետերի՞ վրա է» (Ամբ., 3. 8):

301 (559). Որովհետև Նա հորդ անձրևներ է բերելու և մաքուր ջրեր, կյանքի հոսանքներ, կհեռացվեն ամբարշտության ջրերը, և կծածկվեն երկրի վրա եղած մարդկային չարություն, տգիտության և ամբարշտության դառնությունը: Ինչպես ասում է մարգարեն. «Երկիրը լցվելու է Տիրոջ գիտություն, նման առատ ջրերի, որպեսզի ծածկեն

ծովերը» (Եսայի, 11. 9: Ամբ., 2. 14): Նա նկատի ունի կորստաբեր ջրերը, կործանող և խեղդող ջրերը, որոնք ծածկելու են այն ջրերը, որ հագեցրել էին երկիրը պղտոր հրապույրներով, մանավանդ որ այդ հրապույրների պատճառով աշխարհում հորդելով մոլեգնում էին կռապաշտություն մեջ սուղվածները: Որովհետև Նա դուրս է բերելու հողմընկալ՝ ամպը, որ երևաց Եգեկիել մարգարեին, որպեսզի նույն ամպը մարդկանց վրա թափի գիտություն շնորհը, և նույն ամպը նրանց հնարավորություն տա դալարելու և չորությունը վերածի (կենդանի) բույսի:

302 (560). Իսկ այն չորացածների վրա, որոնք չեն ցանկանա հնազանդվել, Նա կսփռի փայլատակող հրեղեն անձրև՝ կիզելու, այրելու և վերջը տալու համար, և դառնություն թափելու կտա նրանց խմելու: Ինչպես կանխատեսող (մարգարեն) երգում է տասներորդ սաղմոսում. «Մեղավորների վրա որոգայթ, հուր և ծծումբ կտեղա. այս մրրիկն է (դառնություն) բաժակի նրանց բաժինը» (Սաղմ., 10. 7):

303 (561). «Որովհետև արդար է Տերը և արդարություն է սիրում» (Սաղմ., 10. 8) և, ըստ արդարության, կամենում է ձեզ Իր մոտ կոչել որդեգրության, քանի որ հոգի ընկալած ամպը¹, որն (իր մեջ) կրում է աստվածային ճշմարտությունը, սովոր է մարդկանց հոգիների մեջ թափել (Աստծուն) ճանաչելու ուսմունքը, և տնկել մարդկանց սրտերում երկյուղ՝ պաշտվող Աստծու հանդեպ, և Քրիստոս Արարչի սերը լցնել Նրա արարածների վրա, և Նրա կամքով բարձրացնել (նրանց) Իր Աստվածության բարձրության վրա, ինչը դուք պետք է ընդունեք:

304 (562. LXXI). Որովհետև եթե ամպերը, որ սպասավորներ են, Տիրոջից հրաման ստանալով, բարձունքներից իջնում են ծովերի անդնդական խորքերը և եթերի մոտ լցվելով, ուռչելով առատորեն ներառնում են ջրերը, տանե-

լով, բարձրացնելով, տարածվելով և ծածկելով երկնքի երեսը որոտալից ամպերով, և առատորեն թափելով ցողը (երկրի վրա) կատարում են Արարչի հրամանները, մատուցելով դառնալով ներքևում ապրողների համար, ապա ինչքան ավելի (սիրելի) պիտի լինեն այս վկաները¹, որոնք ի սեր Աստվածության համբարձվեցին (երկինք), որոնց վրա խոնարհվեց Աստված. նրանք առատորեն ստացան Հոգու շնորհները և ավելի շատ լցվեցին (աստվածային) պարգևներով, իրենց մարմինները տվեցին Տիրոջ համար որպես դանձ², որպեսզի հաջորդ անգամ այն նորից ստանան՝ հնացածը նորացած: Եվ լցվելով աստվածային պատգամներով՝ նրանք մեծ ջանասիրությամբ և ճգնությունով քարոզեցին, և ձեռք վրա հորդաց երկնային բարիքների անձրևը, և փայլատակեցին ձեռք վրա լույսն ու կրակը միասին, և ավելի շատ, քան աստվածընկալ ամպը, թափվեցին ձեռք վրա բարիքները: Անձրևալից ամպի որոտի փոխարեն Աստված որոտաց ձեռք վրա ավելի ահավոր ձևով և կամեցավ, որ դուք ապրեք և փրկվեք:

305 (563). Եվ նրանք, որ ատեցին այս աշխարհը և երկրային ամեն ինչ, և սիրեցին երկնայինն ու Արարիչ թագավորի պատվիրանները, բարձրացան Նրա մոտ՝ լուսեղեն հարկերի վրա, որն ընդունեց նրանց և նրանց հոգիները: Եվ նրանք իսկույն անցան երկնային քաղաքը և երկնային բնակիչներին ուրախակից դարձան: Եվ (նոր) կյանք ստանալով՝ տկարության փոխարեն ձեռք բերեցին զորություն, անցավորի փոխարեն՝ անանցություն, մահվան փոխարեն անմահություն, որովհետև հաղթեցին մարմնական ցանկությունները և հաղորդ եղան աստվածային փառքին: Նրանք նորացան անպատմելի փառքի մեջ և ազատվեցին քայքայումից: Նրանց մասունքները դարձան Աստվածության Հոգու տաճարներ, որովհետև նրանք իրենց Տիրոջ հետ

ողջ են մնում, և նրանց սուրբ, գուրգուրված հոգիները կենդանի են պահպանվում:

306 (564). Իսկ ձեզ մոտ նրանց մարմինները և ոսկորները Աստծու տաճարներ են, որովհետև դուք ոչ մի այլ միջոց չունեք Աստծուն ձեզ հետ հաշտեցնելու և մերձենալու Աստծուն, եթե ոչ նրանց աղոթքների բարեխոսությամբ և նրանց հավատքն ընդունելով, որի շնորհիվ նրանք ապրեցին և արժանի եղան կենդանի ծովը մտնելու և այնտեղից Աստծու պատգամների քարոզության վտակները ձեզ հոսեցնելու, Արարչի սիրո բաժակը ձեզ մատուցելու, եթե (միայն) դուք կարողանաք այն ընդունել: Որովհետև Նա ոչ ոքի չի թողնի իր սեփական կամքով վարվելու¹, այլ ուզեք թե չուզեք, անելու եք այն, ինչ Աստված է կամենում:

307 (565. LXXII). Որովհետև երբ Աստված մարդկային ցեղը տեսավ մեղքերի հիվանդությամբ տկարացած և այլանդակված, Նա եկավ իբրև բժիշկ՝ նրանց բուժելու, որ չմեռնեն մեղքերի հիվանդությունից, ինչի մասին էլ վկայում է մարգարեն՝ ասելով. «Թեև հիվանդացավ, բայց Դու ոտքի կանգնեցրիր նրան» (Սաղմ., 67. 10): Եվ ահա, նույն գլխացողն ու մարդասերը, էությունով հավիտենականը, Ստեղծիչն ու ամեն ինչի Արարիչը՝ Ինքն էլ իր արարածների բժիշկն է, որն իր լույսը տալիս է վախ ունեցողներին, ինչպես ասում է մարգարեությունը. «Ձեզ՝ Իմ անունից երկյուղ կրողներին համար արդարություն արեգակը պիտի ծագի, և բժշկություն (պիտի լինի) նրա շողերի մեջ» (Մատթ., 4. 2):

308 (566). Ո՞վ է արդարություն արեգակը, եթե ոչ Նա, որ խոնարհվեց և իր ճառագայթները տարածեց բոլոր հիվանդների և մեղքերով ախտահարվածների վրա: Դա նույնն է, որ ծագեց Հորից: Որովհետև միայն Նա է, որ կարող է լուսավորել մարդկանց խավարած ոգիները և ուրա-

խոսեցին տալ ընկած հոգիներին, որ նստած են խավարի մեջ: Եվ նույն Ինքն է, որ թույլ չտվեց, որ դուք կործանվեք, որի ճառագայթներով ապրում են իր ստեղծած բոլոր արարածները: Երկնքի զարդերը, այսինքն՝ լուսատուները ևս, Նրա ճառագայթներին նայելով, լուսավորում են երկիրը՝ ջահի պես իրենց լույսը տալով արարածներին: Եվ Նրա լույսով են լեցուն երկինքն ու երկիրը: Եվ Նրա հոգին, որն իր էություն լույսի ճառագայթներն են, իր սեփական գթառատ կամքով խոնարհվեց և եկավ լուսավորելու արարածներին, որովհետև նրանք խավարի մեջ էին, իսկ Նա եկավ իր լույսը (արարածներին) տալու համար:

309 (567). Իսկ եթե նրանք չցանկանան բացել իրենց սրտերը Նրա Աստվածություն ճառագայթների առաջ, Նա իսպառ կայրի (նրանց), համաձայն ասվածի, թե «Իմ բարկությունից հուր բորբոքվեց. այն կայրի և կիջնի մինչև դժոխքի խորքերը, կլափի հողը և նրանց երկրի բոլոր բույսերը. նրանք կվառվեն հրով, կբորբոքվեն հիմքերը նրանց լեռների» (Բ Օր., 32. 22): Ինչո՞ւ, ինչի՞ համար կամ ինչպե՞ս Նա պիտի այրի՝ հիմքերին մոտենալով: Դա այդպես է, քանի որ նրանց մեղքերը արմատավորվել և ուժ էին ստացել երկրի վրա, այդ պատճառով Նա հիմքերից և արմատներից այրելու է չարը և ամբողջովին երկրից արմատախիլ է անելու մոլորությունը, ջնջելու և ոչնչացնելու է կռապաշտություն հիմարությունը, ինչպես դա ցույց տրվեց ձեզ, երբ սկսվեցին ձեր տանջանքները¹:

310 (568). Որովհետև երբ Նա, ծովի նմանեցնելով, խոսում է մեղքերը քամելու և մաքրվելու մասին, Նա այնտեղ խեղդում է դաժաններին, որոնք նման էին փարավոնի սանձարձակ, անգուլթ զորքին՝ իրենց անհնազանդ, խստասիրտ, հակառակասեր բարքերով, այն զորքին, որը խմբված գնդերով, բազմաթիվ մարտակառքերով, նիզակներով զինված

հեծյալներով և անթիվ սպառազեն ձիերով կործանվեց (ծովի) ջրերի մեջ: Որովհետև (դրա նմանությունը) ինչպես ժամանակին արված չափավոր ոռոգումները շատ օգտակար է բոլոր սերմաբույսերի համար, իսկ հորդն ու անչափը փտեցնում, փչացնում և կորստյան է մատնում, իսկ եթե (ջուրը) չափազանց շատանա, ողողելով անհետ կսրբի-կտանի, նույն ձևով էլ լույսը հաճելի է մեր աչքերին, բայց երբ չափից ավելի է բորբոքվում, (նայողը) զոհվում է, ինչպես (ժամանակին) եբրայեցիների ամբոխը¹, որն, ընդդիմանալով Մովսեսին, այրվեց Աստծու բարկությունից (Թվեր, 16. 34-35):

311 (569). Իսկ այս ցամաք երկիրը մեր բնակության տեղն է, և մեր կյանքի համար բոլոր օգտակար բաները և ապրուստը նրանից է և նրա վրա է, և մեր խնամքի համար սնունդը, մորից ստացած կաթի նման, մեզ նրա կողմից է տրվում: Այդ էր պատճառը, որ այդ նույն, մեզ խնամակալող երկիրը պայթեց, պատռվեց, բացեց իր ընդերքը և սուզեց, կլանեց, միանգամից կուլ տվեց, ողջ-ողջ դժոխք ուղարկեց դևտացիներին, որոնք համարձակվեցին բանի տեղ չդնել և արհամարհել Մովսեսին՝ Աստծու ընտրյալին և սիրելիին (Բ Օրենք 11. 6):

312 (570. LXXIII). Այդպես եղավ այն ժամանակ, իսկ հիմա Աստված իր Որդուն ուղարկեց մարդկանց մոտ, որը եկավ և քայլեց երկրի վրա և իր առաքյալներին ուղարկեց աշխարհով մեկ, իսկ այս երանելիները, որ (հեռուներից եկան) հասան ձեզ, ոչ միայն պարզ խոսքով, այլև հրաշագան նշաններով ցույց տվեցին (ճշմարտությունը) այն տանջանքների միջոցով, որ դուք նրանց պատճառեցիք:

313 (571). Եվ ահա, եթե այն մարդիկ, որ արհամարհեցին Աստծու ծառա Մովսեսին, արժանացան այնպիսի պատժի, ապա ինչպիսի՞ պատիժների արժանի պիտի լինեն

նրանք, ովքեր համարձակվեցին Աստվածորդու դեմ բարձրանալ: Որովհետև եթե երկրավոր օրենսդրին դիմադրողները այն աստիճանի բարկության հանդիպեցին, ապա ինչքա՞ն ավելի մեծ տանջանքների հետ կբախվեն երկնայինին չընդունողները: Որովհետև Տերը՝ Աստծու Որդին, Հորից ուղարկվածը, երբ իր սիրելի առաքյալներին ուղարկում էր աշխարհով մեկ, այսպիսի դատավճիռ արձակեց և հաստատեց. «Ով ձեզ է ընդունում, ինձ է ընդունում, և ով ինձ է ընդունում, ընդունում է Իմ Հորը» (Մատթ., 10. 40: Հովհ., 13. 20):

314 (572). Թեև դուք երեկ նրանց սպանեցիք, բայց Աստծու համար նրանք հիմա էլ ողջ են և հավիտյան ողջ են լինելու: Եվ նրանց բարեխոսությամբ դուք կհաշտվեք Աստծու հետ, նրանց՝ ձեր այս առաքյալներին առաքելակից մեծն Պողոսի խրատի համաձայն, որն ասում է. «Մեզ իր հետ Աստված հաշտեցնելու է՝ իր Որդու մահվան միջոցով» (Բ Կորնթ., 5. 18), որովհետև Աստծու Որդին մեռավ և ողջ մնաց. այսպես և Նրա սիրելի վկաները ողջ են և ձեզ համար բարեխոսող (Աստծու առջև):

315 (573). Որովհետև Ինքը՝ Աստծու Որդին, ձեզ համար ուրախ լուրի քարոզիչ է և Ինքն էլ՝ ձեզ ուրախություն բերող պատգամների մատուցակ: Նա Ինքը ձեզ արքայություն հրավիրողն է. Նա Ինքը իր բարիքների կարգադրիչն է: Նա Ինքը, ձեռքերը վեր բարձրացրած և երկրի մեջտեղը գալով, պարզեցրեց տվող դարձավ՝ իր արժանիներին: Նա Ինքը ահեղ և պատասխան պահանջող է նրանց համար, ովքեր Նրան չեն ճանաչում: Նա Ինքը փնտրողն է նրանց, որոնք կորցրել են Նրա բարիքները: Նա Ինքը առաջնորդ է մոլորվածների համար, որոնք շեղվել են Նրա ճանապարհներից: Նա Ինքը նավահանգիստ է նրանց համար, որոնց, ինչպես ձեզ, պաշարել են ամբարշտության մեղքի ալիքները:

րը: Նա Ինքը գերությունից ազատողն է նրանց համար, որոնք, ինչպես դուք, գտնվում են մեղքերի գերության մեջ: Նա Ինքը բժիշկ է վիրավորների համար, որոնք ձեզ նման խոցված են ամբարշտությունով: Նա Ինքը օգնականն է նրանց, ովքեր Նրան ճանաչելու համար չունեն որևէ օգնություն: Նա Ինքը հույս է նրանց համար, որոնք հույսը դրել են Նրա վրա՝ մշտնջենավոր, անվերջ, անսպառ, աննկարագրելի, անվախճան արքայության արժանանալու համար: Նա մեղմաբար է նայում իր արարածներին և իր գթությամբ կերակրում է չարերին և բարիներին, բայց և խրատում է բոլորին, որպեսզի արժանացնի մերձենալու՝ Աստվածության կողմից որդեգրության կանչված լինելու:

316 (574). Եվ թող ձեզ հայտնի լինի, որ սա այսպես է, որովհետև մարդասեր Աստված ցանկանում է ձեզ իր ժառանգները դարձնել: Իսկ առաջ, երբ դեռ չէիք ճանաչում Աստծուն, դուք ծառայում էիք այն բաներին, որոնք իսկապես աստվածներ չէին: Բայց հիմա դուք ճանաչեցիք Աստծուն, մանավանդ, որ Աստված ճանաչեց ձեզ, դուք, որ խաբված էիք տկար արարածներից սնտոի պաշտամունքով և մեղքերին ծառայելու լծի ներքո հնազանդ մնալով: Իսկ հիմա դուք ազատվեցիք այդ անօգուտ կամավոր ծառայության լծից, այդ ստրկությունից (չըջադարձ կատարելով) դեպի Քրիստոս Հիսուսը՝ մեր Տերը, Աստծու Որդին:

317 (575). «Ձգուշացեք, որ չլինի թե (հետո) հրաժարվեք այստեղ խոսողից. որովհետև եթե չկարողացան կենդանի մնալ նրանք, որոնք համարձակվեցին հրաժարվել երկրի վրա պատգամներ տվողից¹, ինչքան ավելի շատ մենք (չպիտի ազատվենք), եթե թիկունք դարձնենք Երկնավորից, որի ձայնը այն ժամանակ սասանեց երկիրը, և այժմ էլ խոստանում է՝ ասելով. «Դարձյալ մի անգամ էլ պիտի շարժեմ ոչ միայն երկիրը, այլև երկինքը» (Եբր., 12. 25-26):

Իսկ որ ասում է «մի անգամ էլ», ցույց է տալիս, որ շարժման ենթակա իրերը, որպես ստեղծված իրեր, պիտի փոփոխվեն, որպեսզի «անշարժ բաները մնան հաստատուն» (Եբր., 12. 27):

318 (576). «Դրա համար դուք ձեր սրտերում հնազանդվեք անշարժ թագավորությանը, և դուք ձեռք կբերեք շնորհները, որոնց օգնությամբ դուք կծառայեք Աստծուն սիրահոծաբար: Որովհետև Աստվածը ոչնչացնող կրակ է» (Եբր., 12. 28-29), որն այրելու է ձեր մեղքերը և մաքրելու է ձեր հոգիները, ինչպես ճարտար արվեստի փորձույթյան հալոցներում արծաթագործ վարպետների մուրճերի տակ ժանգն անջատվում է մաքուր մասից: Իսկ այն, ինչ որ գտվում է, մաքրվում և ազնվանում է, իսկ որ չի գտվում, այրվում ու հրդեհվում է, ինչպես ասում է մարգարեն, թե «Լույսն Իսրայելի կրակ պիտի դառնա և նրան սրբի բորբոքված բոցի մեջ» (Եսայի, 10. 17): Եվ նրանց անօրենսությունները նա նմանեցնում է խոտի՝ ասելով այսպես, թե «կրակ է բռնելու նրա շուրջը և այրելու է խոտի պես: Այն օրը լեռները, բլուրները և անտառները պիտի մոխիր դառնան, և կրակը լափելու է հոգի ու մարմին, և փրկվողը նման պիտի լինի բորբոքված բոցից ազատվածի, և նրանցից կենդանի մնացածները, — ասում է (մարգարեն), — թվով այնքան (քիչ) պիտի լինեն, (որ մանուկ երեխան էլ կարողանա հաշվել նրանց)» (Եսայի, 10. 18-19):

319 (577. LXXIV). Եվ այն սկզբնական ժամանակներում՝ ջրհեղեղից հետո, երբ մարդիկ սկսեցին շատանալ երկրի երեսի վրա, նրանք վայելում էին Աստծու առատորեն տրվող հոգատարությունը, բայց (հղփանալով)՝ ճարպակալած աչքերով, շեղված մտքերով, նրանք հիմարացան, մոռանալով իրենց ով լինելը, խռովություն նյութեցին: Նրանք հավաքվեցին մի տեղում, խորհուրդ արեցին և ընդունեցին դա-

տարկ որոշում՝ կառուցել անհնարին բարձր մի աշտարակ՝ կռուքերին պաշտելու համար: Եվ բարձրացրին այն ասորեստանցիների երկրի Սենեար դաշտում: Նրանք շինում ու շինում էին (աշտարակը)՝ դեերին պաշտամունք մատուցելու համար, իրենք իրենց անվանեցին «տաճար կառուցողներ»՝ իրենց որդիներին թողնելու համար: Մնապարծ ինքնագովությունյամբ այդ անմիտ առաջին ցեղի մարդիկ, գործի անցնելով, ջանասիրաբար աշխատեցին այդ անօրեն կավաչեն աշտարակի վրա, նպատակ ունենալով չարություն այդ կուտակումը (ժառանգություն) թողնել սերունդներին, որ գալու են իրենցից հետո:

320 (578). Տեսնելով նրանց պակասամտությունը՝ Տեր Աստված խառնեց և տվեց նրանց խմելու բաժանված լեզուների խառնուրդի (դառնություն) բաժակը: Այնտեղ, այդ նույն տեղում Նա իրար խառնեց նրանց, ինչից և այդ վայրը ժառանգեց Բաբել՝ «խառնակություն» անունը¹: Եվ նրանք ցրվեցին և հեռացան իրարից, մեկը մյուսի՝ իր ընկերոջ լեզուն չհասկանալով: Այսպես պառակտվելով իրարից անջատվեցին, գործը թողեցին, իսկ այն, ինչ սկզբից կառուցել էին, հենց իրենք էլ ավերում էին: Հարբածների պես ամեն մեկը իր լեզվով էր խոսում, որ սովորել էին ամենաստեղծ Արարչից: Խառնվելով ու ցրվելով՝ նրանք բաժանվեցին իրարից:

321 (579). Եվ ահավոր հուրը՝ Աստծու Հոգու կիզող հողմի հետ, որը դնում է մարդկանց ճիշտ ճանապարհի վրա և ետ է պահում անօգուտ ճանապարհներից, տանում է դեպի արդարություն և բոլորին ամրապնդում, այդ հուրը, վերևից ընկնելով, ճեղքեց աշտարակը վերևից ներքև, փլցրեց, տապալեց, փչրեց և ցիրուցան արեց դաշտով մեկ: Եվ ահա, երբ նրանց այդ նորահայտ անօրենսությունը ոչնչացվեց, նրանք, Աստծու կամքով, սփռվեցին երկրի վրա՝ ամեն մեկը

իրեն բաժին ընկած վայրում: Յոթանասուներկու պատրիարքներ (նահապետներ) կարգվեցին լեզուների վրա, որոնք ցրվեցին երկրով մեկ՝ յուրաքանչյուրը իր սահմաններում:

322 (580). Բայց մեկը՝ եբրայական ցեղի նախնիներից¹, չմիացավ այն արագ փլուզման ենթակա (աշտարակի) կառուցման գաղափարին և չհարեց արագ ավերվողի (չինարարության) մտադրությանը: Դրա համար նա իր լեզուն պահպանեց: Իր գավազների հետ միասին նա առաջինը ճանաչեց Արարչին, ինչպես մենք սկզբում պատմեցինք, ստանձնեցին աստվածապաշտությունը և կոչվեցին Աստծու սեփական ժողովուրդ²: Նրանցից (ծնվեցին) աստվածախոս մարգարեներ, «նրանցից է նաև Քրիստոս՝ ըստ մարմնի, և Նա է բոլորի վրա հավիտյանս օրհնյալ Աստված» (Հռոմ., 9. 5): Նրանից են նաև շնորհված նորապարգև Կտակարանների աշակերտներ՝ ավետարանիչները, որոնք և վկաներն են նրա գործերի, նշանների, հրաշքների զորութայան, որ կատարվեցին Նրա գալստյան ժամանակ, որոնք և բաժանեցին (մարդկանց Նրա տված) շնորհները և իրենց բերանն առնելով Հոգու կենդանություն հուրը, հրգեհելով այրեցին արատը աշխարհի (երեսից): Խորխորատներից նրանք բարձրացրին ողջ երկրի ընկածներին: Նրանք աշխարհում եղած անօրենությունը քանդեցին, այրեցին, մաշեցին՝ այն բարձրաբերձ աշտարակի օրինակով, որի մասին մենք պատմեցինք:

323 (581). Եվ ահա, բարձրաբերձ և արագաքանդ աշտարակի փոխարեն կանգնեցվեց ճշմարտության խաչը, որի զորությունը մշտնջենական է և Աստծու փառքը՝ նրա մեջ, ինչպես և մարգարեն է ասում. «Քո մեջ է հայտնվելու Տերը, և Նրա փառքը քո մեջ է երևալու: Թագավորները գալու են դեպի քո լույսը, և հեթանոսները՝ դեպի քո լույսի փայլը» (Եսայի, 60. 2-3):

324 (582. LXXV). Ահա թագավորողները, որոնք փառավորվեցին խաչ բարձրացած Փրկչի մոտ, և որոնք Նրա Աստվածություն վկաներն են: «Ովքեր Քրիստոսի հետ են, Նրա հետ էլ պիտի թագավորեն» (Բ Տիմ., 2. 11-12), որովհետև մատնվեցին Աստծու անվան համար, որպեսզի Հիսուսի կյանքն էլ հայտնվի Քրիստոսի սիրելիների մահկանացու մարմինների մեջ (Բ Կորնթ., 4. 11): Նրանք հայտնապես մեռած են և ծածկապես ողջ են. նրանք հայտնապես քարոզում են իրենց կենդանությունը, և ձեզ, որ մեռած եք ձեր մեղքերի մեջ, տալիս են կենդանություն ըմպելու:

325 (583). Որովհետև Աստված ձեզ հայտնվեց նրանց ոսկորների մեջ, որովհետև նրանք իրենց վրա առան չարչարանքների խաչի լույսը, և Քրիստոսի նույն չարչարանքների օրինակով իրենց մարմինների վրա ցույց տվեցին Փրկչի համբերությունը, որպեսզի լուսավորեն այն խավարը, որ թանձրացած էր ձեր հոգիներում, ինչպես ասում է մարգարեն. «Խավարը ծածկեց երկիրը, և մառախուղը պատեց հեթանոսներին» (Եսայի, 60. 2): Ահա արդարև հեթանոսությունը, ինչպես խավար և մառախուղ, պատել է ձեր հոգիները՝ անմիտ սովորություններով, ինչպես այն մոլորության աշտարակի (ժամանակ), որ մարդկային ցեղը հղացավ անօրեն պաշտամունք՝ երկրպագելով անշունչ և շնչավոր արարածներին՝ Արարչի փոխարեն:

326 (584). Չնայած որ կործանարար պաշտամունքի համար, իրենց մտքում հղացած անօրենության աշտարակի շինարարության պատճառով, նրանք ցրվեցին աշխարհով մեկ՝ խառնված լեզուներով, սակայն նույն բանից չհրաժարվեցին, ինչպես ասում է մարգարեն նույն Սաղմոսարանում. «Ահավասիկ, անօրենություն երկնեցին, ցավեր հղացան և անօրենություն ծնեցին» (Սաղմ., 7. 15): Որովհետև այն բանից հետո, երբ աշտարակը քանդվեց, և յուրաքանչ-

յուրը թողեց այդ անօրենսության գործը, նրանք ստեղծեցին ձեռակերտ (արձաններ), որոնց սկսեցին երկրպագութիւն անել, ինչպես ասում է մյուս մարգարեն. «Փայտին ասացին՝ «Իմ հայրն ես դու», և քարին ասացին՝ «Դու ծնեցիր մեզ»: Եվ նրանք ոչ թե իրենց երեսը, այլ թիկունքը դարձրին ինձ» (Երեմ., 2. 27):

327 (585). Դրա համար փայտի փոխարեն, որին նրանք երկրպագում էին, Նա կանգնեցրեց Իր խաչը, որտեղից և լույսի ճառագայթներ է արձակելու բոլոր արարածների վրա, «որոնք նստած էին խավարում և մահվան ստվերի մեջ» (Սաղմ., 106. 10: Ղուկ., 1. 79): Իսկ անարգներին Նա այրելու է, ինչպես ասվում է մարգարեական խոսքում. «Լույսն Իսրայելի¹ կրակ պիտի դառնա և նրան² սրբի բորբոքուն հրով» (Եսայի, 10. 17): Իսկ աշտարակը բարձրացրեց Արարչի զայրույթը և բարկութիւնը, և Նա ցրեց նրանց և խառնեց նրանց լեզուները: Իսկ խաչից գթութիւն հորդեց՝ Ադամի որդիների ցրված ցեղերը հավաքելու համար: Եվ հնամաշ, սնոտի քարապաշտութիւն փոխարեն Նա Իր վկաների հավատը դարձրեց վեմ, որպեսզի նրանք լինեն անհողողղ և ամրակուռ:

328 (586). Եվ մենք եկեք ձեզ հետ միասին (մեր) շենքը կառուցենք առաքյալների և մարգարեների հավատի ամուր հիմքի վրա: Ընդունենք հուրը Հոգու շնորհների: Նա, որ այրեց և փլեցրեց մոլորութիւն աշտարակը, Նույն Ինքը կկանգնեցնի մեզ հավատի հաստատուն հիմքերի վրա և Իր խաչով մեզ կբերի միաբանութիւն: Եվ Նա մեզ կտա Հոգու հուրը, որով այրվելու են մեղքերը, և լույս է արձակելու արգարութիւնը՝ խաչի միջոցով, որտեղ Տերը ի հայտ եկավ, որից Տերը կախվեց, որտեղից Նրա փառքը բարձրացավ և լցրեց երկիրը, որից (հաստատութիւն ընկալեցին) վկաները, թագավորները և Քրիստոսի հետ թագավորողնե-

րը, որի միջոցով դուք և կհաշտվեք Աստու հետ՝ Նրա Որդու մահվան շնորհով:

329 (587). Դրա համար էր, որ Աստվածորդին իջավ, որպեսզի մարդկային մարմին առնի և իջնի մինչև մահվան անարգութիւնը, մինչև իսկ թաղումը, որպեսզի Իր մարդասիրութեամբ արժանիներին նմանակից դարձնի Աստվածութեանը: Իր անսահման սիրով, որով սիրեց մարդկանց, Նա նրանց անվանեց եղբայրներ, որպեսզի Ինքը լինի անդրանիկը բազում եղբայրների մեջ: Իր մարդասիրութիւնից ելնելով՝ Նա այսպիսի դատավճիռ արձակեց, ասում է Ինքը՝ Աստվածորդին. «Սրանք են Իմ քույրերն ու եղբայրները, որ կատարում են Իմ Հոր կամքը, որ երկնքում է» (Մատթ., 12. 50: Մարկ., 3. 35: Ղուկ., 8. 21), որովհետև Որդին, գալով, կատարեց Հոր կամքը:

330 (588). Եվ ի՞նչ է Հոր կամքը, եթե ոչ մարդկանց մերժված որդիներին նորից ընդունել արքայութիւն և կենդանութիւն տալ, ոտքի կանգնեցնել մահվան կողմից տապալվածներին և դարձնել շնորհների արժանի որդիներ, Հոր կամակատարներ, Որի Միածին Որդին է Ինքը բնութեամբ: Եվ դրա համար էր, որ Ինքը՝ զորութիւնների Տերը իջավ մինչև մարդկային տկարութիւն աստիճանը, որպեսզի նույն տկարութիւն միջոցով տանի տկարացածներին դեպի Աստվածութիւն զորութիւն փառքի աստիճանները և հասցնի որդեգրութիւն շնորհին արժանի լինելուն:

331 (589). Նա Ինքը Իր կամքով իջավ, որպեսզի Իր սիրելիներին միախառնի Աստվածութեանը: Ով որ իսկական սիրով դարձավ Աստվածային սիրո պատճենը, նրանց Իր եղբայրներն անվանեց և Իր Հոր իմաստութիւն բնական սերը սովորեցրեց նրանց, և Հոր գորովալից խնամատարութիւնը հորդեց և ջերմացրեց նրանց, և ովքեր հավատացին Նրա անվանը, այդ սրբերին իշխանութիւն տվեց լինելու

Աստծու որդիներ (Հովհ., 1. 12): Նա ցույց տվեց նրանց շնորհների Հորը, Իր ծնողին, և սովորեցրեց նրանց Հայր կոչել Նրան, և նրանց ցույց տվեց Իր Հոր բարերարությունը, որպեսզի նրանք այդ հայրական բարերարության շնորհիվ արժանի դառնան ճշմարիտ Որդու եղբայրներ անվանվելու: Որդին վերցրեց նրանց և մոտեցրեց Հորը՝ ասելով. «Ահավասիկ ես և իմ մանուկները, որ Հայրը ինձ տվեց» (Եսայի, 8. 18): Եվ դարձյալ դիմելով Հորը՝ ասաց. «Անունդ հռչակելու եմ իմ եղբայրներին, և ժողովատեղում պիտի օրհնեն Քեզ» (Սաղմ., 21.23): Ինչպես և աշակերտներին ասում էր. «Որովհետև այն ամենը, ինչ ասաց ինձ իմ Հայրը, ես ցույց տվեցի ձեզ, որովհետև ես գիտեմ ձեզ, որ ինձ բարեկամ եք» (Հովհ., 15. 15):

332 (590). Աստծու ճշմարիտ Որդին Իր ճշմարիտ վկաններին և համախոհներին դարձրեց Իր Աստվածության կամքը կատարողներ, որոնք, դեպի Նա սիրով համակված, նվիրվեցին Նրա պատվիրանների կատարմանը: Նա այնքան բարձրացրեց նրանց և հասցրեց Իր Աստվածությանը, որ արդեն Հորը դիմելով՝ բացականչեց. «Այսուհետև նրանք այս աշխարհից չեն, ինչպես ես էլ աշխարհից չեմ» (Հովհ., 17. 16): «Եվ ես պիտի աղաչեմ Հորը, որ Նա ուղարկի ձեզ Բարեխոս (Մխիթարիչ) Սուրբ Հոգուն, որպես առհավատչյա (ճշմարտության Հոգի), որը ձեզ խառնելու է Աստվածությանը, որպեսզի հավիտյան ձեզ հետ բնակվի, (ճշմարտության Հոգին), որին այս աշխարհը չի տեսնում, — ասում է, — և չի ճանաչում» (Հովհ., 14. 16-17): Եվ ահա, Նա դարձրեց նրանց Աստվածության առաջին տաճարը երկրի վրա և Սուրբ Հոգու օթևանը. «Ես և իմ Հայրը, — ասում է (Հիսուսը), — կանք և ձեզ մոտ կօթևանենք» (Հովհ., 14. 23): Նա Հոր սիրո զորության և խորհրդի մեծության գանձանակ դարձրեց նրանց և ճանաչվեց նրանց կողմից՝

մինչև աշխարհը (կճանաչեք Նրան):

333 (591. LXXVI). Եվ քանի որ մարդիկ չէին կարողանում տանել արդարության պատվիրանների լուծը, նրանք ընկան մահացու մեղքերի (բեռի) ներքո: Եվ որովհետև մարդկանցից ոչ ոք չէր կարող փակել (առաջացած) խրամատը, քանի որ ստրկածին սերունդներն ի վիճակի չէին այդ անելու, Ադամի հանցավորության պատճառով մահը հզորացավ և կուլ տվեց նրանց, ինչպես ասվել էր, թե «Ադամով բոլորը մեռնում են» (Ա Կորնթ., 15. 22), իսկ Աստծու Որդին Ադամի կերպարանք ընդունեց, ծառայի նմանվեց և դարձավ ինչպես մարդկանցից մեկը (Փիլիպ., 2. 7), և եկավ փակելու այդ խրամատը, որպեսզի վերականգնի ավերվածը, ինչպես ասում է մարգարեն. «Ավերակները կվերաշինվեն առհավատ» (Եսայի, 58. 12: Եզեկ., 36. 33): Որովհետև Նա (եկավ) առնելու մարմին Իր արդարների կերպարանքով, և նույն մարմնով ի կատար պիտի ածի ամեն մի արդարություն, ինչպես Նա ասաց Հովհաննեսին. «Այժմ այսպես վայել է, որ մենք կատարենք (Աստծու) ամեն արդարություն» (Մատթ., 3. 15):

334 (592). Որովհետև Տերն Ինքը, ծառայի մարմին առած, բոլոր արդարություններն ի կատար ածեց, որպեսզի մարմնին, որը Նա խառնեց և միացրեց Աստվածությանը, այդ նույն մարմնին հաղթանակ շնորհի: Եվ ինչպես Ադամի մեկ մարմնի պատճառով (մարդիկ) մեղապարտ դարձան, նույնպես և Տիրոջ մեկ մարմնի միջոցով նրանք ազատվելու են մեղքերի ստրկությունից (Ա Կորնթ., 15. 22), այն ազատությունն են (ստանալու), որը բոլոր ազատություններից վեր է (Հռոմ., 8. 21):

335 (593). Նրանց ազատելու համար Նա իջավ մինչև ստրկություն, որպեսզի Իր մարմնով ամբողջացնի և անցնի արդարության գործերի բոլոր աստիճանները, որպեսզի

միանգամից վերացնի մեղսալից մարմնի տկարության կարիքները, և միանգամից ինքն իրեն քահանայի պես հանձնի իր Հորը, և միանգամից սիրահոգի իրեն մատուցի որպես զոհաբերություն՝ ի նշան իր Հոր հետ (մարդկանց) հաշտության, և նույն զոհաբերությանը միասին մատուցի մեր՝ Նրա հանդեպ ունեցած հավատի խոստովանությունը: Որովհետև այդ հենց ինքն էր, որ հաղթեց և ավարտեց, կոտրեց և վերացրեց մահվան դատակնիքը, որպեսզի կյանքի ավետիսը լինի անկասկած, ճշմարիտ և անվրեպ, որպեսզի մենք բոլորս Հիսուս Քրիստոսով կենդանանանք (Ա Կորնթ., 15. 22):

336 (594). Եվ ի՞նչ է նշանակում (ավետարանիչի) ասածը, թե «Նա կատարեց իր Հոր կամքը» (Հովհ., 4. 34), եթե ոչ՝ որ իր մարմնով Նա պիտի բարձրացնի արդարության կատարման հաղթական անունը: Նա հասավ հաղթական նպատակին՝ բոլոր մարմնավորների համար, որպեսզի Ադամի որդիների վրայից վերցնի նախատինքը, հանի մահացու թույնը և լվա դժոխքի խայթոցները, որպեսզի մենք համարձակ կարողանանք ասել. «Ո՛ր է, մահ, քո հաղթությունը», կամ «Ո՛ր են, դժոխք, քո խայթոցները» (Ա Կորնթ., 15. 55): Որովհետև «Նա բոլորի երեսից արցունքն իսպառ պիտի կտրի» (Եսայի, 25. 8) և վերացնելու է տխրական սուգը և տալու է անտրտում խնդություն:

337 (595). Եվ ինչպես Նա ինքն իջավ բարձունքներից, այնպես էլ ում որ արժանի գտավ՝ բարձրացրեց դեպի իր Աստվածությունը, և դարձրեց նրանց իր կամքի սիրահոգի գանձանակներ և Սուրբ Հոգու բնակության տաճարներ (Հմմտ. Ա Կորնթ., 6. 19), որպեսզի նրանք լինեն Աստվածության մեջ ընկղմվածներ: Որովհետև իր ազգակից մարմնով Նա սկզբից դեպի իրեն գրավեց նրանց, և (հետո) նրանց միջոցով բոլորին գրավելու է դեպի նրանց ուրա-

խությունը: Ինչպես նախագետ իմաստուն մարգարեն այս կապակցությանը հիացմունքով ասում էր, որ մենք «պիտի ուրախանանք քո ազգի ուրախությանը, ու պարծենանք քո ժառանգությանը» (Սաղմ., 105. 5): Որովհետև Հոր ժառանգությունը Միածին Որդին է, իսկ ուրախությանը մասնակից ազգերը Տիրոջ մարմնի արդար մարմնակիցներն են: Որովհետև արդարության գովությունը մարդկանց բոլոր մարմինների հետ բարձրացրեց ինքը, որը Հոր ժառանգն էր և բոլոր արարածների ժառանգության կարգադրիչը (Եբր., 1. 2): Իսկ նրանց, ովքեր Նրա համար վկայեցին, Նա իր ուրախակից դարձրեց, որովհետև նրանք ազգակից էին Նրա մարմնին, իսկ (այդ մարմնին) ազգակից բոլոր մարդիկ ուրախակից են լինելու իրենց ազգակից վկաներին:

338 (596). Եվ Տերը սկզբից զատեց նրանց այս երկրային կարգերից և բարձրացրեց այս երկրից, միախառնելով նրանց հրեշտակների և աստվածամերձ էակների կարգերին, որպեսզի նրանք՝ բարձրանալով դեպի Աստվածությունը, իրենց բոլոր ազգակիցներին բարձրացնեն դեպի Աստվածության նույն սերը, որին իրենք հասան: Որովհետև նրանք նախ արժանացան իմանալու Աստվածության նաև գաղտնի մտքերը, և նրանց միջոցով բոլոր արարածները (հետո) իմացան «այն, - ինչպես ասված է, - ինչ այս աշխարհից և ապա իրենց Տիրոջ հանդեպ ունեցած սիրո շնորհիվ հասան Նրա Հոգու զորությանը: «Դուք, - ասում է, ճանաչեցեք (Նրան), որովհետև Նա ձեր մեջ է բնակվելու հավիտյան» (Հովհ., 14. 17):

339 (597. LXXVII). Տեսնո՞ւմ եք Նրա դատավճիռը, որ ասաց. «Հավիտյան ձեր մեջ է բնակվելու», որովհետև ինչպես սրանց կենդանության օրոք, այնպես և այժմ և հա-

վիտյան սրանց ոսկորներում բնակվում է բարեխոս Հոգին, նրանք՝ որդեգրության արժանացածները, որոնց շնորհիվ դուք հաշտվելու եք Աստու հետ՝ Նրա Որդու մահվան միջոցով: Որովհետև այս սուրբ վկաները նույն Հոգու շնորհիվ, որին արժանի եղան, ձեզ բարեխոս են լինելու, որպեսզի և ձեզ՝ անգետներիդ և մեղավորներիդ, թողություն լինի: Որովհետև Աստու Որդին, որն իր օրինակով ցույց տվեց, որ իր սիրելի վկաները կենդանի են, ասում է նրանց. «Ես կենդանի եմ, և դուք կենդանի եք լինելու իմ մեջ, որովհետև ես Հոր հետ եմ, և դուք ինձ հետ եք, և ես՝ ձեզ հետ: Որովհետև ով իմ պատվիրաններն ընդունում է և դրանք պահում, նա է, որ ինձ սիրում է, և նա պիտի սիրվի իմ Հորից, Ես էլ նրան պիտի սիրեմ և ինձ պիտի հայտնեմ նրան» (Հովհ., 14. 19-21):

340 (598). Նրանք իսկապես Տիրոջը սիրեցին ավելի, քան իրենց կարողությունն էր, որովհետև տեսան Տիրոջը և Արարչին, որն իրեն զոհաբերեց նրանց համար, իսկ սրանք իրենց հանձնեցին մահվան՝ Նրա մահվան փոխարեն: Եվ նրանք միացան Նրա Աստվածային սիրուն և դարձան Նրա մեծության օթևաններ: Նրանք տեսան Տիրոջը, որն իրեն որպես զոհ մատուցեց իր Հորը, դրա համար նրանք էլ գառների պես մահն ընդունեցին, որպեսզի լինեն զոհաբերություն Աստվածորդու համար: Որովհետև Աստու Որդին կատարեց իր Հոր կամքը, իսկ նրանք կատարեցին Աստվածորդու կամքը: Աստվածորդին նրանց մերձեցրեց իրեն, և նրանց միջոցով՝ ողջ աշխարհը:

341 (599). Նրանք Տիրոջից ստացան հրաման՝ արհամարհել այս աշխարհը և ամեն ինչ, որ կա աշխարհում, որպեսզի արհամարհեն այս աշխարհի կյանքը, որովհետև այն անցավոր է: Արհամարհեն նաև նրանում եղած նեղությունները՝ հանուն այն արդարության, որ գալու է, որովհե-

տև նրանք երանությունն են և սերմերը մշտնջենավոր արքայության: Մերժեն և արհամարհեն, լքեն և թողնեն ունայն ապրելակերպի բոլոր իրենց գործերը, որպեսզի փրկված լինեն հավիտենական տանջանքներից:

342 (600). Նա ասում է. «Մի վախեցեք նրանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող. այլ դուք վախեցեք նրանից, ով կարող է հոգին և մարմինը գեհեների կրակի մեջ գցել» (Մատթ., 10. 28), որպեսզի նրանք թողնեն չարը և ընտրեն բարին, բաղձան և ընթանան դեպի անմեղություն, և ժառանգեն երկնավոր լույսը և հավիտենական փառքը, և ժառանգակից դառնան աստվածային հավիտենական փառքի անմահության:

343 (601). Աստու Որդին ասաց. «Մտեք նեղ դռնով, որովհետև նեղ է, – ասում է, – այն դուռը, որ տանում է դեպի բարին, և անձուկ է ճանապարհը, որ տանում է դեպի հավիտենական կյանք» (Մատթ., 7. 13-14): Որովհետև նեղություն կրելով և վշտերով են նրանք հասնելու անվերջանալի արքայությանը, որ նրանց համար է պատրաստ, երբ Քրիստոս նորից կհայտնվի հավիտենական պարգևներով (մեռելների) հարության ժամանակ, բերելով անմահություն և հատուցելով ըստ գործերի, ինչպես և այնտեղ, իր տեղում մենք ևս պիտի պատմենք ձեզ:

344 (602. LXXVIII). «Եղեք, – ասում է, – խորագետ օձերի պես» (Մատթ., 10. 16): Եվ ի՞նչ է օձի խորագիտությունը, եթե ոչ՝ երբ որ նա ծերանում է և տեսնում, որ իր մարմինը մաշվել է, ի հայտ է բերում իր թաքնված խորագիտությունը. որովհետև գնում է նեղ ճեղքեր ունեցող տեղեր և ծերացած մարմնից մաշված մորթը հանում է, քերթելով կեղևի պես, ազատվում է նրանից և կրկին երիտասարդանում, մարմինը նորացնելով՝ զարգարում է իր ծերությունը: Այսպես և արդարները իրենց հոգիների վրայից դեն են

նետում անցավոր մարմնի կեղտերը, որպեսզի կարողանան մտնել նեղ դռնով և ձեռք բերել անմահ թագավորությունը: Որովհետև ով որ սիրեց Տիրոջը, կենդանի է հավիտյան, որովհետև Նա այսպես ասաց. «Ով հավատում է ինձ, թեպետև մեռնի՝ կենդանի է» (Հովհ., 11. 25), քանի որ «Ես իսկ եմ հարուստ և կյանք», – ասաց Աստծու Որդին, որը Հոր կամքով, ինչպես վերևում ասացինք, մեզ համար ճաշակեց մահը, որպեսզի բոլոր ժողովուրդներին փրկի կործանումից: Իսկ հիմա, Հոր աջ կողմից նստած, Նա ամեն ինչ պատրաստում և շնորհում է Իր վրա հույսը դնողներին:

345 (603). «Եղեք միամիտ, – ասում է Նա, – աղավինների նման» (Մատթ., 10. 16): Նախ, որովհետև աղավինն մարդասեր է և մարդամոտ և ձգտում է ապրել իսկ մարդկանց մեջ, որովհետև և Աստված մարդասեր է և կամենում է միշտ բնակվել Իր սրբերի մեջ: Եվ երկրորդ, եթե որևէ մեկը շատ անգամ աղավնուց վերցնի ձվերը կամ ձագերին, նա կասկածելով երբեք չի թողնի իր բույնի տեղը: Այս օրինակով, թեև շատ և անվերջ են մարդկանց մշտապես գործվող չարիքները Արարչի դեմ, որը հոգալով բավարարում է Նրանց կարիքները, իսկ նրանք չեն ճանաչում Նրան, սակայն Նա չի թողնում և չի հեռանում Իր արարածներից, այլ միշտ այցի է գալիս, փնտրում է կորածներին, որպեսզի գտնի նրանց՝ ասելով. «Այսօր, երբ լսեք Իմ ձայնը» (Սաղմ., 94. 8: Հովհ., 10.16), և կամենում է բոլորին Իր շնորհների ժառանգորդը դարձնել, ինչի համար և ուղարկեց Իր Որդուն, որպեսզի նրանք կարողանան սովորել օձի խորագիտությունը՝ իրենց հոգիներից հանեն հնացած մարդկային տգիտությունը և ամբարշտությունը, և ստանան աղավնու անմեղ և միամիտ մաքրությունը, որն իր հետ բերում է աստվածային բարիքներ: Որովհետև և Աստծու Հոգին, երբ հայտնվեց աշխարհին, ինչի մասին

մենք վերևում պատմեցինք, այն երևաց աղավնու մարմնավոր կերպարանքով, որպեսզի ցույց տա բարիք գործող մաքուր սիրո գերազանցությունը:

346 (604). Որովհետև ովքեր ցանկանում են օթևան լինել Աստվածության Հոգուն, նրանք այդ պատկերից պետք է օրինակեն աղավնու անմեղ և զվարթ բնությունը: Ինչպես և Տերն ասում էր աշակերտներին. «Դուք բարություն արեք չարերին և թշնամիներին, անգամ եթե բոլորի կողմից հալածված լինեք՝ արդարության համար, որովհետև ձեր Հայրը բարերար է, Նա Իր արեգակը ծագեցնում է բարիների և չարերի վրա և անձրև է թափում արդարների և մեղավորների վրա. որպեսզի դուք դառնաք ձեր բարերար Հոր բարերար զավակները» (Մատթ., 5. 44-45 հմմտ.):

347 (605. LXXIX). Եվ ահա, ովքեր կպահեն անմեղություն և արդարության այս պատվիրանը, նրանք կստանան արագաթև աղավնու կերպարանք և Սուրբ Հոգու թևերի վրա կթռչեն համեմուտ համար երկնքի արքայությունը, որին տենչում էին սրբերը երկրի վրա եղած ժամանակ: Դրան էր կաթողին տենչանքով սպասել նաև մարգարեն՝ ասելով, թե՛ «Մեկն ինձ աղավնու թևեր տար, որ թռչելով բարձրանայի» (Սաղմ., 54. 7): Սա է մեկնաբանել երանելի Պողոսը, ձեր առաքյալների առաքելակիցը, մխիթարական թղթում, որով սփոփում էր Թեսաղոնիկեցիներին. «Մենք, որ կենդանի մնացած պիտի լինենք, հանդուցյալների հետ միասին պիտի հափշտակվենք-տարվենք ամպերի վրայից Տիրոջ առաջ օդում, և այդպես մշտապես Տիրոջ հետ պիտի լինենք» (Ա Թեսաղ., 4. 16): Նրանք (ձեր առաքյալները) մխիթառնվեցին Քրիստոսի գնդին, թռչելով լուսափետուր աղավնիների սպիտակ երամի սրբնթաց թռիչքով, որոնք վերցրին և իրենց վրա կերպավորեցին Աստծո Որդու կերպարը, որը երևաց նրանց: Նա պատվիրեց նրանց նույն

կերպարը իրենց վրա հայտնել, որպեսզի Նա նրանց վրա հոգևոր թևեր կարողանա բուսցնել՝ աստվածային գնդին խառնելու համար:

348 (606). Եվ ահա, վերին լուսեղեն զորքերը զարմացած կհարցնեն, երբ տեսնեն մարմնավոր սրբերի ներքևի գնդերը, որոնք ներքևից դեպի վեր՝ Տիրոջ մոտ են գալիս, թե «Ովքե՞ր են սրանք, որ թռել են ինչպես ամպ և ինչպես ձագերի հետ խառնված աղավնիներ՝ երամով գալիս են Ինձ մոտ» (Եսայի, 60. 8): Եվ այնտեղ նրանք կլսեն Տիրոջ պատասխանը. «Սրանք իրենց հույսը Ինձ հետ են կապել. նրանց կտանեմ Իմ սուրբ լեռը և կուրախացնեմ նրանց Իմ տաճարում» (Եսայի, 56. 7), և բոլոր նրանց տեսնողները ճանաչելու են, որ «Սրանք Աստծուց օրհնված սերունդ են» (Եսայի, 65. 23), և ուրախացած կցնծան ի Տեր: Այնժամ Տերն ասելու է. «Դուք պիտի լինեք Ինձ համար որդիներ և դուստրեր» (Բ Կորնթ., 6. 18). այնտեղ ապա Արարչական սիրտ բարերար խնամքը կբորբոքվի, ըստ մարգարեի խոսքի. «Ինչպես որ մի հայր գթում է իր որդիներին, այնպես Տերը պիտի գթա Իրենից երկյուղ կրողներին» (Սաղմ., 102. 13):

349 (607). Որովհետև «Այժմ, հուսով նայելով, այս ամենը տեսնում ենք ինչպես (պատկերը) հայելու մեջ, իսկ այն ժամանակ (պիտի լինի) դեմառդեմ» (Ա Կորնթ., 13. 12), և նույն նորացումով մենք նորանում ենք փառքից փառք (Բ Կորնթ., 3. 18), ինչպես Տիրոջ Հոգին, որ փորձում է և ստուգում բոլորին, և նորացնում է նրանց, ում որ կգտնի արժանի: Եվ ահա, փորձության հնոցում, ընտրության կրակի քուրայի մեջ Նա դնում է առաքյալների լեզուները, որպեսզի նրանց միջոցով ընտրություն կատարի ամբողջ աշխարհում, որովհետև և՛ Աստվածություն տաճարը, և՛ երկրի հնոցները դարձան Արարչի օթևաններ:

350 (608). Սրա վերաբերյալ մարգարեները, առաջնութ-

յան վաստակ ունեցող մշակները, որ բոլոր ժողովուրդներին ազդարարում էին գալիք իրադարձությունների մասին, նախ իրենց հրեա ժողովրդին տեղեկացրին, և հետո՝ ողջ աշխարհին ազդարարեցին, որ «ժողովուրդները և թագավորները հավաքվեն միասին՝ Տիրոջը ծառայելու համար» (Սաղմ., 101. 22):

351 (609). Եվ նորից իրենց վրա հայացք նետելով՝ առաքյալները իրենց ապագա զավակների մեջ տեսան առաքյալներ, և առ Տեր գոչեցին, կարծես անձամբ իրենց և իրենց զավակների մասին էր ասված, որ պիտի սփռվեին երկրով մեկ, թե «քո հայրերի փոխարեն որդիներ պիտի լինեն քեզ, որոնց իշխան պիտի կարգես ողջ երկրի վրա» (Սաղմ., 44. 17): Եվ նրանք դարձան երկրի իշխաններ, որպեսզի բոլորին դարձնեն մեկ իշխանություն հնազանդներ, որոնք սեփական ազատ կամքով ծառայելու են ազատության, որպեսզի բոլորը դառնան արքայություն ժառանգներ՝ իրենց բարի գործերի համար, իշխանների հետ միասին:

352 (610). Ինչպես և Տերն Ինքը խոսում է ապագայի մասին՝ մարգարեների բերանով, թե «խաղաղություն եմ տալու քո իշխաններին, և քո այցելուներին՝ արդարություն» (Եսայի, 60. 17): Սրանով առաքյալները խմեցին այցելության բաժակը և աշխարհին խմել տվեցին խաղաղության բաժակը: Այդ էր դեռևս հնում կանխատեսում մարգարեն՝ նկատի ունենալով գալիք դեպքերը. «Այսպես է ասում Ինձ Տերը. «Դու բովի մեջ գցիր քո արծաթը և քննիր, թե մաքո՞ւր է, ինչպես և ես քննվեցի նրանց կողմից»: Եվ ես վերցրի երեսուն արծաթը և Տիրոջ Տանը գցեցի բովի մեջ» (Զաք., 11. 13):

353 (611). Բայց քանի որ Աստվածորդին պիտի գար, իջներ և բոլոր ժողովուրդներին բարձրացներ դեպի Աստվածությունը, այդ պատճառով բոլոր մարդիկ ենթարկվեցին

քննութեան այն ծառի պտուղը չուտելու (Ծննդ., 2. 17) պատվիրանի (կատարման) ձևով, որպեսզի արժանի լինեն ստանալու անմահութեան շնորհապարգևը: Նույն եղանակով նաև Տերը, խոնարհվելով մինչև մարմին առնելը և անարգ երևալը, փորձելով քննելու է ամուր հավատ ունեցողներին (առաքյալներին), որոնք տեսան նրան անշուք կերպարանքով, բայց լսեցին (և հասկացան), որ Նա Աստված է, իմացան, թե ինչպես և ինչու նրանք հավատալու են Նրա բնութեան (անհասանելի) բարձրութեանը: Այդ կապակցութեամբ էր, որ Նա ավելացրեց և ասաց. «Ինչպես և ես քննվեցի նրանց կողմից (Զաք., 11. 13): Եվ ահա, նրանց միասնական միաբանութուն դարձնելով, Նա ի հայտ բերեց նրանց որպես մեկ տուն՝ միախոհ, մեկ ճշմարիտ հավատով, միասնական քարոզով, միակցված անդամներով, Աստվածութեան մեկ տաճար, որի միջոցով Նա քննելու է ողջ աշխարհը՝ Իր գալստյանը հավատալու վերաբերյալ:

354 (612. LXXX). Եվ ահա, քանի որ մեղքերի հուրը կերավ և կործանեց ամբողջութեամբ մարդկանց բնությունը, և վառվող մեղքերը բոցկլտում էին կրակի պես, արթնացավ Աստծու անհանդուրժող բարկությունը՝ վրեժխնդիր լինելու: Եվ իսկապես, քչերը (ողջ) մնացին, ինչպես ասաց (մարգարեն), թե «կենդանի մնացածները թվով այնքան են լինելու (որ մանուկ երեխան էլ կարողանա հաշվել նրանց)» (Եսայի, 10. 19): Եվ ահա, Նա սկզբից հաշվեց և գտավ (հավատի մեջ) տասներկու հաստատուններին, որոնց մշակներ դրեց՝ ըստ Իսրայելի (տասներկու) ցեղերի (Մատթ., 19. 28): Նաև, ըստ բոլոր բաժանված ժողովուրդների առաջին լեզուների, Նա երևակեց յոթանասուներկուսին, ինչպես ասել էինք սրանից առաջ, նպատակ ունենալով նրանց միջոցով հավաքելով միավորել հնում իրարից բաժանված ազգերն ու լեզուները:

355 (613). Բայց այդ առաջինները քիչ էին ու սակավաթիվ: Այդ պատճառով Աստծո Որդին Ինքը եկավ սովորեցնելու (թե ինչպես) միաբանող հավատով ընտրել (արժանիներին) այս նույն հավաքականության մեջ: Այդ իսկ պատճառով Նա եկավ և ասաց. «Հունձը շատ է, իսկ մշակները՝ քիչ: Արդ, աղաչեցեք հնձի Տիրոջը, որ մշակներ դուրս բերի կատարելու Իր բերքի հունձը» (Մատթ., 9. 37-38: Ղուկ., 10. 2): Եվ Ինքն էլ սրանով նրանցից պահանջեց սիրել միմյանց, և միավորելով նրանց՝ երկրի վրա հաստատեց Իր տաճարը և նրանց միջոցով քննութեան ենթարկեց ողջ աշխարհը:

356 (614). Եվ սա Հոգու հուրն էր, որ երևաց Պենտեկոստի օրերին¹, որը եկավ և հանգրվանեց առաքյալների լեզուների վրա, որը եկավ և հավաքեց ցիրուցան եղածներին, և նրանք սկսեցին խոսել այդ լեզուներով (Գործք, 2. 4-11)՝ դիմելով նախկին ցրված լեզուներին: Որովհետև անօրենութեան սերմն ընկավ անխելք առաջին մարդկանց մտքի արգանդի մեջ, ինչից էլ ամբարշտության սաղմն ընկալած, ձեռքը (լիտիաբար) կշտին դրած, նրանք կռապաշտութեամբ հղիացան և ծնեցին այն: Իսկ դրա պտուղը եղավ բաժանումը, այլանդակ և այլաձայն, երբ մարդիկ սկսեցին մոլորված իրարից հեռանալ, ամեն մի մարդ իր եղբորից անջատվեց, (և) նրանք ցրվեցին:

357 (615). Իսկ սրանք (առաքյալները) իրար մեջ փնտրում էին միասիրտ, միասեր համաձայնություն: Դրա համար Նա հրամայեց, որ նրանք նախ իրենց մտքով իրար հավաքվեն, որպեսզի բոլոր ազգերին սովորեցնեն հասնել միաբանութեան: Որպեսզի նախ նրանց դարձնի պատրաստի օթևաններ և ապա նրանց մոտ ուղարկի Աստվածութեան Հոգուն, որը՝ Հոր և Որդու սերը իր հետ վերցրած, շտապով եկավ նրանց մոտ, որպեսզի նախ նրանց մեջ

բնակվի և ապա նրանց միջոցով՝ բոլոր արարածներին մեջ: «Ես և Իմ Հայրը, – ասում է, – կգանք և նրա մոտ կօթևանենք» (Հովհ., 14. 23): Եվ միմյանց հանդեպ ունեցած սերը նկատի ունենալով, որը սովորեցրել էր նրանց, Նա ասում է. «Աղաչեցեք Հնձի Տիրոջը, որ մշակներ դուրս բերի՝ կատարելու Իր բերքի հունձը» (Մատթ., 9. 38: Ղուկ., 10. 2):

358 (616). Մի՞թե Նա Ինքը, առանց նրանց աղաչանքների, չէր կարող անել այդ, Նա, որ մի հրամայելով արարեց բոլոր արարածներին: Բայց որովհետև Աստվածության մոտ գլխարտուլթյունը ամեն ինչից առավել է, այդ պատճառով Աստվածությունը ինչքան Ինքը մարդասեր է, նույնքան էլ ցանկանում է, որ մարդիկ իրար սիրելու շնորհիվ արժանի դառնան Աստվածությանը՝ մեկը մյուսին վնաս չպատճառելով:

359 (617). Որովհետև ինչպես հողը, հողմը և հողի բույսը մեկ երկրից են, իրարից տարբերվում են ծնունդով, բայց մեկ Արարչի կողմից են ստեղծված, նույնպես և նրանք (մարդիկ) պետք է նախևառաջ սիրեն Արարչին և սիրվեն Նրա կողմից: Նրանք պետք է կարողանան ապրել այնպես, որ հաճո լինեն Նրան, որպեսզի վաստակեն երկնային արքայությունը: Որովհետև անձնասիրությամբ չի լինի սեր ընկերոջ հանդեպ, այլ (միայն) սեր իր եսի հանդեպ, որը հաճո չէ Արարչի կամքին: Դրա պատճառով էլ մեզքը սկզբից աշխարհ մուտք գործեց: Իսկ քանի որ Աստվածությունը մարդասեր է, այդ պատճառով նրանց (հնարավորություն տվեց) դառնալու Իր համախոհները, որպեսզի նրանք սիրեն միմյանց և հանդես գան որպես տիեզերքին ազդարարողներ, աղաչանքներ հղեն և մշակներ դուրս բերեն իրենց Տիրոջ բերքի հունձը կատարելու համար (Մատթ., 9. 37-38):

360 (618. LXXXI). Որովհետև ինքնակամ մարդկանց առաջին մտահղացումը առաջ բերեց բաժանում՝ լեզուների

խառնակութունից: Նույն բանն է ի հայտ գալիս նաև հրեա ժողովրդի հետ կապված՝ մարգարեների պատմածի համաձայն, ուր ասվում է. «Ապա, հարցրեք և տեսեք, թե երբեք լսած կա՞, որ արուները հղիանան և ծնեն՝ ձեռքը փորին դնելով և դարման խնդրելով: Հապա ինչո՞ւ ամեն տղամարդու տեսնում եմ՝ իր ձեռքերը մեջքին դրած: Նայում եմ մարդուն, և բոլորը՝ դեմքերը դալկացած և դեղնած, շրջում են» (Երեմ., 30. 6):

361 (619). Իսկպես նրանք հղիացել էին կռապաշտ, հեթանոս բարքերի ամբարշտություններ և, ձեռքերը փորերին դրած, ակնկալում էին իրենց փուչ գործերի դիմաց շահավետ պտուղ ստանալ: Դրա համար էլ նրանք որպես հատուցում վաստակեցին դժբախտություն, անառողջ ծննդաբերության գույնը, պատժվեցին իրենց չարախոսության համար՝ ծննդաբերելով (իրենց համար) գերություն: Նրանք որպես իրենց որովայնի պտուղ ունեցան ցրման ավերիչ քայքայումը, որն, իբրև մանուկ գիրկն առած, տանում էին (երկրից երկիր), և օտար ազգերի մեջ պանդխտելով, ամուսնական սիրո սենյակների փոխարեն թափառականների վիճակի արժանացան: Իրենց բռնած ապստամբ դիրքի դիմաց իրենց Արարչից, մերձավոր Տիրոջից ստացան կործանում:

362 (620). Սրա պես և առաջին ժողովուրդները, որոնք հանդգնեցին թիկունք դարձնել իրենց բուն Տիրոջից, որն ստեղծել էր նրանց ոչնչից, և ապաստանել էին խեցեկույտին, կավաչեն, կուպրով շողախված աշտարակին, հղիացած նույն անօրեն պաշտամունքի ախտով. դրա համար նրանք ցրվեցին, մասնատվեցին, ավերվեցին, իրարից բաժանվեցին, և սկսեցին յուրաքանչյուրը նրանցից առաձինն առանձին ծննդաբերել երկրի երեսի վրա, իրենց մեջ կրելով ստոր կեցությունը, այն իբրև որովայնի (տհաս)

պտուղ իրենց գրկում բռնած, հղիացած ծնում և ընդունում էին՝ ըստ նամանության դեռահաս մոր:

363 (621). Եվ մտաբերելով այն պատուհասը, որ հնում (մարդկանց վրա) եկավ ջրհեղեղի ձևով, նրանք սկսեցին շինել աշտարակը՝ հուսալով որ այդ նույն շինվածքի շնորհիվ կփրկվեն, երբ այն գա (նորից): Եվ նրանք չապավինեցին Արարչին, որպեսզի վերջ տան իրենց անօրեն գործերին և փրկվեն Նրան հաճելի գործերի շնորհիվ: Եվ բոլորովին չհիշեցին Նրան, որն ի սկզբանե Արարիչն էր, ո՛չ Նրա կամքը և ո՛չ արարչագործությունը, ո՛չ հետո և ո՛չ էլ առաջ: Եվ բոլորը ի մի հավաքվելով, էլի չէին կարողանում հասկանալ մեկը մյուսի մտահղացումը, որով ծանրացած էին:

364 (622). Եվ դրա համար Ամենատեսը, երբ տեսավ նրանց մեջ այն, ինչ իր կամքին անհաճո էր՝ նրանց տգիտությունը և տհասությունը, Աստվածությունը որոշեց նրանց մտահղությունը ծննդաբերությունը ավարտել: Եվ Աստված ասաց. «Եկեք իջնենք և խառնենք նրանց լեզուները» (Ծննդ., 11. 7), և չասաց, թե՛ «Գնացեք, իջեք և խառնեք նրանց լեզուները», ինչպես և պատշաճում էր Աստվածություն ըստ կարգի հրաման արձակելը, բայց Նա ասաց. «Եկեք իջնենք և խառնենք»: Ասելով «խառնենք», Նա իր (խոսքի և) գործի հավասարությունը ի հայտ բերեց, և իսկապես, Նա ցույց տվեց սա և՛ մարդուն ստեղծելիս, և՛ լեզուների բաժանման ժամանակ:

365 (623). Որովհետև մեր փրկության համար Աստվածությունը մարդկային կերպարանք առավ, առաքյալներին Նա սովորեցրեց Երրորդության անձերի թիվը, որպեսզի նրանք նույն ձևով էլ սովորեցնեն բոլորին, որտեղ որ ողջ աշխարհում մարդիկ լինեն (Մատթ., 28. 19)՝ հայտնելով, որ պետք է խոնարհվելով ծունր դնեն երեքանձնյա, միասնական զորություն առջև, միասնական պաշտելի Տերություն

առջև: Իսկ այն մարդկանց հղացած մտադրությունից ծնվեց ձայների՝ միմյանց համար անհասկանալի (լեզուների) խառնաշփոթը:

366 (624). Իսկ ահա թե ինչ ասացին այն առաջին ժողովուրդները՝ աշտարակը շինելիս. «Եկեք կառուցենք աշտարակ, որի գագաթը հասնի մինչև երկինք» (Ծննդ., 11. 4), որը չկարողացան իրենց գոռոզությունը և սնապարծությունը համապատասխան խոստացած բարձրությունը հասցնել, այլ ավերեցին, փլցրին, քանդեցին իրենց միասնական մեկ լեզվի և համերաշխ մեկ մտածելակերպի շենքը: Նրանք չբարձրացրին աշտարակը, ըստ իրենց ասածի, մինչև երկինք, որովհետև նա հողից էր և այստեղից էր կառուցվում, բայց այնտեղից իջեցվեցին դեպի բաժանման և ցրման (պատճառով ծնվող) կործանումը: Նրանք հղացան անօրենություն, առաջացրին բազմահունչ լեզուների այնպիսի մի բաժանում, որ մարդ իր ընկերոջ ասածը չէր ընկալում. և իրարից բաժանվելով՝ նրանք ցրվեցին:

367 (625). Բայց այն ժամանակ Աստվածությունը երևացել էր ծածուկ կերպով, իսկ հիմա, այս ժամանակներում հայտնվեց բացահայտ (Գողոս., 1. 26): Նա իրապես բացահայտեց (իրեն), որպեսզի բոլորը իմանան, տեսնեն և հավատան (Նրան): Եվ ահա, Նա մարգարեների հոգիների մեջ սերմանեց Սուրբ Հոգու կանխագիտության շնորհը, որպեսզի նրանք բոլոր արարածների մեջ բեղմնավորեն Աստվածության գալստյան ճշմարիտ ավետիսը, և սերմանեն դա ողջ աշխարհով մեկ, որպեսզի արարածները հղիանան կյանքի ակնկալության խորհրդով՝ անմահության ծնունդին սատարելով: Որպեսզի նրանք հղիանան հույսով և սիրով նախևառաջ դեպի Արարիչ Աստվածությունը և ապա՝ դեպի ընկերը, կարողանան աննենգ և անկեղծ սերը հավասարապես պահել միմյանց հանդեպ:

368 (626). Նա Ինքը գալով բացատրեց դա՝ ասելով. «Այս երկու պատվիրաններից են կախված ամբողջ Օրենքը և մարգարեները» (Մատթ., 22. 40): Նախ և առաջ պետք է ամբողջ սրտով, ամբողջ հոգով և ամբողջ ուժով սիրել Աստծուն, ինչն առաջինն է: Եվ երկրորդը՝ սիրել ընկերոջը ինչպես ինքդ քեզ (Մարկ., 12. 30-31): Իսկ երրորդը՝ ընդունել Աստվածուծության ավետման խոսքը առանց երկմտութ-յան և հավատալ սրան: Նրանք դրանով հղիացան՝ արագ սլանալու համար, դրա շնորհիվ նրանք սկսեցին սավառնել Սուրբ Հոգու թևերի վրա, որպեսզի միախառնվեն Քրիստոսի զնդին՝ հղիանալու համար հավատից (բխող) հույսով և ծննդաբերելու հասցնեն դրանով ամբողջությունամբ տոգորվածներին՝ (երկնային) արքայության մեջ: Ինչպես և մարգարեն, բոլոր արարածների համար տեսնելով մեզ համար պատրաստ որդեգրության շնորհը, կարծես բոլորի բերանով գոչում է՝ դիմելով Հորը. «Ինչպես որ երկունքի մեջ գտնվող կինը, որի ծննդաբերության ժամանակը հասել է, ճշում է իր ցավից» (Եսայի, 26. 17):

369 (627). Եվ ի՞նչ է արդյոք սկսված երկունքը, որի ցավերը ստիպում են ճչալ, եթե ոչ զղջում և խոստովանու-թյուն՝ ապաշխարությունամբ ծնված, ինչպես և ասում են, թե «այնպես եղանք մենք էլ քո սիրելիի համար» (Եսայի, 26. 17): Եվ արդյոք ո՞ր սիրելիի մասին պիտի խոսեր մարգարեն, եթե ոչ Նրա Որդու մասին, որը գալու էր, որի վրա բո-լոր արարածների հույսերն էին դրված, որը եկավ և Իրենով ամեն ինչ ի կատար ածեց, ինչպես և ասում է (մարգարեն)՝ Նրան ուղղելով իր հեծեծանքը. «Տե՛ր, ահի և երկյուղի մեջ մենք հղիացանք, երկունքով բռնվեցինք և ծնեցինք փրկու-թյան Քո ոգին» (Եսայի, 26. 18):

370 (628. LXXXII). Եվ ահա, Ինքը՝ Տերն այն աշտարակի փոխարեն կանգնեցրեց խաչափայտը, համաձայն մար-

գարեի կանխագուշակության, որն ասում է. «Ահավասիկ, հեթանոսների վրա նշան պիտի կանգնեցնեմ» (Եսայի, 11. 12), այսինքն՝ փրկչական խաչը, որի վրա Ինքը Տերն է և ո-րից Նա աշխարհին կյանք է տալիս:

371 (629). Բայց «եկեք, — ասացին նրանք, — կառուցենք աշտարակ, որի գագաթը հասնի մինչև երկինք» (Մննդ., 11. 4), ըստ նրանց մտադրության. իսկ սա այդպես չէր: Խաչը այն աշտարակն է, որի վրա Աստվածորդին բազմեց, խաչը՝ երկրի վրա և մարմինը՝ նրա վրա: Իսկ Աստվածուծությունը, ո-րը երկնքից էլ վեր է և անվերջությունից էլ վեր, նյութա-կան արարածների անսահման բնությունից վեր, խաչա-փայտի վրա սեղմված և մեխված լինելով, լցվում և տարած-վում է մարմնավորների և անմարմինների մեջ: Նա այն էր, որ բնակվեց առաքյալների և բոլոր սրբերի սրտերում՝ Իր Հոր և Սուրբ Հոգու հետ միասին: Նա էր, որ լեզուներ ներշնչեց՝ խափանված լեզուների փոխարեն: Որովհետև այն առաջին աշտարակից եղավ ցրում, իսկ խաչից՝ հավա-քում. այնտեղ՝ դեպի տանջանքներ տանող մերժում, իսկ այստեղ՝ մերձեցում արքայությունը:

372 (630. LXXXIII). Առաքյալները իրենց մարմնակից-ների հանդեպ սեր հղացան և վերածնեցին բոլոր (մարդ) ա-րարածներին, միախառնելով Աստվածուծությանը: Նրանք բա-ցահայտեցին իրենց, չնայած ընկերների առարկությունը, ո-րովհետև Աստծու մասին էին խոսում: Սրա համար իրենց բարեգործության փոխարեն նրանք՝ թշնամիների պես չար մահվան մատնվեցին. բարության դիմաց նրանք՝ հրավիր-յալները, որ եկել էին բոլորին հրավիրելու Աստվածային սիրո հարսանիքին, ստացան չարություն: Դրվատանքի և պատվի փոխարեն տանջանքների հետ միասին նրանցից ստացան մահ, ինչպես և դուք վարվեցիք ձեր իսկ (նահա-տակների) հետ: Որովհետև դուք այդ բանն արեցիք տգի-

տուլթյունից, որովհետև չէիք հասկանում ձեր իսկական բարիքը:

373 (631). Եվ այսպես, առաջին աշտարակից եղավ ազգերի ցրումը, իսկ հիմա Ինքը՝ Տերը, հավաքեց սփռված ժողովուրդներին և Իր մարմնի հետ, որը մեզնից էր վերցրել, մեխեց այն փայտին, որից կախվեց, որպեսզի նրանց, մեկ հավատքին միասնաբար ծառայեցնելով, անբաժան դարձնի: Իսկ նրանք (առաքյալները) հրաման ստացան (սովորեցնել) սիրել Տիրոջը և կատարել Նրա կամքը, որպեսզի իրենց տոհմակիցների, այսինքն՝ բոլոր մարդկանց հոգիները փրկեն հավիտենական մահից: Որովհետև Տերն Ինքը եկավ և մեռավ բոլորի համար, որպեսզի բոլորին տանի դեպի անմահություն: Իսկ սրանք ուղարկվեցին որպես Նրա կամքի մոնետիկներ, որպեսզի բոլորի համար հասկանալի դարձնեն Աստվածություն կողմից տրվող փրկությունը և բարեբարությունը, որը հենց իրենց համար է:

374 (632). Սրա համար առաքյալները Սուրբ Հոգուց հղացան և ծնեցին լեզուներ, որոնց միջոցով բոլորին հայտնում էին անմահության մասին: Որովհետև Աստծո Հոգին Ինքը եկավ՝ առաքյալների լեզուների միջոցով փորձելու բոլորին, ինչպես փորձվում է արծաթը հնոցում: Դրա մասին է ասում մարգարեն, բոլորին դիմելով, կարծես ամբողջ աշխարհին ասելով՝ շեփորի պես ուժեղ ձայնով. «Փորձեցիր մեզ, Աստված, և քննեցիր, ինչպես և արծաթն է քննվում» (Սաղմ., 65. 10):

375 (633). Եվ իսկապես, արդարները փորձվեցին Սուրբ Հոգու կողմից, ինչպես (արծաթը) հնոցում: Որովհետև նախևառաջ Նա փորձեց նրանց՝ ներշնչելով Հոգու զորությունը. «Փչեց նրանց վրա և ասաց. «Առեք Սուրբ Հոգին» (Հովհ., 20. 22), որպեսզի նախ նրանց արծաթի պես զտի, և կեղտը այրվի: Որովհետև Տիրոջ տունը՝ նույն ինքն աստ-

վածախառն մարմինն էր, որը և աշխարհի համար մաքրվելու հնոց էր: Առաքիլնի առաքյալներն ընկան հնոցի մեջ սկզբից տասներկու թվով: Այրվեց, հալվեց, կորավ նրանցից մեկը՝ Հուդան, կորստյան որդին, որն, ինչպես անագը՝ հրի մեջ, մաշվեց և չքացավ:

376 (634). Մաքրվեցին տասնմեկը և զտվեցին, ինչպես արծաթը՝ հնոցի մեջ, և դարձան Արարչին օգտակար, իմաստուլթյան ընտիր անոթներ: Որպես փորձուլթյուն, տարբեր տեսակի նեղուլթյուն ու տանջանք նրանք կրեցին մարդկանցից, այսինքն՝ նրանցից, ում օգուտի համար էին խոսում: Սիրո մեջ հաստատուն լինելով՝ նրանք վկայուլթյուն էին տալիս իրենց մարմնակից մարդկանց, որոնցից տանջանքներ էին ընդունում, որպեսզի կատարեն իրենց ուղարկող Տիրոջ հրամանները: Նրանք ասում էին ընկերոջ հանդեպ սիրո օգուտի մասին, դիմանալով նեղուլթյուններին, որ արհամարհեցին, որպես անցավոր մի բան: Որպեսզի երբ Արարիչը երկրորդ անգամ աշխարհ գա, նրանք Նրա հետ թագավորեն հավիտենական թագավորուլթյան մեջ, ինչպես հիրավի նրանց մասին ասում է նույն սաղմոսերգուլթի մարգարեուլթյունը. «Փորձեցիր մեզ, Աստված, և քննեցիր, ինչպես և արծաթն է քննվում: Մեզ որոգայթի մեջ գցեցիր, նեղուլթյուն դրիր մեր թիկունքին, և մարդկանց անցկացրիր մեր գլուխների վրայով» (Սաղմ., 65. 10-12):

377 (635). Որովհետև Նա քննեց նրանց Հոգու հրով և մարդկանց միջոցով, որպեսզի փորձուլթյան արշավարանում երևա նրանց արիուլթյունը՝ արդարուլթյան համար կրած հալածանքների միջոցով: Ինչպես և դուք ունեք նրանց օրինակը, որոնք նաև ձեր երկրում, ձեր առաջ Աստվածուլթյան համար նահատակներ դարձան, որովհետև նրանք սիրեցին հույսը՝ Աստվածորդու խոստացած երկրորդ գալստյան: Նրանք իրենց մեջ վերցրին կենդանի Հո-

գուհուհուրը և արժանացան ընդունելու անմահության բխող վտակները: Այս պատճառով նրանք կարողացան դիմանալ, տանել, արհամարհել կրակով տանջվելը և մեղքերի սառույցներով ցրտահարվելը: Նրանք իսկապես արհամարհելով արհամարհեցին մեղքերը և միաժամանակ սպասվող տանջանքների համար գոհություն հայտնեցին շնորհ Տվողին (ասելով), թե «մենք անցանք հրի և ջրի միջով, և դու մեզ հանեցիր հանգստի» (Սաղմ., 65. 12):

378 (636). Որովհետև նրանք նախ անցան մեղքերի կրակի, ջրի և սրի միջով, և արհամարհեցին մեղքերի հուրը, և անօրեննություն ջուրը, և տանջանքների փորձություն սուրը, և (հետո) ստացան կյանքի լուսավորող հուրը, նորացնող ջուրը և սուրը, այսինքն «Աստուծո խոսքը, որն ավելի սուր է, քան ամեն մի երկսայրի սուր և պողպատ, որը, վրահասնելով, կտրում անցնում է մինչև բաժանումը ոգու, մարմնի և շնչի» (Եբր., 4. 12):

379 (637). Այդ պատճառով և մարգարեն, սա նկատի ունենալով, ավելի առաջ ցույց էր տալիս, որ «երկսայրի սրեր կան նրանց ձեռքում» (Սաղմ., 149. 6), որով և պիտի կտրեն, ճեղքեն և լիովին վերցնեն երկրի վրայից ամբարշտություն անօրեննությունները: Իսկ ի՞նչ է լինելու հնձվածը և կտրվածը: Նա ասում է. «Հողմերը պիտի տանեն դրանք, և ամպերը բաժանեն, և փոթորիկը խռիվի նման կուտակելու է դրանք» (Եսայի, 41. 16: 40. 24): Իսկ կուտակվածներին անշեջ հրի են մատնելու: Որովհետև իսկապես, արդար մշակների գործն այն է, որ օգտակար, շահավետ բերքը հավաքեն շտեմարաններում, իսկ փուռն ու դժնիկը կրակի ճարակ անեն:

380 (638. LXXXIV). Եվ ահա, նրանք սկզբից փորձեցին, և հետո աշխարհի հնոցներ դարձան: Նրանք ընկալեցին կյանքի հուրը, նորից մտան հնոցի մեջ, արծաթի պես

զտվեցին, մաքրվեցին և ձուլվեցին Արարչի սիրո մեջ՝ դուրս գալով հնոցի հալոցից որպես կոփված շեփորներ՝ Տիրոջ հրամաններին ծառայելու համար: Նրանք հնչեցրին շեփորները՝ լցնելով աշխարհը: Շեփորները ձայն տվեցին շեփորներին, և ընկերն ասաց ընկերոջը. «Ավետեք օրստօրես նրա փրկությունը: Նրա փառքը պատմեցեք հեթանոսների մեջ՝ բոլոր ժողովուրդների մեջ՝ սքանչելագործությունները նրա, որովհետև մեծ է Տերը և հույժ օրհնյալ, ահարկու է նա բոլոր կուռքերից ավելի» (Սաղմ., 95. 2-4), և թե «Հեթանոսների բոլոր կուռքերը ոչինչ են, իսկ Տերը երկինքն է արարել» (Սաղմ., 95. 5): Իսկ կուռք (կուռքերի) արձանները փոխարինելով՝ առաքյալները անվանվեցին կոփածո շեփորներ, որ (նրանց ձայնով) ամբողջ աշխարհը լցվի, ինչպես ասված է, թե «Ողջ երկիրն է բռնել ձայնը նրանց և մինչև աշխարհի ծայրն են հասել խոսքերը նրանց» (Սաղմ., 18. 5):

381 (639). Նրանք աշխարհի հնոցներն են, և Հոգու կենսական հուրը նրանց լեզուների վրա է, որպեսզի փորձություն ենթարկեն ողջ երկիրը, և Տիրոջ անունից ազդարարեն Աստվածություն ճշմարիտ բնություն հայտնությունը, թե՛ «Տեսեք, տեսեք, որ ես եմ միայն, և ինձանից բացի ուրիշ Աստված չկա», թե՛ «Ես եմ սպանում և ես եմ փրկում, ես եմ հարվածում և ես եմ բժշկում, և չկա մեկը, որ կարողանա փրկել ձեզ իմ ձեռքից», և թե՛ «Իմ սուսերը սրելու եմ կայծակի նման, և վրեժխնդիր լինելու համար ազատ եմ արձակելու իմ աջը, հատուցելու եմ իմ թշնամիներին» (ԲՕր., 32. 39-41):

382 (640). Առաքյալների լեզուները իրենց հավատի անսահմանությունը լցվեցին և ծնեցին (նոր) լեզուներ, որ նրանք չգիտեին: Շեփորի պես նրանք ազդարարեցին Տիրոջ միահանձան իշխանությունը և մարդկանց անթիվ բազմութ-

յուն վերածննցին դեպի հրեշտակների կարգը՝ Աստվածորդուն սպասավորելու համար, որպեսզի ընկած հրեշտակների փոխարեն, որոնք գահավեժ եղան աստվածակիր լուսեղեն սպասավորութունից, մարդու որդիները կարողանան հրեշտականալ, կանգնել և գրավել նրանց տեղերը: (Դա արվում է) որպեսզի սահմանված թիվը փառավորողների մնա նույնը, անխախտտ, լրիվ և անպակաս, որպեսզի փառավորողների հավաքից գովերգութունները շատանալով ուժեղանան, որտեղից իրար ձայնակցելով (հնչելու է)՝ «Փա՛ռք Աստծուն բարձունքներում, և երկրի վրա խաղաղություն, մարդկանց մեջ հաճություն» (Ղուկ., 2. 14):

383 (641. LXXXV). Առաքյալները դարձան աշխարհին ժամանակը հայտնող շեփորներ, որպեսզի ողջ երկրի (մարդկանց) սրտերում դնեն սահմանված ժամի սպասումը, երբ կհնչի Տիրոջ գալուստը ազդարարող շեփորը: Որովհետև նույն հնչյունների տակ, այդ ժամանակ ճանաչելով փողի նույն ձայնը, նրանք մահվան հանգստի քնից արթնանալու են՝ գարնանն ընդառաջ, ինչպես բույսերը, յուրաքանչյուրն իրեն հատուկ տերևներով, նորից կանաչում են: Որովհետև, երբ գա այն գարունը, յուրաքանչյուրը իր սերմի արմատից կվերընձյուղի իր ունեցած կերպարանքի տեսքով:

384 (642). Մեկը (կբարձրանա) իբրև քաղցրահամ և գեղեցկատես արմավենի, ինչպես առաջուց հայտնած մարգարեությունն է ասում. «Արդարները արմավենու պես կծաղկեն և Լիբանանի մայրիների պես կբազմանան: Դրանք կտնկվեն Տիրոջ տանը, ու կծաղկեն մեր Աստծու գավիթներում» (Սաղմ., 91. 13-14): Եվ նորից, (գրա մասին) բոլորին պարզորոշ իմաց է տալիս Ինքը մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, Իր բարի լուր բերող և կենդանություն տվող Ավետարանում. «Թե՛ղենուց սովորեցեք առակը. որովհետև, երբ

նրա ոստերը կակղեն և տերև արձակելու լինեն, իմացեք, —ասում է,— որ մոտ է գարունը» (Մատթ., 24. 32):

385 (644). Որովհետև ծառերի բոլոր տեսակները լավ նմանութուններ և օրինակներ են հանդիսանում՝ ամեն մեկը ունենալով իր արտաքին տեսքը և երբեք չփոխելով ծաղիկների գույնը, համը, հոտը և տերևները: Որովհետև արմավենին ունենում է իրեն հատուկ տեսքը, գույնը, համը և պտուղները, ինչպես և արմատի և ծառի աճելու իր հատկութունները: Նույնպես և թղենին, որն ունի տերևի իրեն հատուկ ձևը և կեղևի բանվածք, և մրգի հատուկ նյութ, և մյուս (բույսերից նրան տարբերող) առանձնահատկութուններ: Կարմիր խնձորը ունի իր ձևը, կարմիր տանձը՝ իր, և կարմիր գեղձը՝ իր ձևը: Իրենց բնությամբ նույնպես (տարբեր) են և այն մրգերը, որ ուրիշ գույներ ունեն, և նույնիսկ նրանց յուրաքանչյուրի արձակած հոտը լինում է տարբեր:

386 (644). Այսպես են և կիտրոնը, բաղսամոնը, դափնին, գեղեցիկ ձիթենին, սերկեխը, մուրտը, ընկուզենին, նուշը, քանրուկը, հաճարուկը, թթենին, նուռը և հոնի ծառը: Եվ բոլոր մրգատու ծառերը, որ ծաղկում են, տերևներ և պտուղներ են տալիս, բարձր և հսկա հասակ ունեցող ծառերը, ինչպես մայրին, նոճին, սոճին, կարմիր կաղնին, սարգենին, կիպարիսը, չինարին, հակրին, գիհին, կաղամախին, ուռենին և տոսախը:

387 (645). Այսպես են և գուլնգուլն, երփներանգ ծաղիկները, ինչպես մանրագորրը, վարդը, շուշանը, ասպագանը, հասմիկը, լոտոսը, սմնակը, նարկիսը, քարխոտը, մեղրուկը, հորոտը և մորոտը, մանուշակը և բոլոր ծաղկավետ խոտերը և ծառերը, որոնք բողբոջելով ծլարձակում են գարնանային ժամանակ, ձմեռայինից հետո:

388 (646). Այսպես է (լինելու) նաև մեռյալների հարու-

Թյունը: Որովհետև այն բանից հետո, ինչ ստեղծվեց աշխարհը, դրանցից (բույսերից) և ոչ մեկը աշնանը կամ գարնանը իր ընկերից փոխարինաբար չի վերցրել և չի տվել իր ծննդյան ժամանակ ստացած կերպարը (ուրիշ) բույսին: Բայց արարչուծյան սկզբից, արարման ժամանակներից մինչև վախճանի ժամանակը, թեպետև աճող բույսերի միջուկը աշնանը աստիճանաբար ցամաքում է, չորանալով նրանք թափում են տերևները և նրանցով պարարտացած անց են կացնում ձմեռը, սառչելով, ճյուղների մեջ թաղված, եղյամով պատած, սառնամանիքից վնասվում են ծաղիկների արմատները, (թալկանում) բազմակուլտ ծառերի պուրակները և բարձրաբերձ աճած մայրիկների անտառները, ստվար և խիտ ճյուղերով հանդերձ, բայց հասնելով գարնանային ժամանակներին, ամպերի լույսով ողողված, ցնցվելով (ամպրոպների) որոտից, անձրևներից հագնելով, ցողով պատած, նրանք առատորեն աճում են ամռանը և նրանցից յուրաքանչյուրը իրեն բնորոշ տերևներով է ծածկվում: Ըստ իր բնուծյան՝ ամեն մեկը գալիս է իրեն հատուկ կերպարանքի ձևին և չի փոխում այն ուրիշի ձևի, իսկ այդ ուրիշը՝ նրա ձևի, այլ համապատասխան այն կերպարանքի, ինչպես որ սահմանել էր Կարգավորողը, նույնուծյամբ կա իր սեփական բնուծյան մեջ: Աստծու հրամանին համապատասխան ստեղծված լինելով (իրենց բնուծյամբ) անխախտ և անփոփոխ, նրանք (այդպես էլ) աճում և փթթում են:

389 (647). Նույնն է նաև (բնուծյունը) ամենատարբեր և այլազան մանր խոտաբույսերի, որոնք իրենց ձևերով զանազանվում են իրարից, ինչպես, օրինակ, մամուռը, վարսակը և կնյունը և նրանց համանմանները: Նաև մարդկանց համար օգտակար սերմերը, ինչպես ցորենը, հաճարը, գարին, կորեկը, գավարսը, ոսպը, ոլոռը, բրինձը, բակլան, սի-

սեռը և շատ ուրիշ սերմեր, որ ոչ ոք չի կարող թվարկել: Նրանք, ամեն մեկը իր ժամանակին, գարնանը ցուցադրում են իրենց հարուծյունը՝ բույսով, համով և հոտով, բողբոջներով, ծաղիկներով և պտուղներով, և նրանցից յուրաքանչյուրը իր մերկուծյունը ծածկում է իրեն հատուկ ձև ունեցող տերևազգեստով:

390 (648). Այսպես և մարդկային հոգիներն ու մարմինները, աստվածային ցողով հագեցած պիտի բուսանեն գերեզմաններից այն մեծ գարնանը: Որովհետև չորացած ոսկորներն իսկույն պատվելու են մկաններով և ջլերով, կրճիկներով և նյարդերով, ծածկվելու են մաշկով և զարդարվելու վարսերով: Եվ նրանց հոգիները և կերպարանքները իրենց են վերադառնալու, որպեսզի նրանք իրենց գլուխների վրա տանեն (միայն) իրենց յուրաքանչյուր գործի պատկերները, ինչպես քաղցր մրգեր և անուշահոտ պտուղներ, իրենց հատուկ համերով և հյութերով, գույներով և հոտերով, փարթամորեն առատ, ջրասնունդ տերևներով ծածկված ճյուղերի զարդարանքով: Սրա մասին սաղմոսագրուն մարգարեաբար երգեց. «Նա նման է լինելու ծառի, որ տնկված է ջրերի հոսանքի մեջ, որն իր պտուղը ժամանակին կտա, և նրանց տերևը չի թափվի, ու ամեն բան, ինչ որ անի, կհաջողվի նրան» (Սաղմ., 1. 3): Եվ նորից, թե «ծաղկելու են Տիրոջ քաղաքում՝ երկրի խոտի նման» (Սաղմ., 71. 16), և թե «օրհնված կլինեն հավիտյան» (Սաղմ., 71. 17):

391 (649. LXXXVI). Եվ հիրավի, բուսաբեր գարունը մարդկանց տալիս է ուսանելի օրինակ մեռելների հարուծյան: Որովհետև ծաղիկներն ու ծառերը զարդարանք են հագնում, նաև փշերն են հասակ առնում, ինչպես դժնիկը և տատասկը, եղինջը և բաղեղը, խայթահարը, ժանտափուշը, տափափուշը, սրափուշը¹, որոմը, կայծուկը, վնասակար

գաղձը և այլ՝ սրանց նմանները. և սրանք բոլորը աճում են՝ ամեն մեկը իր բնության համապատասխան: Իսկ օգտակար ծաղիկները և կամ անտառներում աճող ծառերի ընձյուղները գարնանը ձեռք են բերում իրենց բնական տեսքը:

392 (650). Իսկ մարդկանց հոգիները, որ Աստվածության բուրաստանների տնկած ծառերն են կամ ծաղկոցների ծաղիկները, իրենք իրենց մեջ կարողություն ունեն իրենց կամքով նմանվելու և օրինակ վերցնելու տերևներից, ծաղիկներից, բուրմունքից և պտուղներից: Որովհետև դրանց մի մասը դառնաբեր է, մյուսները՝ քաղցրաբեր, մի մասը՝ մրգաբեր, մյուսը՝ փշաբեր, ոմանք արդարություն բերող, մյուսները՝ մեղք բերող, մի մասը այնպիսի ծաղիկներ են դառնում, որ թագավորական պատվավոր սկուտեղների մեջ դրվելու արժանի են դառնում և օգտագործվում ուրախություն առիթով, որպես զարդ (փառքի) պսակների համար, ըստ Եսայի մարգարեի բերանով ասված՝ Սուրբ Հոգուց բխող գուշակության, թե՛ «Այն ժամանակ Տիրոջ ձեռքին վայելչության պսակ պիտի դառնաս և Աստուծու ձեռքին՝ արքայական թագ: Եվ քեզ պիտի կոչեն՝ Իմ կամքը, և քո երկիրը՝ Շեն բնակություն» (Եսայի, 62. 3-4):

393 (651). Շենը լինելու է այնտեղ՝ աստվածային, լուսավոր, փայլող, առատ և անդրդվելի քաղաքում: Որովհետև այժմ բոլոր բույսերը, նրանցից յուրաքանչյուրը իր բնության հետ կապված է ապրում, բայց միայն մարդկային կոչված տունկերը կարող են՝ յուրաքանչյուրը (իր համար) փոփոխել բնական հատկությունները տարբեր տեսակների: Այժմ, որ բույսը նրանք կուզեն, այն էլ կթաղեն իրենց հոգիներում, և նրա հետ էլ կթաղվեն գերեզմաններում, որը հենց մահն է ոչ թե խոտերի, այլ մարդկանց աշունը, որ հավաքում է (նրանց) իր շտեմարաններում: Իսկ գարունը, ոչ թե խոտերի կամ ծառերի, այլ մարդկանց գարունը

դուրս է արձակում այն կերպարանքը, որը քեզ հետ թաղեցիր գերեզմանում: Որովհետև եթե դու ննջես գերեզմանում քո բուրավետ արդարություն հետ միասին, բուրումնավետ, անուշահոտ ծաղիկի նման, ապա քո հարություն ժամանակ քեզ հետ իսկույն կբուսնի քո արդարությունը: Իսկ եթե մեղքերով ես թաղվել քո անունով (փորված) գերեզմանում, ապա քո գարնանը, քո հարություն ժամանակ քեզ հետ աճած փշերը քո շուրջը կբուսնեն:

394 (652. LXXXVII). Իսկ հիմա լսիր մեծ Հովհաննեսին¹, թե ինչպես է նա հանդիմանում Աբրահամի հրեական ազգը. «Այսուհետև ապաշխարություն արժանի գործեր կատարեք և մի ծեծեք ձեզ (հավակնոտ) և ասեք՝ «Աբրահամը մեր հայրն է»: Ասում եմ ձեզ, որ Աստված կարող է այս քարերից էլ Աբրահամի որդիներ դուրս բերել» (Մատթ., 3. 8-9): Նա ոչ թե Աբրահամին է նսեմացնում որպես հայրապետի, այլ (ընդհակառակը, խրատում է) լինել նրան արժանի զավակներ, և ոչ թե անարժան: Եվ ահա, Նա հոգ է տանում օգտակարների համար, իսկ անպետք խոտերի և փշերի հետ արդյոք ինչպե՞ս պիտի կամենա վարվել: Նա կցամաքեցնի և կչորացնի առաջին հերթին նրանց, ում մեջ պտուղ չի գտնի:

395 (653). Ահա, լսիր թղենու մասին առակը և նկատի առ: Գալիս է Տերը թղենու մոտ, որ պտուղ գտնի նրա վրա, և չի գտնում, քանի որ պտղաբերելու ժամանակը չէր, և անիծում է նրան, (ասելով) թե «այսուհետ քեզնից ոչ ոք պտուղ թող չուտի» (Մարկ., 11. 14): Բայց չէ որ բոլոր բույսերը (իրենց սահմանված) ժամանակին են տերևակալում, ծաղկում և պտուղներ տալիս. իսկ սա ինչո՞ւ անիծվեց: Չէ՞ որ (նրա) պտղաբերելու ժամանակը չէր: Եթե պետք էր, արդյո՞ք Նա չէր կարող, Նա, որ մի բառով հրամայեց երկրին (առաջ) բերել ծառերը և մայրիների բազմությունը՝

յուրաքանչյուրը իր պտղով, և բոլոր բույսերին հրամայեց երևալ երկրի վրա՝ ամեն մեկը իր տեսակին հատուկ սերմով, մի՞թե չէր կարող այն ժամանակ էլ, երբ հանդիպեց, (թուզի) ծառին հրամայել ուտելու համար պիտանի պտուղ տալ:

396 (654). Իմացիր, որ Նա զուր տեղը չէր այդ ծառին անպտղութիւն տալիս, և Ինքը կանխելով (հարցը) ասում է. «Թզենուց սովորեցեք առակը» (Մատթ., 24. 32: Մարկ., 13. 28): Այդ թզենին անպտուղ մարդկանց օրինակ էր հանդիսանում, որովհետև Նա արդարութեան (գործերի) մեջ անպտուղ մարդկանց չորացնելու է փշերի պես: Ահա, լսիր մեծ մարգարեին, (Քրիստոսի) առջևից ընթացող կարապետ Հովհաննեսին, թե ինչպես է ասում. «Այսուհետև կացինը ծառի արմատին է դրված: Ամեն ծառ, որ բարի պտուղ չի տա, կկտրեն և կրակի սնունդ կդարձնեն» (Մատթ., 3. 10): Եվ Եսայի մարգարեն ասում է, թե «Մեղավորները փշի նման պիտի դառնան՝ այրված և դեն նետված» (Եսայի, 33. 12): Իսկ արքայութեան մեջ կենդանի ջրով խնամված դալարողներին Նա այն գարնանը պարարտացնելով պիտի նորոգի, որպեսզի նրանք մեկի դիմաց պտուղ տան հարյուր, մեկի դիմաց՝ երկու հարյուր, մեկի դիմաց երեք հարյուր անգամ ավելի, այսինքն՝ ամեն մեկը իր լուսավոր հավատի համար կստանա հատուցման պարգևները՝ իր վաստակին համապատասխան:

397 (655. LXXXVIII). Հիմա, գարնանային ժամանակը, որը բերում է բույսերի աճ և ծաղկունք, որոնք ձմեռային հնութիւնից հետո բերում են գարնանային գեղեցկութեան նորոգութիւն, (չվող) թռչունները նույնպես իմանում են իրենց գալու ժամանակը: Սա նկատի ունենալով Երեմիա մարգարեն իր ժամանակի դեպքերի առիթով որպես հանդիմանութիւն և ակնարկելով ապագայում (սպասվող իրա-

դարձութիւնները)՝ ասում է. «Արդարև, վայրի թռչունները՝ ծիծեռնակն ու տատրակը և արագիլը, գիտեն իրենց վերադարձի ժամանակը» (Երեմ., 8. 7): Որովհետև գարնանային եղանակով և իրենց գալուստով իմաց են տալիս մարդկանց կյանքի ուրախութեան ժամանակը՝ ձայներ արձակելով, երգելով, ճուղողելով, բներ շինելով:

398 (656). Ծիծեռնակը սիրում է մարդկանց. երբ մարդիկ տեսնում են (նրա գալը), նրանով իմանում են, որ (մոտ է) կանաչազգեստ հասկերի գարնանային աճը: Իսկ տատրակը, ցուցադրելով իր ամուսնասեր լինելը, մարդկանց լսողութիւնը հագեցնում է ջերմ ու քաղցր ձայներով: Նա թեթև շյուղերով հյուսում է իր փայտակերտ, համարյա քաշ չունեցող, համեստ բույնը՝ պատրաստելով հուսալի ապաստան իր (ապագա) ձագերի մի զույգ ձվերի համար:

399 (657). Կռունկները ևս, շարքեր կազմած, գալիս են գարնանը՝ մեծ երամներով (արտերի վրա) կուտակվելով: Բարձրանալով վեր՝ նրանք հասնում են բարձր տեղերի, թևերը բացած, փոփոխական քամիներին ընդառաջ հաղթահարում են օդային անհաստատ ճանապարհը՝ հաստատուն պահելով (թռչքի) ուղղութիւնը: Նրանք շեփորների նման բարձր ու զիլ ձայներ են արձակում, քնից արթնացնում են մշակներին՝ մարդկանց համար օգտակար գործերի անցնելու համար և կանուխ վեր կացող (հողագործներին) շտապեցնում են դեպի եզները:

400 (658). Այդ թռչունները երկրագործներին, հողի մշակներին առաքինի գործերի հորդորող շեփորներ են, ինչպես մեղուն և կամ մրջյունը (իրենց օրինակով) ծուլերի համար ուսուցիչ և նախատող են (Առակ., 6. 6, 8), նույն օրինակի պես այս թռչունները նման են մեծածայն, մեծագոչ շեփորի, որն ազդարարելու է բոլորին Տիրոջ (երկրորդ) գալստյան ժամանակ մեռելների հարութեան մասին, ինչ-

պես (դրա մասին) ասում է Սողոմոնը՝ աստվածային իմաստությամբ ներշնչված երգի հետևյալ նվագում. «Պիտի գարթնեն բանտարկյալները թռչունի ձայնից» (Ժող., 12. 4): Եվ ովքե՞ր են բանտարկյալները, եթե ոչ հավաքված հոգիները (Ա. Պետր., 3. 19), հրամանի տակ պահված, որոնք բոլորն էլ, յուրաքանչյուրն իր մարմնով է զգեստավորվելու, ամեն մեկը ստանալու է իր կատարած գործերի (համարժեք) հատուցումը, յուրաքանչյուր մարդ ստանալու է պտուղները իր ցանած սերմերից, ինչպես մենք վերը պատմեցինք ձեզ և դեռ էլի պիտի պատմենք:

401 (659. LXXXIX). Իսկ երանելի առաքյալները դարձան ազդարարող շեփորներ, որպեսզի բոլոր լսողներին սովորեցնեն պատրաստակամ լինել սպասելու աստվածային շեփորի գալստյան, որ բոլորին առանց արգելքի միախառնեն թռչունների այն երամին, որտեղից և պիտի հնչի հարուստություն ազդարարող փողի ձայնը, որպեսզի սրանք ևս արժանի լինեն թևեր առնելու և դեպի վեր ճախրելու, և չամաչեն տեսնել բարձունքների Տիրոջը, այն Տիրոջը, որը հեռվից է ճանաչում և փրկում նեղության մեջ ապրածներին, որոնք արդարության (հաղթանակի) համար, Աստծու հանդեպ ունեցած սիրո պատճառով անձամբ կրեցին ծանր փորձություններ:

402 (660). Ահա սրանք կատարեցին իրենց Տիրոջ կամբը, որովհետև սիրեցին միմյանց, որովհետև Նա էլ այնքան սիրեց նրանց, որ «Իր կյանքը տվեց իր բարեկամների համար» (Հովհ., 3. 16: 15. 13-14): Իսկ նրանք հրաման ստացան սիրել իրար, որպեսզի դրա շնորհիվ իրենց հոգիներում ընկալեն խոստացած շնորհները:

403 (661). Դրա համար նրանք իրենց սրտերում ծածուկ պահած սերը բացահայտ ցույց տվեցին, երբ միահամուռ համաձայնությամբ հավաքվեցին վերնատան մեջ, որտեղ

իջնելով նրանց գտավ Սուրբ Հոգին և, օթևան առնելով, բնակվեց նրանց մեջ, որպեսզի հագեցնի այն կարոտը, որ նրանք ունեին Տիրոջ հանդեպ, և իրագործի այն ամենը, ինչ Նա խոստացել էր: Որովհետև ասում է. «Ես գնում եմ և ձեզ մոտ կուղարկեմ Մխիթարիչին, որը գալով կմխիթարի ձեր սրտերը. Նա, — ասում է, — Ինձ պիտի փառավորի, որովհետև ինչ որ առնում է Ինձնից, պատմելու է ձեզ» (Հովհ., 16. 7, 14): Նա Երրորդության միաբանության սիրով է լցնելու նրանց միաբանությունը, որի մասին Տիրոջից են հրաման առել, թե՛ «Գնացեք ամբողջ աշխարհով մեկ, աշակերտ դարձրեք բոլոր լեզուներին և մկրտեցեք նրանց Հոր ու Որդու և Սուրբ Հոգու անունով, և սովորեցրեք պահել այն բոլորը, ինչի մասին խոսեցի ձեզ հետ, և ես ձեզ հետ եմ ձեր կյանքի բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը» (Մատթ., 28. 19-20):

404 (662). Նա տվեց նրանց Երրորդության համագոյ իշխանություն, երեք Անձերի համագործության մասին ճշմարիտ գիտությունը, որպեսզի նրանք դրա համաձայն սովորեցնեն բոլորին և մկրտեն հանուն Հոր և Որդվի և Հոգվույն Սրբո:

405 (663). Սուրբ Հոգու գորությունն ընկալելով՝ նրանք ստացան նաև բոլոր ազգերի բաժանված լեզուների իմացությունը, որպեսզի կարողանան ամբողջ աշխարհում բոլոր երկրների մարդկանց հասկացնել Աստվածության հրամանները, Արարչի սերն իր արարածների հանդեպ և (բացատրեն, թե ինչպես) մեզ բարձրացնելու համար Նա խոնարհվեց և (հաղորդեն) անմահ լինելու հույսը՝ մեռելների հարությունից հետո: Նաև այն մասին, որ Ինքը՝ Որդին, Իր հավերժության, գորությունը և Աստվածության (Հռոմ., 1. 20), մեր փրկության համար եկավ, մարդու բնություն հագավ, հատկապես իր բոլոր արարածների նորացման հա-

մար, որպեսզի բոլորին տա իմացությունն այն մասին, որ նրանց համար են այս մեծամեծ շնորհները տրվել:

406 (664). Այդ ժամանակ նրանցով ի կատար ածվեցին նախապես մարգարեություններում ասված ընծայաբերումները, թե «այն օրերին Հուդայի երկրի հազարապետները պիտի ասեն իրենց սրտերում՝ «եկեք գտնենք Երուսաղեմի բնակիչներին նրանց Ամենակալ Տեր Աստծու ձեռքում» (Ձաք., 12. 5): Որովհետև նախ այնտեղից իրենց ազգին տվեցին իմացությունը և այնտեղից՝ Երուսաղեմից, աշխարհով մեկ նրանք տարածեցին աստվածապաշտությունը:

407 (665). Եվ քանի որ բոլորի Տերը դուրս եկավ Հուդայի ցեղից, այդ պատճառով սրանք կոչվեցին Հուդայի տան հազարապետներ: Սա պարզաբանեց Պողոս առաքյալը, բացեց, բացատրեց՝ ասելով. «Մենք Աստծու խորհուրդների հազարապետներ ենք» (Ա Կորնթ., 4. 1): Ուրեմն, նույն Հոգին ավելի առաջ իսկապես դա է հայտնում մարգարեի բերանով. «Այն օրը, – ասում է Տերը, – Հուդայի երկրի հազարապետներին իբրև ջահեր պիտի դնեմ փայտերի մեջ և իբրև վառված դամբարներ (ջահեր)՝ եղեգնի մեջ, և նրանք աջից ու ձախից պիտի ուտեն շրջակա բոլոր ժողովուրդներին» (Ձաք., 12. 6): Մի քիչ անց նա նորից ասում է. «Շնորհի և գթության հոգի պիտի հեղեմ Դավթի տան և Երուսաղեմի վրա. և նրանք (իրենց հայացքները) պիտի դարձնեն դեպի ինձ» (Ձաք., 12. 10): Դա իսկ գալով կատարեց ինքը՝ Սուրբ Հոգին, որն ուղարկվել էր Հորից և Որդուց: Որովհետև ինչպես Որդին ուղարկվեց և եկավ Հորով և Հոգիով, այդպես և Հոգին ուղարկվեց Հորով և Որդիով, որպեսզի հայտնի դառնա, որ միասնական և համագույն է (նրանց) էությունը:

408 (666. XC). Նա եկավ Երուսաղեմ քաղաքը և, նրանց գտնելով ի մի հավաքված, լցրեց նրանց սրտերը միասնա-

կան զորությամբ, որպեսզի ի կատար ածվեն այդ նույն Հոգու ավելի առաջ՝ Հովել մարգարեի բերանով ասածները. «Եվ դրանից հետո վերջին օրերում, – ասում է Աստված, – այնպես կլինի, որ իմ Հոգուց կհեղեմ բոլոր մարմինների վրա, և կմարգարեանան ձեր որդիները և դուստրերը. ձեր երիտասարդները տեսիլքներ են տեսնելու, և ձեր ծերերին երազներ են գալու, և իմ Հոգուց սփռելու եմ իմ ծառաների և իմ աղախինների վրա, որ մարգարեանան, և նշաններ եմ տալու վերևում՝ երկնքում, և ներքևում՝ երկրի վրա, արյուն, հուր ու ծխի մրրիկ. արեգակը կխավարի, և լուսինը արյուն կդառնա, քանի դեռ չի եկել Տիրոջ մեծ և երևելի օրը: Եվ կլինի այնպես, որ ամեն ոք, որ կանչի Տիրոջ անունը, նա կապրի» (Հովել, 2. 28-32: Գործք, 2. 17-21):

409 (667). Եվ ի՞նչ է նշանակում «վերջին օրերում» ասածը: Այն, որ երբ Աստված ստեղծեց արարածներին, Նա առաջին օրը սկսեց և վեցերորդում ամեն ինչ ավարտեց՝ (Իր) ամենակարող զորությամբ, առանց ջանքի, աշխատանքի և առանց հապաղելու, և իր բոլոր գործերից հանգիստ առավ, և այդ յոթերորդ օրը կոչեց հանգիստ (Ծննդ., 2. 2-3):

410 (668). Իսկ երբ Աստվածությունը տեսավ մարդուն սայթաքած, ընկած և պատվիրանապահությունից հեռացած, – որովհետև չէր մնացել առաքինություն (պատվիրանի շրջանակի) մեջ, ինչպես Նա էր ցանկանում, և (դրա համար մարդը) արդար դատաստանով ստացել էր արժանի պատիժը, ենթակա դարձել մահվան, վերքերով խոցված, ընկղմված հոգսերի, հուզմունքների, աշխատանքի, քրտնաթոր ցավերի, կասկածների և անհանգիստ երերմունքի մեջ, – (Աստված) չվերադարձավ Իր ասած խոսքին, այսինքն (չպնդեց) մահվան վճիռը, որ դրել էր (մարդու համար): Բայց արարչություն ժամանակին համապատասխան, որը

կատարել էր վեց օրերի ընթացքում՝ Իր մեծությունը բացահայտելու համար, Նա չափեց սրա օրինակով վեց հազար տարի երկրի համար՝ տանջանքների, քրտինքի, հոգսերի և տաժանության (բաժինը): Այն առաջին վեց օրերի դիմաց Նա սահմանեց մի-մի հազարական տարի, որոնց ընթացքում պիտի ծնվեն, ապրեն և բազմանան (մարդկանց) բազմաթիվ սերունդները:

411 (669). Դա լինելու է նաև փորձությունների մի շրջան արդարների համար, երբ Նա հատուցման նպատակով ընտրություն է անելու՝ իրականացնելով խոստացած պարգևների հույսերը՝ արդարների կրած տառապանքները ժուժկալելու համար, և այս ամենը որպես (փորձության) հնոց (վեցհազարամյա) շաբաթվա տարիների ընթացքում, ինչի մասին և բացականչում էր մարգարեն, բոլորին ազդարարելով, որ «Հազար տարին Տիրոջ աչքում մի օրվա պես է, որ անցավ» (Սաղմ., 89. 4):

412 (670). Որովհետև առաջին (հազարամյակում) սկիզբն էր, իսկ վեցերորդում՝ նորոգումը, որը Նա կատարեց Իր գալստյամբ և պարգևեց Հոգու վայրէջքը: Նույն հազարամյակում¹ լինելու է վերջը, ինչի համար էլ այն կոչվում է հետին (ժամանակ), երբ Նա գալու է նորից, երկրորդ անգամ, և Իր հետ բերելու է յոթերորդ օրվա ժամանակի խորհուրդը՝ հանգստություն և պարգևներ առանց հաշվի և առանց չափի: Իսկ քանի որ Իր արարչության յոթերորդ օրը Ինքը հանգիստ է անվանում, դրա համար էլ հրամայում է յոթերորդ օրը պահպանել սուրբ և անաշխատ, որպեսզի բոլորը, իմանալով Արարչի անաշխատ օրը, հանգստով պատվեն այն: Որովհետև նույն ձևով յոթերորդ դարում (հազարամյակում) Նա հանգիստ է տալիս վաստակյալներին, որոնք գործում էին իրենց հատկացված վեցհազարամյա ժամանակաշրջանում: Ինչպես որ Նրա հետ գործեցին

իրենց ժամանակին, այնպես և Նրա հետ հանգստանալու են այն անչափ երկար տարում, և Նրա հետ ուրախանալու են:

413 (671. XCI). Իսկ այս վեցերորդ (հազարամյակում) Աստվածային Հոգին երևաց, որպեսզի կատարի մարգարենների բերանով նախապես ասված Իր խոստումները: Եվ այս վերջին ժամանակներում Սուրբ Հոգու շնորհները հեղելով թափվեցին, սփռվեցին մարդկանց կուտակված բազմության վրա, հոսեցին ինչպես հորդառատ և ուժգին ընթացող ջրերի հոսանքներ:

414 (672). Նրանք (առաքյալները) սկսեցին մարգարենների պես բացել թաքուն, խորհրդավոր իմաստները, հանկարծ խոսեցին բոլոր լեզուներով, բոլոր ազգերին հավասարապես (ցույց տվեցին ինչպես) վեր բարձրանալ դեպի արքայութուն: Նրանք ընկալեցին տեսիլքների հայտնությունները, բոլորին պատմեցին անճառելի Բանի մարմնավորման մասին, հայտնեցին Աստվածորդու հավերժական հարսանյաց խորհուրդը, այսինքն՝ համբառնալը՝ որդեգրության համար, և նույն Որդու և Հոգու միջոցով Հոր հետ տոնախմբելը: Նրանք (առաքյալները) եղան մունետիկներ՝ բոլորին դեպի մկրտության ավազան կանչելու համար, որպեսզի նրանց վրայից լվանան սատանայական ծխի աղտը, կարողանան հազնել լուսավոր հազուստներ և միանալ հարսանյաց ուրախությանը, ուր Քրիստոս փեսան ուրախանալու է հարսի հետ, այսինքն՝ այն արդար մարմնակիցների հետ, ովքեր որ Քրիստոսի համար¹ չարչարանքներ կրեցին, Նրա հետ էլ պիտի թագավորեն (Բ Տիմ., 2. 12):

415 (673). Եվ ահա Հոգու շնորհները բացվեցին և թափվեցին բոլոր մարդկանց վրա, որպեսզի բոլորին արժանացնեն նորապարգև, նորատուր, նորաբեր աստվածային շնորհին: Որդիներին և դուստրերին, ծերերին և երիտասարդներին, ստրուկներին և ստրկուհիներին¹ (Հովել, 2. 29: Գործք,

2. 18) Հավասարապես Նա ընծայեց Սուրբ Հոգու շնորհները, որպեսզի մեջտեղից վերացնի տարբերությունը², որպեսզի «չլինի խտրությունն ո՛չ հրեայի և ո՛չ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ տիրոջ, ո՛չ տղամարդու և ո՛չ կնոջ, որովհետև զուրկ ամենքդ միապես արժանի պիտի լինեք Քրիստոսին» (Գաղատ. 3. 28): Եվ այսպես ոչ միայն սա (որոշեց), այլև չարագործների առջև բացեց թողութայան դռները, որպեսզի և՛ մաքսավորները, և՛ պոռնիկները, և՛ մարդասպան ավազակները, և՛ անգամ իրեն իսկ խաչ հանողները լինեն Նրա ավետարանիչները (տարածելով), որ Նա բերում է փրկություն, տալիս է թողություն և (երկնային) արքայություն է շնորհում բոլորին:

416 (674). Եվ ահա, բոլոր (առաքյալները) լցվեցին Սուրբ Հոգու զորություն հորձանքով, անցան աշխարհով մեկ, որպեսզի բազմալեզու ազգերին իմաց տան Աստվածություն հրաշքների մասին, ուշադրություն դարձնեն այն նշանների վրա, որ Նա տալիս է վերևում՝ երկնքի վրա, և ներքևում՝ երկրի վրա, այն խոստմանը համաձայն, թե «հրաշքներ ցույց կտամ երկնքում և երկրի վրա՝ ներքևում» (Հովել, 2. 30): Երկնաբնականների համար հրաշքն այն էր, որ նրանք Աստծու Որդուն մարդացած տեսան վերևում՝ երկնքի վրա և Նրա հետ միասին՝ Նրա կամքը կատարող (արդար) մարմնակից մարդկանց՝ Նրա հետ միասին թագավորող և հրեշտակների գնդին միացած ու միախառնված:

417 (675). Իսկ ներքևում, երկրի վրա Նա այն հրաշքը կատարեց, որ մարդիկ Աստծո նույն Միածին Որդուն տեսան երկրի վրա՝ խոնարհ, մարդ դարձած և խաչի վրա, որպեսզի (մեզ համար) Նա հեղի իր արյունը, որտեղից և պիտի վառվեր կրակը՝ առաքյալների համար և նրանց լեզուների վրա լապտերներ պիտի գային, որպեսզի հավեն, այրվեն և վերանան բոլոր մարդկանց մեղքերը: Որովհետև ին-

քը՝ Աստծո Որդին, եղավ գառ և խաչի վրա մատուցվեց իր Հորը որպես (մարդկանց հետ) հաշտության պատարագ, և Նա ամբողջովին վերացրեց աշխարհի մեղքերը (Բ Կորնթ., 5. 18):

418 (676). «Հուր, – ասում է, – արյուն և ծխի մրրիկ» (Հովել, 2. 30): Մաքրող հուրը, Սուրբ Հոգին, որը և մաքրեց և մաքրում է բոլորին, և նրանք մաքրվում են Քրիստոսի արյամբ: Իսկ ով չի ցանկանում մաքրել իր կուտակված մուրը, նրանց համար հայտնություն օրինակ է հանդիսանում (կրակից) խանձվածի մերկությունը: Եվ իր արյունը, որը Նա հեղեց նրանց փրկություն համար, որն արժանիների համար (ճանապարհ) է դեպի (երկնային) թագավորություն, Նա այդ նույն արյունը (անարժանների համար) կդարձնի նրանց կործանման ուղի: Արեգակը խավար դարձավ և լուսինը՝ արյուն այն ժամին, երբ Տիրոջը տեսան խաչի վրա տանջվող: Որովհետև դա այն երևելի օրը չէր, որը դեռ գալու է՝ բոլորին դատելու և դատաստանով արդարացնելու օրը, այլ փրկության օրը, երբ բոլորը Նրա շնորհներով արդարացվում են (Հռոմ., 3. 24-25):

419 (677). Որովհետև այդ ժամանակ արեգակը և լուսինը մոռնետիկներ դարձան: Որովհետև արեգակը իր խավարումով բողոքեց, բոլորին ցույց տալով խաչի վրա (գամված) Տիրոջը և, չկարողանալով նայել այդ տեսարանի վրա, խավարեց, որովհետև չէր կարող տեսնել Տիրոջ (պատճառած) անարգանքները: Իսկ լուսինն ավելի մեծ (նշաններ) ցույց տվեց, որովհետև հայելու նման բոլոր արարածներին ցույց տվեց վերևից, բարձրությունից իր միջի արյունը՝ բոլոր աշխարհների փրկությունը, որոնք իրենց մտքով ընկալելու են այդ արյունը, իրենց որպես արքայություն (խոստացող): Իսկ նրանք, ովքեր կարհամարհեն այս և չեն գա այսպիսի պարգևների բաշխմանը, լուսինը այդպիսիներին

որպես օրինակ ցուցադրելու է իրենց մարմիններից միշտ բխացող արյունը, որոնցից բխելու են դժոխքի կործանող հավերժական տանջանքների անմահ որդերը:

420 (678). Դրա մասին է ասում (մարգարեն). «Նշաններ եմ տալու վերը՝ երկնքում և ներքևը՝ երկրի վրա» (Հովել, 2. 30), Տերը՝ խոնարհ երկրի վրա, խաչի վրա, իսկ լուսատուները վերևում, որպես մուկնետիկներ, որ ազդարարում են ողջ տիեզերքին: «Արյուն և հուր և ծխի մրրիկ» (Հովել, 2. 30). երկու բան նկատի ունի (մարգարեն), մեկը՝ կյանքի ավետումը, իսկ մյուսը՝ սպառնացող պատիժների արհա-վիրքը: «Արեգակը խավար է դառնալու և լուսինը՝ արյուն, մինչև որ գա Տիրոջ մեծ և երևելի օրը» (Հովել, 2. 31), այսինքն, դա նշանակում է հատուցման օրվա գալը, որովհետև դա հենց այն մեծ և երևելի օրն է:

421 (679). Իսկ մինչև այն (օրվա) գալը, «ով որ կկանչի Տիրոջ անունը, կփրկվի (Նրա ողորմածություն) շնորհիվ» (Գործք, 2. 21: Հռոմ., 10. 13): Որովհետև Աստված իջավ երկրի վրա և մարդկանց բարձրացրեց երկինք, և հոգեղեն արարածներին խառնեց հոգևորների հետ: Նա ամբողջովին նորացրեց և երիտասարդացրեց արարածներին: Նա (մկրտելու համար) բացեց ավազանի արգանդը, որպեսզի նրանք նորոգվեն և վերստին ծնվեն որպես արքայություն մանուկներ՝ այն մկրտությունից: Որովհետև առաքյալները հանդիսացան (մկրտման) ավազանի արգանդ, վերստին ծնեցին ողջ տիեզերքը և (մարդկանց) ուղղեցին դեպի մանկական անմեղության չխարդախված կաթը, որպեսզի բոլորին դարձնեն Աստուծո որդիներ և Քրիստոսի միջոցով՝ փրկության ժառանգավորներ, ինչպես և երանելի Պողոսը ասաց. «Որդյակներս, դուք, որոնց համար վերստին երկունքի մեջ եմ, մինչև որ Քրիստոս կերպարանվի ձեր մեջ» (Գաղատ., 4. 19):

422 (680. XCII). Եվ այսպես, նրանք երիտասարդացրին ամբողջ աշխարհը՝ այն պատճառով, որ ստացան Նրա՝ Հինավուրցի¹ զորությունը, որը երիտասարդացավ, ինչպես դրա մասին ավելի առաջ երգեց (մարգարեն), ասելով իր աստվածախառն իմաստուն խոսքը, «Թագավորը կվերադառնա երիտասարդության» (Սաղմ., 102. 5): Որովհետև աշխարհը ևս երիտասարդացավ, քանի որ նրանք տեսան Տիրոջը երիտասարդացած:

423 (681). Առաքյալներ նորից ծնեցին ողջ աշխարհը՝ ջրի և Հոգու միջոցով. նրանք բոլորին աղեցին հրով, որովհետև հրաման ստացան այն մասին, որ «ամեն ոք հրով պիտի աղվի» (Մարկ., 9. 48): Նրանք անքակտելիորեն կապվեցին Աստվածությունը և սկսեցին լույս արձակել, զմայլեցրին և լցրին աշխարհը (հոգևոր) նվերներով: Որովհետև «ովքեր որ մի անգամ մկրտվեցին ի Քրիստոս, զգեստավորվեցին Քրիստոսով և Նրա Հոգով»¹ (Գաղատ., 3. 27): Լույսի աղբյուրից նրանք խմեցին շնորհներ, և նրա ահեղ նշաններով, հրակուտակ զորություններ, աղով համեմեցին և ամրացրին (մարդկանց), պիղծ հեթանոսությունից նրանց ստացած գարշահոտ մեղքերից (ձերբազատելով) տարան դեպի (հոգևոր) ապաքինման առողջությունը:

424 (682). Նրանք առատ ցողով և հոգևոր անձրևով հագեցրին մարդկանց սրտերի անապատ դարձած մարմնավոր երկիրը: Նրանք բերեցին խաղաղություն՝ ծովի պես լեցուն, և փրկություն՝ գետի պես հորդահոս, և ողջություն ու հավատ՝ մշտաբուխ աղբյուրների նման, Աստվածության սերը՝ ուրախության բաժակի նման, մարդկանց սրտերում տնկեցին ահ և երկյուղ՝ կրակի նման: Որովհետև, ինչպես ճարտար դարբինը վերցնում է երկաթը և, գցելով այն հնոցի մեջ, շիկացնելով հասցնում է նրան կրակի գույնին, դրա նման և արդարները նետվեցին արդարության հնոցի մեջ և

ներկվեցին Սուրբ Հոգու շողերով ու գույներով: Նրանք Քրիստոսին ամբողջությամբ ընկալեցին իրենց մեջ և Աստվածուծայան սերը լույսի պես վառեցին իրենց հոգիներում: Նրանք ուժ ստացան վերևից և քաջ մշակների պես սկսեցին աստվածապաշտության սերմը բուրբ ազգերին հասցնելու (աշխատանքը):

425 (683). Նրանք դարձան վառվող ճրագներ՝ աշտանակի վրա, այսինքն՝ խաչի վրա: Եվ նրա ճառագայթների ուժով նրանք լուսավորեցին ողջ աշխարհը, բոլոր մարդկանց միջից հալածեցին մթության խավարը, որպեսզի նրանց ունակ դարձնեն ընկալելու աստվածային սերը: Նրանք սփռվեցին աշխարհով մեկ՝ ճշմարտության քարոզիչներ լինելու համար. «Որովհետև չկա ո՛չ արգելք և ո՛չ խտրություն ո՛չ հրեայի և ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի և ո՛չ տիրոջ, ո՛չ տղամարդու և ո՛չ կնոջ, որովհետև բոլորը մեկ են ի Քրիստոս» (Գաղատ., 3. 28):

426 (684). Եվ հրեական ազգից շատերը, իրենք իսկ առաքյալները, իսկական անասան սյուներ դարձան, և շատերը հեթանոսներից նրանց օրինակն իրենց վրա բարձաժ տանում էին առաջ, շատ ազատներ և շատ ստրուկներ: Ազատները ազատությունից ընթացան դեպի թագավորություն՝ Նրա միջոցով, որը, թագավոր լինելով, նրանց համար խոնարհվեց բարձրությունից (Փիլիպ., 27). իսկ ստրուկները ստրկությունից ընթացան դեպի ազատություն՝ Նրա միջոցով, որը ստրուկի կերպարանք առավ (Փիլիպ., 2. 7) և բոլորին ազատեց խավարի ծառայությունից: Իսկ հրեաները՝ (նրանց) հայրերը և մարգարեները, իրենց ազգին ավանդեցին առաջին խորհուրդը: Բայց երբ եկավ և հասավ ավետված խոստումը (Գործք, 13. 32), այն ժամանակ հայտնապես նրանց մեջ ծագեց արդարություն Արեգակը (Մաղաք., 4. 2), որը ինքը՝ Քրիստոսն է: Իսկ ում հավիտենա-

կան կյանք էր պատրաստված, որ հավատացին Նրան, նրանցից եղան քարոզիչներ և աշխարհի առաքյալներ՝ առաջին վկաները¹: Նաև հեթանոսներից բարձրացան մարդիկ, հորդեցին հավատացողները՝ զնդերով, շատացան վկաները՝ շարքերով, և լցրին ողջ երկիրը: Որովհետև կյանքի Ավետարանը սկսեցին քարոզել ողջ տիեզերքով մեկ ոչ միայն տղամարդիկ, այլև սուրբ կանայք, որովհետև նաև կանայք օրհնվեցին՝ կուսական որդեծնություն համար, որ եղավ նրանցից²:

427 (685). Եվ այսպես, իսկական սյուները՝ առաքյալները, գուգակիցները, որ խոսեցին բոլոր լեզուներով, դուրս եկան աշխարհ, վիճակ գցելով՝ բաժանեցին բոլոր ազգերին (իրար մեջ): Նա ուղարկեց նրանց և իշխանություն տվեց՝ գործելու նշաններ և հրաշքներ, կենդանացնելու մեռածներին, բուժելու հիվանդներին, առողջացնելու հաշմանդամներին, քայլեցնելու կաղերին, լուսավորելու կույրերին, վերադարձնելու լսողությունը խուլերին և խոսեցնելու համբերին, մաքրելու բորոտներին, վերացնելու բոլոր ցավերն ու վշտերը, փախցնելու դևերին՝ մարդկության թշնամիներին, ոտնակոխ անելու սատանային՝ մոլորված մարդկանց մեղքերի պահապանին, աստվածապաշտությունը իմացող դարձնել ամեն մեկին և խափանել մոլորությունները, համոզել բոլոր ազգերին հավատալ Արարչի հրամաններին:

428 (686. XCIII). Եվ այսպես, Քրիստոսի կողմից հավաքված և (Նրա) խաչը կրող առաքյալների մեջ գլխավորներն էին Պետրոսն ու Անդրեասը, Հակովբոսն ու Հովհաննեսը, Փիլիպպոսն ու Բարդուղիմեոսը, Թովմասն ու Մատթեոսը, Հակովբոսն ու Սիմոնը, Թադեոսն ու Բարսաբասը, Մատթիոսն ու Հակովբոսը, Մարկոսն ու Ղուկասը, Պողոսն ու Բառնաբասը և ուրիշներ ևս, որ նմանվեցին սրանց: Սրանք, որ յոթանասուն էին¹, Տիրոջից հրաման ստացան

քայլել իժերի ու քարբերի վրայով և կոխոտել թշնամու զորությունը (Սաղմ., 90. 13: Ղուկ., 10. 19), լինել աշխարհի լույսը (Մատթ., 5. 14) և Սուրբ Հոգու աստվածային աղով շաղել և կապել մարդկային տգիտութունից եկող չարության ավերիչ ուժը: Քաջ մարտիկների պես, որպես ռազմասեր կտրիճներ² նրանք առաջ նետվեցին առաքինության ասպարեզ: Նրանք պատրաստ էին կրելու առաջիկա չարչարանքները և տանջանքները, որպեսզի իրենց ճգնության և վաստակածի դիմաց, ոչ ճրիաբար, այլ որպես պարգև, պատերազմի կռիվներում համբերությամբ տանելով բռնությունները, իրենց համար վաստակեն Աստծո արքայությունը: Որպես քաջ մարտիկներ նրանք ամրակուռ զրահի պես իրենց պատեցին հավատով ու սիրով, որի վրա չեն կարող ազդել թշնամու բանասարկության նենգ նետերը, և փրկության հույսը որպես անխոցելի սաղավարտ դնելով՝ նրանք անցան ողջ աշխարհը և գերեցին բոլոր ազգերին: Ստանալով համբերության նաև այլ օրինակներ՝ նրանք պատմեցին դրանց մասին՝ ուրիշներին ուղղված թղթերի միջոցով: Որպես օրինակ նրանք բերում էին նախորդների կյանքը՝ ասելով, թե «որպես օրինակ վերցրեք, եղբայրներ, մարգարեների երկար համբերությունը, որոնք խոսեցին Տիրոջ անունով» (Հակ., 5. 10), և թե «լսել եք Հոբի համբերության մասին և տեսել, ինչ որ Տերը նրան արեց վերջում» (Հակ., 5. 11):

429 (687). Որովհետև Տերը նույն համբերությունն էր սովորեցնում նրանց. «Երանի է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն և սպանեն իմ պատճառով: Ցնծացեք և ուրախացեք, որովհետև երկնքում ձեր վարձը շատ է» (Մատթ., 5. 11-12), և օրինակ է բերում. «Այսպես հալածեցին մարգարեներին, որոնք ձեզնից առաջ են եղել» (Մատթ., 5. 12), և թե «Դուք եք երկրի աղը և աշխարհի լույսը» (Մատթ., 5.

13, 14): Եվ նրանց համար որպես օրինակ բերեց Իրեն, որ Ինքն էր իրենով կատարել ամեն ինչ, ինչպես և նրանք ցույց տվեցին ուրիշներին՝ ասելով, թե «մենք տեսանք Տիրոջը՝ հենց Իրեն անձամբ» (Գործք, 9. 27: Ա. Հովհ., 1. 2):

430 (688. XCIV). Այնուհետև նրանք սփռվեցին բոլոր ազգերի մեջ՝ Աստվածության մասին զիտելիք տալու, Աստվածությանը բոլորին ծանոթ դարձնելու համար, ինչպես առաջներում երգել էր մարգարեն, նախապես իմանալով նրանց մասին՝ Սուրբ Հոգու ներշնչմամբ, թե՛ «Լսեցեք այս, համայն ազգեր, և ականջ դրեք բոլորդ, որ բնակվում եք աշխարհում, երկրածիններ և մարդկանց որդիներ, բոլորը միասին՝ մեծամեծներ և տնանկներ» (Սաղմ., 48. 2-3): Եվ այսպես նրանք սփռվեցին ողջ աշխարհով մեկ, բաժանվելով բոլոր լեզուների միջև, ինչի մասին վկայում էին բոլոր կողմերից եկած հրեաները, թե «մենք նրանց լսում ենք մեր յուրաքանչյուրի բարբառով» (Գործք, 2. 8), որ առաքյալների տեսել էին մի տեղում հավաքված՝ մինչև աշխարհով մեկ սփռվելը:

431 (689). Այսպես, (առաքյալներից) ոմանք, ուղղվելով իրենց հրեական երկրամասը, այնտեղ քարոզեցին, իսկ մյուսները սփռվեցին ողջ աշխարհով մեկ, ոմանք՝ դեպի Մարերի (երկիրը), ուրիշները՝ Պարթևների, ոմանք՝ դեպի Խոթաստան, ուրիշները՝ Միջագետք, մեկը՝ Գամիրքի երկրամասը, մյուսը՝ դեպի Պոնտոս, մեկը՝ դեպի Ասիա, մյուսը՝ Փոյուզիա, մեկը՝ Պանփիլիա, մյուսը՝ Եգիպտոս, մեկը՝ Հնդիկների երկիրը, մյուսը՝ Լիբիացիների երկրամասը, մյուսը՝ Կիրենացիների երկիրը, մեկը՝ Դալմատացիների երկրամասը, մյուսը՝ Իսպանացիների, մեկը՝ Ազովտի երկիրը, մյուսը՝ Թրակիայի, մեկը՝ դեպի Լակոնիա, մյուսը՝ Կապադովկիա և մյուսը՝ Բյութանիա: Եվ ոչ ոք չի կարող լրիվ թվարկել, իմանալ, բայց (հայտնի է, որ) «Նրանց ձայնը ամ-

բողջ երկիրը բռնեց, և նրանց խոսքը հասավ աշխարհի ծագերին» (Սաղմ., 18. 5: Հռոմ., 10. 18):

432 (690). Այսպես նրանք քարոզեցին աշխարհում՝ «լուսավորելու համար ամեն մարդու, որ գալու է աշխարհ» (Հովհ., 1. 9), փրկության համար ապաշխարություն տալու բոլորին, լվանալու բոլոր մարդկանց, արձակելու խավարի կապանքներից՝ մկրտության միջոցով, և բոլոր ժողովուրդներին դրոշմելու որպես Քրիստոսի զորագունդ, Աստծու Հոգին բնակեցնելու մարդկանց սրտերում, միացնելով միաձուլելու (բոլորին) Աստվածորդու հանդեպ ունեցած սիրտ մեջ, որպեսզի բոլորի սրտերը միաձայն աղաղակեն (առ Աստված), և ողջ աշխարհը միաբան ասի՝ «Աբբա՛, Հայր» (Հռոմ., 8. 15: Գաղատ., 4. 6): Որպեսզի հանվի ստրկության անունը, և դրվի որդեգրության անունը՝ Քրիստոսի ողորմությանը (հնարավոր լինի) ուտել Աստվածորդու մարմինը և ըմպել (Նրա) կենդանարար արյունը, որպեսզի դրա շնորհիվ ամբողջ աշխարհը մտնի Քրիստոսի ժառանգության մեջ, դառնա Աստծո ժառանգորդը և Քրիստոսի ժառանգակիցը:

433 (691). Այսպես նրանք ամրացրին նրանց իրենց կամքի միտումներում՝ Քրիստոսի հանդեպ իրենց ունեցած հույսով: Դուք նույնպես լսեք նրանց և հավատացեք ձեր փրկության Ավետարանի ճշմարտությանը, հավատացեք նրանց և մկրտվեցեք ավետյաց Սուրբ Հոգով, որը և գրավականն է մեր ժառանգության՝ հասնել փրկության ի գովություն Նրա փառքի (Եփես., 1. 13.-14):

434 (692). Նրանք արագ անցան ողջ աշխարհով մեկ՝ մինչև երկրի ծայրը, որպեսզի լցնեն այն կյանքի խոսքի քարոզությանը: Այնտեղ էին նաև հրեշտակների զորքերը՝ հոգեղեն և հրեղեն, որ գումարվել էին առաքյալներին մխիթարելու համար, որովհետև ընկեր էին դարձել նրանց և՛

գործերում, և՛ ճանապարհներում, և՛ բանտի կապանքներում եղած ժամանակ, որտեղից Աստծու ողորմությանը համանալով ազատում էին առաքյալներին: Եվ նրանք, առաջնորդված Իր կամքը հայտնող Սուրբ Հոգով, յուրաքանչյուր քաղաքում և ամեն մի երկրում բոլորին բացատրում (և համոզում) էին հավատալ Քրիստոսին: Մենք էլ՝ նվաստներս, (ձեզ) պիտի բերենք (բոլորին) գերազանցող (առաքյալների) ճշմարտությունը, որովհետև այն տրված է նրանց, որ առաջնորդվում էին Սուրբ Հոգու հրամաններով:

435 (693). Որովհետև Նա այսպիսի հրաման է տվել՝ սովորեցնել բոլոր ազգերը (Մատթ., 28. 19): Նա ուղարկեց նրանց աշխարհով մեկ, որ հավատի հնազանդության հրավիրեն բոլոր հեթանոսներին, առանց վախենալու քարոզեն Ավետարանը՝ Սուրբ Հոգու առաջնորդությանը: Նրանք, համարձակությանը լցված, քարոզում էին Աստծու արքայությունը և ուսուցանում մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մասին՝ ամենայն համարձակությանը, անարգել և անխափան (Գործք., 4. 31):

436 (694. XCV). Դրանից հետո առաքյալների Քրիստոսյան գունդը, Սուրբ Հոգու ողորմածությանը գումարվելով երկնքի տակ եղած բոլոր կողմերում, ամեն տեսակի նշաններով ու հրաշքներով և հրաշագործությունների զորությանը, յուրաքանչյուր երկրում ազդարարում և հնչեցնում էին կենաց խոսքը, բոլորին Քրիստոսի (ուսմունքին) ծանոթ դարձնում և ծաղկեցնում հարության հույսով: Որովհետև նրանց շնորհազարդ խոսքով և գործերով հայտնի դարձավ Սուրբ Հոգու հրամանով սահմանված յուրաքանչյուր մի որոշում: Դա է մատնացույց անում նաև Պողոսը, ասելով, թե՝ «Երուսաղեմից սկսած և մինչև Լյուրիկիա ես լրիվ տարածեցի Քրիստոսի Ավետարանը» (Հռոմ., 15. 19), և նորից, թե՝ «Նա, որ Պետրոսին հաջողեցրեց (ա-

ուաքելությունը) թլփատվածների մեջ, զորացրեց և ինձ (աուաքելություն կատարելու) հեթանոսների մեջ» (Գաղատ., 2. 8):

437 (695). Այսպես Աստծու կողմից սահմանված ժամանակը մոտիկ դարձավ յուրաքանչյուրին՝ քրիստոսատուր փրկության հասնելու համար, ինչպես և ասում է Պողոսը՝ աթենացիներին տված պատասխանի մեջ, թե՛ «Աստված, անգիտության ժամանակներն անտես առնելով, այժմ այն է պատվիրում մարդկանց, որ ամեն ոք ապաշխարի» (Գործք, 17. 30): Սրա պես նաև Պետրոսը նշում է իր Ընդհանրական թղթում, թե՛ «բավական է մեզ կյանքի անցած ժամանակը, երբ ընթացանք հեթանոսների կամքի համաձայն. արդ, այսուհետև նրանք պետք է ապրեն ըստ Աստծո կամքի» (Ա Պետր., 4. 2-3):

438 (696). Բայց ոչ մի անգամից և ոչ արագընթաց, ըստ (Սուրբ) Հոգու գորության, նրանք նորադարձներին մղեցին անսովոր մեծամեծ (արարքների), այլ սկզբից ավելի թեթև ձևով, աշխարհական սովորութիւններին համաձայն, խոսեցին առականերով և պատկերավոր լեզվով: Դրա պատճառով է, որ Պողոսը պարզաբանում է, թե՛ «(իբրև մանուկների) ի Քրիստոս ջամբեցի ձեզ կաթով և ոչ պինդ կերակրով, քանի որ դեռ չէիք կարող» (Ա Կորնթ., 3. 2): Ինչպես նախկինում, ամենախմաստուն Աստծո սահմանված Մովսիսական օրենքներով ևս, նախ պետք էր զոհաբերություններ (կատարել), շաբաթը նշել և հրամայված տոներ պահպանել, և միայն հետո, հեռացնելով դրանցից, Նա ցույց տվեց ավելի բարձր բաներ՝ երևան եկող մարգարեների միջոցով, որոնց բերանով ասում էր. «Ես կշտացել եմ ձեր զոհերից» (Եսայի, 1. 11), և թե՛ «քո զոհաբերությունների համար չէ, որ կշտամբում են քեզ» (Սաղմ., 49. 8), այլ «Աստծուն օրհնության պատարագ մատուցիր» (Սաղմ., 49. 14), և թե՛

«ո՛վ մարդ, ի՞նչ է ուզում քեզից Տերը, եթե ոչ իրավունք և արդարություն հաստատել և պատրաստ լինել Տիրոջ հետևից գնալու» (Միք., 6. 8):

439 (697). Նույն կարգը պահպանվեց նաև առաքյալների կողմից, որովհետև մեկ Աստծու օրենքը և (այդ) օրենքի մեկնաբանները ճանաչված էին որպես առաջինը և երկրորդը¹: Սրա մասին հայտնեց Ինքը՝ Տերը՝ ասելով, թե՛ «Հենց սրանով է ճշմարիտ այն խոսքը, թե՛ այլ է սերմանողը և այլ՝ հնձողը: Ես ուղարկեցի ձեզ հնձելու այն, ինչի վրա դուք աշխատանք չէիք թափել. ուրիշներ աշխատանք թափեցին, իսկ դուք նրանց վաստակի մեջ մտաք, որովհետև նա, ով ցանում է, և նա, ով հնձում է՝ միասին պետք է ցնձան» (Հովհ., 4. 37-38, 36):

440 (698). Քարոզության արվեստին վերաբերող գիտելիքը նրանք ստացել էին Ամենափրկչից՝ Քրիստոսից, որը «Սկսեց անել և ուսուցանել» (Գործք, 1. 1): Որովհետև և Քրիստոս Ինքն ոչ անմիջապես սկզբից աղաղակեց ամենաբարձր և անհասանելի բաների մասին, այլ նախ ավելի հասարակ և առական լեզվով խոսեց և հիվանդություններից բժշկելով՝ նրանց մոտեցրեց (Իրեն) և ուսուցանեց: Նա ասում էր նրանց. «Եթե երկրավոր բաներ ասացի ձեզ, և չեք հավատում, ապա ինչպե՞ս պիտի հավատաք, եթե երկնավոր բաների մասին ասեմ» (Հովհ., 3. 12): Ապա դրանից հետո, երբ նրանք հասան կատարելության, Նա ավելի համարձակ և ավելի բարձր ձևով սկսեց սովորեցնել ճշմարտությունը: Նույն կարգով էլ առաքյալներն էին գործում բարբարոսական երկրներում:

441 (699. XCVI). Այդ պատճառով, ինչպես և ասված է Սինհոդոսի (ժողովի) հրամանի մեջ¹, նորադարձ հեթանոսներին առաքյալները սովորեցնում էին ավելի հեշտ ձևերով, և նախ հեռացրին նրանց կուռքերի (համար զոհված)

կերակուրներին, պոռնկությունին, խեղդամահ արված (կենդանիներ) ուտելուց և արյունից (Գործք, 15. 20): Իսկ երբ դա բացատրեցին բոլորին, և հրեաներին ու հեթանոսներին, Սուրբ Հոգով վկայեցին (մեր) Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ՝ հույս տվող հավատի մասին, — ինչպես ավելի առաջ Պետրոսն ասել էր Հրեաստանի բնակիչներին, թե «Նրա վկաները մենք ենք և Սուրբ Հոգին, որը Աստված տվեց Իրեն հնազանդվողներին» (Գործք, 5. 32), իսկ Պողոսը Մելիտոսում² միահամուռ հավաքվածների առաջ ահավոր նախազգուշացումով հիշեցրեց ավանդված հրամանները և իր տված խոստումը, թե «ինչպես բնավ չվարանեցի օգտակար բաների մասին հրապարակավ և տներում վկայություն տալ Հրեաներին և հեթանոսներին՝ Աստծու առաջ ապաշխարելու և մեր Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատի մասին» (Գործք, 20. 20-21), ինչը և հաստատում է՝ ասելով, թե «այսօր ձեր առաջ վկայում եմ, որ ես, — ասում է, — մաքուր եմ բոլորիդ արյունից, որովհետև չքաջվեցի ձեզ հայտնելու Աստծու կամքը ամբողջությամբ» (Գործք, 20. 26-27), — դրանից հետո նրանք հասան երանություն, հասկանալով Սուրբ Հոգու խորհուրդը, որպեսզի հաղորդեն Միածնի աստվածախոս, աստվածապատում, աստվածապարգև վարդապետությունը, որպեսզի գրքով³ ներկայացնեն այդ և հաստատեն երկնքի տակ եղած բոլոր ազգերի և հավիտյան եկողների համար՝ «լուսավորելու ամեն մի մարդու, որ գալու է աշխարհ» (Հովհ., 1. 9): Առանձնապես հաջողություն ունեցան նրանք իրենց առաջ դրված այդ խնդիրը կատարելիս, որովհետև գործում էին՝ առաջնորդվելով Սուրբ Հոգով: Այդ էր պատճառը, որ բոլորի Փրկիչը իր սուրբ աշակերտներին ուսուցանելիս շեշտեց՝ ասելով, թե «դեռ շատ բաներ ունեմ ձեզ ասելու, բայց այժմ դուք չեք կարող տանել դա: Երբ որ գա Նա՝ ճշմարտության Հո-

գին, ամենայն ճշմարտությամբ կառաջնորդի ձեզ» (Հովհ., 16. 12-13):

442 (700). Նա հրաման տվեց նաև իր կենսաբեր Ավետարանի մասին, (ասելով) թե «արքայության այս Ավետարանը պիտի քարոզվի ամբողջ աշխարհում՝ ի վկայություն բոլոր հեթանոսների, և ապա պիտի դա վախճանը» (Մատթ., 24. 14): Իսկ առաքյալները, այդ նույն ճշմարտության վկաները, վերցնելով սուրբ Ավետարանից և մարգարենների գրքերից, ճոխացրին իրենց հոգեշունչ առաքելական նամակները, որպեսզի սովորողները ունենան դրանք որպես հավերժ սահմանված կանոններ, հատկապես նկատի ունենալով եկեղեցիների հաստատումը՝ դրան այնուհետև բանավոր կերպով շատ բան ավելացնելով: Ինչպես և Պողոսը պարզաբանելով ասում է. «Իմաստությունը քարոզում ենք կատարյալների մեջ, իմաստություն, որ այս աշխարհինը չէ, ոչ էլ կործանման սահմանված այս աշխարհի իշխանների իմաստությունը, այլ քարոզում ենք Աստծու խորհրդավոր, թաքուն իմաստությունը, որն Աստված սահմանել էր մեր փառքի համար նախքան հավիտյանները. և այս աշխարհի իշխաններից ոչ մեկը չճանաչեց այն, որովհետև եթե ճանաչված լինեք, արդարև փառքի Տիրոջը չէին խաչի» (Ա Կորնթ., 2. 6-8): Նրանք իմաստությամբ լուսավորված և զարդարված էին՝ ասելով, թե «մենք ոչ թե այս աշխարհի հոգին առանք, այլ՝ այն Հոգին, որ Աստծուց է, որպեսզի ճանաչենք այն, որ Աստծուց շնորհվեց մեզ» (Ա Կորնթ., 2. 12):

443 (701). Եվ ահա նրանք, որ տեսել էին Աստծուն, լցված և հագեցված էին Հոգով, վերցնելով աստվածատուր ավետիսը, ամրագրեցին այն գրավոր ձևով և չորս Ավետարանները որպես մեկ ավանդություն հաստատեցին: Նրանք չէին ձգտում տարբերվել մեկը մյուսից պերճաբանութ-

յամբ, այլ ամենագետ աստվածային Հոգով ներշնչված պատմել Քրիստոսի հրամանների միասնական ճշմարտությունը, որը կարելի է տեսնել ավելի առաջ ասված մարգարեների խոսքերում: Որովհետև այն, ինչ ասված է մասին Հոգու շնորհով լցված առակների ձևով մեծն Մովսեսը ասել էր առաջուց, նույնը կրկնեցին (նրանից) հետո եկած մարգարեները (Աստծուց) ոգեշնչված խոսքերով, որոնց միջոցով երևելի դարձավ ամեն ինչ պարզևող Հոգու զորությունը:

444 (702 XCVII). Դրանից հետո քրիստոսասեր ավետարանագիր այրերը Հոգու թևերով բարձրացան և, անցնելով երկնքի միջով, համբարձեցին երկնային խորանների վրա: Այնտեղ՝ բարձունքում, աստվածային գահի մոտ, Սուրբ Հոգու օգնությամբ նրանք իմացան Աստծու խորքերը (Ա Կորնթ., 2. 10) և ճանաչեցին Միածին Որդուն իր Հոր ծոցում (Ա Կորնթ., 2. 10: Հովհ., 1. 18): Եվ Նա հաստատեց իր մասին նրանց ունեցած գիտելիքը որպես ճշմարտագույնը, ինչպիսին և գիտի Հայրը իր Միածնին: Նրա կողմից լուսավորված՝ նրանք սկսեցին խոսել այն մասին, ինչ անպատմելի է, այն, որ «սկզբից էր Բանը, և Բանը Աստծու մոտ էր, և Բանը Աստված էր: Նա էր սկզբից Աստծու մոտ: Ամեն ինչ Նրանով եղավ, և առանց Նրա չեղավ ոչինչ, (որ եղել է)» (Հովհ., 1. 1-3): Տեսնո՞ւմ ես, Նա ոչինչ չանտեսեց աստվածաճանաչ իմաստությունից, այլ ամեն ինչ բերեց ամբողջապես՝ ասելով, թե՛ «Նա էր սկզբից, և Աստծու մոտ էր, և ամեն ինչ Նրանով եղավ»: Եվ սրանով հայտնի դարձան Որդու էական անձնավորությունը, և համագոյ աստվածահավասար պատիվը և Նրա ամենակարող զորությունը:

445 (703). Որովհետև Ամենատեր Քրիստոս սկզբից իսկ իր սիրելի աշակերտներին աստվածաճանաչ դարձրեց՝

բյուրապատիկ հրաշքների միջոցով, որպեսզի նրանք երեք կատարյալ Անձերի գեղեցկության, կերպարանքների և միասնական էություն մերձավորները և իմացողները լինեն: Որպեսզի Աստծու անհնարին ճանաչմանը նրանք հասնեն ոչ թե իրենց սահմանափակ իմաստությամբ, այլ որ դա ինքն իսկ մարդասեր Աստված (նրանց) հայտարարեց երկնքից, թե՛ «Դա է իմ սիրելի Որդին, դրան լսեցեք» (Մատթ., 17. 5): Դրա մասին է վկայում և Պետրոսը իր Ընդհանրական թղթում, թե՛ «մենք ոչ թե հնարովի առասպելների հետևից գնալով է, որ ձեզ ճանաչեցրինք մեր Տեր Հիսուս Քրիստոսի զորությունը և գալուստը, այլ մենք իսկ ականատես եղանք նրա մեծությանը, քանի որ Նա Հայր Աստծուց ստացավ փառք և պատիվ, երբ մեծավայելուչ փառքից եկավ այս ձայնը, թե՛ «Դա է իմ սիրելի որդին, որին հաճեցի»: Եվ երկնքից եկող այս ձայնը լսեցինք մենք իսկ, որ Նրա հետ էինք սուրբ լեռան վրա» (Բ Պետր., 1. 16-18):

446 (704). Որդին նույնպես եկավ ու ցուցադրեց Հոր մեծությունը. «Ես եկա ոչ թե իմ կամքը կատարելու համար, այլ՝ կամքը Նրա, ով ինձ ուղարկեց» (Հովհ., 6. 38): Իր վարդապետելու ժամանակ Նա բազմաթիվ օրինակներով բարձրացնում է Հոր փառքը, ցուցադրելով կամքի միասնականությունը. «Այն խոսքերը, որ Ես ասում եմ ձեզ, ինքս ինձնից չեմ ասում, այլ Հայրը, որ բնակվում է իմ մեջ, Նա է անում գործերը» (Հովհ., 14. 10): Սուրբ Հոգու մասին նույնպես ասում է, թե՛ «ճշմարտության Հոգին ամենայն ճշմարտությամբ կառաջնորդի ձեզ, որովհետև ոչ թե ինքն իրենից կխոսի, այլ ինչ լսի, այն կխոսի, և գալիք բաների մասին կպատմի ձեզ: Նա ինձ պիտի փառավորի, որովհետև ինչ որ առնում է ինձանից, կհայտնի ձեզ: Ամեն ինչ, որ Հայրն ունի, իմն է. դրա համար ձեզ ասացի, թե ինչ որ առնում է ինձանից, կհայտնի ձեզ» (Հովհ., 16. 13-15):

447 (705). Ճանաչի՛ր (Նրանց) համախոհությունը, միակամությունը, միասնական ճշմարտությունը և իմացի՛ր ինչպես լուսավորեց, ցույց տվեց երեք Անձերի հավաստի գոյությունը՝ ասելով. «Սուրբ Հոգին ոչ թե ինքն իրենից կխոսի, որովհետև ինչ որ ինձանից է առնում, ձեզ է հայտնելու. որովհետև ամեն ինչ, որ Հայրն ունի, Իմն է»։ Ճանաչիր Հորը՝ կատարյալ, Որդուն՝ ճշմարիտ և Հոգուն՝ հավաստի։ Նա ցույց տվեց նաև աստվածային գորություն անբաժանելի և միասնական բնությունը՝ ասելով, թե «ելա Հորից և եկա աշխարհ» (Հովհ., 16. 28)։ Նույնպես և ճշմարիտ Հոգու մասին ասաց՝ «ճշմարտության Հոգին, որ ելնում է Հորից» (Հովհ., 15. 26)։

448 (706). Նա տալիս է նաև համագոյ երրորդության միասնականության մասին սահմանումը, ասելով՝ «Աստված Հոգի է» (Հովհ., 4. 24), ցույց է տալիս նաև Իր և ճշմարիտ Հոգու անքակտելիությունը Հորից, որովհետև թեպետ առաքվածները¹ այդպես անվանվեցին առաքող Հոր կողմից, բայց Նրա հետ նրանք միասնական են և առանց անջատվելու կատարեցին միասնական գործը, ասելով՝ «ոչ ոք երկինք չի ելել, եթե ոչ Նա, որ իջավ երկնքից՝ մարդու Որդին, որ երկնքում է» (Հովհ., 3. 13)։ Տեսնո՞ւմ ես, որ և՛ երկիր իջած է, և՛ երկնքում է։ Այդ տեսնելով՝ Հովհաննես ավետարանիչը վկայեց, թե «Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել, բացի Միածին Որդուց, որ Հոր ծոցում է. Նա հայտնեց» (Հովհ., 1. 18)։ Եվ այժմ, ուշադրություն դարձրու, թե ինչ է ասում՝ «որ Հոր ծոցում է. Նա հայտնեց», որովհետև Նրան, ում տեսնում էին իրենց կողքին, գիտեին, որ Նույն ինքը գտնվում է Հոր ծոցում։ Օ՛, սքանչելի պարզ և ստացածներ և աստվածաբիտության արժանացածներ՝ ինչպիսի՛ մեծ երջանկության նրանք իսկույն հասան։

449 (707. XCVIII). Ծճարիտ Հոգու մասին նույնպես ի-

մանալ պետք է հետևյալ խոսքերից. «Ծճարտություն Հոգին, որ ելնում է Հորից» (Հովհ., 15. 26)։ Նա ելնում է, բայց չի բաժանվում, բխում է և չի սպառվում։ Եվ միաժամանակ Նա ասում է (Իր) հավասար ճշմարիտ լինելու և միապես հավասարագորություն մասին։ «Ես Հոր մեջ եմ, և Հայրը Իմ մեջ է. ով Ինձ տեսավ, նա տեսավ Իմ Հորը» (Հովհ., 10. 38; 14. 10)։ Որովհետև չկա որևէ սահման, որն ընդգրկում է Աստվածությունը, և (չմտածեն) թե Հայրը երկնքում է, իսկ Միածին Որդին և ճշմարիտ Հոգին՝ երկրի վրա են, որովհետև Նրանով է լեցուն ամեն ինչ, Նա ամեն ինչի մեջ է և ամեն ինչից վեր է։

450 (708). Բոլոր այս բաների մասին Նա աստվածաբար ասաց և ուսուցանեց Իր աշակերտներին՝ հրավիրելով (սպասել) Սուրբ Հոգու առաջնորդությանը։ Նաև ասում էր նրանց, թե «դեռ շատ բաներ ունեմ ձեզ ասելու, բայց այժմ չեք կարող տանել. բայց երբ որ գա ճշմարտության Հոգին, Նա կհիշեցնի ձեզ և ամենայն ճշմարտությամբ կառաջնորդի ձեզ» (Հովհ., 16. 12-13)։ Սրա մասին ասաց նաև Պետրոսը, ընկալելով Սուրբ Հոգուն, թե՛ «Հիշեցի Տիրոջ խոսքը, որ ասում էր. «Հովհաննեսը մկրտեց ջրով, բայց դուք կմկրտվեք Սուրբ Հոգով» (Գործք, 11. 16)։ Եվ (սա Նա ասաց) ոչ միայն նրանց, այլև (բոլորին), որ նրանց միջոցով կմերձենան Աստծուն։

451 (709). Ինչպես և երանելի Ղուկասն (իր) Ավետարանի սկզբում հայտնել է, թե «շատերը ցանկացան վերստին կարգավորել մեզանում կատարված դեպքերի պատմությունը, ինչպես մեզ ավանդեցին նրանք, որ սկզբից Խոսքի աղանատեսներն ու սպասավորները եղան» (Ղուկ., 1. 1-2), որոնցից վերցնելով՝ նա ևս շարակարգեց Տիրոջ Ավետարանը։ Իսկ Պողոսին Նա նույնպես երևաց ավելի սքանչելի և ահավոր ներշնչմամբ, ինչի մասին նա ինքը զարմանքով

պատմում է՝ ասելով. «Թե մարմնով էր կամ առանց մարմնի՝ չգիտեմ, բայց գիտեմ, որ համբարձելով երկնքի երրորդ մասը և մինչև դրախտ, լսեց անպատում խոսքեր» (Բ Կորնթ., 12. 3-4): Դրա մասին նա ասում է, թե «Ես մարդուց չառա, ոչ էլ որևէ մեկից սովորեցի, այլ՝ Հիսուս Քրիստոսի հայտնությունից» (Գաղատ., 1. 12), որը և, ականատես լինելով, պարծենում է, թե «իմ աչքերով տեսա Տեր Հիսուս Քրիստոսին» (Ա Կորնթ., 9. 1):

452 (710). Թեպետև այսպիսի բարձր պատվով և փառավոր նշանով նա ուղարկվեց Քրիստոսի կողմից, հնազանդություն հայտնեց տասներկուսին՝ հետևյալը գրելով Կորնթացիներին (ուղղված թղթում). «Որովհետև ես նախ ձեզ ավանդեցի այն, ինչը ես ինքս ընդունեցի (Տիրոջից)» (Ա Կորնթ., 11. 23): Նույն ձևով նաև եբրայեցիներին (հղած թղթում ասում է), թե «մենք ինչպե՞ս պիտի ազատվենք, եթե անհոգ գտնվենք այնպիսի փրկության հանդեպ, որ նախ հոչակվեց Տիրոջ կողմից և ապա հաստատվեց մեզ համար նրանց միջոցով, որ լսել էին այն» (Եբր., 2. 3): Սրանից պարզ է դառնում, որ մեկ զորություն չնորհները, լուսավորելով բոլորին, արթնացրել էին նրանց՝ միակ ճշմարտության մասին վկայելու համար: Որովհետև Պողոսն ասում է. «Մենք բոլորս էլ այդ մեկ Հոգին խմեցինք» (Ա Կորնթ., 12. 13): Դրա շնորհիվ նրանք սկսեցին մինչև երկինքը հասնող բարձր ձայնով հոչակել Միածնի աստվածային փառքի պատիվը՝ կանխապես ասված մարգարեական խոսքերի հետ միասին, որն ասաց աստվածախոսը¹, թե՝ «Սկզբից էր Բանը, և Աստծու մոտ էր, և Աստված էր, և ամեն ինչ Նրանով եղավ» (Հովհ., 1. 1-3): Ղուկասը նույնպես ասում է՝ առաքյալների կապակցությունը, թե «սկզբից խոսքի ականատեսներն ու սպասավորները եղան» (Ղուկ., 1-2): Դարձյալ նույնն է ասում նաև Հովհաննեսը՝ իր Ընդ-

հանրական թղթում, թե՝ «Նա, որ սկզբից էր, որի մասին լսեցինք, որին տեսանք, և մեր ձեռքերը շոշափեցին՝ Կենաց Խոսքը» (Ա Հովհ., 1. 1):

453 (711). «Եվ, ասում է, Աստծու մոտ էր Խոսքը» (Հովհ., 1. 1): Սրանով նա վկայեց Տիրոջ ասածը, թե «Հայր, տուր Ինձ այն փառքը, որ ունեի Քեզ մոտ, նախքան աշխարհի լինելը» (Հովհ., 17. 5): Նույնը նկատի ունի նաև Պողոսը՝ ասելով. «Աստծուն հավասար լինելը հափշտակությունն չհամարեց» (Փիլիպ., 2. 6): Հովհաննեսը նույնպես իր Առաքելական թղթում (ասում է), թե «Նա, որ Հոր մոտ էր, և հայտնվեց մեզ» (Ա Հովհ., 1. 2): «Եվ, ասում է, Բանը Աստված էր» (Հովհ., 1. 1), ինչպես և Քրիստոսն ասաց. «Ինչ որ Հայրն ունի, ունեմ և ես» (Հովհ., 16. 15): Նորից իր թղթում ևս Հովհաննեսն ասում է, թե «Նա է ճշմարիտ Աստվածը» (Ա Հովհ., 5. 20): Պողոսը նույնպես ասում է, թե «(սպասենք) փառքի հայտնությանը Մեծն Աստծու և մեր Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի, որ իր անձը տվեց մեզ համար» (Տիտ., 2. 13-14):

454 (712). Եվ այսպես, եկեք համերաշխ և ինքնահոժար մեր կամքով «հասնենք հավատի (կատարյալ միություն) ու Աստծու Որդու ճանաչմանը, կատարյալ մարդու աստիճանին՝ ունենալով ճիշտ Քրիստոսի հասակի չափը» (Եփես., 4. 13): Որովհետև Քրիստոս իր ուսմունքը տվեց (առաքյալներին)՝ ժողովուրդների լսողությանը հասցնելու համար և հետևյալ հրամանով աշխարհի բոլոր ազգերին նվիրեց իր անխորտակելի վարդապետությունը՝ ասելով. «Գնացեք բոլոր հեթանոսների մոտ, սովորեցրեք և մկրտեք նրանց Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթ., 28. 19):

455 (713). Հատուկ հոգատարություն ցուցաբերելով (մարդկանց ողջ) բազմություն հանդեպ՝ Նա ցանկացավ իր



փառավոր գալուստը բացահայտ անել, ցույց տալ, թե ինչպես Նա, գալով, հայտնվելու է (և վարձատրելու) երկարատև համբերության համար հույսով սպասողներին: Այս իմաստով պետք է հասկանալ և՛ առաջին գալուստը Քրիստոսի, և՛ աստվածային Հոգու իջնելը Պենտեկոստեի տոնի տասներորդ օրը (Գործք, 2. 1): Որովհետև Աստուծո Միածին Որդին երկնքի բարձունքները ելնելու համար ինչ-որ օթևանների կարիք չուներ, ինչպես և Սուրբ Հոգին, որով լի են երկինքն ու երկիրը, առաքյալների ժողովին իջնելու համար: Այլ Աստված, որ մարդասեր է, այնպես կամեցավ, որ տասն օր սպասելուց հետո առաքյալների մոտ վերնատուն կանչի պարզևաբեր Հոգուն՝ բոլորի Մխիթարիչին: Եվ ամենուրեք Նա հնարավորություններ էր ստեղծում, որպեսզի մարդիկ դիմեն իր բարեգործությանը, որ այդտեղ այդ փոքր հնարավորությունները օգտագործելու և դեպի վեր հղելու համար Նա պատրաստ է անչափ բարիքներով հատուցողը լինելու: Եվ իսկապես, ի՞նչը կարող է չափից դուրս և ըմբռնումից ավելի վեր լինել, քան այն, որ կատարվելու է, երբ Նա, երկնքից ծագելով, Հոր փառքով (չըջապատված) կգա և հրեշտակների ամբողջ զորքի առաջ իր սիրելիների ձեռքից բռնած կտանի իր մոտ, որպեսզի վայելել տա հավիտենական կյանքը՝ իր իսկ աստվածային բնակարանում:

456 (714). Որովհետև առատաբաշխ Աստված իր սիրելիների համար արքայութուն է պատրաստում, Աստուծո մոտ մի սքանչելի բնակարան՝ բոլոր արժանի արարածներին՝ բանական, հոգեղեն և մարմնավոր, իր մոտ այնտեղ տեղավորելու՝ համատեղ վայելչության համար: Դրա մասին Ամենափրկիչը տվեց աշակերտներին ավետիսը և քաջարեկեց, (ասելով) թե «ուր ես եմ, դուք էլ այնտեղ եղեք, (որպեսզի) ամենայն ժամ իմ փառքը տեսնեք» (Հովհ., 17.

24): Եվ մյուս, ավելի բարձր խոսքը. «Այն օրը դուք պիտի իմանաք, որ ես Հոր մեջ եմ, և դուք՝ իմ մեջ, և ես՝ ձեր մեջ» (Հովհ., 14. 20): Այս առիթով ավելի պատշաճ է բերել հետևյալ խոսքերը. «Ինչ որ աչքը չտեսավ, և ականջը չլսեց, և մարդու սիրտը չընկավ, Աստված պատրաստեց իրեն սիրողների համար» (Ա Կորնթ., 2. 9), և երանելի Պողոսի ասածը, թե՛ «Գոհութուն Քրիստոսին՝ Նրա անպատում պարզևների համար» (Բ Կորնթ., 9. 15):

457 (715). Ավարտվեց Սուրբ Գրիգորի¹ վարդապետութունը, որն Աստված շնորհեց նրան՝ մեր Հայաստան աշխարհի (մարդկանց) խավարով պատած սրտերը հավատով և մկրտությամբ լուսավորելու համար: Եվ նա բոլորին քրիստոսապաշտ դարձրեց ու զորացրեց, որպեսզի նրանք փառաբանեն Սուրբ (Երրորդության)՝ Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունները:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՌԱՋԱԲԱՆ

- 1 **Ազաթանգեղոս**, Պատմութիւն Հայոց: Աշխատութեամբ **Գ. Տէր-Սկրտչեան** և **Ս. Կանայեանց**. Տփղիս, 1909, էջ 134-372:
- 2 Տե՛ս **Անասյան Ջ.**, Հայկական մատենագիտություն, Երևան, 1959, հ. Ա, էջ 151-213:
- 3 **Կորիւն, Մամբրէ, Պաւիթ**. Սատենագրութիւնք նախնեաց. Վենետիկ, 1833, էջ 21: Մեջբերումները բոլոր տեղերում տալիս ենք մեր թարգմանությամբ - Ս. Ա.:
- 4 Տե՛ս **Պ. Ֆետտեր**, Սուրբ Մեսրոպ-Հայաստանի առաքյալ (1883 թ.), հայերեն թարգմանությունը «Հայկական աշխատութիւնք հայագէտ Պ. Ֆետտերի» գրքում, Վիեննա, 1895, էջ 64-78:
- 5 Տե՛ս **Ս. Արեղյան**. Հայոց հին գրականության պատմություն. Երևան, 1944, էջ 119-122:
- 6 Տե՛ս **Յ. Բարսեղ Սարգիսեան**. Ազաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքը, Վենետիկ, 1890, էջ 400-408:
- 7 **Կորիւն, Մամբրէ, Պաւիթ**. Սատենագրութիւնք նախնեաց, էջ 18:
- 8 **Н. Марр**. Крещение армян, грузин, абхазов и аланов св. Григорием. - Записки Восточн. отд. импер. русск. Археологического общества. Т. XV, Спб, 1905, с. 157, 182.
- 9 Տե՛ս «Ս. Գրիգորի Վարդապետությունը», ներկա հրատ. § 1 (259) (Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ, «Վարդապետություն»), Թիֆլիս, 1914, էջ 133: Տե՛ս նաև «Յաճախապատում ճառք սրբոյ հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչի. աշխատասիրութեամբ Ա. Տէր-Սիքելեան, էջմիածին, 1894, էջ 1 (այնուհետև ճառեր):
- 10 «ճառեր», էջ 1-2:
- 11 Տե՛ս «Ս. Գրիգորի Վարդապետությունը», § 97 (355): Տե՛ս նաև «ճառեր», էջ 3:
- 12 «ճառեր», էջ 4:
- 13 Նույն տեղում, էջ 3:
- 14 Նույն տեղում, էջ 27:
- 15 Նույն տեղում:
- 16 «Վարդապետություն», § 13 (271), նաև «ճառեր», էջ 28:
- 17 «Վարդապետություն», §§ 8-9 (266-267), նաև «ճառեր», էջ 31:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ

- 18 Տե՛ս նաև «Վարդապետություն», §§ 263-266 (521-524):
 19 «ճառեր», էջ 60:
 20 Նույն տեղում, էջ 88:
 21 Творения блаженного Августина, ч. 3, Киев, 1906, с. 258.
 22 «ճառեր», էջ 235: Տե՛ս նաև «Վարդապետություն», §§ 4 (262), 7 (265):
 23 «Վարդապետություն», § 4 (262):
 24 Նույն տեղում, § 7 (265):
 25 «ճառեր», էջ 68:
 26 Նույն տեղում, էջ 69:
 27 «ճառեր», էջ 150:
 28 Նույն տեղում:
 29 «ճառեր», էջ 221:
 30 Նույն տեղում, էջ 225:
 31 Նույն տեղում, էջ 71:
 32 Նույն տեղում, էջ 69-70:
 33 Տե՛ս նույն տեղում, էջ 150:
 34 Նույն տեղում, էջ 68:

1 (259). 1. «Վարդապետությունը» որպես «Ազաթանգեղոսի» բաղկացուցիչ մաս, հիշատակում է Ղազար Փարպեցին («Պատմութիւն Հայոց» (քննական բնագիր), աշխատութեամբ **Գ. Տէր-Սկրտչեան** եւ **Ստ. Մալխասեանց**. Տփղիս, 1904, էջ 3₁₀₋₁₃): Հունարեն, արաբերեն և այլ հին թարգմանություններում այն բացակայում է, թեև դրանց մեջ պահպանվել են նրա բեկորները՝ սկզբի և վերջի նախադասությունների հետքերը «Վարդապետությունը» ոչ զգուշորեն կրճատելու ժամանակ:

«Վարդապետություն» բառը բազմանշանակ է: Այն առաջին հերթին նշանակում է ուսմունք, այնուհետև քարոզ, քարոզություն, քարոզչություն, խրատ, տեսություն և այլն: Պահպանում ենք բնագրի վարդապետություն եզրը, գտնելով, որ աշխարհաբարում այն լիովին արտահայտում է երկի բուն էությունը որպես հեղինակի դավանած ուսմունքի՝ աստվածաբանական, փիլիսոփայական և դավանաբանական համոզմունքների խրատական-ուսուցողական նպատակներով շարադրված աշխատասիրության վերնագիր: Միաժամանակ այն մեկնություն է, Հին և Նոր Կտակարանների մեկնաբանություն, քրիստոնեական ուսմունքի քարոզ և ջատագովու-

յուն, ուղղված հեթանոսական կրոնի և զրադաշտական դուալիզմի (երկարմատականության) դեմ:

2. Սուրբ Երրորդության Անձերի՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու մասին հեղինակի հայացքները բխում են տիեզերական առաջին երեք եկեղեցական ժողովների՝ Նիկիայի (325 թ.), Կոստանդնուպոլսի (381 թ.) և Եփեսոսի (431 թ.) որոշումներից, որոնք ուղղված են արիոսականության, հոգեմարտության և նեստորականության դեմ: Հայր-Աստված, Որդի-Աստված և Սուրբ Հոգի-Աստված ունեն «միասնական էություն», «միակից զորություն», «միահամուռ կամք»: Դրանք կազմում են Սուրբ Երրորդություն, մեկ և միակ Աստված և ոչ թե երեք աստվածներ: Որդին հավիտենապես ծնված է Հորից և էութենակից է Նրան, և ոչ թե ժամանակի մեջ է ծնված Հորից և համագոյ չէ Նրան, ինչպես պնդում էին արիոսականները և Մակեդոնի հետնորդները՝ հոգեմարտները: Վերջիններս առաջ քաշեցին այն թեզը, որ Սուրբ Հոգին բխում է Որդուց և էութենակից չէ Հորը: Հայոց եկեղեցին, Նիկիայի և Կ. Պոլսի ժողովների համաձայն, ընդունում է, որ Ս. Հոգին բխում է Հորից և չի ընդունում «և Որդուց» հավելումը: Պարզ է, որ հոգեմարտության դեմ (Կ. Պոլսի ժողովը) և նեստորականության դեմ (Եփեսոսի ժողովը) կարող էր գրել 5-րդ դարի առաջին կեսի հեղինակը, մի հանգամանք, որը բացառում է Գրիգոր Պարթևի (Լուսավորչի) հեղինակությունը և առաջ է քաշում մի այլ ականավոր քարոզչի և աստվածաբանի թեկնածությունը: Ամենայն հավանականությամբ, այն կարող է լինել Մեսրոպ Մաշտոցը: Դրա մասին թափանցիկ ակնարկներ և ուղղակի ցուցումներ կան Կորյունի «Վարք Մաշտոցի» մի քանի տեղերում:

3. Հոր, Որդու և Ս. Հոգու էութենակից լինելու դրույթը կարմիր թելի պես անցնում է ողջ «Ուսմունքի» միջով: Այդ արմատական հարցում հեղինակը համամիտ է եկեղեցու այնպիսի ուղղափառ հայրերի հետ, ինչպիսիք էին Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նազիանզացին, Եփրեմ Ասորին, Կյուրեղ Երուսաղեմացին և 4-րդ, 5-րդ դարերի եկեղեցական այլ հեղինակությունները:

4. «Երկինքը խորանաձև» – բնագրում «զերկինս խորանարդ» նշանակում է «խորանի ձև ունեցող» և ոչ թե խորանարդի, քառակուսի ձև ունեցող: Այս դրույթը էական նշանակություն ունի «Աստվածաշնչի» տիեզերաբանությունը լուսաբանելու համար: Տե՛ս Եսայի մարգարե, 40. 22 համապատասխան տեղին՝ *σκηνη* և *καμάρα* եզրերը՝ ըստ Յոթանասնից թարգմ. առաջինը նշանակում է «վրան», երկրորդը՝ «կամար», «զմբեթաձև ծածկ»:

5. Աշխարհաստեղծման առաջին օրում, ըստ բիբլիական տիեզերաբանության, երկիրը գտնվում է ջրերի հետ քառասյին խառնիխուռն վիճակում և հակադիր է երկնքին՝ «խորանաձև ամրահարկ» հաստատությանը: Եբրայական բնագրում «անդունդ» բառն արտահայտված է երկու հոմանիշով *tehom* և *main*, որոնք «նշանակում են ջրերի մի զանգված, որը մի ամբողջ անդունդ է կազմում» (տե՛ս *Толковая Библия*, т. I, СПб, 1904, с. 4): Մեր կողմից փակագծերում ավելացված «ջրերի» բառը բացատրում է հաջորդ դրույթի ճշտությունն այն մասին, որ Ս. Հոգին «շրջում էր ջրերի վրա», սավառնում էր երկրի և ջրի քառասյին խառնուրդի վրա, որը և խավարով պատած «անդունդն» է:

2 (260). 1. Արարչագործությանը միաժամանակ մասնակցում են երրորդության բոլոր Անձերը՝ Հայրը, Որդին և Ս. Հոգին: Տիեզերքի արարիչ են Հոր հետ միասին «արարչակից Որդին և համաստեղծիչ Հոգին»: Տե՛ս նաև վերը **1 (259)** ծան. 2 և 3:

2. Հեղինակը մեծ տեղ է հատկացնում բուսական աշխարհին հետագայում, շեղվելով Ս. Գրքի նպատակասլաց իր մեկնաբանությունից. տե՛ս 386 (644)-392 (650) պարբերությունները: Ծաղիկների, ծառերի, խոտերի և թփերի մանրամասն նկարագրությունը հարուստ նյութ է տվել բուսաբաններին Հին Հայաստանի և հարևան երկրների բուսական աշխարհի մասին. Տե՛ս **Ա. Տեր-Պողոսյան**, «Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում», Եր., 1960:

3. Հին եբրայեցիների պատկերացումների համաձայն «երկնքի հաստատությունը» նման է ինչ-որ «կափարիչի», որին ամրացված են լուսատուները, և որից արտազեղվում են քամիները, փոթորիկները, անձրևները: Երբ որ երկնային կափարիչը ժամանակ առ ժամանակ բացվում էր, տարբեր տեսակի տեղումներ (անձրև, կարկուտ, ձյուն և այլն) թափվում են «երկրի հաստատության» վրա (տե՛ս «Толковая Библия» с. 6-7):

3 (261). 1. Արարչագործության վերջին, վեցերորդ օրը Աստված ստեղծեց «չորքտասնի ցեղի բոլոր կենդանիներին» և մարդուն: Հեղինակն այստեղ նկատի ունի մարդուն առհասարակ (հասարակ անուն «ադամին»), տղամարդուն և կնոջը. «Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց» (Ծննդ., 1, 27):

4 (262). 1. «Ուսմունքի» հեղինակը, խոսելով «հրեղեն հրեշտակների զորքի» մասին, նկատի ունի «Ծննդոց գրքի» 2-րդ գլխի առաջին պարբերությունը՝ «Եւ կատարեցան երկինք եւ երկիր եւ ամենայն զարդ նոցա»: Եբրայական բնագրում «զարդ» բառի տեղը գրված է *zeba*, որը բառացի նշանակում է «զորք», «զորականություն»: Հունարեն, լատիներեն և հայերեն թարգմանություններում այն հասկացվել է համանուն իմաստային առումով, որպես *κόσμος*, *ornatus*, զարդ (Տե՛ս «Толковая Библия» с. 14): «Զվարթունների բազմությունը», այսինքն՝ հոգեղեն մշտարթուն հրեշտակների բազմությունը. այստեղից է և «զվարթոց» բառը, որը նշանակում է «մշտարթուն հրեշտակների բնակատեղի»:

2. Կամքի ազատության, «անձնիշխանության» խնդիրը հեղինակի կողմից արծարծվում է «Ուսմունքի» մի շարք տեղերում: Այստեղ այն հանդես է գալիս առաջին անգամ՝ բավականին անսպասելի, մինչև մարդու արարման հարցի քննարկումն ավարտելը և նրան կամքի ազատությամբ, ազատ ընտրություն կատարելու հատկությամբ օժտելու մասին խոսելը:

5 (263). 1. Բնագրում իշխան, այսինքն՝ տիրող, տիրակալ, որն Աստծու կողմից օժտվեց «թագավորական լիազորություններով» իր սեփական կնոջ հանդեպ (Ա Կորնթ., 11. 7-10): Տե՛ս «Толковая Библия» с. 12:

2. Մարդը ստեղծվել է «Աստծու կերպարանքով», նրա պատկերով: Արարիչն է տվել նրան այդ անձեռնմխելի բնածին հատկանիշը: Ինչ վերաբերում է «նմանությանը», այսինքն՝ աստվածամանությանը, ապա մարդ կարող է հասնել դրան իր տքնությամբ, ազատ կամքով ձգտելով առ Աստված, որպես կատարելության տիպարի: Հեղինակն, անշուշտ, ծանոթ է Գրիգոր Նյուսացու մեկնաբանությանը, որը զանազանում է իրարից «կերպարանքը» (*εἰκων* - պատկեր) և «նմանությունը» (*ομοιωσις*): Տե՛ս նույն տեղում, էջ 12:

7 (265). 1. Բնագրում «իբրով անձնիշխան կամօք՝ յԱրարչէ անտի զիւրոց վաստակոց առեալ զփոխարենս պատուեսցէ»: «Ուսմունքի» հեղինակը կրկին անդրադառնում է ազատ կամքի, ընտրության ազատության խնդրին, շեշտում է, որ աստվածային շնորհներին և պատվին մարդ կարող է արժանանալ միայն բարի գործերի և աստվածահաճո մղումների համար, և որ դա կախված է հենց մարդու կամքից, չարից խուսափելու և բարի գործերի շնորհիվ: Դրա մասին իր մեկնաբանություններն է տվել մեր հեղինակի ժամանակակից հռչակավոր եկեղեցական գործիչ և փիլի-

սովա Ավգուստինը (Օգոստինոսը): Այստեղ և նախորդող պարբերություններում իրենց արտացոլումն են գտել 410–420-ական թթ. բուռն վեճերը մարդու «ինքնիշխանության» շուրջ, կամքի ազատության հիմնախնդրի վերաբերյալ մեծ բանավեճը, որն ավարտվեց 431 թ. Եփեսոսի տիեզերական ժողովի որոշումով: Այն դատապարտեց Պելագիոսի ծայրահեղ տեսակետը, նրա ուսմունքը կամքի բացարձակ ազատության վերաբերյալ: Առանց աղմուկի, լռելյայն մերժվեց նաև Ավգուստինի ֆատալիզմը, աստվածային նախախնամության բացարձակացումը, որը տեղ չէր թողնում մարդու ազատությանը: «Ուսմունքի» հեղինակը պաշտպանում է չափավոր ուղղափառ տեսակետը, որը այնուհետև որդեգրեցին և զարգացրին հայ ականավոր աստվածաբաններ և գիտնականներ Եզնիկ Կողբացին, Եղիշեն, Անանիա Շիրակացին:

9 (267). 1. Խոսքը տարվա չորս եղանակների մասին է (գարուն, ամառ, աշուն, ձմեռ): Աստղերը, լուսատուները, ըստ հեղինակի, մեկ տարով վարժվող հնագանդ ծառաների պես ճշտորեն անցնում են իրենց ճանապարհը տարվա չորս ժամանակների, եղանակների բաժանված, նախապես նշված, ամեն տարի կրկնվող տեղերով: Հեղինակը չի օգտագործում եղանակ բառը, ըստ երևույթին, նրա բազմանշանակ լինելու պատճառով: «Ի չորս որոշմունս տարուոյ» – «տարվա չորս մասերի (կամ հատվածների)»:

12 (270). 1. Տե՛ս 4 (262)² և 7(265)¹ ծանոթագրությունները:

14(272). 1. Խոսքն այստեղ անմարմին («աննիւթ») հրեշտակների և երկրային մարմնավոր արարածների մասին է: Փակագծերում ավելացնում ենք կամ բառը, անջատելու համար երկնավոր և երկրային արարածներին և խուսափելու համար անհարիր «աննյութական նյութ» արտահայտությունից («immaterial... matter»), ինչպես թարգմանել է Ռ. Թոմսոնը. տե՛ս Teaching of Saint Gregory, p. 46): «Լինել յաննիւթոյ» արտահայտությունը նպատակահարմար է թարգմանել՝ «լինել, գոյություն առնել ոչնչից», քանի որ «աննիւթ» այստեղ, ըստ իմաստի, ավելի հարմար է «ոչինչ» եզրին, հրեշտակների արարմանը պատշաճ:

15 (273). 1. Հեղինակը հայ աստվածաբանական գրականության մեջ առաջինն է, որ շեշտում է երևելի աշխարհի, արարածների ճանաչման մի-

ջոցով Արարչի ճանաչման հնարավորությունը և անհրաժեշտությունը: Բնության ճանաչումը փաստորեն դառնում է անհրաժեշտություն, որպեսզի մարդ-արարածը իմանա, ճանաչի, մերձենա Աստծուն: Այդ պահանջը, բնության, ստեղծված աշխարհի ճանաչումը լայն դուռ է բացում գիտության զարգացման համար, բայց, իհարկե, որպես «աստվածաբանության աղախնի» ստորադաս վիճակում:

19 (277). 1. Ադին – Եդեն, հին եբրայերեն՝ Եդեն, դրախտի անվան տարբերակներ են: Դրախտից հոսող չորս գետերից երկուսը՝ քաջ հայտնի Տիգրիսն ու Եփրատն են, որոնք սկիզբ են առնում Հայկական բարձրավանդակից: Հին հրեաների պատկերացումներով, դրախտը գտնվում էր Միջագետքում, այժմյան Իրաքի տարածքում: Այլազգի բազմաթիվ հետազոտողներ, ինչպես և հայ հեղինակները համարում են, որ դրախտը գտնվում էր Հայաստանում, քանի որ դրախտի գլխավոր գետերը (Տիգրիսն ու Եփրատը) հոսում էին Հայոց լեռներից, որը և պատճառ է դարձել «Հայաստան՝ երկիր դրախտավայր» արտահայտությանը:

20 (278). 1. Բնագրում «զՅեսու երթալոյ զհակառակասերն զսատանայ անուն ժառանգեաց»: Հեղինակը բերում է սատանայի անվան հին ստուգաբանությունը՝ (Աստծու) հակառակորդի, որը գայթակղում է մարդկանց իրեն հետևելու, հրապուրողի, որն իր հետևից է տանում ստելու, խաբելու միջոցով: Ս. Գրքում սատանան ունի նաև այլ անվանումներ՝ «մարդասպան» (Հովհ., 8. 44), «չարի առաջնաեղավոր» (Իմաստ., 2. 24), «հին վիշապ» (Հայտն., 12. 9-10): Տե՛ս նաև հաջորդ պարբերությունները՝ 21 (279), 22 (280):

26 (284). 1. Այստեղ հեղինակը սկսում է հին հայերի հեթանոսական հավատալիքների և առիասարակ հեթանոսության քննադատությունը, որը շարունակում է իր քարոզի նաև այլ մասերում (Տե՛ս հատկապես 27 (285) - 28 (286), 265 (522) և 266 (253), 267 (524), 268 (525), 269 (526): Կռապաշտության քննադատությունը հեղինակը ծավալում է, հետևելով քրիստոնեության ջատագովության վաղ շրջանի քրիստոնյա հեղինակների ավանդույթներին (ջատագովներ Արիստիդես Աթենացի, Տատիանոս Ասորի, Թեոֆիլոս Անտիոքացի, Տերտուլիանոս և այլք): Փաստորեն հեղինակը հանդես է գալիս որպես հայ գրականության մեջ ջատագովության և հայրաբանության հիմնադիրը: Հայ աստվածաբանական և փիլիսոփայա-

կան մտքի այդ ուղղությունը շարունակել են զարգացնել Եզնիկ Կողբացին և Եղիշեն, որոնց քննադատության սուր ծայրը հիմնականում ուղղված էր պարսից կրոնի, մագդեզականության դեմ՝ ի պաշտպանություն Չայաստանում վտանգված քրիստոնեության:

31 (289). 1. Բնագրում Կայենի և Աբելի անունները պահպանվել են իրենց հին եբրայական ձևերով՝ Կահել և Չաբել, որ նշանակում են ընծա, ժառանգություն (կահել), իսկ երկրորդը՝ շունչ, ունայնություն (Չաբել): Տե՛ս «Толковая Библия» с. 31:

34 (292). 1. Ենովքը ապրել է 365 տարի, իսկ Մաթուսաղային ունեցել է, երբ 165 տարեկան էր: Համապատասխանաբար, այս իրողությունը նկատի ունենալով, թարգմանում ենք «հարյուր վաթսուհինգ տարեկան դարձավ և ծնեց»։ ըստ Ս. Գրքի՝ դրանից հետո նա ապրել է ևս 200 տարի:

37 (295). 1. Բնագրում՝ ութերորդ դարուն: Հեղինակը նկատի ունի պատրիարքների ութերորդ սերունդը՝ Ադամից սկսած մինչև Նոյ, և ոչ թե դարը՝ հարյուրամյակը, իմանալով, որ պատրիարքները ապրել են յուրաքանչյուրը մեկ դարից ավել:

42 (300). 1. Հրեշտակները Աբրահամին հայտնվեցին իր դաշնակից, բարեկամ ամորեացի Մամբրեին (Մամբրեին) պատկանող պուրակի (կամ պարտեզի) մոտ (Ծննդ., 18. 1), և ոչ թե «Մամբրեի մոտից եկած հրեշտակների միջոցով»:

44 (302). 1. Ակնարկը վերաբերում է ապագայում Քրիստոսի գալույն, որը մարմին է առնելու նույնպես Աբրահամի սերնդից: Իսահակի զոհաբերությունը նախատիպ է Քրիստոսի զոհաբերության՝ մարդկանց մեղքերը իր վրա վերցնելու և մարդկությունը փրկելու համար:

45 (303). Խոսքը Իսահակի որդի Հակոբի՝ հրեշտակի հետ ունեցած մեծամարտի մասին է, երբ հրեշտակը վնասեց Հակոբի ազդրի ցիլը, ինչից Հակոբը կաղ դարձավ (Ծննդ., 32. 24-26, 31-32):

48 (306). 1. «Էական» – բառացի նշանակում է «այն, ինչ իսկապես գոյություն ունի», ի տարբերություն նրա կողմից ստեղծվող և մահացող,

քայքայվող գոյերի, կենդանի կամ անկենդան արարածների: «Էական», «էություն», որպես Աստծո անուն, այսինքն՝ հավերժական բարձրագույն էակ, այստեղ օգտագործվում է առաջին անգամ՝ սկիզբ դնելով հայ աստվածաբանական-փիլիսոփայության տերմինաբանությանը: Այն մտել է հայ աստվածաբանական գրականության մեջ Ս. Գրքից՝ նրա հայերեն թարգմանությունից: Նրա ուժեղ ազդեցության տակ գտնվող սույն «Ուսմունքը», որն ամենայն հավանականությամբ գրել է Մեսրոպ Մաշտոցը, Ս. Գրքի թարգմանիչներից մեկը, այստեղ և այլ տեղերում [տե՛ս 69 (326), 163 (420), 444 (702)] կիրառում է այդ տերմինաբանությունը: Հայ փիլիսոփայական տերմինաբանության ձևավորման նախահունարան շրջանի մասին ավելի մանրամասն տե՛ս **С. С. Арешатян, Формирование философской науки в древней Армении**, Ер. 1973, сс. 55-57, 131-140. *Teaching of Saint Gregory. Translation and Commentary by R. W. Thomson*, Cambridge-Massachusetts, 1970, pp. 11-12.

50 (308). 1. Խոսքն այստեղ հրեաների՝ Եգիպտոսում ստրկության մեջ լինելու ժամանակ կալից և ջրից աղյուսներ պատրաստելու պարտավորության մասին է, այսինքն՝ այն տանջանքների, որ Եգիպտացիների ձեռքով Աստված պատժել էր հրեաներին՝ մեղքերի համար: Տե՛ս Գիրք Ելից, 1. 14, 5. 14:

58 (316). 1. Բնագրում Յեշով, խոսքը Նավեայ որդի Յեշուի (Հեսուի), այսինքն՝ Հիսուս Նավե զորավարի մասին է: Տե՛ս Երկրորդ Օրենք, 34. 9: Ուշադրության արժանի է, որ Յեշով ձևը ասորական է, ինչպես և այլ անունների հին հայերենում տառադարձումները (օր. Շմավոն = Սիմավոն, Շմուլէ = Սամուէլ, Բարսեղ = Վասիլ, Սարգիս = Սերգիոս և այլն), որ խոսում են հայ դպրության առաջին շրջանում ասորերենի ուժեղ ազդեցության, ինչպես և կարևորագույն թարգմանությունների՝ Ս. Գրքի (առաջին թարգմ.), Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմության», Բարսեղ Կեսարացու և այլ հույն հեղինակների մի շարք երկերի ասորերենից թարգմանելու մասին:

2. Նկատի ունի «յոթը անհոգ», ամենայն հավանականությամբ, դեռևս քոչվոր հրեական ցեղերին, որոնց և ազգապետ Յեշուն բնակեցրեց Հորդանան գետից և Մեռյալ ծովից արևմուտք ընկած Քանաան կոչվող երկրում (Հիս. Նավ. 18 և 19) այժմյան Պաղեստինյան հողերի և Իսրայելի տարածքը, Հորդանան գետից մինչև Միջերկրական ծով:

61 (319). 1. Հինավուրցն, այսինքն՝ Օրերով հին, Ծերունին: Խոսքը Հայր Աստծո մասին է, որն այստեղ հանդես է գալիս ծեր մարդու տեսքով: Տե՛ս Դանիելի մարգարեություն, զլ. 7. 13-14:

71 (329). 1. Ստեփանոս Վկա – Քրիստոսի համար զոհված առաջին նահատակը, որը հրեաների կողմից սպանվեց քարկոծումով՝ անհողողող և անզիջում պաշտպանելով քրիստոնեությունը հրեաների հոգևոր ատյանի՝ սինեդրիոնի առաջ: Որպես առաջին նահատակ հետագայում կոչվեց Ստեփանոս Նախավկա: «Գործք Առաքելոցի» 7-րդ գլուխը մանրամասն նկարագրում է նրա հետ կապված դեպքերը, նրա երկարաշունչ ճառը հրեաների ատյանում և մահապատիժը: Այդ ամենին ներկա է եղել Սաւղոս անունով հրեա օրենսգետը, հետագայում Պաւղոս՝ Պողոս առաքյալը, քրիստոնեության ամենաջերմեռանդ քարոզիչն ու տարածողը, ինչի համար ինքն էլ նահատակվեց Հռոմում:

2. Սաբաովթ (Սաբաուվթ)– հին եբր. «Զօրութեանց», այսինքն՝ «Տէր երկնային զօրաց» (ՆՅԲ, էջ 682), «Ամենագոր», «ամենահզոր», Աստծո անուններից մեկը:

76 (334). 1. Բնագրում առին ուսան զանաստուածպաշտութիւնն նոցա: «Անաստվածապաշտություն» բառը կարող է հասկացվել նաև «կռապաշտություն», բայց տվյալ դեպքում ավելի ստույգ ենք համարում «չաստվածների պաշտամունքը», կամ «պաշտոն մատուցելը», որովհետև այդ «պաշտամունքը», ըստ հեղինակի, հոմանիշ է «անաստվածության», չաստվածների, սուտ աստվածների երկրպագության:

77 (335). 1. Բնագրում – «և շաղախեալ երկիրն յարեւելն, որ պոռնկեալ ի դիսն յաճախելին և զպոռնկութիւնս մարմնոց»: Բառացի թարգմանությունը «երկիրը շաղախեցին աստվածների հետ շնանալու արյունով և նրանք շատացրին մարմնի պոռնկությունը» (Ազաթ. «Հայոց պատմ.», Եր., 1983, էջ 189), մեր կարծիքով, շատ հեռու է բուն իմաստից: «Պոռնկություն» բառը հին հայերենում նշանակում է նաև «կռապաշտություն», իսկ «պոռնկել» – «պաշտել, երկրպագել կուռքերին», և ոչ թե «աստվածների հետ շնանալ»: Ինչ վերաբերում է «պոռնկութիւն մարմնոց» բառակապակցությանը, ապա դա ոչ թե «մարմնի պոռնկություն է» (այդպես է հասկացել նաև Ռ. Թոմսոնը, տե՛ս «Teaching», էջ 66, «the fornications of the flesh»), այլ «կուռքերի մարմինների» կամ «մարմնավոր կուռքերին երկրպագելու»,

«կռապաշտությամբ զբաղվելու» մասին է խոսում հին հեղինակը՝ դատապարտելով կռապաշտությունը որպես անհեթեթ և պիղծ մոլորություն:

81 (339). 1. Հեղինակն այստեղ առաջին անգամ նշում է Հին Կտակարանում արված այն զուշակությունը, իսկ այնուհետև Նոր Կտակարանում իրականացած մարգարեությունները: Հատկապես հաճախ է նա անդրադառնում Մեսիայի աշխարհ գալու, Աստծո Որդու գալստյան գաղափարին, որն արտահայտել էին Հինկտակարանային մարգարեները: Տե՛ս նաև 84 (341), 85 (342), 86 (343), 89 (346), 158 (415), 166 (423) և այլ պարբերությունները:

82 (340). 1. Բնագրում – «հոմանեաց իրեանց հեթանոսաց»: Առաջին բառը («հոմանեաց», այսինքն՝ սիրեկանների) չկա Դավթի 105-րդ սաղմոսում, որը բերվում է այստեղ: Այն թափանցել է Եզեկիելի գրքի 23. 9 տողից, որը նույնպես դատապարտում է անառակությունը և կռապաշտությունը:

97 (355). 1. Այստեղ և հաջորդ պարբերություններում մինչև 112 (370) հեղինակը խտացված շարադրանքով մատուցում է իր աստվածաբանությունը՝ լուսաբանելով Նիկիո Հավատի Հանգանակը և ցուցադրում իր ուղղափառությունը: Փաստորեն այդ ընդարձակ հատվածը հայ փիլիսոփայության մեջ առաջին դրսևորումն է հայրաբանական այն ուղղության, որի հետևորդները և զարգացնողները հանդիսացան Եզնիկ Կողբացին և Եղիշեն:

104 (362). 1. Հեղինակը շարադրում է Նիկիո և Կոստանդնուպոլսի տիեզերական ժողովներում ընդունված որոշումները Ս. Երրորդության մասին: Այդ որոշումները հիմք դարձան Հայոց եկեղեցու ուսմունքի համար, որը մյուս ուղղափառ եկեղեցիների հետ միասին վանեց և դատապարտեց Արիոսի և Մակեդոնի հերետիկոսական ուսմունքները, մեկը Որդուն ստորադասելու համար (արիոսականություն), մյուսը՝ Ս. Հոգուն նսեմացնելու պատճառով (մակեդոնականություն – հոգեմարտություն): Երկու աղանդներն էլ խախտում էին Ս. Երրորդության միասնականությունը, հավասարությունը և համագործության սկզբունքը, ինչի հետևողական և համոզված պաշտպանն է մեր հեղինակը:

2. Ս. Երրորդության երեք Աճծերի մասին բանաձևը (Նիկիո հավատամ-

քը՝ 325 թ.), որը քիչ առաջ շարադրեց հեղինակը, հետևյալն է. «Հայր Աստված, որն ամեն ինչի Տերն է և Արարիչը, և Միածին Որդին, Որը Հորից է, Հոր մոտ է և Հոր հետ է, և Ս. Հոգին, որը Նույնի էությունից է, և Նրանով ստեղծեց բոլոր արարածներին»: Ս. Հոգին և Որդին հավասարապես բխում են Հորից: Իսկ այս նոր ձևակերպման համաձայն Ս. Հոգին ելնում է Հորից և Որդուց և գտնվում է Նրանց մեջ: Այստեղ հեղինակը, որն ապրում էր այդ երկու բանաձևերի խմորման և ձևավորման շրջանում, կարծես մեծ նշանակություն չի տալիս այդ տարբերությանը: Նրա նպատակն է հաստատել երեք Անձերի համագործությունը, հավասարությունը, միակամությունը: Սակայն հետագայում հեղինակն ի վերջո կանգ է առնում մի բանաձևի վրա («Ս. Հոգին բխում է Հորից»), որը և դառնում է Հայոց եկեղեցու դավանաբանության դրույթը՝ ի տարբերություն արևմտյան եկեղեցու, որը որդեգրեց «Ս. Հոգին բխում է Հորից և Որդուց» բանաձևը («Filio-que»):

110 (368). 1. «Կատարյալ մարդ՝ իր կատարյալ Աստվածությանմբ»: Այս դրույթը հեղինակն ուղղում է Ապողինար Լաոդիկեցու ուսմունքի դեմ, որը դատապարտվեց Ալեքսանդրիայի (362 թ.) և Կոստանդնուպոլսի (381 թ.) ժողովներում: Ըստ Ապողինարի ուսմունքի՝ Հիսուս Քրիստոսը որպես Աստված (Միածին Որդի Աստուծոյ) չէր կարող կատարյալ, իսկական մարդ լինել: Հայոց եկեղեցին «Վարդապետության» այս տողերից սկսած և այնուհետև մերժում է Ապողինարին և պաշտպանում ուղղափառ դավանաբանությունը, համաձայն որի՝ Հայր Աստծուց ուղարկված Որդի Աստվածը «կատարյալ մարդ է»՝ մարդկային իր բոլոր հատկություններով, և «կատարյալ Աստված է»:

111 (369). 1. Բնագրում – «ուրացան զբնութին նորա», այսինքն՝ չճանաչեցին, մերժեցին Հիսուս Քրիստոսի աստվածային բնությունը, որը միացել էր մարմնին և հանդես եկել որպես մարդ: Այստեղ հեղինակը նկատի ունի Արիոսին (Ալեքսանդրիայի քահանա, մի. 336 թ.) և նրա հետևորդներին, որոնք Հիսուսին համարում էին Հայր Աստծու ստեղծագործություն: Ըստ արիոսականների՝ Որդին հավասար չէ Հորը և Ս. Երրորդության մեջ չի կարող հավասարազոր լինել Հայր Աստծուն և Ս. Հոգուն: Նիկիայի ժողովում (325 թ.) այն դատապարտվեց որպես հերետիկոսություն և մերժվեց եկեղեցու կողմից, բայց, չնայած դրան, ունեցավ իր հետևորդները և համակիրները: Նույնիսկ մի շարք թագավորներ, խորանուխ չլինելով այդ ուսմունքի էության մեջ, տարբեր քաղաքական համագամանքներից ել-

նելով, հարում էին արիոսականության և պարտադրում իրենց հպատակներին՝ զոթերին, լանգոբարդներին, վանդալներին և այլ բարբարոս ժողովուրդներին (5-6-րդ դդ.) հետևել այդ հերետիկոսական դավանանքին: Հայաստանում այն որոշ ժամանակ հետևորդներ ունեցավ Փոքր Հայքում, IV դարում: Արիոսական այդ շարժման առաջնորդն ու գաղափարախոսը հայ եպիսկոպոս Եվստաթիոս Սեբաստացին էր (IV դարի 2-րդ կես):

118 (376). 1. Հեղինակը նախապես ասում է իր հետագա շարադրանքի կամ քարոզի (քարոզների) բովանդակության մասին, որն, ըստ երևույթին, սկզբից բանավոր էր, իսկ այնուհետև գրվեց և մշակվեց: Դրա մասին են վկայում միաձև արտահայտությունները, «Վարդապետության» տարբեր տեղերում արված ցուցումները, ինչպես, օրինակ, «կատմենք իր տեղում», «պատմելու եմ ձեզ», «կասեմ ձեզ իմ շարադրանքիս (կամ ճառիս) վերջում»: Տե՛ս 28 (286), 134 (391), 240 (497) և այլն: Հեղինակը քարոզի ժանրը զուգակցում է մեկնության, բացատրության, տեքստի քննության հետ, որը կարող էր իրագործվել բանավոր խրատի և քարոզի հետագա մշակման միջոցով: Որպես քրիստոնյա քարոզիչ և ջատագով նա, լուսաբանելով Ս. Գրքի բովանդակությունը, ցուցադրում է քրիստոնեության ճշմարտությունը՝ ի հակադրություն հեթանոսության:

119 (377). 1. Բնագրում – «բովանդակեցաւ ճշմարտութեամբ ի մարմնին եւ ճշմարիտ մարդ եղել»: Տե՛ս ծան. 110 (368). 1. – «կատարեալ մարդ»: Այստեղ համապատասխանաբար՝ «ճշմարիտ մարդ»:

2. Բնագրում – «ամ Հաւր եւ ընդ Հաւր», ըստ Նիկիայի ժողովի՝ «(Հաւատամք) ի միածին Որդին, որ ի Հաւրէ եւ ամ Հայր եւ ընդ Հաւր»: Տե՛ս ծան. 104 (362):

121 (379). 1. Բնագրում – «Ըմբռնեցաւ», այսինքն՝ «ընդգրկեց», և ոչ թե «ճանաչվեց», ինչպես Ռ. Թոմսոնի և Ա. Տեր-Ղևոնդյանի մոտ:

2. Բնագրում – «դնել զանձն իմ իմովք կամաւք»: Այստեղ «անձ» բառը նշանակում է «կյանք» և ոչ թե «անձ», «անձնավորություն»:

123 (381). 1. «Հինավուրցը» – Աստծո անուններից մեկը: «Սաբաովքը», որն այստեղ նույնացվում է Քրիստոսի հետ: «Հինավուրցը» բառացի նշանակում է «հին օրերից», այսինքն՝ հնուց, մշտապես գոյություն ունեցողը: Տվյալ դեպքում՝ մարմին առնող մշտապես ապրող, հինավուրց

Աստված, որը, մանուկ դառնալով, մարմնավորվում է:

124 (382). 1. Բնագրում «ծնունդն առաջին ի Զարե յառաջ քան զանկէտ յաւիտեանս»: Զեղինակը կրկին վերադառնում է կարևոր այն դրույթին, որ հավիտենական Զորից հավերժորեն ծնված Որդին, որը նույնպես հավերժ է, երկրորդ անգամ ծնվում է մարմին առնելով՝ մարդկանց փրկելու համար: Այս դրույթն ուղղված է արիոսական աղանդի դեմ: Զոր, Որդու և Ս. Զոգու հավերժությունը և միաբուն լինելը, Զոր և Որդու հավասարազոր և հավիտենական լինելը այն կարևորագույն դրույթներից են, երբ շարունակվում էին կատաղի վեճերը Ս. Երրորդության դեմքերի վերաբերյալ, որոնք ուղղված էին Արիոսի և Մակեդոնի հերետիկոսական ուսմունքների դեմ:

130 (388). 1. Բնագրում – «յառաջ քան զարուսեակ ի Զօրէ ծնեալ»: Այստեղ «արուսյակը» նշանակում է «արև, արեգակ» և ոչ թե՝ «առավուտվա աստղ» – «morning star», ինչպես թարգմանում է Ռ. Թոմսոնը:

131 (389). 1. Զեղինակը նկատի ունի այն եկեղեցական կանոնները և հավատի հանգանակները, որ սահմանվել էին Նիկիայի, Կոստանդնուպոլսի և Եփեսոսի տիեզերական ժողովներում:

2. Այս նգովքները, ինչ-որ այլախոհների հասցեին ուղղված անեծքները, ցույց են տալիս, որ հեղինակի կենդանության օրոք իսկապես հայ իրականության մեջ դեռ առկա էին վտանգավոր աղանդներ, հերետիկոսական շարժումների հետևորդներ, այսինքն՝ Զայաստանում և հարևան երկրներում տարածված Մարկիոնի, Արիոսի, Սաբելիոսի, Նեստորի և այլ աղանդապետերի՝ դեռևս չպառակտված տիեզերական եկեղեցու կողմից մերժված ուսմունքները:

132 (390). 1. Այս նախադասության մեջ խտացված են Զայոց եկեղեցու Զավատի Զանգանակի հիմնական դրույթները, որոնք բխում են Նիկիայի և Կոստանդնուպոլսի հավատի հանգանակից:

142 (400). 1. Բնագրում – «միանգամայն տիրագետ եւ հրեշտակածանօթ եղեալ»: Խոսքն այստեղ Տիրոջը իսկույն, տեղնուտեղը ճանաչելու մասին է և ոչ թե «Տիրոջից տեղեկություններ ստանալու»: Դրանից հետո հրեշտակները զգուշացրել են մոգերին, որ արագ հեռանան և այլ ճանա-

պարհով, Երուսաղեմ չմտնելով, վերադառնան իրենց երկրները, Զերովդես թագավորի հետ չհանդիպելու համար, որը փնտրում էր Մանուկին սպանելու համար:

144 (402). 1. Բնագրում – «ճշմարիտ կերպարանս... եւ ոչ առ աջօք ինչ տեսիլ»: Զեղինակն, անշուշտ, այս խոսքն ուղղում է Ապողինարի ուսմունքի դեմ, որը Քրիստոսի նյութական, մարդկային կերպարանքը համարում էր երևութական, ոչ իսկական: Ապողինարի ուսմունքը դատապարտվել է Աղեքսանդրիայի (362 թ.) և Կոստանդնուպոլսի (381 թ.) ժողովներում:

150 (408). Կարապետ – բառացի նշանակում է սուրհանդակ, ճանապարհ բացող, առջևից ընթացող: Տվյալ դեպքում Զիսուսի համար ճանփա բացող, առաջուց քարոզող, նախապատրաստող Զովհաննես Մկրտիչն է, որի համար կարապետը դառնում է մակդիր:

168 (426). 1. Այս և նախորդ վեց պարբերություններում՝ 162-167 (420-426) հեղինակը հստակ և հակիրճ ձևակերպումներով լույս է սփռում Բանի (Լոգոսի) և Աստծու, Որդու և Զոր առնչության բարդ հիմնախնդրի վրա: Իր բացատրություններն ու մեկնաբանությունները շարադրելիս նա հենվում է հեղինակավոր քրիստոնյա մտածողների տեսակետների վրա, ինչպիսիք են Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նյուսացին և Եփրեմ Ասորին: Մեր հեղինակին, ամենայն հավանականությամբ, քաջ ծանոթ է եղել նաև Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկը, որը պատկանում է Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի օրոք կատարված հին թարգմանությունների թվին:

181 (439). 1. «Առաջին Այրը» – առաջին մարդը: Զեղինակը նկատի ունի Աստծուն, Որն իջավ երկիր մարդու տեսքով:

2. Բնագրում – «Նախնական ինքնութիւն», նախնական բնություն: Նկատի ունի «առաջին Այրին», Աստծուն՝ հետևելով Պողոս առաքյալի բացատրությանը (Բ Կորնթ., 11. 2), որը Քրիստոսին ներկայացնում է որպես փեսայի, իսկ տիեզերքը նրա հարսն է: Ռ. Թոմսոնը այստեղ նշմարում է զնոստիկյան գաղափարի արտացոլք, ըստ որի՝ աստվածային «առաջին մարդը» անվանվում է «նախնական բնություն» (preordial nature). տե՛ս Teaching, p. 98.

183. (441). 1. Բնագրում – «Եկեղեցի հեթանոսաց», այսինքն ազգերի, ժողովուրդների եկեղեցին, նկատի ունի եկեղեցին որպես այդպիսին, բոլոր հավատացյալների հավաքականությունը, տիեզերական եկեղեցին, որը, ըստ ամենատարածված մեկնաբանության, հեղինակն անվանում է Քրիստոսի հարս:

191 (449). 1. Ս. Գրքի կանոնական բնագրում «մարգարեների» փոխարեն գրված է «հրեշտակների» («հրեշտակաց իւրոց»), որն ունի նաև մարգարեի նշանակություն, միաժամանակ նաև դեսպան, սուրհանդակ, պատգամաբեր նշանակությունները:

204 (462). 1. Բնագրում – «Քահանայապետ ազգին տիրասպանուաց»: Խոսքը հրեաների քահանայապետ Կահաֆայի մասին է, որի պահանջով ավագակ Բարաբբայի փոխարեն մահվան դատապարտվեց Հիսուս Քրիստոսը (Հովհ., 18. 40):

210 (468). 1. Եկեղեցու մանուկները («մանկուք եկեղեցույ»), այսինքն եկեղեցու զավակները, Քրիստոսի հետևորդները, բոլոր հավատացյալները:

211 (469). 1. Խոսքը Երուսաղեմի այն տաճարի մասին է, որը կառուցել էր Հերոդեսը Ա թագավորը: Կառուցումը սկսվել էր մ.թ.ա. 20 թվականին և ավարտի հասցվել մ. թ. 63 թ., բայց արդեն 30-ական թվականներին փայլում էր իր գեղեցկությամբ և հավակնում էր լինել աշխարհի հրաշալիքներից մեկը: Քրիստոսն ասում էր, որ այն ամայանալու է և ավերվելու (Մատթ., 24. 1-2), իսկ դա երբ կլինի, գիտի միայն Հայրը (24. 3): Այստեղ խոսքը ոչ միայն տաճարի, այլև ամբողջ Երուսաղեմի ավերման մասին է, որը կապվում է Քրիստոսի երկրորդ գալստյան և աշխարհի վախճանի հետ:

242 (500). 1. Բնագրում՝ «զբարձրանշան զհռչակաւոր և զանկարծահաս զմուտն Հոգւոյն Սրբոյ»: Որ Ս. Հոգու մուտքը (կամ գալուստը) իրոք հանկարծակի է (և ոչ թե «անհասկանալի», incomprehensible), հաստատվում է «Գործք առաքելոցի» II գլխի սկզբի խոսքերով:

244 (502). 1. Բնագիրը խաթարված է՝ «նոյնպէս և Բաղտասար ասաց

ցԴանիէլ»: Իրականում Նաբուգոդոնոսոր արքան է դիմում Դանիէլ մարգարեին, որի երկրորդ անունը Բաղտասար էր (Վալտազար), որպեսզի նա վերծանի իր՝ Նաբուգոդոնոսորի տեսած երազը: Տե՛ս Դանիէլի մարգարություն, գլ. IV, 5-6-րդ տողերը:

2. Բնագրում՝ «Հոգի Սուրբ Աստուծոյ» (Դան., 4. 6), որը գալիս է արամեերեն բնագրից՝ «հոգի աստուածոց սրբոց»: Տե՛ս Աստուածաշունչ մատեան, Վիեննա, 1929, էջ 918, ծնթ.:

245 (503). 1. Բնագրում՝ «Ես լցայց», այսինքն՝ «Ես կլցվեմ...»: Ուղղում ենք՝ ըստ Աստվածաշնչի. «Ես լցայ» – «Ես լցվեցի», կամ՝ «Ես լցված եմ» (Միք., գլ. III, 8):

250 (508). 1. Բնագրում – «բազում լեզուաց», որը նշանակում է «բազում ազգերի» կամ «ժողովուրդների»:

2. Բնագրում – «անձինք իւրեանց», որը նշանակում է տվյալ դեպքում «մարմինները» և ոչ թե «հոգիները», «souls»:

251 (509). 1. Կուռնելիոս (Կռննելիոս) – իտալական զորքի հարյուրապետը, որը գտնվում էր Պաղեստինյան Կեսարիայում (Գործք, 10. 1-3): Հռոմայեցիներից առաջինը, որը դարձավ քրիստոնեության հետևորդ:

2. Շմավոն – Սիմոնի անունը բերված է ասորական ձևով, որը խոսում է Ս. Գրքի ասորերենից առաջին թարգմանության մասին (Գործք, 8. 13): Տե՛ս նաև ծան. 58 (316):

255 (513). 1. Շավուղ – Իսրայելի առաջին թագավորը, մ. թ. ա. 1091-ից սկսած, իշխեց 40 տարի: Վերջում Աստուծու հանդեպ անհնազանդ լինելու պատճառով զրկվեց թագավորությունից և ինքնասպան եղավ: Ուշագրավ է, որ այս, ինչպես այլ անուններ, հեղինակը բերում է նրա ասորական ձևով: Ուղիղ եբրայական ձևը Սաուլ է: Մանրամասն պատմությունը տե՛ս Գիրք Թագաւորութեանց, I, գլ. 1031:

2. Նկատի ունի Հռիփսիմյանց կույսերին, որոնց Հայաստան գալն ու նահատակվելը հեղինակն արդարացիորեն հավասարեցնում է առաքյալների գործունեությանը:

256 (514). 1. Վկա բառն այստեղ օգտագործվում է իր առաջին և իսկական իմաստով, որը հետո ստանում է նաև այլ երանգ, ձեռք բերելով նա-

հատակի իմաստ՝ հոմանիշ ունենալով հունարեն մարտիրոս բառը: Այս տեղից և վկայաբանություն – նահատակի, մարտիրոսի գործը և նրա պատմությունը՝ մարտիրոլոգիա:

257 (515). 1. Բնագրում – «զապականացու մարմին», այսինքն՝ մեր մարդկային ապականացու, մահվան ենթակա մարմինը խառնեց անմահ աստվածային բնության հետ՝ մարդկանց փրկելու համար: Այս դրույթի մանրամասն մեկնությունը տալիս է Պողոս առաքյալը իր՝ Կորնթացիներին ուղղված Առաջին թղթում, տե՛ս Ա Կորնթ., 15. 51-54:

263 (521). 1. Բնագրում՝ «վաղագոյն», ավելի վաղ: Այստեղ հեղինակը, որն իր «Վարդապետությունը» գրել է 5-րդ դարի 20-30-ական թվականներին, նկատի ունի վաղուց, ավելի քան հարյուր տարի առաջ տեղի ունեցած դեպքերը, Հռիփսիմյանց կույսերի նահատակությունը և դրան հաջորդած դրամատիկ իրադարձությունները: Դրա մասին է խոսում նաև «Ազաթանգեղոսի» ամենախորը հետազոտողներից մեկը՝ հայր Բարսեղ Սարգիսյանը իր ընդարձակ ուսումնասիրության մեջ (**Բ. Սարգիսյան**, Ազաթանգեղոս..., Վ., 1890, էջ 388-389: Տե՛ս նաև Teaching, էջ 122):

274 (532). 1. Բնագրում – «զսքանչելիսդ, որ առ ձեզդ երևեցաւ»: Հեղինակը նկատի ունի Հռիփսիմյանց կույսերին և նրանց հետ կապված հրաշքը:

2. Բնագրում – «ամենայն ազգք երկրի»: Խոսքն այստեղ ոչ թե ողջ աշխարհի ազգերի մասին է, այլ ինչպես քիչ վեր է ասվում, «մեր երկրի բոլոր բնակիչների», ուրեմն և «բոլոր ազգատոհմերի» մասին է, որ դեռ չեն ճանաչել Աստծուն, բայց այժմ արդեն պետք է ճանաչեն և «ծառայեն Նրան մեկ լծի տակ»: Հայաստանի բոլոր ազգատոհմերին Ա. Գրիգորը կոչ է անում հրաժարվել կռապաշտությունից և ընդունել նոր, ճշմարիտ հավատը: 274-279 (532-537) պարբերությունները ուղղակի կոչ են Հայաստանի բնակիչներին թոթափել հեթանոսության բեռը և ընդունել քրիստոնեությունը:

283 (541). 1. «Երեսունյոթ... բաժակներ». խոսքն այստեղ կրկին վերաբերում է Հռիփսիմյանց նահատակված կույսերին, որոնց ընդհանուր թիվը 37 էր:

284 (542). 1. Խոսքը Ստեփանոս Նախավկայի մասին է: Տե՛ս Գործք, 6. 5-15, 7. 55-60: Տե՛ս նաև ծան. 71 (329):

292 (550). 1. Այստեղ հայերեն Ա. Գիրքը ունի «հոգի» բառը, որը նշանակում է «հողմ», և ոչ թե «Հոգի» մեծատառով, այսինքն՝ Ա. Հոգի: Եբրայերեն բնագրում – «ռուախ», այսինքն՝ «հողմ»: Տվյալ դեպքում – «մոլեգին, բուռն հողմ, քամի»: Տե՛ս Толковая Библия, т. II, примеч. стр. 199, 212.

294 (552). 1. Բնագրում – «Վասն որոյ միւս մարգարէն ասէ ի նոյն պարու երգոյն իւրոյ», այսինքն՝ իր երգի նույն շարքում, նույն իմաստով, և ոչ թե նույն պարի մեջ, «in the same dance» (տե՛ս Teaching, էջ 132):

301 (559). 1. Բնագրում – «հոգիընկալ ամպ», որը նույն նշանակությունն ունի, ինչ ասված է 292 (550)-րդ պարբերությունում, այսինքն՝ «հոգին» որպես «հողմ»: Տե՛ս նաև 1-ին ծան. 292 (550) պարբ.: Դա spiritual cloud-ը չէ, ինչպես թարգմանել է **Ռ. Թոմսոնը**: Տե՛ս Teaching, էջ 133: Ըստ Եզեկիելի տեսիլքի՝ դա հողմ ընկալած, քամու ուժից առաջ սլացող ամպ է, որի մեջ են հրակառքերը և քերովբեները, որոնք և ամպի միջից Աստծու շնորհը պետք է թափեն մարդկանց վրա («գիտության շնորհը») և «նրանց հնարավորություն տան դալարելու»:

303 (561). Այստեղ «հոգիընկալ ամպը» բառացի պետք է հասկանալ որպես «հոգի ընկալած ամպ, որն (իր մեջ) կրում է աստվածային ճշմարտությունը», այսինքն՝ ամպի մեջ է հանգրվանել Աստվածային Ոգին:

304 (562). 1. Խոսքն այստեղ կրկին Հռիփսիմյանց կույսերի մասին է:

2. Բնագրում – «զմարմինս իւրեանց ետուն ի գանձն Տէրունի»: Աստծու վկաների կամ մարտիրոսների մասին որպես Աստվածային գանձերի, Աստծու համար իրենց զոհաբերածների մարմինները գանձ անվանելու մասին խոսում է հայտնի աստվածաբան Որոգինեսը (Օրիգենը) Dominus... habet thesauros suos: Տե՛ս **Ռ. Թոմսոնի** ծան. 1 (So Origen, In Num. Hom., XI 2), Teaching, p. 134:

306 (564). 1. Այս դրույթը հակասում է կամքի ազատության սկզբուն-

քին, որի ջերմ պաշտպանն է հեղինակը: Տե՛ս 4 (262), 7 (265) պարբերությունները և մեր ծանոթագրությունները:

309 (567). 1. «Վարդապետության» հեղինակը, որը «Ազաթանգեղոսի» նաև մյուս մասերի հավանական հեղինակն է կամ խմբագիրը, այստեղ ակնարկում է ուղղակիորեն 226-242-րդ պարբերություններում շարադրված հեթանոս հայերի և Տրդատ թագավորի տանջանքները, որոնց արժանացան քրիստոնյաներին հալածելու և քրիստոնեությունը մերժելու համար:

310 (568). 1. Բնագրում – «ըստ եբրայական բանակին»: Ռ. Թոմսոնը թարգմանում է «like army of Egyptians»: Նրան շփոթության մեջ է գցել «բանակ» բառը, ինչի պատճառով էլ նա կամայականորեն «եբրայականը» փոխել է «եգիպտականի»: Մինչդեռ հեղինակն այստեղ նկատի ունի եբրայեցիների այն խումբը («բանակը», ամբոխը), որն իսկապես ընդդիմացավ Մովսեսին և այդ պատճառով այրվեց (տե՛ս Գիրք Թուոց, 16. 29, 35): Խոսքը այրելով պատժելու մասին է, իսկ հրեաներին հետապնդող «եգիպտացիների բանակը» պատժվեց՝ ջրասույգ լինելով:

317 (575). 1. Նկատի ունի Մովսես մարգարեին, որը պատգամներ էր տալիս ժողովրդին Աստուծու հրամանով (տե՛ս Եբր., 12. 25):

320 (578). 1. «Բաբել» – «Բաբելոն» անվան բացատրությունը բխում է Ծննդոց գրքի 11. 9 տողից, որն, ըստ եբրայական բնագրի, այն կապում է եբր. «բաբել» (կամ «բալալ») բառի հետ: Այն նշանակում է «խառնել», որից և «խառնություն», «խառնակություն»: Կա նաև այլ բացատրություն, ըստ որի, «բաբել» – «բաբ+բել» արմատներից ելնելով, այն բացատրում է որպես «Բելի դարպաս կամ բակ»՝ կապելով այն բաբելացիների գլխավոր աստված Բելի հետ: Տե՛ս Толковая Библия, т. I, стр. 81-82.

322 (580). 1. Նկատի ունի Աբրահամին, եբրայեցիների (հին հրեաների) նահապետ-առաջնորդին, որի անունով էլ եբրայեցիները հաճախ կոչվում են Աբրահամյան ցեղ:

2. Բնագրում – «ժողովուրդ ձեռակամ», այսինքն՝ սեփական, հատուկ իրենը, ձեռքի տակ գտնվող: Սրանից ելնելով՝ հրեաները իրենց համարում են «ընտրեալ ազգ», մոռանալով, որ հենց հրեաների պատճառով

Աստված զգվեց մարդկանցից և ափսոսաց, որ ստեղծել է մարդուն (Տե՛ս Գիրք Ծննդոց, 6. 5-7), և միայն արդար Նոյը իր ընտանիքով մնաց երկրի երեսից ջնջված մարդկությունից: Բայց կրկին բազմացած մարդկային ցեղը շարունակեց իր մեղսալից կյանքով ապրել և զայրացնել Արարչին:

327 (585). 1. «Լույսն Իսրայելի», այսինքն՝ Աստված:

2. «և նրան» – Ս. Գրքի հայերեն թարգմանության մեջ «և նրան»-ից առաջ բաց է թողնված մի քանի բառ – «և նրա Սուրբը՝ հուր, որը կայրի և կլափի նրա փուշը և նրա տատասկը մեկ օրում»: Այստեղ Ս. Գիրքը խոսում է Ասորեստանի մասին, որը Իսրայելի թշնամին էր («փուշը և տատասկը»): Ահա սրան այս ժամանակ պետք է սրբեր Եհովան «բորբոքուն հրով» և ոչ թե Իսրայելին, ինչպես կարելի է հասկանալ հայերեն բնագրից («եւ սրբեսցէ զնա հրով բորբոքելով»): Եսայի մարգ., 10. 17-18:

356 (614). 1. Պենտեկոստեի օրը – Հիսուս Քրիստոսի հարությունից հետո հիսուներորդ օրը (հուն. Πεντηκοστή – հիսուն օր), երբ հավաքված առաքյալների վրա իջավ Սուրբ Հոգին, Հոգեգալուստ (Հոգեգալստյան տոն):

391 (649). 1. «Վարդապետության» հեղինակը հատուկ հետաքրքրություն է ցուցաբերում բուսական աշխարհի հանդեպ և իր դրույթների պարզաբանման համար հաճախ է դիմում օրինակների և բույսերի անունների թվարկմանը [տե՛ս 2 (260), 387-398 (644-655-րդ) պարբերությունները: Նրա թվարկածների մեջ կան այժմ անհայտ կամ դեռևս չնույնականացված բույսերի, ծաղիկների, թփերի և փշերի անուններ, որոնց ճշգրտումը կարող են կատարել հնաբուսաբանները: Մյուս անվանումները տրված են մոտավոր ճշտությամբ, որը պայմանավորված է առկա բառարանների ճշգրտության աստիճանով:

394 (652). 1. Խոսքը Հովհաննես Սկրտչի մասին է:

412 (670). «Վարդապետության» հեղինակը, աշխարհի սկզբի և վերջի մասին խոսելիս, հետևում է Ս. Գրքի հնագույն մեկնություններին, քրիստոնեական և հուդայական (հին եբրայական), որոնց համաձայն երկիրն ունենալու է վեց հազարամյակների կյանք, որոնք համապատասխանում են աշխարհի արարման վեց օրերին: Վեցերորդ հազարամյակի վերջում կլի-

նի աշխարհի վերջը, և այդ պատճառով այն կոչվում է «վերջին»: Յոթերորդ հազարամյակը, արարչագործության յոթերորդ օրվա համապատասխան, այսինքն՝ Արարչի հանգստի օրվա նման, երկրի վրայից հեռացած մարդկության հանգստյան և փոխհատուցման ժամանակն է, երբ Բարձրյալը «հանգիստ է տալիս վաստակյալներին, որոնք գործում էին... այն անչափ երկար տարում», այսինքն՝ յոթերորդ հազարամյակում, որն արդեն լինելու է հավերժական, «երկնային արքայություն»:

414 (672). 1. Բնագրում – «որ ընդ Քրիստոսին չարչարեցան՝ ընդ նմին և թագաւորեցեն»: **Ռ. Թոմսոնի** և **Ա. Տեր-Ղևոնդյանի** մոտ երկու դեպքում էլ «ընդ» թարգմանվել է «հետ», «with», մինչդեռ առաջին դեպքում՝ «ընդ Քրիստոսին» պետք է հասկանալ «Քրիստոսի համար»: Պողոս առաքյալի մեջբերած խոսքը (Տիմոթեոսին ուղղված երկրորդ թուղթ, 2. 12) վերցված է Քրիստոսի համար չարչարանքներ կրող (և մեռնող) մարտիրոսների փառաբանական երգից:

415 (673). 1. Բնագրում – «ծառայից և աղախնաց»: Անգլերեն թարգմանված է «servants and handmaids», որը ճիշտ չէ: Ս. Գրքում (Հովել, 2. 29 և Գործք, 2. 18) այն օգտագործված է հին նշանակությամբ՝ «ստրուկ և ստրկուհի» և ոչ թե՛ ժամանակակից իմաստով՝ «ծառա և աղախին»:

2. Բնագրում – «խտրոց»: Բառն օգտագործված է «տարբերության» իմաստով, որը ստեղծվել է հետագայում հունաբան դպրոցի կողմից: «Վարդապետության» հեղինակը չգիտի այդ բառը, ինչպես և բոլոր այն արհեստական բառերն ու տերմինները, որ ստեղծվեցին 5-6-րդ դարերում, երբ հունարենից թարգմանվեցին քերականական, ճարտասանական և փիլիսոփայական երկերը (Դիոնիսիոս Թրակացի, Փիլոն և Թեոն Ալեքսանդրացիներ, Արիստոտել, Պորփյուր): Տե՛ս **Գ. Տեր-Մկրտչյան**, Տիմոթեոս Կուզ... էջ 169-173, **Յ. Մանանդյան**, Հունաբան դպրոցը..., էջ 127-134, 184-190, և մեր «Формирование философской науки в древней Армении», с 155-161, 212-215.

Հին հայերենի «խտրոց» եզրը «տարբերության» իմաստով այնուհետև փիլիսոփայական երկերում չգործածվեց, իր տեղը զիջելով հունարենից տառաջորդեն կաղապարված *Διαφορα* – «տարբերություն» եզրին, որն սկզբից օգտագործվում էր զուտ տրամաբանական երկերում (Արիստոտել, Պորփյուր, Անանուն մեկնիչ, Դավիթ Անհաղթ), իսկ այնուհետև տարածվեց արդեն ոչ նեղ տրամաբանական իմաստով՝ որպես հոմանիչ ու-

նենալով «զանազանություն» բառը:

422 (680). 1. «Հինավուրցը», «հին օրերի», նախնիների Աստծուն «Վարդապետության» հեղինակը այստեղ նույնացնում է Տեր Աստված Հիսուս և Քրիստոսի հետ: Տե՛ս նաև 106 (363), 124 (381), 174 (431) և 331 (588) պարբերությունները:

423 (681). 1. Ս. Գրքի կանոնական տեքստում չկա «և նրա Հոգով» հավելումը: «Ազաթանգեղոսի» մոտ շատ հաճախ մեջբերումները չեն համընկնում կանոնական բնագրի հետ և ունեն որոշակի տարբերություններ, որոնք ըստ երևույթին, գալիս են առաջին «փութանակի», արագ կատարված թարգմանությունից: Տե՛ս նաև 251 (509) 2-րդ ծան. և 255 (513) 1-ին ծան.:

Այդ տարբերությունները վերացվել են երկրորդ, վերջնական թարգմանության ժամանակ՝ ըստ հունարեն «Յոթանասնից» բնագրի, որը բերվեց Մաշտոցի և Սահակ Պարթևի աշակերտների կողմից Եփեսոսի ժողովից հետո (431 թ.): «Ազաթանգեղոսի» մոտ եղած տարբերությունները առանձին ուսումնասիրության արժանի են:

426 (684). 1. «Առաջին վկաներ» – հեղինակը նկատի ունի Քրիստոսին տեսած և աշակերտած առաքյալներին, որոնք «վկա» էին բառի առաջնային իմաստով, որը հետո տարածվեց նաև Քրիստոսի համար զոհված նահատակների, մարտիրոսների վրա, որովհետև հին քրիստոնյաների պատկերացմամբ նահատակը իր տանջանքներով և ինքնագոհաբերությամբ նույնպես վկայում է Աստծո մասին:

2. Բնագրում – «Վասն կուսանին ծննդեան որ ի նոցանէն»: Հեղինակը նկատի ունի Մարիամ Աստվածածնին, որի շնորհիվ «նաև կանայք օրհնվեցին»: **Ռ. Թոմսոնը** իր ծանոթագրության մեջ նշում է Օրիգենեսին (In Luc. Hom., VIII), որն օրհնված է համարում «միայն Եղիսաբեթին և Մարիամին որպես Հովհաննես Մկրտչի և Հիսուսի մայրերի» (տե՛ս Teaching, p. 171):

428 (686). 1. Առաքյալների, ինչպես և լեզուների թվի մասին (տասներկու, յոթանասուն, յոթանասուներկու) հեղինակը խոսում է նաև այլուր: Տե՛ս 200 (457), 246 (503), 322 (579) և 355 (612)-րդ պարբերությունները: Հիմնական խումբը, անշուշտ, Ավետարանում որպես Քրիստոսի աշա-

կերտներ հանդես եկող տասներկու առաքյալներն են:

2. Բնագրում – «պատերազմասեր նահատակ», այսինքն՝ ռազմասեր, պատերազմասեր մարտիկներ, կտրիճներ: «Նահատակ» բառի մյուս նշանակությունը – զոհ, մարտիրոս, վկա, ճգնավոր – այստեղ հարմար չէ, որովհետև առաքյալներն այստեղ հանդես են գալիս որպես խիզախ մարտիկներ, կտրիճներ և ոչ որպես մարտիրոսներ:

439 (697). 1. Բնագրում՝ «Աստուծոյ օրէնք և օրինապատումք՝ առաջին և երկրորդն ճանաչէր»: Օրինապատումք – օրենքի մեկնաբանները առաջին հերթին մարգարեներն են, որոնք հին օրենքի ճանաչված մեկնիչներն էին: Երկրորդ մեկնաբանները առաքյալներն են, որոնք մեկնաբանում են նոր օրենքը՝ Քրիստոսի ուսմունքը, Նրա սահմանած բարոյական և իրավական նորմերը, որոնք բխում էին նաև հին օրենքից և մեկնաբանվում էին որպես «մեկ Աստծու օրենք»:

441 (699). 1. Հեղինակը նկատի ունի Քրիստոսի աշակերտների օրոք Երուսաղեմում կայացած ժողովի՝ սինոդի (սիւնիոդոսի) որոշումները, որոնք սկսեցին կատարել առաքյալները: Տե՛ս «Գործք առաքելոց», 15. 6:

2. Մելիտոս – փոքրասիական Միլետ քաղաքը, որը Պողոս առաքյալը երկու անգամ այցելել է իր քարոզչական շրջագայությունների ժամանակ: Մելիտոս է կոչվել նաև Մալթա կղզին, ուր դեպի Հռոմ իր վերջին ուղևորության ժամանակ նավաբեկությունից փրկված հայտնվում է Պողոսը: Տե՛ս «Բառարան Սուրբ Գրոց», 4. Պոլիս, 1881, էջ 351:

3. Նկատի ունի Ավետարանը, որը Քրիստոսի վարդապետությունը լայնորեն տարածելու նպատակով մտադիր էին ստեղծել առաքյալները:

448 (706). 1. Բնագրում – «առաքեալք», այսինքն՝ «ուղարկվածները», «առաքվածները»: Տվյալ դեպքում, կարծում ենք, չի կարելի թարգմանել՝ «apostles», «առաքյալներ», քանի որ խոսքն այստեղ Հոր կողմից ուղարկված Որդու և Ս. Հոգու մասին է:

452 (710). 1. Բնագրում – «ասաց աստուածապատումն»: Հեղինակը նկատի ունի ավետարանիչ Հովհաննեսին, որին «աստվածախոս», «Աստծո մասին խոսող», կամ «աստվածաբան» անվանեցին, որը և դարձավ նրա մակդիրը՝ Հովհաննես Աստվածաբան:

457 (715). 1. Հասկանալի է, որ Լուսավորիչը չէր կարող իր մասին ասել՝ «Սուրբ Գրիգորի»: Այս գնահատականը Գրիգոր Պարթևի գործունեությանը կարող էր տալ «Վարդապետության» իսկական հեղինակը՝ Մաշտոցը, որն իրոք հանդիսացավ Հայաստանի երկրորդ Լուսավորիչը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան (Ս. Արևշարյան)5

Սուրբ Գրիգորի Վարդապետությունը31

Ծանոթագրություններ229

Խմբագիր՝ Ասողիկ Եպիսկոպոս
Գեղ. խմբագիր՝ Ղևոնդ քահանա
Շարվածքը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկը՝ Ա. Օհանջանյանի
Սրբագրիչ՝ Մ. Բուլաթյան